


ԷՋՄԻԱԾԻՆ




9
2012



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ

Յո-նիս

2012
Ս. Էջմիածին



ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԻ

ՎԵՏԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԽԱՆՏՈՒՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ԳԴՏ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ԱՐՏԱՔԻՆ ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՏԻՆ

Նունիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբելին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց ԳԴՏ Բունդեսթագի Արարաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռուպրեխտ Պոլենցին՝ ուղեկցությամբ ՏՏ-ում ԳԴՏ արարակարգ եւ լիազոր դեսպան Նանս-Յոխսեն Շմիդտի:

Նաղդիպմանը Վեհափառ Տայրապետը հյուրին ներկայացրեց Տայ Եկեղեցու պատմական ուղին, ժողովրդի կյանքում ունեցած դերն ու նշանակությունը: Մասնավոր անդրադարձ կատարվեց խորհրդային շրջանում եղած դժվարություններին ու խոչընդոտներին, ինչպես նաև Տայրենիքի անկախության քսան տարիների ընթացքում արձանագրված ձեռքբերումներին:

Անդրադառնալով երկու ժողովուրդների միջև ձևավորված ջերմ հարաբերություններին՝ Ամենայն Տայոց Տայրապետը գոհունակությամբ նկատեց, որ երկու երկրների միջպետական կապերը հերպոստոսն ավելի են սերտանում ու ամրապնդվում: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նմանապիպ այցելությունները պիտի նպաստեն փոխադարձ ճանաչողությանը եւ արդյունավետ համագործակցության ձևավորմանը:

Պրն. Ռուպրեխտ Պոլենցն իր հերթին ընդգծեց գերմանահայ համայնքի կյանքում Տայ Եկեղեցու կարևոր դերակատարությունը: Բունդեսթագի ներկայացուցիչը բարձր գնահատեց հայ-գերմանական հարաբերությունները ոչ միայն քաղաքական ու փոփոխական, այլև մշակույթի ու կրթության ոլորտներում:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Նորին Սրբությունն իր մտադրությունն արտահայտեց հայ-ադրբեջանական սահմանի շփման գծում ադրբեջանական կողմի սադրիչ գործողությունների հետևանքով վերջին օրերին արձանագրված ցավալի միջադեպերի կապակցությամբ՝ կարևոր նկատելով, որ այս առնչությամբ միջազգային հանրությունը վճռական ձայն հնչեցնի եւ հակամարտությունը կարգավորվի միմիայն խաղաղ ճանապարհով:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ՆԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Նունիսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց «Եկեղեցիների համալսելի գործողություն» համադաշնության (Act Alliance) գլխավոր քարտուղար Ջոն Նդունային՝ ողեկցությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամի փնթեյն Կարեն Նազարյանի: «Եկեղեցիների համալսելի գործողություն» համադաշնությունը 140 երկրներում ունի 131 անդամ եւ գործունեություն է ծավալում արտակարգ իրավիճակներում, ինչպես նաեւ քնկերային եւ զարգացման ոլորտներում:

Նորին Սրբությունը ողջունեց Ջ. Նդունայի այցը Տայասարան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ապա իր գնահատանքը բերեց համադաշնությանը՝ Տայասարանում Կլոր սեղան հիմնադրամի եւ համադաշնության հայաստանյան ֆորումի հետ համագործակցության, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակներում, քնկերային զանազան խնդիրներին ի նպաստ ցուցաբերվող գորակցության համար: Վեհափառ Տայրապետը կարևորեց Եկեղեցիների փոխհամագործակցությունը զանազան ոլորտներում, ինչը նպաստում է համընդհանուր ջանքերի մեկտեղմանը եւ զորացնում առանձին Եկեղեցիներին ու նրանց հավաքացյալներին իրենց հավաքի մեջ՝ բարի օրինակ լինելով եղբայրական սիրտ եւ գորակցության:

Իր հերթին համադաշնության գլխավոր քարտուղար Ջոն Նդունան ուրախություն հայտնեց հանդիպման առիթով՝ ընդգծելով, որ կազմակերպությունը սերտորեն համագործակցում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ եւ մեծապես շնորհակալ է համադաշնության անդամ Կլոր սեղան հիմնադրամին ցուցաբերվող Տայասարանյայց Առաքելական Եկեղեցու գորակցության համար:

Տանդիպման ընթացքում Վեհափառ Տայրապետը մասնավոր մտախոհություն արտահայտեց Սիրիայում քրեղի ունեցող իրադարձությունների առիթով, որոնց հետևանքով սիրիաբնակ բազմաթիվ հայերդիներ ներգաղթում են Տայասարան: Այս առնչությամբ Ամենայն Տայոց Կաթողիկոսը կոչ արեց միջեկեղեցական կառույցներին, այդ թվում նաեւ «Եկեղեցիների համալսելի գործողություն» համադաշնությանը՝ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել անօգնական վիճակում հայտնվող հայերդիներին:

Տանդիպման ավարտին Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով համադաշնությանը, հաջողություններ մաղթեց կազմակերպության՝ քրիստոնեական ոգին զորացնելու եւ մարդկության կյանքում բարիքներն առաքալելու առաքելությանը:

ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՏՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Նունիսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց ՆՏ-ում Գերմանիայի Դաշնային Տանրապետության արքայազն Եւ լիագոր դեսպան Տանու Յոխսեն Շմիդտին՝ Տայասարանում դիվանագիտական առաքելությունն ավարտելու կապակցությամբ:

Տանդիպմանը Վեհափառ Տայրապետը գոհունակությամբ նշեց, որ դեսպանապան եւ Մայր Աթոռի միջեւ հարաբերությունները մշտապես եղել են ջերմ եւ բարեկամական: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց Գերմանիայի դեսպանին Տայասարանում ակտիվ գործունեություն ծավալելու եւ երկու ժողովուրդների միջեւ կապերի ամրապնդմանը կարեւոր նպաստ բերելու համար:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ Գերմանիայի հայկական համայնքին, նրա կրոնական եւ մշակութային կյանքին:

Վերջում Ամենայն Տայոց Տայրապետը դեսպանին մատթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՐԱՄ ՆԱԽԱԳԱՏԻՆ

Օրերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Տայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին՝ րիկնոջ Վերա Սեդրակյանի ուղեկցությամբ:

Ողջունելով ՆՐԱՄ նախագահի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունը, ի դեմս րիար Պերճ Սեդրակյանի, իր օրհնությունն ու գնահատարները հայտնեց ՆՐԱՄ անդամներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ շարունակ ցուցաբերվող նվիրումի եւ աջակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Սփյուռքում եւ Տայրենիքում Միության ջանքերով իրականացվող ազգանպաստ գործունեությանը, ինչպես նաեւ Տայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ համարեղ իրականացվող ծրագրերին:

Այս առիթով ՆՐԱՄ նախագահը շնորհակալություն հայտնեց Ամենայն Տայոց Կաթողիկոսին մշտական գորակցության, մասնավորաբար ՆՐԱՄ հերթական՝ 87-րդ Ընդհանուր անդամական ժողովը հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մարենադարանի շենքում անցկացնելու հնարավորության համար:

Տանդիպման ընթացքում քննարկվեցին նաեւ ազգային-եկեղեցական կյանքում առ-

կա զանազան խնդիրներ եւ հայոց Յեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին առնչվող հարցեր:

Հանդիպումից հետո Կերա Սեդրակյանները ծանոթացան Ս. Էջմիածնում ընթացող լայնածավալ շինարարական, այդ թվում՝ Սեդրակյան ամուսինների ազնիվ բարերարությամբ իրականացվող հին Վեհարանի հիմնադրույթության եւ վերակառուցման աշխատանքներին:

ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐԳ

Հունիսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ. Ծայրագույն Պապրիսարք եւ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Հանրապետության Ազգային պաշտպանության նախարար Կիկլին Ռասա Յուկնեիչիենի գլխավորած պատվիրակությունը:

Հանդիպմանը Վեհափառ հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ հայաստանի եւ Լիտվայի միջեւ առկա են բարեկամական հարաբերություններ, որոնք տարեց-տարի ավելի են սերտանում եւ բազմաբնույթ ընդգրկում ստանում: Նորին Սրբությունը մասնավոր գոհունակություն հայտնեց երկու երկրների Պաշտպանության նախարարությունների միջեւ ձևավորվող համագործակցության առիթով:

Իր խոսքում Ամենայն հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց հայ ժողովրդի կյանքում թե՛ պարմության ընթացքում եւ թե՛ այսօր Եկեղեցու ունեցած դերակատարությունը՝ մասնավորապես անդրադառնալով քրիստոնեական արժեքների եւ ժողովրդի քրիստոնեական նկարագրի անաղարտ պահպանման համար Եկեղեցու գործադրած ջանքերին:

Իր հերթին Կիկլին Յուկնեիչիենին նույնպես կարևորեց քրիստոնեական արժեքների եւ Եկեղեցու դերակատարությունը հասարակության կյանքում՝ այս առնչությամբ հիշատակելով նաև խորհրդային տարիներին եղած արգելքները:

Հանդիպմանը մասնավոր անդրադարձ կատարվեց բանակում հոգևոր սպասավորների կարևոր ծառայությանը եւ այս կապակցությամբ երկու երկրների փորձառությանը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև Լեւոնային Ղարաբաղի հակամարտության խնդրի, երկու երկրների հոգևոր կյանքի, Քույր եկեղեցիների ու այլ կրոնների հետ հայ Եկեղեցու հարաբերությունների մասին:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանը, ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը եւ ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության լիազոր եւ արտակարգ դեսպան Գեորգիոս Ապուռկյանը:

ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՎԱՏՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՏԻՆ

Նունիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի Դաշնային Նախապետության նախագահ Տայոց Ֆիշերին՝ ողեկցությամբ ՏՏ Արքաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով Ավստրիայի նախագահի եւ նրա փոխնախագահ Տայոց Տայասարան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Տայրապետն ուրախությամբ նշեց, որ Տայասարանի եւ Ավստրիայի միջեւ հարաբերությունները զարգանում են եւ ընդլայնվում՝ նոր արդյունքներ արձանագրելով երկու երկրների համագործակցության նորօրյա պարամության մեջ: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Ավստրիայի նախագահի աջակցությամբ լիցք պիտի հաղորդի դարերի պարամական սերտ առնչակցություններ ունեցող երկու ժողովուրդների կապերի ամրապնդմանը:

Ամենայն Տայոց Տայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Ավստրիայի հայ համայնքի հանդեպ իշխանությունների կողմից դրսևորվող առանձնահատուկ ջերմ վերաբերմունքին: Նորին Սրբությունը մատչեց, որ երկու երկրների բարեկամական հարաբերությունները նոր արգասավորմամբ առաջնորդաց ապրեն եւ երկու ազգերը՝ միմյանց աջակից ու գորակից, իրենց առաքելությունն իրականացնեն հանուն մարդկության բարօրության:

Իր հերթին նախագահ Ֆիշերը ուրախություն հայտնեց հանդիպման համար, ապա անդրադարձավ Տայասարան իր աջի արդյունավետ ընթացքին եւ դրական փալավորություններին: Ավստրիայի նախագահը խոսեց նաեւ Ավստրիայում հայկական եկեղեցու եւ համայնքի առկայության կարևորության մասին, այնուհետեւ Ավստրիա ալցելելու հրավեր ուղղեց Վեհափառ Տայրապետին:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Տայասարանյայց Առաքելական եւ Տոմի Կաթողիկ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների եւ գործակցության մասին, անդրադարձ կարարվեց փարածաշրջանում խաղաղության պահպանմանն ի խնդիր կազմակերպվող հոգևոր առաջնորդների քառակողմ եւ եռակողմ հանդիպումներին:

Տանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Տրարարակչական բաժնի փնօրեն Տ. Նաթան արքեպ. Տովհաննիսյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Տովակիմ եպս. Մանուկյանը, Ավստրիայում ՏՏ արքալարք եւ լիագոր դեսպան Արման Կիրակոսյանը եւ ՏՏ-ում Ավստրիայի դեսպան Միքայել Պոսարը:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՏԻՆ

ՔԱՐՈՉԻՈՍԱԿԱՆ

Տ. ՍԵՊՈՒՆՔՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՆԿԱՆԻՔԻ ՔԱՐՈՉՈՒՄ
ԽՈՍՎԱԾ ՍԲ. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ
(03 հունիսի, 2012 թ.)

«Յանուն Տօր եւ Որդւոյ եւ Տօգայն Սրբոյ. ամէն»:

«Ջրեզ արդարեւ Տէր Աստուած մեր գովեմք,
եւ զքէն գոհանամք հանապազ, որ զանց արարեր
գմերով անարժանութեամբս, այսպիսի ահառոյ եւ
անպարտում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս»:

«Արդարեւ Քեզ ենք գովում Տէր Աստուած մեր,
եւ հանապազ Քեզնից ենք գոհանում,
Դու, որ անպարտեցիր մեր անարժանությունը,
եւ այսպիսի ահալոր ու անպարտմելի խորհրդի սպասաւոր կարգեցիր»:
(*Խորհրդադրեր*)

Նիրավի, անհատի է ողորմությունդ Տէր. Անհաղորդ էի Քո խոսքին, սակայն
ծագեցրիր հոգուս մեջ աստվածգիտությանդ լույսը, պարտեցիր Էությունս Քո ջերմ
սիրով ու կոչեցիր՝ Խոսքիդ սպասաւոր լինելու: Վարանցի մի պահ աստվածությանդ
կանչին ի պատասխան: Թույլ էին ուներս Տէր՝ կենարար Խաչդ կրելու համար, սակայն
հայրնակցի ժպտուն երեսով, ու կարծես շուրթերիդ կարդացի երբեմն Պարտոսին ասված
խոսքդ. Սիրում ես ինձ: Այո՛ Տէր, սիրում եմ եւ գիտեմ, որ սիրելու եմ Քեզ (Նմմա. Տօվ.
ԻԱ 15):

Այս հավաստումով ծնկի եկա խորանիդ առջև եւ սիրո ուխտս կնքեցի Քեզ հետ: Դու
ինձ հովիվ կարգեցիր Քո հոգին, իսկ ես խոսքացա անձս դնել նրա համար: Ու հիմա,
դարձյալ կանգնած արդեն Սուրբ Գայանե վանքի ուխտի խորանիդ, մտածում եմ, թե՛
«Ինչ հատուցում պիտի անեմ Տիրոջն այն ամենի համար, որ ինձ պղկեց» (Մաղմոս ՃԺԴ
12):

Սիրելի՛ հավաքացյալներ, ահա այս ապրումներն ու զգացողություններն են, որ
այսօր՝ որպէս երախայրիքն իմ խոսքի, կամենում եմ կիսել ձեզ հետ: Քարոզ չէ, որ
պիտի խոսեմ, այլ հոգեբուխ ցանկությունս է, որ Եղիա մարգարէի հիշարարկության այս
կիրակին դարձնենք խորհրդածության եւ Աստուծո հետ անկեղծ զրույցի մի առիթ:

Սիրելի՛ ժողովուրդ, որպէս խոսքիս բնաբան բնորոված Պարարագամարայցի բա-
ռերն էին ինձ ոգեշնչում Սուրբ Պարարագի անդրանիկ կարարման ողջ ընթացքում:
Շուրջ 40 օրեր առաջ՝ Աշխարհամարտան կամ Կանաչ Կիրակի օրը, որ Կոնստանդնուպոլիսի
ապրիլի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, Քրիստոսաւէջք Իջման

Սուրբ Մեղանի առջև, օծակից 6 սարկավագ եղբայրներին հետ, ծնրադիր կոչվեցինք քահանայության, ուխտելով վերցնել մեր խաչը և գնալ Քրիստոսի հեպտից՝ լինելով Նայոց առաքելահիմն և լուսավորչահասարակ Սուրբ Եկեղեցու արժանի մշակները: Ձեռնադրող Սրբազան Նայր իր ձեռքերը դրեց 7-իցս յուրաքանչյուրի գլխին, և ամենքն աղոթեցին, որ արժանի լինենք քահանայական աստիճանն անարար պահելու Տիրոջ սեղանի առաջ: Դուք աղոթեցիք, Աստված փնտրիմեց, Սուրբ Նոգին Իր մաքրագործող և սրբագործող գործությամբ լցրեց մեզ շնորհներով: Սրբալույս Մյուռնուով դրոշմվեցին և օծվեցին մեր ճակարկներն ու ձեռքերը, և Աստված մեզ նոր մարդ դարձրեց՝ Սուրբ Նոգուց կոչվելով նորանոր անուններով:

Ձեռնադրությանը հաջորդեց 40-օրյա պահեցողության շրջանը Մայրավանքի հինավուրց ու դարարույր պատերից ներս: Սիրելիներ, անհա 40-օրյա պատրաստության շրջանից հետո նվաստիս ձեռքերը բարձրանում են պարարագելու և բաշխելու Տիրոջ փրկարար Մարմինն ու Արյունը: Որպես լուսն աչք 40 օրերի, Սուրբ Նայրերի աստվածաշնորհ փնտրիմությամբ, մեր անդրանիկ և ուխտի Սուրբ Պարարագն ենք մաքուրում այսօր՝ առ Աստված կանգնելով: «Սուրբ, Սուրբ, Սուրբ է գործությունների Տերը և երկինքն ու երկիրը լի է Նրա փառքով» (Պարարագամարույց):

Այսօր, ի նշան մեր սկսվող քահանայագործման, ծնկի ենք գալիս Աստուծո՞ւ ու բոլոր Սրբերի առջև, վերստին նորոգում ու վերարծարծում մեր ուխտը, քանզի «մերկանալով հին մարդուց և հագնելով նորը»՝ մենք խոստացանք օրինակ լինել ձեզ՝ «հավաքացյալներիդ՝ խոսքով, գործով, վարմունքով, սիրով, հավատով ու մաքրությամբ» (Ա Տիմ. Դ 12), քանզի պարվիրվեց մեզ «Աստծու խոսքն ընթերցել, հորդորել և ուսուցանել քրիստոնյա ժողովուրդներին», զանց չառնելով «այն շնորհը, որ փրվեց մարգարեությամբ երեցների ձեռնադրումով» (Ա Տիմ. Դ 13-14):

Ձեռնադրության Սուրբ խորհրդով Աստծուց ոչ միայն մեզ բաշխվեցին Սուրբ Նոգու շնորհները, այլև փրվեց նվիրապետական կարգ, երկնային իշխանություն՝ 7 խորհուրդներն ի կարար աժելու, մեր Տիրոջ՝ Նիսուս Քրիստոսի փրկագործությունն ամենուր վարդապետելու և հուսո գավակներին քրիստոսահասարակ կյանքի պարզապարտ շավիղներով փանելու: Բարոգելու Քրիստոսի Ավետարանը, ուսուցանելու, ժողովրդին ապաշխարության կոչելու, հավատարմոր հուրին քաջ հովիվ լինելու և նրան դեպի երկնքի արքայություն առաջնորդելու:

Փառք Տիրոջը, որ մեզ ընտրեց որպես անոթ՝ Իր աստվածային խոսքը քարոզելու, նաև ուսուցանելու երկնային վարդապետությունը բոլոր նրանց, ովքեր փափագում են կարարյալ լինել, ովքեր կոչված են Աստծու որդեգիրները դառնալ: Երիցս փառք Տիրոջը, որ մեզ նաև այն հնարավորությունն ընձեռեց, շնորհիվ որի մենք կարող ենք փրկության հույս ներշնչել բոլոր նրանց, ովքեր հուսահատ են և հուսալքված, բեկված՝ կյանքի դաժան փորձություններից, նրանց՝ ովքեր թեթև ու անկարգել կյանք են վարում՝ խորհրդածության նյութ չդարձնելով անգամ իրենց կյանքի նպատակն ու իմաստը, որպեսզի, ինչպես ասում է հեթանոսաց Առաքյալ Պողոսը՝ «բոլորը մեկտեղվեն սիրով և հասնեն կարարյալ իմաստության ճոխությանը՝ ճանաչելու համար Աստուծո խորհուրդը, որը հայտնվեց մեր Տիրոջ՝ Նիսուս Քրիստոսի մեջ» (Կող. Բ 2):

Նոգևոր սպասավորը նման է արեգակի, որ լույս է փայլա խավար մութերին, Աստվածային սիրով ջերմացնում սառած հոգիները: Ահա թե ինչու Քրիստոս ասաց առաքյալներին. «Դուք եք լույսն աշխարհի» (Մատթ. Ե 14):

Որպես պարզ, սովորական մի մարդ, ես ես գերծ չեմ թերություններից, որոնք և նկարի առնելով՝ աղոթքով հանապազ գոհություն եմ հայտնում Բարձրալին, որ ինձ, մարդկային անարժանություններով հանդերձ, կարգեց սպասավոր այս անպարմունքի և մեծ խորհրդի: Նայցում եմ Տիրոջ օգնությունը, որպեսզի Նրա Ամենակարող Սուրբ Աջը միշտ հովանի լինի ինձ, որպեսզի երբեք չչեղվեմ Աստվածամանազության շիրակ ճանապարհից, լինեմ Նիսուս Քրիստոսի «այն բարի պաշտոնյան, որ սնվում է հավարի խոսքերով և բարի վարդապետությամբ» (հմմտ. Ա Տիմ. Դ 6):

Սիրելի՛ հավաքացյալներ, այսօր մեր ուխտն ենք վերանորոգում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ՝ Քրիստոսահիմն մեր Եկեղեցու բարի մշակը լինելու անպարագրելի ցանկությամբ, նրան խոնարհաբար ծառայելու մեր անմեկնելի ձգտումով: Լուսավորչահասարակ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ եղել է մեր ազգի նորօրյա Թաքոր լեռը, հոգևոր այն կենտրոնը, որից ճառագող Աստվածապարզ Լույսի շողերը բոլոր ժամանակներում Նայրենիքի սիրով ջերմացրել են աշխարհասփյուռ հայության փարագիր հոգիները: Սուրբ Էջմիածինն իր խորին խորհրդով, մեծ Սրբի արցունքներից լույսի շիթեր փարածող մշտավատ կանթեղով ջերմացրել է համայն աշխարհի փարբեր ծագելու գրկով իր հավաքավոր զավակների հոգիները, լուսավորել նրանց ճանապարհը՝ մշտապես նրանց սրբերում բորբոքելով Քրիստոսի սիրո հուրը: Մեր՝ հոգևորականներիս պարտքն է խունկ ու կնդրուկ լինել նրա բուրվառին և մի կաթիլ յուղ՝ Սրբի արցունքներից բորբոքվող կանթեղին:

Սիրելիներ, այս պարեն առիթով իմ որդիական պարտքն եմ համարում նախ և առաջ երախտագիտության և շնորհակալանքի խոսքս հղել առ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Տայոց Կաթողիկոսը, ով արքունեց ու օրհնեց իմ և 6 օժակից եղբայրներիս քահանայական ձեռնադրությունն ու օծումը: Վեհափառ Նոր սիրով և ջերմությամբ լեցուն հայրական ժպիտը վայելեցի դեռևս Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում ուսանելուս փարիներից, ով ամեն պարեն առիթ օգտագործում էր՝ իր եկեղեցանվեր ու հայրենակառույց շունչը երիտասարդներին փոխանցելու, իր ավյունն Աստծուն բնծայաբերման կենդանի օրինակ դարձնելու համար: Մեզ ես կոչելով դժվարին, սակայն բաղձալի ծառայության՝ առ Աստված, Եկեղեցին, Նայրենիքը և հարազատ ժողովուրդը, Նորին Սրբությունը հորդորում է միշտ հավաքարիմ զավակն ու սպասավորը մնալ Սուրբ Էջմիածնի: Այսօր, սիրելի՛ հավաքացյալ քույրեր և եղբայրներ, հարկ չկա մեկ առ մեկ թվարկել այն բոլոր իրագործումները, որոնք կյանքի կոչվեցին Տայոց Տայրապետի ձեռամբ՝ անցնող 13 փարիներինների բնթացքին, քանզի ով աչք ունի, փեսնում է և առհասարակ՝ մեծերը գնահատանքի խոսքերի անհրաժեշտություն չունեն: Նրանց գնահատում են ժամանակն ու պարմությունը: Ուստի, սիրելի՛ աղոթակիցներ, մեզ մնում է ազգովի, որպես մշտաանուշ աղոթք, Վեհափառ Տայրապետին մաղթել արևշար օրեր, մութի ոգեղեն թոխջք, որ վեր է ժամ ու ժամանակից, որպեսզի Ամենայն Տա-

յոց Կաթողիկոսը շարունակի առաջնորդել իր աշխարհասփյուռ հոգիի ճշմարտություն և փրկություն փնտռող ճանապարհներով:

Երախտագիտության խոսքեր ունենք ասելու նաև մեր հոգևոր ծնողին՝ Վանորեից Տեսուչ Գերաշնորհ Ս. Արքեպիսկոպոս Սեբեդեոսյանին, ով սիրով ստանձնեց հոգևոր ծնողի պարտականությունները և իր օձյալ Սուրբ Աջր բարձրացնելով մեզ վրա, եղավ փոխանցող Սուրբ Ղուզու շնորհների՝ հայրական շնչով ձեռնադրության և օծման արժանացնելով մեզ: Սիրելի՛ Սրբազան, թող մյուռնաբույր ու շնորհաբաշխ Աջուկը բազում հոգևորականներ ծնվեն մեր Սուրբ Եկեղեցու անդամաբանում:

Շնորհակալության խոսքեր կան հղելու նաև Վազգենյան և Գևորգյան Ղուզուր Ընտանիքների անդամներին ու դասախոսական կազմին, որ անդուլ, քրեազան ու երախտաբար աշխատանքով իրենց նպաստին են բերում հայ հոգևորականի հոգեկերպմանն ու գարգացմանը, որոնց շնչի փակ կերպով եղի և ես՝ դառնալով գավալը մեծ փեսիկի:

Խորին երախտագիտություն եմ հայտնում նաև Մայր Աթոռի միաբանությանն ու ողջ հոգևոր դասին, ովքեր աշակրջությամբ ու ծով համբերաբարությամբ հեղինակել են մեզ, եղան խմսաբուր դաստիարակներ՝ Ղայոց Եկեղեցու և Մայրավանքի նվիրագործված ավանդույթների համաձայն՝ սիրով ու ջերմությամբ պարուրելով մեզ:

Ձեռն կարող անարարներ գրնվել և ջերմ ու սիրալիկ խոսքեր չողդել իմ սիրելի ծնողներին ու հարազատներին, ովքեր դեռևս մանուկ հասակից իմ քայլերն ուղղեցին դեպի Աստուծո սուրբ փառք՝ միշտ հորդորելով իրենց խորհուրդներով ու հեղինակական խրատներով: Բարեկամներս, այսօր իրականություն դարձավ ձեր հոգում ու սրբում ծրարած վաղեմի նպատակն ու ցանկությունը:

Շնորհակալություններս նաև Ձեզ, սիրելի՛ հավաքացյալներ ու ներկաներ: Աղոթքս ու ցանկությունս է, որ ձեր բոլորի օջախներում ուրախությունը բազմապարկվի, որ փրկությունը խնդության վերածվի, թափառական կարոտն իր խաղաղ օթևանը գտնի, որ երազանքն իրականություն դառնա, մանկան քրքիջը հարստանա, ու մայրերի լացը երջանկության արարատքի վերափոխվի:

Սիրելի՛ հավաքացյալ քյուրեր և եղբայրներ, դուք էլ աղոթեցեք իմ և օժակից իմ եղբայրների համար, որ ուխտյալ գավալները մնանք մեր Երկնավոր Տիրոջ և հավաքարիմ սպասավորները Ղայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Ղայոցում եմ ձեր բարեխոսությունը, որպեսզի հաստատվեն և անսասան մնան կարգիս մեջ, որպեսզի կարողանամ լավ ճանաչել Աստուծո կամքը, որ Աստուծո պահապան Սուրբ Աջր հովանի լինի ինձ՝ հոգևորականի իմ պարտականությունները կատարելիս՝ մեր քայլերը Տիրոջ կանխորոշած ուղիներով առաջնորդելու համար, որպեսզի, լինելով մեր Եկեղեցու նվաստ ու խոնարհ սպասավոր, մի օր արժանի լինեմ իրականացնելու Տերունի ա՛յն պարգամբ, թե «Քաջ հովիվը իր անձր դնում է իր ոչխարների համար» (Ղով. Ժ 11):

Թող Տերը մշտավառ աղոթքի շնորհ պարգևի մեզ՝ քրիստոնյաներիս, և առաքյալների Սուրբ Ղուզու շնորհները մեր կյանքում, որպեսզի խոնարհ սրբով հանապազ փառավորենք Ղորը, Որդուն և Սուրբ Ղուզուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԵԹՅՈՒ ԷԴՎԱՐԴՍ

ԱՍՈՐԵՐԵՆԻՑ ՆԱՅԵՐԵՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՆԴԻՆԱԿՆԵՐՈ

Ստորեւ ներկայացվող հոդվածն արդյունք է ամերիկացի հայագետ-ասորագետ Մեթյու Էդվարդսի երկարատեւ պրպտումների, որոնք ծավալվել են հիմնականում հայ-ասորական թարգմանական փոխհարաբերությունների շրջանակից ներս: Հոդվածում, բացի հայ-ասորական թարգմանությունների վերաբերյալ առկա գրեթե սպառիչ գրականության ցանկից, հեղինակը ներկայացնում է նաեւ որոշ հետաքրքիր դիտարկումներ՝ հատկապես Եփրեմ Ասորու եւ Հակոբ Սրենցու երկերի հայերեն թարգմանությունների վերաբերյալ: Ուսումնասիրությունն սկզբնապես հրատարակվել է Journal of the Canadian Society for Syriac Studies 10 (2010) (Ասորական ուսումնասիրությունների Կանադական ընկերության պարբերական) գիտական հանդեսում: Մենք այն թարգմանում ենք անգլերենից՝ ձգտելով հնարավորինս հավատարմորեն ներկայացնել հեղինակի արժեքավոր դիտարկումները Ե.-Ժ.Գ. դարերում հայերենի թարգմանված ասորական գրականության կարեւոր նմուշների վերաբերյալ:

Տողատակերում *-երով դրված ծանոթագրությունները թարգմանչին են:

ՇԱՀԵ ԱՐԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

Նայոց Եկեղեցին գնահատելիս մշտապես առնչվում ենք նրա պարմական ժառանգության բազմաթիվ կարևոր կողմերին, որոնցից ամենահարկանշականներն են հայերեն ձեռագրերում այդքան կարևոր տեղ զբաղեցնող մանրանկարները եւ հայոց պարմության ամբողջ ընթացքին իրականացվող թարգմանչական կարևոր աշխատանքը: Այն, հակառակ հայոց պարմության մեջ առկա դժվարին ու եղերական իրադարձություններին, պահպանվել ու հասել է մեզ: Այս առումով հարկ է նշել, որ, ըստ էության, հայ միջնադարյան գրականությունն իր ակունքներով կապված է թարգմանչական գործունեությանը¹: Նույնիսկ ոչ մասնագետների հիացումն ու զարմանքն են շարժում հայ թարգմանիչների անձնվիրության եւ նախանձախնդրության շնորհիվ պահ-

1 Այս մասին տե՛ս J. J. S. Weitenberg, “Eusebius of Emesa and Armenian Translations” in *The Book of Genesis in Jewish and Oriental Christian Interpretation: A Collection of Essays*, Traditio Exegetica Graeca 5, ed. J. Frishman and J. Van Rompay, Louvain: Peeters, 1997, էջ 163:

պանված այդ գանձերը : Ամնիջապես աչքի առաջ են գալիս Եսեբիոսի «Ժամանակագրություն»-ը, մասամբ պահպանված նաև լատիներեն վնասված տարբերակով², ինչպես նաև Բ. դարի կեսին Լիոնի Իրինեոս եպիսկոպոսի ձեռքով գրված «Յոյցք առաքելական քարոզչության» ջափագովական երկը³: Չնայած քիչ հայտնի՝ այնուամենայնիվ, ասորերենից հայերեն թարգմանված այլ կարևոր գործեր էլ կան: Բացի Դ. դարի մեծ բանաստեղծ Եփրեմ Ասորուն վերագրված մի քանի գործերից էլ «Պարսից իմաստուն» կոչված Ափրահապի երկերից, թարգմանական այդ կարևոր ժառանգությունը մասնագետների նեղ շրջանակից անդին շարունակում է մնալ անձանոթ:

Նայ եկեղեցականների կողմից ասորերեն երկերի թարգմանությունը զարմանալի չպետք է թվա, որովհետև վաղնջական ժամանակներից սկսած Նայաստանը և Ասորիքն Էակառոսն իրար կապված մշակույթներ էին՝ երկուսն էլ մեծավ մասամբ պարսկական փիրապետության տակ հեծող և Արեւմտյան Եկեղեցու հռոմեաբյուզանդական քրիստոնեական հարեւանությունից զրկված⁴: Նայ և ասորի մշակույթները բոլորովին էլ նույնաբնույթ չեն՝ տարբեր լեզվական և քաղաքական համակարգերում զարգացած լինելով : Սակայն դրանք երկուսն էլ, գաղ-գաղ վերցված, արեւելյան են՝ խորապես երանգավորված նրանց զրադաշտական փիրակալների բարբերով և միայն հպանցիկ կերպով ազդված իրենց հռոմեական և հելլենիստական հարեւաններից: Քրիստոնեական նոր կրոնի այդքան վաղաժամ ընդունումը նրանց ավելի մերձեցրեց բնոյդն զրադաշտական բռնակալների՝ սփռվելով չկտրվել Արեւմտագրի հետ հաղորդակցությունից: Չնայած հայերեն և ասորերեն լեզուները պարկանում են երկու տարբեր լեզվախմբերի՝ հնդեւրոպական և սեմական, այնուամենայնիվ, որոշ հարցերում նրանք ունեն ընդհանրություններ բառապաշարի առումով, որի հիմնական պարզադր երկար ժամանակ պարսից փիրապետության տակ մնալի էր: Բառապաշարային ընդհանրություններն ի հայտ են գալիս հիմնականում սոցիալ-քաղաքական համակարգերում և նույնիսկ շաբաթվա օրերի անվանումներում⁵: Եկեղեցական կյանքում բառապաշարի մեծ մասը նույնպես ծագում

2 Տե՛ս Մ. Ավգերեան, Եսեբի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք երկմասնեայ, Վենեթիկ, 1818: Ժամանակագրությունը երկիցս թարգմանվել է լատիներեն՝ **Y. Zohrabeian & A. Mai, Eusebii Pamphili Caesariensis Episcopi, Chronicum Libri duo**, Scriptorum veterum nova Collectio 8, Rome: Typis Vaticanis 1833, էջ 1-406 (վերապրված PG 19, 99-598) և **H. Peterman**, in **A. Schoene, Eusebii Chronicorum libri duo**, Berlin: Weidmann 1866-1875: Գերմաներեն թարգմանության համար տե՛ս **J. Karst, Die Chronik des Eusebius aus dem armenischen übersetzt mit textkritischem Apparat**, Eusebius Werke 5; GCS 20 (Leipzig: J.C.A. Hinrichs, 1911): Երկի անգլերեն թարգմանությունն արդեն ընթացքի մեջ է, տե՛ս **Tim Greenwood, "New Light from the East: Chronography and Ecclesiastical History through a late Seventh-Century Armenian Source"**, JECS 16 (2008), էջ 197-254:

3 Տե՛ս **K. Ter-Mekerttschian, E. Ter-Minassiantz, Des heiligen Irenaeus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung**, TU 31.1, Leipzig, O. Harrassowitz 1907: Այն թարգմանված է նաև ժամանակակից բազմաթիվ լեզուներով. առկա է միայն հինգ տարբեր անգլերեն թարգմանություն:

4 Ներածական այս ակնարկների մասին տե՛ս **E. G. Mathews, Jr., "The Syrian Presence in the Early Armenian Church"**, in *The History of the Armenian Church*, ed. **K. B. Bardakjian**, տպագրության ընթացքի մեջ: Տե՛ս նաև **L. Van Rompay, "Armenian Christianity, Syriac contacts with"**, in *The Gorgias Encyclopedical Dictionary of the Syriac Heritage*, ed. S. P. Brock et al., Piscataway: Gorgias Press, տպագրության ընթացքի մեջ:

5 Տե՛ս **H. Hübschmann, Armenische Grammatik, I. Theil: Armenische Etymologie, Bibliothek indogermanischer Grammatiken 6**, Leipzig: Breitkopf & Härtel, 1897, էջ 281-321, որտեղ գիտնականը հարյուրավոր բառեր է թվարկում: Ընդ որում, այդ ցանկը կարող է համարվել:

Է ասորերենից : Օրինակ, հայերեն «քահանայ» բառն ասորերեն ܩܪܬܐ բառի փոխառությունն է, «ծոմ»-ը՝ ܕܡܝܬ-ի: Նույնիսկ հունարեն այնպիսի հայրնի բառեր, ինչպիսիք են ἐκκλησία, ἐπίσκοπος եւ καθόλικος հայերենին են անցել ասորերենից⁶: Ժամանակակից ուսումնասիրությունները նույնպես ցույց են տվել, որ վաղ շրջանի վանական-ճգնաժողովական հայերեն բառապաշարն ամբողջությամբ փոխառված է ասորերենից, ինչպես, օրինակ, ուղղակի փոխառությունները՝ արեղա ܐܪܠܐܝܬ, վանական/վաներայ ܐܪܠܝܬ, անապատատ ܐܪܠܝܬ ևն⁷: Ձեռքի փակ եղած ամենավաղ շրջանի աղբյուրները՝ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ին⁸ եւ Ղազար Փարպեցու «Պարմութիւն հայոց»-ը⁹, հսկակորեն ուրվագծում են հայրկապես Նայասրանի հարավային նահանգներում, մասնավորապես Տարսնում, ասորերեն լեզվի ունեցած գերիշխող դերը: Կորյունը հաղորդում է, որ Մաշտոցը մանկությունից սկսած կրթվել էր հույն գրականությամբ՝ «ի մանկութեան փիսն վարժեալ հելլենական դպրութեամբն»¹⁰, ինչն էլ հեղափոխում նրան հնարավորություն տվեց դառնալու Արվանի՝ ժամանակի հազարապետի արքունի բարձրագույն : Բանի որ Արշակունյաց արքունիքի պաշտոնական լեզուն ասորերեն-արամեերենն էր¹¹, ավելի հավանական է թվում, որ հունական կրթության մեջ մանկությունից ի վեր կրթված լինելու փաստի հիշարակումը Կորյունի կողմից նպատակ ունի մաքրանշելու, որ Նայասրանում շատ քչերն էին այդ ժամանակ կրթված եղել հունական մշակույթի մեջ: Մաշտոցի՝ ասորերենի իմացությունը, ուրեմն, ավելի քան հայրնի եւ հայրուկ նշելու

6 Stéu A. Meillet, “Le mot ekeleci”, REA 9 (1929), էջ 131-136: Stéu նուկն նույնի “De l’influence parthe sur la langue arménienne”, REA 1 (1920), էջ 9-14 :

7 Սույն եզրերի մի մասն արդեն մաքրանշված է Երվանդ Տեր-Մինասյանցի կողմից, փեւ **E. Ter-Minassiantz**, *Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts*, Texte und Untersuchungen zur Geschichte der Altchristlichen Literatur Neue Folge, XI. 4, Leipzig, J.C.A. Hinrichs, 1904, 11-12: Նման նաեւ հայերեն թարգմանությունը՝ **Երուանդ Տեր-Մինասեանց**, Նայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ (հայկական եւ ասորական աղբյուրների համաձայն), Բ հրատարակություն, Ս. Էջմիածին 2009: Սույն թեմայի արդի պարամբանասիրական նոր անդրադարձի համար փեւ **E. G. Mathews, Jr.**, “The Early Armenian Hermit : Further Reflections on the Syriac Sources”, in *Festschrift in Honor of Professor Nina G. Garsoian*, SNTR 10 (2005), 141-67: Այսպեղ մեջքերված այս երկու պարզ օրինակները հիմնված են «բնակավայր», «բնակվող», ինչպես նաեւ «անապատ» բառերի արմարների վրա, եւ երկուսն էլ բառացիորեն նշանակում են «անապատարենակ»:

8 Տեւ **Մ. Արեղյան**, Կորյուն, Վարք Մաշտոցի, Երեսն, Նայպերիար, 1941: Սույն հարորում րնդգրկված են նաեւ համառոր խմբագրության անգլերեն եւ ռուսերեն թարգմանությունները : Պրոֆետր Արքահան Տերյանը պարբասում է այս շար կարետր երկի նոր անգլերեն թարգմանությունը եւ ուսումնասիրությունը՝ հրապարակման նախարեղված Ս. Ներսես ճնմարանի շարքում՝ AVANT: Treasures of the Armenian Christian Tradition: Կորյունի մասին փեւ նաեւ **E. G. Mathews, Jr.**, “Early Armenian and Syrian Contact: Reflections on Korin’s Life of Mashtoc”, SNTR 7 (2002), էջ 5-27: *Մեր կարծիքով ավելի շահավետ կլիներ նաեւ «Մարենագիրք Նայոց» ժողովածումում հրապարակված բնագրի օգրագործումը (Անթիլիաս, Լիբանան, 2001, հր. Ա., Ե. դար, էջ 225-272), որպեղ հաշվի են առնված նաեւ Ա. Մարթնոյանի արժեքավոր դիարարկումները՝ **Ա. Մարթնոյան**, Կորիւնի Մետրոպ Մաշտոցի պարմութեան ճեղագրի մի թղթի փեղափոխութիւն, Վենեիկ-Ս. Ղազար, 1990 (Նայագիարական մաքրենաշար, Բագմավէլ, թիւ 32):

9 Տեւ **Գ. Տեր-Միքայէան**, **Ս. Մախսեանց**, Ղազարայ Փարպեցույ Պարմութիւն Նայոց, Թիֆլիս, 1904: Անգլերեն թարգմանությունը փեւ **R. Thomson**, *The History of Lazar P’arpec’i*, Suren D. Fesjian Academic Publications 4, Atlanta: Scholars Press, 1991:

10 Տեւ **Մ. Արեղյան**, Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 84 :

11 Տեւ **A. Christensen**, *L'Iran sous les Sassanides*, Copenhagen: Ejnar Munksgaard, 1944, էջ 48-49:

կարիք չունեցող իրողություն էր: Կորյունն իր շարադրանքում մի քանի անգամ անդրադառնում է այս հարցին: Երբ Մաշտոցն ուղարկում է առաջին թարգմանիչներին «...ի կողմանս Ասորոց ի բաղաքն Եդեսացոց ...զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն»¹², եւ երբ այնուհետեւ նույն երկու թարգմանիչները՝ Նովսեփը եւ Եզնիկը, գալիս են հունական փարաժքներ, Կորյունն անհրաժեշտ է համարում հավելելու, որ «թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին»¹³: Ղազար Փարպեցու «Պարմութիւն Նայոց»-ում նշվում է, որ հայ աշակերպների հիմնական կրթությունը գերազանցապես, բայց ոչ բացառապես իրականացվում էր ասորալեզու դպրոցներում: Փարպեցին ավելացնում է նաեւ, որ Նայ Եկեղեցում պարարագր մաքրուցվում էր ասորերենով: Անշուշտ, Ղազարն իր դժգոհությունն է արտահայտում, երբ գրում է. «Եւ այսպէս բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Մաշտոցի բնկալեալ յամենախնամ մարդասիրէն Աստուծոյ՝ զօրացոյց զնա հոգւով ողորմութեան իւրոյ: Քանզի հոգացեալ յարածամ քորմէր երանելի այրն Մաշտոց, քեսանելով զմեծ ջանն եւ զառաւելապէս ծախս մանկանցն Նայաստան աշխարհիս, որք բազում թոշակօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դեղերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան: Քանզի պաշտօնն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, եւ լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորոյ»¹⁴: Ղազարի այս դժկամությունն ասորական ազդեցության վերաբերյալ այսքան խորը չէր լինի, եթե այն մեծապես փարածված չլիներ Նայաստանում¹⁵: Վերջապես, Մովսես Խորենացին ավելացնում է. «...եւ գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորոյն, յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մեհրութանայ այրեալ լինէին բնդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Նայոց՝ չքային պարսիկ վերակացուքն յոյն ումեր ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի»¹⁶:

Այսպիսի համապրեստում են Վաղ շրջանի այս առաքյալներն իրականացրել իրենց առաջին թարգմանությունները, որոնք էական եւ կարևոր դեր խաղացին Նայ Եկեղեցու

12 Թոմսոնի այն հասկացումը, թե աշակերպները Եդեսիա էին ուղարկվել ասորերենից հունարեն թարգմանություններ կարարելու, պարզապես փակագրական սխալ է, քնն. **R. Thomson**, "Syrian Christianity and the Conversion of Armenia" in *Die Christianisierung des Kaukasus/The Christianization of Caucasus* (Armenia, Georgia, Albania), Österreichische Akademie der Wissenschaften Philosophisch-Historische Klasse Denkschriften 296: Veröffentlichungen der Kommission für Byzantinistik 9 Vienna: Verlag der Österreichische Akademie der Wissenschaften, 2002, էջ 160: Դժբախտաբար, նույն սխալը կրկնվել է Թոմսոնի մեկ այլ հոդվածում՝ "Early Armenian Christianity in Edessa", in *Armenian Tigranaket/Diarbekir and Edessa/Urfa*, UCLA Armenian History and Culture Series, Historic Armenian Cities and Provinces 6, ed. **R. G. Hovannisian** (Costa Mesa : Mazda Publishers, 2006), էջ 99:

13 Տե՛ս **Մ. Արևելյան**, Կորյուն, Վարք Մաշտոցի, հայր. ԺԹ:

14 Տե՛ս **Գ. Տեր-Մկրտչյան, Ս. Մախասեանց**, Ղազարայ Փարպեցու Պարմութիւն Նայոց, էջ 13:

15 Անդ, էջ 16, 111, 117, 137, 167-168: Ղազարը նկարագրում է նաև Պարսից Վահրամ թագավորի կողմից Նայոց կաթողիկոսական աթոռին պարարադրված ասորի Բրքիշոյի եւ Սամուելի պալապարակելի սովորությունները. նրանք, ինչ խոսք, ավելի են սասկվացրել ասորական մշակույթի նկատմամբ Փարպեցու անհանդուրժողությունը, անդ էջ 26:

16 Տե՛ս **Մ. Արևելյան, Ս. Յարութիւնեան**, Մովսես Խորենացի, Պարմութիւն Նայոց, Թիֆլիս, 1913, III 54:

կյանքում՝ աստվածաբանական միտքը ձևավորելու հարցում: Տիշյալ թարգմանությունների մասին կան բազմաթիվ նկարագրականներ և ցուցակներ՝ հիմնականում հայերեն թարգմանված երկերի համար: Սակայն դրանք բոլորն էլ իրականացվել են ըստ հեղինակների այբբենական կարգի՝ առանց սկզբնաղբյուրի լեզվի հանդեպ որևիցե փարբերակման¹⁷: Հայերեն թարգմանված երկերի համար ժամանակագրական որոշակի սխեմա սրելով՝ միակ ջանքն իրականացվել է Լ. Տեր-Պետրոսյանի կողմից, ով թարգմանական գործը բաժանում է հինգ փարբեր շրջանների¹⁸.

ա. Դասական շրջան. Ե. դար.

բ. Նելլենիսպական-հունաբան դպրոց. Ե. դարի վերջից մինչև Ը. դարի սկիզբ.

գ. Կիլիկյան շրջան. ԺԲ.-ԺԳ. դարեր.

դ. Ունիթոնների շրջան. ԺԴ. դ.

ե. Ուշ միջնադարյան թարգմանություններ. ԺԷ.-ԺԸ. դդ. :

Նավելումն այս ամենին՝ պետք է նշել, որ, հաշվի առնելով Ը.-ԺԲ. և ԺԴ.-ԺԷ. դարերի միջև առկա բավական մեծ ժամանակագրական բացը, կարելի է ըստ այսմ ընդգծել արևմտյան, այսինքն՝ հունարեն և լատիներեն լեզուներից կատարված թարգմանությունների պակասն այդ ժամանակաշրջանում: Վերոնշյալ բաժանումներն օգնում են թարգմանությունների հիմնական ձևերն առանձնացնելու և լուսաբանելու գործընթացին, սակայն շարքից բան են ասում ասորերենից (իսկ մի քանի դեպքերում էլ, ինչպես կարևորագույն ստորև, արաբերենից) մեծ թվով կատարված թարգմանությունների բնույթն ու ժամանակագրությունը ճշգրտելու մասին:

Ներկառաք, հուսով ենք, որ սույն ուսումնասիրությամբ հնարավոր կլինի ոչ միայն ներկայացնել ասորերենից հայերեն կատարված թարգմանությունների ցանկը, այլև առաջին փորձը կատարել՝ ուղղագծելու դրանց ժամանակագրական կարգը: Ձեռքի փակ եղած սկզբնաղբյուրները մեզ մեծ ճշգրտություն չեն փորձադրում, այնուամենայնիվ, հույս ունենք՝ այսու փակ դրանց հիմնական ուղղագիծը, ինչն օգտակար կարող է լինել նաև հետագայի ուսումնասիրողների համար:

Ե. դար

ա. Աստվածաշունչ.- Այբուբենի սրելովումից անմիջապես հետո հայերը ձեռնամուխ եղան եկեղեցական և հայրաբանական երկերի թարգմանության լայնածավալ

17 Ամենակարեւորներն են՝ Գ. Զարգիսյանը, Մարենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց. դար Դ-ԺԳ, Վենետիկ 1889; B. Sargisyan, *Dei Tesori Patristici e Biblici conservati nella letteratura armena*, Venice: St. Ghazar Press, 1897; Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտության և հանրագիտարան հայ կեանքի/*Nouvelle bibliographie Arménienne et encyclopédie de la vie Arménienne 1512-1905*, 3 vols., Վենետիկ, 1909-1912; S. J. Voicu, "Testi Patristici in Armeno (secc. v-viii)" in *Patrologia*, vol. V: Dal Concilio di Calcedonia (451) a Giovanni Damasceno (750). I Padri orientali (secoli V-VIII), ed. A. Di Berardino (Genoa: Marietti (1820), 2000), 577-596 [սնվ. թարգմ. "Patristic Texts in Armenian (5th to 8th Centuries: Patristic Translations)", trans. by A. Walford in *Patrology. The Eastern Fathers from the Council of (451) to John of Damascus (750)*, ed. A. Di Berardino (Cambridge: James Clarke & Company, 2006), 571-588]; R. W. Thomson, *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, Corpus Christianorum (Turnhout: Brepols, 1995), 29-88, Նույնի "Supplement to A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD: Publications 1993-2005", LM 120 (2007), 169-179:

18 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, էջ 7:

աշխատանքին: Նայերեն թարգմանված առաջին երկր, անշուշտ, Աստվածաշունչն էր: Ե. դարի կեսից մի փոքր առաջ ստեղծագործած Կորյունը, իր «Վարք Մաշտոցի» երկում պարմում է, որ Մաշտոցն իր երկու աշակերտների հետ իրականացրեց Աստվածաշունչի թարգմանությունը՝ սկսելով Առակաց գրքից. «Ի թարգմանությունն դառնային հանդերձ արամբք երկուք... եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Մողոմունի...»¹⁹: Կորյունն այլ բան չի ասում այս մասին, սակայն, հաշվի առնելով վերը ներկայացրած համադրեքային, դժվար թե այդ առաջին թարգմանությունը կատարված չլիներ ասորերեն Աստվածաշունչից, որն արդեն լայն գործածության մեջ էր Նայ Եկեղեցում: Դժբախտաբար, այս առաջին թարգմանությունից ոչ մի հետք չի պահպանվել: Մի փոքր հետո Կորյունը նշում է, որ երկրորդ, վերանայված թարգմանությունը կատարվեց Սահակ Պարթևի գլխավորությամբ, ուստի զարմանալի չէ, որ առաջին թարգմանությունից որևէ հետք չի պահպանվել: Այս երկրորդ թարգմանության մասին էլ Կորյունը մանրամասներ չի փրամադրում եւ, չնայած փաստաբանական շարունակ իրականացված ժամանակակից ուսումնասիրություններին, պահպանված փոփոխությունը մեզ ավելի շարժառիթ է, քան պարասխանների առաջ է կանգնեցրել: Չնայած առկա գիտական քնդհանրացած փոփոխություններին, ըստ որի փոփոխության թարգմանությունը կատարվել է ասորերեն բնագրից՝ այնուամենայնիվ, հստակ գիտական մոտեցումը դեռ պակասում է: Նայերեն թարգմանության ասորերեն ազդեցության բացահայտման դժվարությունը պարկերացնելու համար քննարկող խորհուրդ ենք փայլա աչքի անցկացնելու Կողմ-Քոքսի հոդվածը²⁰:

բ. Եկեղեցական երկեր.- Ինչպես հայրնի է ամենավաղ վկայություններից, թարգմանիչներն անմիջապես ձեռնամուխ եղան հունարեն եւ ասորերեն երկերի թարգմանությանը ժամանակի նշանավոր երկու կենտրոններում՝ Կոստանդնուպոլսում եւ Եդեսիայում: Ավանդական փոփոխության համաձայն, հայկական թարգմանական աշխատանքն քննարկում էր բավական մեծ թվով երկեր: Սակայն նշված երկերի քանակն ու հեղինակային պարկերությունը ճշգրիտ մեծ դժվարությունների առաջ է կանգնեցնում ուսումնասիրողներին: Ձեռքի փակ եղած սկզբնաղբյուրները պարմական եւ մշակութային-գրական որևէ հստակ փոփոխություն չեն փրամադրում այս ավանդական փոփոխությունն ի պաշտպանություն: Ամենավաղ սկզբնաղբյուրը՝ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, միայն փոփոխություն է, որ Աստվածաշունչի թարգմանությունից անմիջապես հետո կամ գուցաեռաբար թարգմանիչներն սկսեցին հայերեն թարգմանել եկեղեցական մարտնչության երկերը: Բայց ոչ Կորյունը, ոչ էլ վաղ շրջանի սկզբնաղբյուրներից որևէ

19 Մ. Արևիկյան, Վարք Մաշտոցի, Ը 98:

20 *Եդեսիայի չնայած նշում է Քոքսի անունը, սակայն հետագա շարադրանքի մեջ մոռանում է հղել համապատասխան հոդվածը: Նայերեն Աստվածաշունչի վերաբերյալ Քոքսի հիմնական ուսումնասիրություններից են՝ “Biblical Studies and the Armenian Bible, 1955-1980”, RB 89 (1982), 99-113; “Manuscript Groupings in the Text Tradition of the Armenian Bible”, JSAS I (1984), 69-77; “Concerning A Cilician Revision of the Armenian Bible”, De Septuaginta. Studies in honour of John William Wevers, ed. A. Pietersma and C. Cox, Toronto 1984, 209-222; “Hexaplaric Materials preserved in the Armenian Versions” (Septuagint and Cognate Studies, 21), Atlanta GA, 1986, ծան. թրգմ.:

մեկը, դժբախտաբար, այդ թարգմանության մանրամասների մասին այլ տեղեկություններ չեն հաղորդում: Եղեմիայում իրականացրած առաքելության մասին Կորյունը միայն հեղեյայն է ասում. «Որոք դարձեալ դէպ լինէր եղբարս յաշակերպացն յաղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաք Եդեսացոց, զՅովսէփ, զոր ի վերնոյն յիշեցաք, եւ երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարապետան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց գաւառոյթինս հայերէն գրեալս դարձուցեն»²¹:

Ինչպես նկատելի է, Կորյունը միայն պահպանել է այն երկու անձանց անունները, ովքեր պետք է թարգմանեին կամ վերանայեին թարգմանությունները, սակայն թարգմանվող գործերի կամ հեղինակների մասին ուրիշ ոչ մի մանրամասնություն: Իսկ Ղազար Փարպեցին միայն համառոտագրում է Կորյունի վկայությունը²²: Մի փոքր ուշ²³, Մովսէս Խորենացին այս մասին մեկ այլ մանրամասն է հաղորդում, որն իր բնույթով չափազանց կարևոր է: Իր «Նայոց Պարմութեան» Բ. 10-ում նա, խոսելով Եսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պարմության» մասին, որն իբրեւ հավասարի սկզբնաղբյուր տրեղեկացնում էր, թե Մար Աբաս Կարինայի երկերը դեռևս գտնվում են Եղեմիայում, ի միջի այլոց տեղեկացնում է նաև, որ Եսեբիոսի պարմությունը «եւ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու»²⁴: Մի կողմ թողնելով Խորենացու պարմության թվագրման հարցը՝ որոշակի վստահությամբ կարելի է նշել, որ Եսեբիոսի «Եկեղեցական պարմությունը» պարկանում է վաղ շրջանում արված թարգմանությունների շարքին²⁵, չնայած Խորենացու տեղեկությունը Մաշտոցի՝ Եսեբիոսի «Եկեղեցական պարմության» թարգմանիչը լինելու մասին այդքան էլ համոզիչ չի թվում: Սույն պարմության ասորերեն թարգմանության հետ համեմատությունը ցույց է տալիս, որ այն կարարվել է Ե. դարի սկզբին՝ ըստ ասորերեն տարբերակի²⁶: Մեկ այլ հունարեն բնագիր՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրէից մեկնությունը»²⁷, ամենայն հավանականությամբ թարգմանվել է այս վաղ շրջանում եւ նորից ասորերենից²⁸: Չնայած այս երկի՝ վաղ շրջանի թարգ-

21 Մ. Արեղյան, Վարք Մաշտոցի, ԺԹ՝ 122:

22 Գ. Տեր-Մկրտչեան, Ս. Մալխասեանց, Ղազարայ Փարպեցոյ Պարմութիւն Նայոց, էջ 13-17, հմմտ. նաև R. W. Thomson, *The History of Lazar P'arpet's'i*, էջ 46-51:

23 Խորենացու երկի թվագրման մասին վեճերն այսօր էլ շարունակվում են՝ դժբախտաբար, չափ հաճախ դուրս գալով նաև գիտական շրջանակներից, տես R. W. Thomson, *Moses Khorenats'i, History of the Armenians*, նաև վերջերս հրատարակված՝ N. G. Garsoian, "L'Histoire attribuée à Movsès Xorenac'i: que reste-t-il à en dire?" *REA* 29 (2003-2004), էջ 29-48:

24 Մ. Արեղյան, Ս. Յարութիւնեան, Մովսէս Խորենացի, Պարմութիւն Նայոց, Բ 10, էջ 120, հմմտ. նաև R. W. Thomson, *Moses Khorenats'i, History of the Armenians*, էջ 144:

25 Տես Ա. Չաքեան (խմբ.), Եսեբիոսի Կեսարացոյ Պարմութիւն Եկեղեցոյ, Վենետիկ, Ս. Ղազար 1877: Ասորերեն բնագիրը հրատարակվել է երկից՝ P. Bedjan, ed., *Histoire ecclésiastique d'Eusèbe de Césarée*, Leipzig: O. Harrassowitz, 1897 եւ W. Wright & N. McLean, *The Ecclesiastical History of Eusebius in Syriac. With a Collation of the Ancient Armenian Version by A. Merx*, Cambridge: Cambridge University Press, 1898 Ա հրատարակություն, 2003 Բ հրատարակություն, Piscataway: Gorgias Press:

26 W. Wright & N. McLean, *The Ecclesiastical History of Eusebius*: Նայերեն թարգմանությունը լրացնում է ասորերենում առկա բնագրային բացը:

27 Գ. Մուրադեան, Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցօրեայ Աբաբութեան, Երեւան, 1984:

28 Ասորերեն բնագրի հրատարակությունը՝ R. W. Thomson, *The Syriac Version of the Hexaemeron by Basil of Caesarea*, CSCO 222-223, Louvain-Peeters, 1995: Տես նաև L. Տեր-Պետրոսյան, «Բարսեղ Կեսարացու Վեցօրեայի հայերեն թարգմանության նախօրինակը», ՊՆ 101/102 (1983), էջ 264-278, R. W. Thomson,

մանություն լինելու վերաբերյալ կասկածներ են հայտնվել, սակայն Է. դարի նշանավոր գիտնական Անանիա Շիրակացու (600-670) կողմից դրա օգտագործումը խոսում է հոգուր վաղ շրջանի թարգմանության²⁹: Այս մի քանի հապուկաբար մանրամասները միակ ուղղակի վկայություններն են վաղ շրջանում կատարված թարգմանությունների:

Գիրականների մեծ մասի ենթադրությամբ, հիմնված մեծավ մասամբ հեղինակների վարքի ժամանակագրական տվյալների, քան թե բնագրային դիտարկումների վրա, Ափրահապի «Ճառերն» ու Եփրեմ Ասորուն վերագրված մեկնաբանական մի քանի երկեր նույնպես վաղ թարգմանական գործունեության արդյունք են: Այս երկու աստղալեզու հեղինակների երկերի մեծ մասը, իրոք, պահպանվել է մեզ է հասել հայերեն թարգմանությամբ: Ափրահապի երկերի ժամանակային պատկանելությունն այս առումով կասկածներ չի հարուցում, իսկ Եփրեմ Ասորու պարագային կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել դրանց կեղծ լինելը³⁰:

Ինչպես արդեն աստղագետների մեծ մասը նկատել է, Ափրահապը կազմել է 23 քարոզներ կամ գրույցներ՝ քրիստոնեական կյանքի ամենապարբեր բնագավառների վերաբերյալ: Ներքին, բնագրային վկայության համաձայն՝ քարոզների 1-10-ը թվագրված են 337 թվականով, 11-12-ը՝ 344-ով, 23-ը՝ 345-ով: Բացի առաջաբանից՝ բնագիրը պահպանվել է ամբողջությամբ: Քարոզների հայերեն թարգմանությունը, ինչպես որ է լատիներեն թարգմանության պարագային³¹, վերագրվել է Նակոր Մժբնեցուն³² շար կարևոր մի պատմական կերպար վաղ շրջանի Նայ Եկեղեցում, որը մեծ հեղինակություն է վայելում նաև «Բուզանդարան պատմությունը» երկում (470)³³: Ներագայի ավանդությունը նրան

²⁹ *The Syriac and Armenian Versions of the Hexaemeron by Basil of Caesarea*, SP 27 (1993), էջ 113-117:

²⁹ Տե՛ս **R. W. Thomson**, *The Fathers in Early Armenian Literature*, SP 112 (1975), էջ 467:

³⁰ Տե՛ս **R. W. Thomson**, *Syrian Christianity and the Conversion of Armenia*, էջ 163: Նաղվածի հեղինակն իրավացիորեն նկատում է, որ ավանդաբար թարգմանիչների առաքելության ժամանակաշրջանին վերագրվող այս թարգմանությունների համար բավական երկար տարիներ էին անհրաժեշտ: Նախավոր է նույնիսկ, որ այս բնագրերից ոմանք, որոնք վերագրվում են Ռսկեղարին, թարգմանվել են վերանայվել են ավելի ուշ շրջանում, քանի որ, ինչպես գիտենք, հայերը Եդեսիայում դարձյալ ունեցան բավական ժամանակ հետո, հմմտ. **J. Flemming**, *Akten der Ephesinischen Synode vom Jahre 449 Syrisch*, Abhandlungen des Königlischen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen. Philologisch-Historische Klasse; Neue Folge, Bd. 15, n.1 (Berlin: Vandenhoeck & Ruprecht, 1917¹, 1970²), էջ 24-25: Եդեսիայի դպրոցի քննական պատմությունն այսօր գիտական անհրաժեշտություն է: Ներկայիս լավագույն մեկնագրություններից է **E. R. Hayes**, *L'école d'Édesse* (Paris: Presses Modernes), 1930:

³¹ **E. C. Richardson, ed.**, *Hieronymus liber de viris illustribus. Gennadius liber de viris illustribus*, TU 14 (Leipzig: J.C.A. Hinrichs, 1896), I. Անգլերեն թարգմանության համար տե՛ս **T. Halton**, *Saint Jerome, On Illustrious Men*, FC 100 (Washington: Catholic University of America Press, 1999):

³² Երկի ամենաինքնուրույն երկու հրապարակություններն էլ հերքում են Նակոր Մժբնեցուն վերագրվող ձեռագրական ավանդությանը, որը հայ ավանդության մեջ հայտնի է «Զգոն Իմաստուն» անունով. **N. Antonelli**, *Opera S. Jacobi Nisibi* (Rome: Typis Vativanis, 1756¹, 1765²) և «Նակոր Մժբնեցու Գիրքը որ կոչի Զգոն», Կ. Պոլիս 1824: Երկի քննական բնագրի համար լատիներեն թարգմանությամբ տե՛ս **G. Lafontaine, ed. et tr.**, *La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien*, CSCO 382-383, 405-406, 423-424 (Louvain: Peeters, 1977, 1979, 1980):

³³ «Փաստոսի Բուզանդացույ Պատմություն Նայոց ի չորս դպրություն», Վենետիկ, Ս. Ղազար, 1933⁴, էջ 33-36; **N. G. Garsoïan**, *The Epic Histories attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmut'iwnek')*, Harvard Armenian Texts and Studies 8 (Cambridge: Harvard University Press, 1989), 77-80, 431:

իբրև Սուրբ Գրիգոր Լուսավորչի ազգական է ներկայացնում³⁴: Տենց այս պարճառով է, թերևս, որ քարոզների հայերեն թարգմանությունը՝ հայրնի իբրև «Զգոնգիրք», պահպանվել է 13-18-րդ դարերի 35 ձեռագրերում, որոնցից ոչ մեկն ամբողջական չէ: Պակասում են 23 քարոզներից մի փոքր մաս, ինչպես նաև 20-23-րդ ճառերը: Ավելին, 12-րդ քարոզի երկրորդ մասն առանձնացվել էր դրվել է 18-ի եւ 19-ի միջև: Հայերեն թարգմանության հրապարակչի համաձայն՝ շար հավանական է, որ բնագիրը հայերեն է թարգմանվել Ե դարի երկրորդ կեսին³⁵: Այնուամենայնիվ, ասվածը հաստատվելու կամ ժխտվելու որևէ հստակ գիտական փաստարկ չունենք: Մյուս կողմից, ձեռագրական ավանդության ուշ շրջանի պարականությունը կարող է իր հերթին առաջադրել նաև ավելի ուշ շրջանի թարգմանություն, չնայած որ գուցաներներ կարելի է գտնել վերոնշյալ ճառերի եւ Սուրբ Գրիգորի վարդապետության միջև³⁶:

Առայժմ մի կողմ թողնելով Եփրեմի մարենագրության հարցը՝ քննարկենք մի քանի այլ երկեր, որոնք այս նախնական շրջանի թարգմանական գործունեության արդյունք են: Եդեսիայի Այիթալա եպիսկոպոսի (324/325-345) այսպես կոչված «Նովական թուղթը» պահպանվել է միայն հայերենով: Այս կարճ փոքրիկ ներածվել է Geerards-ի *Clavis Patrum Graecorum* մարենագրության մեջ եւ այդ պարճառով ուսումնասիրողների մեծ մասը երկար ժամանակ այն համարում էր հունարենից թարգմանված մի գործ³⁷: David Bundy-ն մի քանի կարճ, բայց բովանդակալից հոդվածներով ցույց տվեց, որ թուղթը թարգմանված է առերեւելից: Իր առաջին երկու հոդվածներում գիտնականը, ցույց տալով թղթում առկա Նիկիական հանգանակի ազդեցության հետքերը, ապացուցեց նաև, որ թղթում բացակայում են Կոստանդնուպոլսի 381 թ. Տիեզերական ժողովից հետո տալով հանգանակի հետքերը³⁸: Ներկայումս, քիչ հավանական է, որ թղթի ներկայիս

34 «Զոր ոմանք համբանեն, եթէ Զգան ասեն եղբարն Գրիգորի, որ է Յակոբ. այլ ոչ գիտեն զպոյգն, զի Յակոբն այն հարաբերողի էր սրբոյն Գրիգորի, եւ անուն մար նորա՝ Խոսրովոնի», «Յովհան Մամիկոնեան, Պարմոթիւն Տարատույ», Մարենագիրք Նայոց, հր. Ե., Ե. դար, Անթիլիաս, Լիբանան 2005, էջ 1003: Տեն նաև անվերել թարգմանությունը՝ **L. Avdoyan, Pseudo-Yovhannes Mamikonian, The History of Taron, Occasional Papers and Proceedings, Suren D. Fesjian Academic Publications 6** (Atlanta: Scholars Press, 1993):

35 **G. Lafontaine, ed., La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien, vol. 383, 1977:** Հրապարակչին այսպեղ ավելի շուր հաստատում է, քան ապացուցում, որ Ափրահապի երկերի թարգմանությունն սկսվել է «արդեն Ե. դարի երկրորդ կեսից»:

36 Տեն **I. Տեր-Պետրոսյան**, Գրիգոր Լուսավորչի Վարդապետության ասորական աղբյուրները, Բաղեր Մարենագրարանի 15 (1986), էջ 95-109: Տեն նաև թմամնի թարգմանության ծանոթագրությունները՝ **R. W. Thomson, The Teaching of Saint Gregory**, Revised ed.; Avant: Treasures of the Armenian Christian Tradition 1, New Rochelle: St. Nerses Armenian Seminary, 2001:

37 Տեն **M. Geerard, Clavis Patrum Graecorum**, 5, vols., Corpus Christianorum, Turnhout: Brepols, 1974, II. 245, n. 3340: Նուսրեն տարբերակի օգրին թերված փաստրի համար տեն **M. G. de Durand**, "Un document sur le Concile de Nicée?", RSPH 50 (1966), էջ 615-627:

38 Շմնր. **Bundy D. D.**, "The Letter of Aithallah (CPG 3340): Theology, Purpose, Date," in IIIrd Symposium Syriacum 1980: *Les contacts du monde syriaque avec les autres cultures*, Orientalia Christiana Analecta 221, ed. R. Lavenant, Rome: Pontificum Institutum Studiorum Orientalium, 1983, էջ 135-142: **Նույնի**, "The Creed of Aithallah: A Study in the History of the Early Syriac Symbol", Ephemerides Theologicae Lovanienses 63 (1987), էջ 157-163: Մարենագրական ավելի մանրամասն տվյալների համար տեն **R. W. Thomson, A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD**, Corpus Christianorum, Turnhout: Brepols, 1995, էջ 29-88; **Նույնի**, "Supplement to A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD: Publications 1993-2005", LM 120 (2007), 169-179:

ձեր համապարասխանում է Այիթալլայի գրած նախնական փաբրերակին: Նիկիական ժողովի այսպիսի շեշտադրման առկայությունը ենթադրել է փալիս հինգերորդ դարյան մի թարգմանություն, երբ, ըստ Կորյունի, Նայոց Եկեղեցին կանոնական և հայրաբանական փաստաթղթեր էր հավաքում թարգմանության համար: Քիչ հավանական է, որ հեղափոխության փոքրամասնությունը այս թղթի նկատմամբ հեղափոխություն է առաջացել, քանի որ արդեն գերակշռող էին դարձել քրիստոսաբանական հարցերը: Ճիշդ է, որ հեղափոխության բնագրերում Նիկիայի ժողովի նկատմամբ հեղափոխությունը չի նվազում³⁹, սակայն վերոնշյալ բնագրերում որևէ ակնարկ չկա Այիթալլայի թղթին: Սույն փաստը վկայում է, որ թղթի նկատմամբ արդեն առկա է «մոռացության որոշակի վիճակ»:

Մաշտոցյան առաքելության այս վաղ շրջանում կամ դրանից անմիջապես հետո թարգմանվել են թերևս մի քանի այլ երկեր, որոնցից Չենոբ Գազիրացի (Վերին Զազիրայից) անունով հայրնի մատենագրի մի քանի երկեր⁴⁰: Չենոբը վաղ շրջանի եպիսկոպոսներից էր, Եփրեմի աշակերտներից, ում անունն ընդգրկված է Եփրեմի աշակերտների բոլոր անվանացանկերում⁴¹: Պահպանված բազմաթիվ փոփոխություններից հայրնի են Ավագ Ուրբաթի, Ուրվակի, Մարտիրոսաց, Մելքիսեդ Անտիոքացու նվիրված ճառեր և ներբողյաններ⁴²: Սույն երկերի բնական բնագիրը մեծ օգտակարություն կրերի, որովհետև դրանց առերևույթ բնագիրը համարվում է կորած: Չենոբի անունը, իբրև հավատի մեջ հեղինակություն, մեջբերված է «Արմար հաւարոյ» ժողովածուում⁴³, և նույնիսկ

39 ԺԲ. դարի հայ աստվածաբան Նովիանոս Սարկավագ Իմաստասերը կազմում է մի երկ՝ «Յաղագս հանգանակին հաւարոյ» խորագրով: Սույն աշխատությունը, որն իր անվանումն ստացել էր ժողովների և քրիստոսաբանական թեմաների մասին 14 խորհրդածություններից, ոչ մի մեջբերում չունի Այիթալլահ սարկավագի երկից, հմմտ. **M. Aramian**, “Yovhannes Sarkawag’s ‘Concerning the Symbol of Faith of the Three Hundred and Eighteen Fathers at the Council of Nicea’”, *SNTR* (1999), 1-32:

40 Տե՛ս **A. Vööbus**, *Literary, Critical and Historical Studies in Ephrem the Syrian*, PETSE 10 (Stockholm: Estonian Theological Society in Exile, 1958), 115: Նովիանոսի հեղինակն այն միտքն է արտահայտում, որ Չենոբը թերևս Գուգարթա գյուղից էր: Այս մասին ընդհանրապես փնտրել է **I. Ortiz de Urbina**, *Patrologia Syriaca* (Rome: Pontificum Institutum Orientalium Studiorum, 1958), էջ 79: Սույն մենագրության հեղինակը երբեմն խոսում է Չենոբ Ամիդացու մասին:

41 Այս մասին մանրամասնորեն փնտրել է **B. Outtier**, “Saint Ephrem d’après ses biographies et ses oeuvres”, *PdO* 4 (1973), էջ 20:

42 Այս բնագրերը հրատարակվել են 1922 թ. «Բազմավեպ» հանդեսում ոմն **L. S.**-ի կողմից: Ամբողջական մատենագրության համար փնտրել է **R. W. Thomson**, *A Bibliography of Classical Armenian Literature*, 88: Տե՛ս նաև **Ա. Վարդանան**, Չենոբ Գազիրացի և իր Դասական Մենագրությունները. *Հանդես Ամսոթայ* 35 (1921), 545-554, 36 (1922), 73-79, ամբողջական հրատարակությամբ՝ **Ա. Վարդանան**, Դասական մանր բնագրեր և ձեռագրական համեմատություններ Բ, Ազգային Մատենադարան 97, Վիեննա, Միսիթարեան Տպարան, 1923, էջ 96-120:

43 Այս երկը, որ հայրնի է նաև «Նաւարարմար» անունով, երբեք չի հրատարակվել: Հմմտ. **R. W. Thomson**, “The Shorter Recension of the Root of Faith”, *REA* 5 (1968), էջ 249-260: *Վարդան Այգեկցու գրքի արդյունք հանդիսացող «Արմար հաւարոյ» դավանաբանական երկերի ժողովածուի մասին առաջին հիմնարար ուսումնասիրություններից է Ն. Անասյանի հոդվածաշարը՝ հրատարակված «Մանր երկեր» ժողովածուում, Լոս Անջելես, 1987, էջ 223-300 (ընդգրկում է հեղինակի հոդվածները՝ «Նայ պարմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը», «Ներսես Շնորհալին և «Արմար հաւարոյ» ժողովածուն», «Արմար հաւարոյ»- աղբյուրներից. Իրենեսոս Լուգոնացի», «Արմար հաւարոյ»-ի աղբյուրներից. Բիսպարիոս Անտիոքացի և Գրիգոր Սքանչեղագործ», «Արմար հաւարոյ»- աղբյուրներից. Նախքան Սրճեցի, Չենոբ Եղեսացի և Դանեղա Եղեսացի»): «Արմար հաւարոյ»-ի գիտական բնագիրը հրատարակել է Ն. Բյուսեյանը՝ «Գիրք հաւարարութեան և արմար հաւարոյ», Երևան, 1998, էջ 151, 249 և 252: Երկը մեզ է հասել երկու ընդարձակ

ավելի վաղ շրջանի պարականոց Սյրեփանոս Սյունեցու (685-735) «Յադագս անապականության» թղթում⁴⁴:

Շար հնարավոր է, որ Ադայի վարդապետության հայերեն թարգմանությունն այս առաջին թարգմանական շրջանում է իրականացվել⁴⁵: Տեքստի պարմությունը շար բարդ է ու խճճված, եւ վերջնական լուծում դեռեւս չի ստացել⁴⁶: Նայերեն թարգմանությունը բնօրինակից այնքան մեծ փափրկություններ ունի, որ նույնիսկ կարելի է այն ոչ թե թարգմանություն, այլ պարզապէս խմբագրություն-փոխադրւած անվանել՝ սերպորեն առնչվելով հայ եւ ասորի եկեղեցիների այն ջերմ մթնոլորտին, երբ Եդեսիայից ասորի քրիստոնյա քարոզիչները ժամանում էին Նայասարան: Այսպէղի հետք է կապված նաեւ հայոց այբուբենի սերեղծման պարմության մի նշանակալի մասը: Նամենայն դեպս, պէրք է եզրակացնել, որ երկն ավելի շուր փոխադրւած է, քան թարգմանություն⁴⁷: Մովսես Խորենացու «Պարմութիւն Նայոց»-ում, որքեղ Արգարր դառնում է «հայոց եւ ասորոց թագաւոր», այս երկր, փաստորեն, ներկայացված է իբրեւ Արգար թագավորի դարձի հայերեն փափրերակ⁴⁸:

Այս շրջանից թարգմանված եւ մեզ հասած վաղ շրջանի մի քանի վարքեր էլ թերեւս կարելի է առանձնացնել: Մակայն այս երկերի բնագրի թվագրման համար մեծ ջանք ու աշխատանք է պէրք. նույնը կարելի է ասել նաեւ նրանց թարգմանությունների վերաբերյալ⁴⁹: Դ. դարի Ասորեսարանի եւ Պարսկասարանի վկաների կյանքը նկարագրող «Վկայք Արեւելից» ժողովածուն բնդհանրապէս վերագրվում է Ե. դարի հեղինակ Արրահամ Խոստովանողին: Այն ամենայն հավանականությամբ Ե. դարի գործ է՝ գրված Մաշտո-

եւ համառար խմբագրությամբ:

44 Բավական երկար ժամանակ ուսումնասիրողներին հասանելի էր միայն Գ. Տեր-Մկրտչեանի հրապարակությունը՝ «Սյրեփանոսի Իմաստասիրի ասացեղ Վասն անապականութեան մարմոյն», Արարար 35 (1902), էջ 368-400, Ջնոթ Գաղիլացուց արված մեջբերումը րեն էջ 375-376: Տէն նաեւ նոթ հրապարակությունը Ն. Քյոսեյան, «Սյրեփանոսի Իմաստասիրի ասացեղ Վասն անապականութեան մարմոյն», Մարենագիրք Նայոց, հր. Ջ., Անթիլիսս, Լիբանան, 2007, էջ 439-457:

45 Տէն G. Howard, *The Teaching of Addai, Texts and Translations 16, Early Christian Literature Series 4* (Missoula: Scholars Press, 1981), հայերեն թարգմանության համար րեն **Ղերութնայ Եղեսացի**, Թոթթ Արգարու Թագաւորի եւ թարգութիւնք Սրբոյն Թաղէի Առաքեղոյ, Երուսաղեմ, 1868, «Թոթթ Արգարու», Մոթք Ղազար, Վենեթիկ, 1868:

46 Տարքեր թարգմանությունների արժեոթման համար րեն A. Desreumaux, *Histoire du roi Abgar et Jésus. Présentation et traduction du texte syriaque intégral de la Doctrine d'Addai* (Paris: Brepols, 1993), իսկ ժամանակի պարմական համարքերի եւ ջարագովական րրամաթությունների համար րեն A. Mirkovic, *Prelude to Constantine: The Abgar Tradition in Early Christianity, Arbeiten zur Religion und Geschichte des Urchristentums 15*, Frankfurt am Main/ New York: Peter Lang, 2004:

47 Օրինակ, Ադոան չի մահանում Եդեսիայում, ինչպէս ասորական բնագրում է, այլ գնում է Նայասարան, հիմնում առաջին եկեղեցին եւ նահապակվում Մանարոյկ թագավորի ձեոթով, հմմթ. R. W. Thomson, "Syrian Christianity and the Conversion of Armenia", էջ 165-166, **Նույնի**, "Early Armenian Christianity and Edessa", էջ 107-110: Նայոց Եկեղեցու՝ ասորական եւ բոթգանդական եկեղեցիների հետ հարաբերությունների եւ բաժանման մասին հիմնարար մի աշխատություն է նաեւ հեթեյալ մենագրությունը N. Garsoian, *L'Église arménienne et le Grand Schisme d'Orient*, CSCO 574, Subsidia 100 (Louvain: Peeters, 1999):

48 Տէն Մովսէս Խորենացի, Պարմութիւն Նայոց, II. 26-33:

49 Ասորական բնագրի համար րեն P. Bedjan (ed.), *Acta Martyrum et Sanctorum*, 7 vols., Paris/ Leipzig: Harrassowitz, 1890-1897; G. Wiessner, *Untersuchungen zur syrischen Literaturgeschichte, I: Zur Märtyrerüberlieferung aus der Christenverfolgung Schapurs II*, Göttingen: Harrassowitz, 1967:

ցի առաքելությունից մի փոքր հետո⁵⁰: Ինչպես շար-շար երկերի համար, այն նույնպես կամ վերագրվում է ավելի ուշ շրջանի կամ էլ տեքստում առկա վարքագրական տեղա-նումներն են ավելի ուշ շրջանի՝ հիմնված լինելով հիմնականում ավելի վաղ շրջանի մի սրբի կյանքի մանրամասների վրա : Ներուաբար, կարելի է ասել, որ այս երկերի հայերեն թարգմանությունները իրականացվել են Կիլիկյան շրջանում (այս մասին տե՛ս ստորև) : Մի վերջին տեքստ էլ՝ Խիկարի իմաստությունը, նույնպես թարգմանվել է ասորերենից՝ ամենայն հավանականությամբ հենց այդ վաղ շրջանից⁵¹:

ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆ

Վաղ թարգմանական այս շրջանից անմիջապես հետո, որը կարող ենք թերևս անվանել «միջին» կամ «միջանկյալ» շրջան, երբ, ըստ Լ. Տեր-Պերրոսյանի, հունարան դպրոցի ազդեցությամբ բացառվել է ասորերենի որևիցե հետք⁵², այնուամենայնիվ, մի քանի բնագրեր թարգմանվել են ասորերենից: Սակայն դրանց թարգմանությունը չի կրել շարունակական և ծրագրված բնույթ: Թարգմանված այդ երկերից են Աբդիշո եպիսկոպոսի թղթերը՝ գրված Դվինի երկրորդ ժողովի (555) առիթով և պահպանված է «Գիրք Թղթոց» ժողովածուում⁵³: Մեկ այլ կարևոր գործ է Ալեքսանդրիայի միաբնակ-հակա-քաղկեդոնական պապրիարք Տիմոթեոս Կուզի «Նակաճառություն» երկը, որն ասորերենից թարգմանվել է նույն այս ժամանակաշրջանում⁵⁴: Աբդիշոյի թղթերն ու Տիմոթեոսի

50 Տե՛ս **Գ. Տեր-Մկրտչյան**, Վկայք Արեւելից, Թարգմանությունը յԱսորականէն, Երեւան, ՆԽՄ ԳԱԱ, 1976. **Լ. Տեր-Պերրոսյան**, Աբրահամ խոսքովանողի «Վկայք Արեւելից»-ը, Երեւան, ՆԽՄ ԳԱԱ, 1976:

51 **F. C. Conybeare, R. Harris, A. S. Lewis**, *The Story of Ahikar from the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavic Versions*, Բ. վերանայված հրապ., Cambridge: Cambridge, University Press, 1913: *Խիկարի իմաստության բնագրի բնական ուսումնասիրության և հրապարակության համար տե՛ս **Ա. Մարտիրոսյան**, Պատմություն և Խրատք Խիկարայ Իմաստուն (հայկական խմբագրություն), Գիրք Ա., Երեւան, 1969, Գիրք Բ., Երեւան, 1972:

52 Սրանով, անշուշտ, նպատակ չունենք թերագնահատելու Լ. Տեր-Պերրոսյանի առաջ քաշած որակումը. այս ժամանակաշրջանում անկասկած գերիշխող էին հունարեն բառերն ու թարգմանությունները, որոնք հիմնականում փիլիսոփայական և բանասիրական բնույթ էին կրում՝ աչքի ընկնելով քառասյի թարգմանությամբ: Տե՛ս, օրինակ, **A. Terian**, “The Hellenizing School: Its Time, Place and Scope of Activities Reconsidered”, *East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period*, Dumbarton Oaks Symposium, 1980, **N. G. Garsoian, T. F. Mathews and R. W. Thomson** (ed.), *Washington: Dumbarton Oaks*, 1982, էջ 175-186:

53 Աբդիշոյի կողմից Նայ Եկեղեցու նվիրատվությանն ուղղված չորս նամակ է պահպանվել՝ «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 58-69: «Գիրք Թղթոց», խմբ. Նորայր արք. Պողարյան, Երուսաղեմ, 1994, էջ 181-195: Բ. և Դ. նամակներն առկա են անգլերեն թարգմանությամբ՝ **Leif Frivold**, *The Incarnation: A Study of the Doctrine of the Incarnation in the Armenian Church in the 5th and 6th centuries according to the Book of Letters*, Oslo: Universitetsforlaget, 1981, էջ 88-106, իսկ բոլորովին վերջերս դրանք բոլորն էլ թարգմանվել են ֆրանսերեն՝ **N. Garsoian**, *L’Église arménienne et le Grand Schisme d’Orient*, էջ 463-473:

54 Տիմոթեոսն ինքը կարծես թե գործին ավելի երկար խորագիր է տվել, որն սկսվում է հետևյալ բառերով՝ «Յաղագս միութանն-Քրիստոսի»: Ասորերեն համարժեքը հրապարակվել է բոլորովին վերջերս՝ **R. Y. Ebied & L. R. Wickham**, “Timothy Aelurus: Against the Definition of the Council of Chalcedon”, *After Chalcedon: Studies in Theology and Church History*, Orientalia Lovaniensia Analecta 18, CA. Laga, J. A. Munitiz and L. van Rompay (ed.), Leuven: Departement Oriëntalistiek, 1985, էջ 115-166: Նայերեն ամբողջական բնագիրը հրապարակվել է Կ. Տեր-Մկրտչյանի և Ե. Տեր-Մինասյանի կողմից՝ Timothy Aelurus, des Patriarchen von Alexandrien, Widerlegung der auf der Synode zu Chalcedon festgesetzten Lehre. Armenischer Text, Leipzig: J. C. A. Hinrichs, 1908: Տե՛ս նաև **J. Lebon**, “Version arménienne et version syriaque de Timothée Aelure”, *Նանդես Ամսոբայ* 41 (1927), էջ 713-722:

երկր պահպանել են այնպիսի գործերից մեջբերումներ ու բնագրեր, որոնց հավանական աստրերենն այլևս կորսված է: Տիմոթեոսի երկի պարագային հայերեն թարգմանությունը ներկայացնում է աստրերենից ավելի ամբողջական մի բնագիր (աստրերենն էլ իր հերթին կորսված հունարեն բնօրինակից կապարված մի թարգմանություն է): «Narratio de Rebus Armeniae» քաղկեդոնական երկի վկայությամբ՝ բոլոր այս երկերը, Փիլոքսենոս Մաբուզեցու գործերի հետ միասին, թարգմանվել են Դվինի ժողով են բերվել Աբդիշոյի կողմից⁵⁵: Այս վերջին փաստը խոսում է այն մասին, որ թերևս Տիմոթեոսի «Նակաճառութիւնը» թարգմանվել է աստրերենից⁵⁶:

Նարկ է այսպեղ նշել նաև Թ. դարի Մծբինի ավագ սարկավագ Նանայի կամ Նոնոսի գրած Նովիանոս Ավետարանի շար կարևոր մեկնությունը: Նանան ավելի հայտնի էր երկրասարդ փարիքում Աշոյ Մասկեր հայոց իշխանի պալատում 812 թ. Թեոդորոս Աբու Քուրայի քաղկեդոնական հայացքների դեմ արենաբանությամբ: Նա մասնակցել է նաև 862 թ. Շիրակավանի ժողովին⁵⁷: Աշոյ թագավորի պալովերով արաբերենով գրված Նովիանոս Ավետարանի նրա մեկնությունը պահպանվել է միայն հայերենով և Թ. դարի հայ քրիստոսաբանական մտքի կարևորագույն նմուշներից է⁵⁸: Քննական ուսումնասիրությունը թերևս կարող է բացահայտել երկի աստրերեն բնագիրը⁵⁹:

ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ

Ասորական գրականության նկարմամբ իսկական հեղափոխություն և թարգմանական զարթոնք է սկսվում Կիլիկյան շրջանում⁶⁰: Գրիգոր Բ. Վկայասեր Կաթողիկոսը

55 G. Garitte, *La Narratio de rebus Armeniae: Edition critique et commentaire*, CSCO 132 (Louvain: Petters, 1952), § 71, էջ 36, ծանոթագրության համար փն էջ 163-166: Փիլոքսենոսից թարգմանաբար պահպանվել են ընդամենը պատարիկներ:

56 J. Lebon, “Version arménienne et version syriaque de Timothée Aelure” հոդվածը հրապարակվեց Narratio-ից առաջ, իսկ հեղինակն էլ պնդում էր, որ աստրերենը հեղափոխի գործ է, հայերենն էլ արտացոլում է հունարեն բնագիրը:

57 Տե՛ս K. Maksoudian, “The Chalcedonian Issue and the Early Bagratids: The Council of Širakawan” REA 21 (1988), էջ 333-344:

58 Տե՛ս Ն. Բ. Չափեան, Նանա Ասորիի Մեկնություն Յովիանոս Ավետարանին, Ս. Ղազար, Վենետիկ, 1920: Տե՛ս նաև L. Mariès, “Un commentaire sur l'évangile de saint Jean rédigé en arabe (circa 840) par Nonnus (Nana) de Nisibe, conserve dans une traduction arménienne (circa 856)” REA 1 (1920), էջ 273-296; D. D. Bundy, “The Commentary of Nonnus of Nisibis on the Prologue of John”, Actes du premier congrès d'études arabes chrétiennes, Orientalia Christiana Analecta 218, Rome: Pontifical Oriental Institut, 1982, էջ 123-133:

59 Չնայած նա ավելի շար հայտնի է իր գիտական աշխատություններով, սակայն սա մի ժամանակաշրջան էր, երբ Նանայն իբև Բսեակը երկեր էր թարգմանում հունարենից և արաբերենից իրեն ծանոթ միջնորդ թարգմանիչների օգնությամբ: Ներկաբար, հնարավոր է, որ Նանայի երկն էլ թարգմանվել է այդպիսի մի ասորական միջնորդ թարգմանությունից: Այս մասին ընդհանուր գծերի մեջ փն է D. Lacy O'Leary, *How Greek Science Passed to the Arabs*, London: Routledge & K. Paul, 1949:

60 Այս դարաշրջանի հայ-ասորական փոխհարաբերությունների մասին ընդհանուր գաղափար կազմելու համար փն է I. Ն. Տեր-Պետրոսեան, Ասորիների դերը Նայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ.-ԺԳ. դարերում. *Բազմավեպ* 145 (1987), էջ 122-161. Նույնի, «Ասորական աղբյուրները ԺԲ.-ԺԳ. դարերի հայ-ասորական յարաբերությունների մասին», *Բազմավեպ* 146 (1988), էջ 112-154: Այս երկու հոդվածները հեղափոխում հրապարակվել են ամբողջական գրքույկով՝ I. Ն. Տեր-Պետրոսեան, Ասորիների դերը Նայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ.-ԺԳ. դարերում, Bibliothèque d'Arménologie “Bazmavap” 28, Ս. Ղազար, Վենետիկ, 1989, հմմտ. նաև J. J. S. Weitenberg, “Armeno-Syrian cultural relations in the Cilician

(†1105) հայրնի էր իր թարգմանական լայնածավալ գործունեությամբ: Նա ճանաչող-դեղ էր ամբողջ Միջերկրայքով՝ հավաքելու և թարգմանելու համար հարկապես վարքագրական հուշարձանները: Նրա այս առաքելության շնորհիվ էր, որ կամա-ակամա ծնունդ առավ թարգմանչական մի հզոր շարժում, որը շարժեց հաճախ թերագնահատվել է և որը, սակայն, սպորեա ներկայացված փաստերի հիման վրա, մեծապես գերազանցում է ոսկեդարյան թարգմանչական շրջանին: Պահպանվել և մեզ են հասել ուշ շրջանի սրբոց վարքեր, որոնցից են Բարդիշոյի, Բարսումա (Պարսամ) ճգնավորի, Մարութաս Նփրկերպոցու, Տիգրիբուզրի, Սարգիս Զորավարի, Մար Ավգինի՝ ասորական վանականության հռչակավոր հիմնադրի, ինչպես նաև Եփրեմ Ասորու վարքերը: Քանի որ Գրիգորի առաքելության հիմնական նպատակն այդ վարքերը հավաքելն ու թարգմանելն էր, կարող ենք թերեւս ենթադրել, որ դրանցից շատերը թարգմանվել են նրա կենդանության օրոք, չնայած այսօր անհնար է ճշտել դրանց թարգմանության վայրն ու թարգմանիչներին: Շատ քիչ դեպքերում են մեզ հայրնի թարգմանության մանրամասնությունները: Գիլբերտ, որ «Եփրեմի վարքը» թարգմանվել է Գրիգորի իսկ կողմից 1101թ.⁶¹: Նրա պարզվերով է, որ ասորի Միքայել քահանան թարգմանել է «Սուրբ Սարգսի վարքը», որն այնուհետև խմբագրվել է Ներսես Շնորհալու կողմից 1158թ.⁶²: Քիչ ժամանակ անց Գրիգոր Գ. Պահլավունին (1113-1166) պարզվիրում է մեկ այլ ասորի քահանայի՝ Գրիգոր Մելիքիների անունով, թարգմանելու Պարսամ ճգնավորի վարքը՝ խմբագրությունը նորից հանձնելով հեղափոխի Կաթողիկոս Ներսես Շնորհալուն⁶³: Անշուշտ, Գրիգոր Բ. Վկայասերը թարգմանել է շարժվելի վարքեր, քան այսօր վերագրվում է նրան: Նրա կողմից թարգմանության պարզված մեկ այլ կարևոր աշխատություն է Դանիել Սալախացու գրած Սաղմոսաց մեկնությունը: Դանիել Սալախացին հեղափոխի դարձավ Թեո-Մավգալթի եպիսկոպոս: Սաղմոսաց մեկնության ասորերեն բնագիրը գրվել է 541/542 թթ.: Ամենայն հավանականությամբ այն ասորալեզու ամենահին Սաղմոսաց մեկնությունն է, որն ամբողջական բնագրով մեզ չի հասել: Մեկնության ամբողջական բնագիրը պահպանվել է միայն հայերեն՝ դեռևս անսխալ ձեռագիր վիճակով⁶⁴: Նշված բնագրերից որևէ մեկը հրապարակված չէ, բայց հուսանք, որ երևի հայերեն թարգմանության, երևի ասորերեն բնագրի հրապարակությունները լույս կբերվեն մոտ ապագայում⁶⁵:

period (12th- 14th ca.)", *The Syriac Renaissance*, Eastern Christian Studies 9, ed. H. Teule & C. F. Tauwinkl with R. B. ter Haar Romeny and J. J. van Ginkel, Louvain: Peeters, 2010, էջ 341-352:

61 Եփրեմի վարքը հրապարակվել է թարգմանվել է ֆրանսերեն՝ **L. Ter-Pétrossian, éd., B. Outtier, tr., Textes arméniens relatifs à S. Éphrem**, CSCO 473-474, Louvain: Peeters, 1985: Outtier-ն նկատում է, թե ինչ արագությամբ են գրիչները Գրիգոր Վկայասերին պարզվիրապովից դարձրել թարգմանիչ:

62 Գրիգոր Վկայասերի կողմից թարգմանված վարքերի մեզ հայրնի ցանկի համար տես **Ծովական** (Ն. Պողարեան), Գրիգոր Վկայասեր և թարգմանությունը վարուց սրբոց. Միտ 41 (1967), էջ 430-432:

63 Այս մասին տես **Լ. Տէր-Պետրոսեան**, Ասորական աղբիւրները ԺԲ.-ԺԳ. դարերի հայ-ասորական յարաբերությունների մասին, էջ 154:

64 Մանրամասների համար տես **S. P. Cowe**, "Daniel of Salah as Commentator on the Psalter", *SP* 20 (1989), էջ 152-159: Այս երկի թարգմանիչը նույնպես անհայտ է:

65 Ասորերեն բնագրի հրապարակության և անգլերեն թարգմանության վրա աշխատում է Օքսֆորդի պրոֆեսոր Դեյվիդ Թեյլորը՝ "The Great Psalm Commentary of Daniel of Salah", *The Harp* 11-12 (1998-1999), էջ 33-42: Նայազիդական դասերնալի բազմաթիվ ուսանողներ ցանկություն են հայտնել այս երկի հայերեն

Գիտերնք նաև, որ Գրիգոր Բ. Վկայասերը ձեռնարկել է նաև մի քանի այլ արվածաբանական երկերի թարգմանություններ: Դրանցից են Հովհան Ոսկերեքանի «Հովհաննու Ավերաբանի մեկնությունը»՝ թարգմանված նախ ասորերենից ասորի քահանա Անդրեասի օգնությամբ, ապա խմբագրված ըստ հունարեն բնագրի՝ ճարտասանության ուսուցիչ Թեոփիստի աջակցությամբ⁶⁶: Թարգմանությունը, սակայն, Գրիգորի մահվամբ մնաց անավարտ, և հետագայում լրացվեց նրա աշակերտ Կիրակոս Դրագարկեցու կողմից⁶⁷: Հայրնի է, որ Գրիգորը նախաձեռնել էր նաև, Եփրեմի վարքի թարգմանությանը գուգահեռ, նրան վերագրված ուրիշ երկու ճառերի թարգմանությունը:

Այս շրջանում թարգմանվել են նաև պարմական բնույթի երկեր, որոնցից ամենակարևորն ու հարկանշականը, թերևս, Միքայել Ասորու «Ժամանակագրությունն» է՝ հսկա մի երկ, որ ընդգրկում է թե՛ համաշխարհային և թե՛ համաեկեղեցական իրադարձությունները՝ աշխարհի սրբեղծումից մինչև ԺԲ դարի վերջ: Սույն աշխատությունը երկիցս թարգմանվել է հայերեն, երկու խմբագրություններն էլ հրատարակվել են ԺԹ դարի վերջին: Առաջին թարգմանությունն իրականացվել է Կոստանդին Ա. Կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ ասորի քահանա Իշողի կողմից, երկի սրբեղծումից մոտ 50 տարի հետո⁶⁸: Երկրորդը, որ ամբողջովին համառոտված է թերևս միևնույն տարում, Վարդան Արևելեցու կողմից խմբագրված տարբերակն է⁶⁹: Միքայել Ասորու երկու կարճ, ոչ այնքան հայրնի երկեր՝ «Յաղագս քահանայութեան» և «Խոստովանութիւն հաւաքոյ» գրեթե նույն ժամանակաշրջանում թարգմանվել են հայերեն⁷⁰: Մեկ այլ՝ ոչ եկեղեցական երկ

թարգմանության վրա աշխատելու, սակայն նրանցից որևէ մեկը դեռ լքողնեմ մտադրություն չի հայրնել այս ուղղությամբ: *Ներկայումս մենք աշխատում ենք մեկնության հայերեն թարգմանության բնագրի վրա՝ պարսապելով այն հրատարակության ասորերեն բնագրի հետ համեմատությամբ: Ձեռքի վրակ ունենք մեզ հայրնի հայերեն չորս ձեռագրերի պարօնները՝ Զմմաթի ՏՊ 120, Վենետիկի Մխիթարյան Մարեննադարանի ՏՊ 1127, Երևանի ՄՄ ՏՊ 1179 և վերջապես, հայրնի հայագետ Բ. Ուրիկի անձնական ժողովածուի ձեռագիրը, որը մինչ այժմ հայրնի չէր հայագիրությանը: Այս չորս ձեռագրերի նախագաղափար օրինակը Զմմաթի ձեռագիրն է, որից էլ կարարվել են հետագայի բոլոր արարագրությունները: Մեկնության ասորերեն բնագրի ձեռագրական ավանդության մասին րեն **D. Taylor**, “*The Manuscript Tradition of Daniel of Salah’s Psalm Commentary*”, OCA 256 (1998), էջ 61-69, **Նույնի**, “*The Christology of the Syriac Psalm Commentary (AD 541/2) of Daniel of Salah and the “Phantasi” controversy*”, in **M. F. Wiles & E. J. Yarnold**, ed., *Studia Patristica XXXV* (Leuven 2001), էջ 508-515: Հայերեն ձեռագրական ավանդության մասին րեն **Ն. Քերոպտ Ա. Զրարեան**, «Դանիել Վրդ.՝ Ասորոյ Մեկնութիւն Սաղմոսաց Դարի. Ներածութիւն», Բազմավէլ 4-6 (1966), էջ 83-85, 168-171, 223-225, Բազմավէլ 3-5, (1967), էջ 69-74, Բազմավէլ 6-8 (1967), էջ 125-129, Բազմավէլ 1-3 (1968), էջ 17-20, Բազմավէլ 4-6 (1968), էջ 104-107:

66 Սա հավանաբար նույն Թեոփիստն է, որի դեմ ջարագովում էր Գրիգորի ժամանակակից Պողոս Տարոնացին, րեն **Ն. Պողարեան**, Հայ Գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 207:

67 Պարմական այս կերպարի մասին, ով հայրնի էր նաև Կիրակոս Գիրնական Վարդապետ անունով, րեն **Ն. Պողարեան**, Հայ Գրողներ, էջ 203-206, և **Ն. Ալիսինեան**, Կիրակոս Գիրնական (1050-1127). Հանդէս Անսորեայ 66, (1952), էջ 481-546:

68 «Միխայէլի Ասորոց Պարրիարքի Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1870: Երկի ֆրանսերեն թարգմանության համար րեն **V. Langlois**, *Chronique de Michel le grand, patriarche des syriens jacobites, traduit pour la première fois sur la version arménienne du prêtre Ischôk*, Venice: St. Ghazar Press, 1868:

69 «Միխայէլի Ասորոց Պարրիարքի Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1871: Տէն նաև **A. Schmidt**, “*Die zweifache armenische Rezension der syrischen Chronik Michaels des Grossen*”, LM 109 (1996), էջ 299-319: Ներկայումս բավական հանգամանակից կերպով տալիս է ասորերեն բնագրի և հայերեն երկու թարգմանությունների համեմատությունը:

70 Այս երկու երկերի ոչ հայերեն թարգմանությունն է հրատարակված, ոչ էլ ասորերեն բնագիրը:

է՝ «Յաղագս խնամոց ձիոյ» վերաբառումը, սույն ժամանակաշրջանում Աբուլ Փարազ Ասորու հեղինակությամբ եւ Նեթում Ա. թագավորի պատվերով թարգմանվել է ասորերենից հայերեն: Դժբախտաբար, մեզ չի հասել թարգմանչի անունը: Լ. Տեր-Պետրոսյանը նույնպես նշում է, որ այդ ժամանակաշրջանում մեծ ջանքեր էին թափվում՝ ասորական եւ արարական գիտական մարքի նվաճումները, մասնավորապես բժշկագիտական եւ բնագիտական ոլորտներում, ներմուծելու հայաստան⁷¹:

Այսպեղ պետք է նշել նաեւ մեկ այլ մեծ թարգմանչի ու մեկնիչի՝ Ներսես Լամբրոնացու անունը, ով 1175-1198 թթ. Տարսուհի եպիսկոպոսն էր: Հավասարապես ակտիվ գործունեություն ծավալելով սուրբգրային մեկնողական եւ միջեկեղեցական ոլորտներում նա նաեւ իրականացրեց մի շարք, հարկապես կանոնական բնույթի թարգմանություններ: Հավելումն մի քանի բյուզանդական երկերի թարգմանության՝ Լամբրոնացին ասորի վանական Թեոդորոսի օգնությամբ 1173 թ. թարգմանեց Ասորական Դպրասարանագիրքը⁷²:

Նույն այս ժամանակաշրջանում են թարգմանվել մի շարք հունարեն երկեր, որոնք, չնայած իրենց հունական ծագմանը, թարգմանվել են ասորերենից: Նշված երկերը ներառում են Եւագր Պոնուրացու վանական գրվածքների հսկա համակարգը⁷³: Իրենեո Տոշերը վաղուց արդեն ապացուցել է, որ այդ երկերի թարգմանությունները ոչ թե պարզ թարգմանություններ էին ասորերենից, այլ հրեյացի թարգմանության օգտագործվել են պարբեր ասորական խմբագրություններ, որոնք էականորեն պարբերվում են մեզ հասանելից: Չնայած ուսումնասիրողը խուսափում է թարգմանության թվականի եւ թարգմանչի վերաբերյալ կարծիք հայտնելուց, այնուամենայնիվ, չի բացառում մի քանի թարգմանիչների գոյությունը⁷⁴: Հայերենով պահպանվել են նաեւ Ե. դարի վանական Նեղոս

71 Տե՛ս Լ. Ն. Տեր-Պետրոսյան, «Ասորական աղբյուրները ԺԲ.-ԺԳ. դարերի հայ-ասորական յարաբերությունների մասին», էջ 154; Նույնի, Հայ հին թարգմանական գրականություն, էջ 15-16. «Ըստ մի թանկարժեք ձեռագրական հիշարակարանի՝ Կիլիկիայի Նեթում Ա. թագավորի պատվերով հայերեն են թարգմանվում նաեւ պողպատաձուլությանը, ձիադարձմանությանը, թրագործությանը եւ աստղագիտությանը նվիրված գրքեր»:

72 Բնագիրը երբեմն չի հրապարակվել: Ներսես Լամբրոնացու թարգմանական գործունեության մասին տե՛ս R. W. Thomson, *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, էջ 176-177, M. Ashjian, *St. Nerses of Lambron: Champion of the Church Universal*, New York: The Armenian Prelacy, 1993, էջ 40: *Հոդվածագիրն ամենայն հավանականությամբ ծանոթ չէ Դպրասարանագրքի հերթյալ հրապարակությանը՝ «Ասորական Դպրասարանագիրք», ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեց Արսեն վրդ. Գլորմեանց, Ս. Էջմիածին, 1917: Ասորերեն բնագրի բնական հրապարակության համար տե՛ս Walter Selb, Hubert Kaufhold, *Das Syrisch-Römische Rechtsbuch, Bd. I, Einleitung, Bd. II, Texte und Übersetzungen, Bd. III, Kommentar*, Wien 2002:

73 Բ. Սարգիսյան, Սրբոյ Նորն Եւագրի Պոնուրացոյ Վարք եւ Մարենագրութիւնը, Ս. Ղազար, Վենետիկ, 1907:

74 I. Hausherr, *Les Versions syriaque et arménienne d'Evagre le Pontique*, OC XXII.2, Rome: Pontificum Institutum Orientalium Studiorum, 1931; A. Sahinian et al., eds., Gheghard, Documenti di Architettura Armena 6, Milan: Edizioni Ares, 1973, էջ 11: Վերջինս, առանց որեւէ սկզբնաղբյուրի հիշարակության վրա հենվելու, Եւագրի երկերի թարգմանությունը վերագրում է Միսիթար Այրիվանեցուն (1220-ca. 1290): Սակայն որեւէ վկայություն չունենք, որ Միսիթարը երբեմն թարգմանել է դրանք: Սահինյանն ամենայն հավանականությամբ հենվում է ՄՄ Ն^թ 1500 ձեռագրի փնտելության վրա: Այս ձեռագիրը վստահաբար Միսիթարի ինքնագիրն է եւ պարունակում է Եւագրի մի քանի երկեր: Սակայն հավանական չի թվում, որ Միսիթարն ինքը թարգմանել է դրանք: Հմմտ. նաեւ «Մայր Յուզակ Հայերեն Ձեռագրաց Մաշրոցի Անուան Մարենագրարանի», Փ. Այնթափեան (խմբ.), Երևան, 2007, Եւագրի երկերի համար տե՛ս IV. 1449-1462: Տե՛ս նաեւ R. Darling Young, *"The Armenian Adaptation of*

Անկյուրացու՝ բավական մեծ քանակությամբ երկերը: Ինչպես արդեն ցույց է տվել J. Muyldermans-ը կես դար առաջ, արևիկ են երկու տարբեր հայերեն թարգմանություններ, իսկ երկերի մի մասն էլ ավելի շուր թարգմանված է ասորերենից, բան հունարենից⁷⁵: Այս երկու երկերի վերաբերյալ հարկ է նշել, որ դրանց մեկնությունները հայ իրականության մեջ հայտնվում են միայն ԺԳ.-ԺԴ. դարերում: Ներկառար, կարելի է առաջ քաշել այն կարծիքը, որ այս երկերի թարգմանություններն ավելի շուր Եւագրի եւ Նեղոսի երկերի հանդեպ վերածնված հեղափոխության ծնունդ են. այս հեղափոխության եւ երկերի թարգմանության միջեւ անցել է քնդամենը մի քանի տարի⁷⁶: Ներագա ուսումնասիրությունները թերեւս այլ՝ հունարեն գրված, բայց ասորերենից հայերեն թարգմանված երկեր էլ բացահայտեն: Այս թարգմանություններով կարծես վերածնության մի նոր ալիք առաջ եկավ արդեն զարթոնքի ուղին բռնած հայ դպրությանը⁷⁷: Այսպիսով, անցնում ենք այս ժամանակաշրջանի համար կարեւոր երկու կարեւոր հեղինակի, որոնք մեծ տեղ են զբաղեցնում այս ժամանակաշրջանի հայերեն թարգմանությանը մեջ:

ա. Ս. Եփրեմ Ասորի.- Տիրապետող կարծիք է, որ Եփրեմ Ասորուն վերագրված հայալեզու քնդարձակ ժառանգությունը (այն կազմում է վեց հարյուր եւ, քստ Լ. Տեր-Պետրոսյանի, հայաբանական ուսումնասիրության դաշտի մեջ ամենարեղարձակն է)⁷⁸ կազմել է այն գրականության առանցքը, որը Ե. դարում Մաշտոցի կողմից Եղեւսիա ուղարկված Եզնիկի եւ Տովսեփի՝ ասորերենից հայերեն կապարած թարգմանությանը հիմնարար շաղախն էր⁷⁹: Անշուշտ, դժվար է պարկերացնել, որ Ե. դարում Եղեւսիայում իրականացվող առաքելության ժամանակ Եփրեմ Ասորու գրչին պարկանող որեւէ երկ անտեսվեր: Սակայն վերջին ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Եփրեմ Ասորուն վերագրված այս հայերեն երկերից շատերը հեղափոխի արդյունք են եւ չէին կարող թարգմանված լինել Կիլիկյան շրջանից առաջ: Եփրեմին վերագրված երկերի մեծամասնության պարագային հենց հայերեն այդ թարգմանություններն են մարնում դրանց՝ ավելի ուշ

Evagrius' Kephalaia Gnostica”, Origeniana Quinta, BETL 105, ed. R. J. Daly, Louvain: Peeters, 1992, էջ 535-541: Վերջինս Եւագրի երկերի թարգմանությունը թվագրում է Ջ. դարով՝ իր փաստարկները, սակայն, անորոշ կերպով հիմնելով ժամանակակից գրականությունից մեջերված զուգահեռներով:

75 Տե՛ս J. Muyldermans, “*S. Nil en version arménienne*” *LM* 56 (1943), էջ 77-113:

76 Ձեռագրերում պահպանվել են Գրիգոր Սկեռացու (1150-1230), Կիրակոս Երզնկացու (ca. 1280-1355) եւ Մարթեոս Ջողապետ (1352-1412) անուններով Եւագրի երկերի մեկնություններ, որոնցից ոչ մեկն էլ հրապարակված չէ: Այս երկերի փոխհարաբերության ուսումնասիրությունը նմանապիսի (ի դեպ, նույնպես անպիսի) ասորալեզու մեկնությունների հետ, ինչպիսին է Դիոնիսիոս բար Սալիբիի երկը, կարող է լույս տալ այս ոլորտում:

77 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյանի եւ J. J. S. Weitenberg-ի երկերը ծանոթ. 60-ում:

78 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Վին հայ թարգմանական գրականություն, էջ 30: Նա Եփրեմին որակում է իբրեւ «արեւելյան հայաբանության մեծագույն հեղինակություն»: Այս հարցի մասին քիչ թե շատ մանրամասն արդեւկության համար տե՛ս (գրականության համեմատաբար ամբողջական ցանկով) E. G. Mathews, Jr., “*The Armenian Literary Corpus Attributed to St. Ephrem the Syrian: Prolegomena to a Project*”, *SNTR* 1 (1996), էջ 145-168:

79 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Վին հայ թարգմանական գրականություն, էջ 5, M. Albert, R. Beylot, R. G. Coquin, B. Outtier, Ch. Renoux, eds., *Christianismes orientaux. Introduction à l'étude des langues et des littératures*, Paris: Cerf, 1993, էջ 136. «Այս թարգմանությունները (նկատի ունի Եփրեմի եւ Ափրահապի-ժնթ. թրգմ.), կարարված լինելով Ե. դարում, մեծապես ազդեցին հայ միջնադարյան գրականության վրա»:

շրջանում թարգմանված լինելը: Խոսքը վերաբերում է մասնավորապես աստվածաշնչյան մեկնություններին⁸⁰: Ասորերենից հայերեն թարգմանված մեկնությունները բնագրից կարարված թարգմանություններ են, սակայն բովանդակային առումով ունեն նաև Թ. դարի ասորական մեկնողական երկերից արված քաղվածքներ: Դրանք մասնավորապես ոչ միայն բառացիորեն մեջբերում են Հակոբ Եղեսացու (Պ 708) անվան հեղինակով շրջա մեկնությունից հաղվածներ, այլ նաև ավելի սերտ աղերսներ ունեն, ինչպես հայտնաբերվել է հետազոտում, նույն շրջա-մեկնության ավելի ընդարձակ քարտեզակի հեղինակները Եղեսայում հայտնի Սեդեքիոս վանականին էլ թվագրված Թ. դարի երկրորդ կեսով: Նախկին է, ուրեմն, որ այս մեկնությունները չէին կարող Ժ. դարից շուրջ թարգմանված լինել⁸¹: Վարդան Արեւելցու աստվածաշնչյան մեկնություններում պահպանված հիշատակությունից (1200-1271)⁸² բացի ավելի վաղ որևէ վկայություն չունենք՝ ներքին կամ արտաքին, որ այս մեկնությունները գոյություն են ունեցել հայերեն: Շարհնարավոր է նույնիսկ, որ Վարդան Արեւելցին ինքն է դրանք թարգմանել հայերեն:

Եփրեմ Ասորու նորկապարանյան մեկնություններից Քառավերարանի մեկնություն⁸³ ընդհանրապես համարվել է վաղ շրջանի թարգմանություն, չնայած երկն ամբողջությամբ պարունակող ձեռագրերից էլ ոչ մեկն էլ ԺԲ. դարից ավելի վաղ շրջանից չէ: Ասորերեն բնագիրն ամբողջությամբ պահպանված միակ ձեռագիրը դեռևս լիովին վերծանված չէ⁸⁴, մինչդեռ վերոնշյալ երկու հայերեն ձեռագրերը արեքսի առումով ամբողջ-

80 Այս մեկնություններն առաջին անգամ հրատարակվել են Եփրեմի մատենագրության հատորում՝ «Սյրբյն Եփրեմի մատենագրությունը», 4 հր., Ս. Ղազար, Վենետիկ, 1836. Ա. հատորը պարունակում է Նվաճապոյանի, Նետի, Դաբալորաց, Ա.-Դ. Թագավորաց եւ Ա.-Բ. Մնացորդաց գրքերի մեկնությունները: Այս ամբողջ ներկայումս վերահրատարակվում է զուգադիր անգլերեն թարգմանությամբ: Արդեն հրատարակվել են Նվաճապոյանի մեկնությունները՝ E. G. Mathews, Jr., ed. and tr., *The Armenian Commentary on Genesis attributed to Ephrem the Syrian*, CSCO 572-573, Louvain: Peeters, 1998; Նույնի, *The Armenian Commentaries on Exodus-Deuteronomy attributed to Ephrem the Syrian*, CSCO 577-578, Louvain: Peeters, 2001: 1836-ի հրատարակության Բ. հատորը պարունակում է Դիափեսասարանի եւ Ավերարանի մեկնությունները, իսկ Գ. հատորում հրատարակվել են Պողոսի թղթերի մեկնությունները:

81 Նարեկ մասին ամբողջական գաղափար կազմելու համար տե՛ս E. G. Mathews, Jr., *The Armenian Commentary on Genesis attributed to Ephrem the Syrian*, Columbia University Ph. D. Thesis (Ann Arbor: UMI, 1996), տե՛ս նաև Նույնի, "The Armenian Version of Ephrem's Commentary on Genesis" in *The Book of Genesis in Jewish and Oriental Christian Interpretation. A Collection of Essays, Traditio Exegetica Graeca 5*, ed. J. Frishman and L. Van Rompay (Louvain: Peeters, 1997), էջ 143-161; Նույնի, "The Armenian Commentary on Genesis attributed to Ephrem the Syrian: General Characteristics and Considerations", SNTR 2 (1997), էջ 199-232:

82 Վարդան Արեւելցին սղեղծագործել է մի շարք ոլորտներում՝ պարմագրություն, մեկնություն, փիլիսոփայություն եւ քերականագիտություն, ինչպես իր մոտ ժամանակակից Բար Ներբայոսը: Նրա ամենաձավալուն մեկնությունը Նվաճապոյանի մեկնությունն է, դեռևս անտիպ, որը պահպանվել է 70 ձեռագրերով: Նա այնպիսի առաջությամբ է մեջբերում Եփրեմի մեկնությունից, որ հաճախ այս երկու երկերը շփոթվում են, եւ Վարդան Արեւելցու երկն ավելի շատ ոչ թե Աստվածաշնչի, այլ Եփրեմի մեկնության րպակությունն է թողնում, տե՛ս Ն. Պողոսյան, Նայ Գրողներ, էջ 294-300:

83 L. Leloir, ed. et tr., *Saint Ephrem. Commentaire de l'évangile concordant, version arménienne*, CSCO 137, 145, Louvain: Peeters, 1953, 1954:

84 L. Leloir, ed. et tr., *Saint Ephrem. Commentaire de l'évangile concordant. Texte Syriaque (Manuscrit Chester Beatty 709)*, Chester Beatty Monographs 8, Dublin: Hodges Figgis, 1963; Նույնի, *Saint Ephrem. Commentaire de l'évangile concordant. Texte Syriaque (Manuscrit Chester Beatty 709) Folios Additionnels*, Chester Beatty Monographs 8, Louvain: Peeters, 1990: Անգլերեն թարգմանության համար տե՛ս CA. McCarthy, *Saint Ephrem's Commentary on Tatian's Diatessaron. An English tr. of Chester Beatty Syriac Ms 709 with Introduction and Notes*,

ջական են՝ հակառակ այն պարագային, որ որոշ մասերում դրանք փաթեթավորվում են ատորերեն բնագրից: Այս երկու փաթեթակների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեկնությունն ավելի շուրջ Եփրեմի աշակերպների գրչի արդյունք է, որտեղ առկա են նույնիսկ Եդեսիայի տեղական երկաթնակ դպրոցի որոշ փաթեթեր⁸⁵: Ազաթանգեղոսի Պապմության մեջ գերեզմանավորված Սուրբ Գրիգորի Վարդապետության հեղինակը բավականին ծանոթ է այս մեկնությանը, չնայած դժվար է ասել՝ ատորերեն բնագրի՞ն, թե՞ հայերեն թարգմանությանը⁸⁶:

Դիափեսասարմոնի մեկնության հեղի կապված առկա է նաև մեկ այլ հեղափոխական երկ՝ պահպանված նույն այդ երկու ձեռագրերով եւ վերնագրված՝ «Մեկնություն Անտարա-նին»⁸⁷: Սույն երկի ժամանակակից հրատարակիչն այն համարում է Եփրեմի գրչի գործ, բայց այս փաստարկը դեռևս համոզիչ չէ⁸⁸: Այսպես, նշեցինք այս երկի մասին, որովհետև ձեռագրերից մեկը՝ Վենետիկ ՏՊ 312, կրկնօրինակվել էր ուսյալ արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու կողմից 1195 թ.: Կամենում ենք պարզապես այստեղ ենթադրել, որ մեր ձեռքի փակ եղածը Կիլիկյան շրջանից հայտնի մեկ այլ ծրագիր է, որով Լամբրոնացին պարզապես կամենում էր խմբագրել իր ժամանակակիցներից մեկի՝ ամենայն հավանականությամբ Գրիգոր Բ. Վկայասերի կապարած թարգմանությունը: Սակայն որեւէ վկայություն չունենք, որ Ներսես Լամբրոնացին երբեւէ նմանատիպ ձեռագիր է պատճենել:

Պողոս առաքյալի թղթերի՝ Եփրեմ Ասորու մեկնությունը հրատարակվել է 1836 թ. Վենետիկի Մխիթարյան հայրերի կողմից՝ միակ հայտնի ձեռագրի հիման վրա: Մեկնությունների այս ժողովածուն ներառում է նաև Կորնթացվոց Գ. թղթի մեկնությունը, սակայն պակասում է առ Փիլիմոն թուղթը՝ արքահայրերով առաջին հազարամյակի ասորական եւ հայկական աստվածաշնչյան կանոնների վիճակը⁸⁹: Այս մեկնությունների հիման վրա կարարված փոքրիկ ուսումնասիրությունը հիմնականում նվիրված է օգտագործված սուրբգրային բնագրի վերականգնմանը⁹⁰: Վերոնշյալ մեկնություններն

Journal of Semitic Studies Supplement 2, Cambridge: Cambridge University Press, 1993:

85 Տե՛ս **C. A. Lange**, *The Portrayal of Christ in the Syriac Commentary on the Diatessaron*, CSCO 616, Subsidia 118, Louvain: Peeters, 2005:

86 **R. W. Thomson**, *The Teaching of St. Gregory*, էջ 49:

87 **G. Egan**, ed., *An Exposition of the Gospel by Saint Ephraem*, CSCO 291-292, Louvain: Peeters, 1968:

88 Տե՛ս **G. Egan**, "A Re-consideration of the Authenticity of Ephrem's 'An Exposition of the Gospel'", in Kyriakon: Feitschrift Johannes Quasten, edd. P. Granfield and J. Jungmann, Münster: Westf. Aschendorff, 1970, I. 128-134, **Նույնի**, *An Analysis of the Biblical Quotations of Ephrem in "An Exposition of the Gospel"*, CSCO 443, Louvain: Peeters, 1983: Սույն երկի հեղինակային պարկանելության մասին հայտնվել են նաև կասկածներ, տե՛ս **A. Strobel**, "Der Begriff des 'vierkapiteligen Evangeliums' in Pseudo-Ephrem C", *Zeitschrift für Kirchengeschichte* 70 (1959), էջ 112-120; **B. Outtier**, "Une explication de l'Evangile attribuée à Saint Ephrem", *PdO* 1 (1970), էջ 385-407; **D. D. Bundy**, "Criteria for Being 'in communion' in the Early Syriac Church", *Augustinianum* 25 (1985), էջ 597-605; **Նույնի**, "Marcion and the Marcionites in the Early Syriac Apologetic", *LM* 101 (1988), էջ 21-32; **Նույնի**, "The Anti-Marcionite Commentary on the Lucan Parables (Pseudo-Ephraem A): Images in Tension" *LM* 103 (1990), էջ 111-123:

89 Պողոսի 14 թղթերի մեկնությունը դեռևս լրջորեն չի ուսումնասիրվել: Ինչպես արդեն նշվեց, դրանք հրատարակվել են «Մաքենագրությունը Սրբոյն Եփրեմի» Գ. հատրում:

90 Տե՛ս հայկապես **J. Schäfers**, *Evangelienzitate in Ephrāms des Syrers Kommentar zu den Paulinischen Schriften*, Freiburg im Breisgau: Herders Verlag, 1917; **J. Molitor**, *Der Paulustext des hl. Ephrām aus seinem armenisch erhaltenen Paulinenkommentar untersucht und rekonstruiert*, *Monumenta biblica et ecclesiastica* 4,

առկա են ավելի քան երեսուն ձեռագրերում, որոնցից շարերի մեջ դրանք համարվել են Նովիան Ոսկերեքանի ճառերի հետ: Ուստի որևէ լուրջ ուսումնասիրություն սկսելուց առաջ անհրաժեշտ է ձեռքի փակ ունենալ երկի քննական հրապարակությունը⁹¹: Գործք Առաքելոցի մեկնությունը, որի համար արդեն ունենք քննական հրապարակություն, նույնպես լրջորեն չի ուսումնասիրվել⁹²: Սակայն դժվար է որևէ կերպ ապացուցել, որ վերոնշյալ նորկրականության մեկնությունները պարկանում են Եփրեմի գրչին՝ ասորերեն բնագրի բացակայության պարճառով⁹³, ոչ էլ այդ մասին որևէ հստակ պարմական վկայություն ունենք՝ վարքագրական բնագրերում պահպանված նշումներից բացի:

Առկա են նաև միայն հայերենով պահպանված օրհներգերի 2 ժողովածու: Առաջինը, որ հայերեն է իբրև «Տայկական օրհներգեր», փարբեր մադրաշների (կցուրդք) ժողովածու է բազմազան թեմաներով, ինչպես, օրինակ, կուսության և Սուրբ Տաղորդության նվիրված օրհներգերը⁹⁴: Ժողովածուում կան նաև երկխոսական բնույթի օրհներգություններից որոշ օրինակներ⁹⁵: Ընդհանուր առմամբ, ժողովածուում պահպանված օրհներգերը թերևս պարկանում են Դ. դարի մեծ շարականագրին, իսկ թարգմանության ժամանակի վերաբերյալ որևէ հստակ տեղեկություն չունենք: Ուսումնասիրողների միակ ենթադրությունն այն է, որ, Եփրեմի գրչին պարկանելով, ամենայն հավանականությամբ թարգմանվել են վաղ շրջանում: Նույն այս փրամաբանությունն է կիրառվել նաև Եփրեմի օրհներգությունների այլ ժողովածուների պարագային: «Նիկոմիդիայի ճառք»-ը Եփրեմի գրչին պարկանող այն քիչ մեմբաներից է (ճառ)⁹⁶, որոնցից ամբողջական կերպով պահպանվել են միայն 9-ը, ինչպես նաև մի քանի պարաթիկներ՝ մեջբերված հետագայի երկերում (ընդհանուր թիվը 19-ն է): Երուսաղեմի Տժժ 326 ձեռագիրը, որն ունի ամբողջական ժողովածուն, իբրև գրիչ նշում է Ներսես Լամբրոնացու աշակերպ Նովիաննեսի անունը: Չնայած պարմական հստակ տեղեկության բացակայությանը՝ կարելի է ենթադրել, որ երկի պարվիրաբան և նույնիսկ թարգմանության խմբագիրը Ներսես Լամբրոնացին է: Անհավանական չէ, ուրեմն, որ Ներսեսն է բնագրում առկա ող-

Rome: Päpstliches Bibelinstitut, 1938:

91 Այս ձեռագրերի նախնական ցուցակի համար տես **V. S. Hovhannesian**, “*Armenian Manuscripts of the Commentaries on the Letters of the Apostle Paul attributed to Saint Ephrem the Syrian*”, *The Harp* 24 (2009), էջ 311-327:

92 Բնագրի համար տես **Ն. Ալիսնան**, Սրբյն Եփրեմի Ասորյոյ Մեկնութիւն Գործոց Առաքելոց, Վիեննա, 1921: Պարբաստվում է նաև երկի անգլերեն թարգմանությունը:

93 Իմ անձնական, չնայած նախնական, ուսումնասիրության համաձայն այս տեքստերը հիմնված են հունարեն մեկնությունների բնագրերի վրա:

94 Օրհներգերը հրապարակվել են լատիներեն թարգմանությամբ՝ **L. Mariès et C. A. Mercier**, *Hymnes de Saint Ephrem conservées en version arménienne*, PO 30.1, Paris 1961: Ներկայումս ընթացքի մեջ է անգլերեն թարգմանությունն ու հրապարակությունը:

95 Սրանցից երեքը թարգմանվել են անգլերենի՝ **E. G. Mathews Jr.**, “*Armenian Hymn # 9, On Marriage, by St. Ephrem the Syrian*”, *JSAS* 9 (1996, 1997, 1999), էջ 55-63; **Նույնի**, “*St. Ephrem the Syrian: Armenian Dialogue Hymns on Virginity and Chastity, Armenian Hymns ## 4-5*”, *REA* 28 (2001-2002), էջ 143-469:

96 Այս մեմբաները, ասորերեն պահպանված պարաթիկներով և ֆրանսերեն թարգմանությամբ, հրապարակվել են **C. A. Renoux**-Շ կողմից՝ *Ephrem de Nisibe Mémoré sur Nicomédie*, PO 37.2-3, Turnhout: Brepols, 1975:

ղումների և խմբագրումների հեղինակը, ինչպես մեզ փնտրեցանքում է նրա մահվանից հետո լրացված հիշարարականը⁹⁷:

Ի վերջո, միայն հայերենով է պահպանվել նաև Եփրեմին վերագրված գեղեցիկ աղոթքների մի ժողովածու, որն ընդգրկում է բավական ընդարձակ 7 գրքեր, որոնցից առաջինն իր հերթին բաժանված է 141 կարճ աղոթքների: Սրանք Եփրեմին վերագրված աղոթքների բազմաթիվ ժողովածուների մի եզակի նմուշ են՝ գրեթե բոլորն էլ առանձնառարով իրենց լեզվական կառուցվածքով⁹⁸: Հայերենով գրված այս ժողովածուն վստահաբար ավելի ուշ շրջանի սրբադաճործություն է և ոչ մի կապ չունի ասորերենով պահպանված աղոթքների հետ. դրանք, անկասկած, չեն շարադրվել Եփրեմի կողմից⁹⁹: Հայրնի չէ նաև, թե ինչ ծագում ունեն Եփրեմին վերագրված և «Աստուծազիրք Հայոց»-ում պահպանված կանոնները¹⁰⁰: Նմանապիպ որևէ կանոնախումբ գոյություն չունի ասորերենով, ոչ էլ, որքան ինձ հայրնի է, վաղ քրիստոնեական որևէ այլ լեզվով:

Նավելումն այս բոլոր ժողովածուներին՝ Եփրեմին վերագրված փարբեր թեմաներով ճառեր են պահպանվել հայերենով: Դրանցից միայն մի քանիսն են քննական ուսումնասիրության նյութ դարձել: Բայց գրեթե բոլոր դեպքերում էլ ցույց է տրվել, որ ավյալ երկր չի կարող Դ. դարի ասորի հեղինակի գրչի արդյունք լինել: Մույն ճառերը չեն համապատասխանում ասորերենով պահպանված ճառերին, չունեն Եփրեմի գրչին բնորոշ առանձնահատկությունները, և բնագրայի բազմաթիվ վկայություններով կարելի է հաստատել դրանց՝ ավելի ուշ շրջանում հունարենից կամ արաբերենից թարգմանված լինելու փաստը¹⁰¹: Գիտենք, որ դրանցից երկուսը պարվիրվել են Գրիգոր Բ. Վկայասերի կողմից՝ «Ճառ Նովհաննես Նախակարապետ Մկրտչի», և «Աստուծա Ուրնվայի»¹⁰²: Հարկանշական է, որ Է. դարի «Կնիք հաւարոյ» ժողովածուում ի միջի այլոց պահպանվել են նաև Եփրեմի գրչին պարկանող «Յաղագս հաւարոյ» և «Բան ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» ճառերը¹⁰³, որոնց հայերեն թարգմանության այլ փարբերակ հայրնի չէ:

97 Տե՛ս Ephrem de Nisibe Mémre sur Nicomédie, XIX:

98 Ասորերենով, արաբերենով և հունարենով պահպանված աղոթքները (չնայած դրանք չեն պահպանվել հայերենի պես գեղեցիկ ժողովածուով) մնում են անփայ: Նրաբարակվել է միայն ռուսերեն ժողովածուն՝ Թեոփանես Շգնավորի կողմից. ժողովածուն վերահրաբարակվել է բազմիցս: Այն թարգմանվել է նաև անգլերեն՝ A. Janda & I. E. Lambertsen, *A Spiritual Psalter, or Reflections on God: Together with the Life of St. Ephraem* (Liberty, TN: St. John of Kronstadt Press, 1997): Ոչ միայն հայերենն ու ռուսերենն են իրարից բոլորովին փարբեր, այլ նաև չեն պարկանում Եփրեմի գրչին:

99 Գոյություն ունի աղոթքների երկու հիմնական հրաբարակություն՝ «Սրբոյն Եփրեմի մարենագրութիւնք», IV.227-276, և «Գիրք աղոթից ասացեալ Սրբոյն Եփրեմի Խորին Ասորոյ», Երուսաղեմ, 1933, էջ 43-233: Պարարարվում է աղոթքների հայերեն փարբերակի անգլերեն թարգմանությունը, հմմտ. E. G. Mathews Jr., «A First Glance at the Armenian Prayers attributed to Sourb Ep'rem Xorin Asorwoy», *Worship Traditions in Armenia and Neighboring Christian East*, AVANT: Treasures of the Armenian Christian Tradition 3, ed. R. R. Ervine, Crestwood: St. Vladimir's Seminary Press, 2006, էջ 159-172:

100 Տե՛ս Վ. Նալորյան, Կանոնազիրք Հայոց, Երևան, 1964 (հր. Ա.), 1971 (հր. Բ.), II. 55-58:

101 Այս ճառերի մեծ մասը պարշաճ գիտական ուշադրության չի արժանացել, հմմտ. E. G. Mathews Jr., «The Armenian Literary Corpus attributed to Ephrem the Syrian: Prolegomena to a Project», հերազա ուսումնասիրությունների և դրանց ներկա վիճակի համար փնտր անդ, էջ 150-153:

102 Լ. Տեր-Պետրոսեան, «Ասորական աղբիւրները ԺԲ.- ԺԳ. դարերի հայ-ասորական յարաբերութիւնների մասին», էջ 154:

103 Կ. Տեր-Մկրտչեան, Կնիք հաւարոյ, Ս. Էջմիածին, 1914, վերահրաբարակված Louvain: Peeters, 1974 և

Դժվար է ասել՝ սույն փրքաքերն իրենց ամբողջական՝ ձևով են թարգմանվել (որովհետև ամբողջական որևէ թարգմանություն հայտնի չէ), թե՛ պարզապես «Կնիք հառապոյ» ժողովածուի համար: Այնուամենայնիվ, հեղափոխություն է, որ Է. դարից պահպանված Եփրեմի գրչի այսպիսի բացահայտ արդյունքները հեղափոխում մոռացության մարմնացրել են իրենց փրկող զիջելով Եփրեմի վերագրված մի հսկա ժողովածուի, որպեսզի ընդգրկված երկերի մեծ մասը պահպանվում է Կեղծ-Եփրեմի գրչին: Ինչպես արդեն նշվեց, օրհներգությունների ժողովածուից միայն երկուսն են իսկապես պահպանում մոմբեցի սարկավագի գրչին: Ամեն դեպքում, ավանդական կարծիքը, համաձայն որի Եփրեմի երկերը թարգմանվել էին Ե. դարի առաջին կեսում, պետք է այժմ վերանայվի: Պարմական փրկությունները ներկայումս ստիպում են մեզ գրեթե բոլոր երկերն էլ վերագրել Կիլիկյան շրջանի թարգմանություններին:

բ. **Տակոբ Սրճեցի.** Նաջորդ կարևոր դեմքը, որի մասին պետք է խոսենք, Չ. դարի նշանավոր եպիսկոպոս Տակոբ Սրճեցին է¹⁰⁴: Նրա երկերը կարելի է գտնել հայերեն ձեռագիր ժողովածուներից շարքերի մեջ: Մոտավորապես մեկուկես դար առաջ Գ. Զարպիսանյանը ցուցակագրել էր 11 օրհներգեր¹⁰⁵, որոնցից 9-ն արդեն մեկ դար առաջ հրապարակված էին¹⁰⁶: Չնայած այս ամենին՝ Տակոբ Սրճեցուն վերագրված հայերեն երկերը գրեթե ամբողջովին անփնտել են ուսումնասիրողների կողմից, դրանք երբեք չեն հրապարակվել, թարգմանվել կամ ուսումնասիրվել¹⁰⁷: Դեռևս որոշակի թերություններ ունեցող «Ցուցակ ձեռագրաց»-ների հիման վրա այսօր արդեն կարելի է լրացնել Գ. Զարպիսանյանի նկարագրած 11 օրհներգերի ցուցակը՝ հասցնելով 17-ի: Դրանցից մեկը **ՔՆՎՎ** - թարգմանա է, իսկ մնացածը, առանց որևէ կասկածի՝ **ՔՆՆ**-մեմբա: Սրանք գրեթե բոլորն էլ հայտնաբերվել են ձեռագիր ճառքնարկներում, որոնք օգտագործվում էին ծիսական նպատակներով¹⁰⁸: Սույն երկերի գոյությունն արդեն մեծ հեղափոխություններ

Անիկիյաս, Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիոյ, 1998: Ըստ **J. Lebon**-ի՝ “*Les citations patristiques grecques du Sceau de la Foi*”, *RHE* 25 (1929), էջ 5-32, այս երկի համար գոյություն չունի ասորերեն համարժեքը: Նույնով էմ, որ մոտ ապագայում կկարողանամ վերանայելու այս մոտեցումը:

104 Սրբաբն շարադրվածը մեծավ մասամբ վերաբարդություն է մեր ուսումնասիրության **E. G. Mathews Jr.**, “*Jacob of Saroug, Homily on Good Friday and other Armenian Treasures: First Glances*”, *Jacob of Saroug and His World, Gorgias Eastern Christian Studies* 8, ed. G. Kiraz, Piscataway: Gorgias Press, 2010, էջ 133-161:

105 **Գ. Զարպիսանյան**, Մարենադարան Տայկական թարգմանությունաց նայնեաց (դար Դ.-ԺԳ.), էջ 572-575:

106 Տե՛ս «Գիրք եւ ճառ հոգեշահ», Կոստանդնուպոլիս, 1722: Ութ օրհներգերը խորագրված են ըստ այսմ՝ Քրիստոսի մուրքը Բեթանիա, Քրիստոսի Նարության մասին Ա. եւ Բ. ճառք, Կիրակիի խորհրդի մասին, Քրիստոսի Նամբարձման մասին, Նախնի խորհուրդների մասին, Ուխտի փապանակի խորհրդի մասին եւ Աստվածածնի Ննջման խորհրդի մասին:

107 **E. G. Mathews Jr.**, “*Jacob of Saroug, Homily on Good Friday and other Armenian Treasures: First Glances*” ուսումնասիրությունից բացի միակ աշխարհաբարով թարգմանությունը կոստանդնուպոլսյան բնագրի հիման վրա արված Նարության երկու ճառքերին է՝ **Ն. Քյոսեյան**, Տակոբ Սրճեցի, ճառ Սուրբ Նարության, Նոգետոր Գրադարան 15, Ս. Էջմիածին, 1998:

108 ՄՄ-ի № 993 եւ 7729 ձեռագրերը՝ ամենահայտնի եւ ամենաձավալուն ճառքնարկները, մանրամասնորեն նկարագրվել են, փնտ՝ **M. van Esbroeck, U. Zanetti**, “*Le manuscrit Erévan 999. Inventaire des pièces*”; *REA* 12 (1977), էջ 123-167, եւ **M. van Esbroeck**, “*Description du repertoire de l’Homélaire de Muš (Matenadaran 7729)*”, *REA* 18 (1984), էջ 237-280:

րի առիթ է աստրագերների համար: Սակայն ավելի մեծ ուշադրության է արժանի այն փաստը, որ մեր կողմից հեղինակային պատկանելիության առումով ճշգրտված ճառերն իրենց համարժեքը չունեն աստրերենով պահպանված Նակոբ Սրճեցու երկերի ժողովածուում¹⁰⁹: Այսպիսով, կարելի է ներկայացնել հայերենով պահպանված երկերի հետևյալ ցանկը¹¹⁰.

I. Բնագրեր՝ աստրերեն համարժեքով.

1. Թարգումա՝ «Ի յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»¹¹¹
2. «Ի յարութեան Ղազարո» (III. 564-581)¹¹²
3. «Ի համբարձման Տեառն» (VI. 196-220)
4. «Ի խորհուրդ եւ ի նշանս Տեառն մերոյ» (Br. 206)
5. Տիրոջ գալուստը խորհրդանշող աստղի վերաբերյալ (I. 84-153)
6. Ներքող Նովիաննես Մկրտչի (Br. 183)
7. «Յաղագս Թովմայի առաքելոյն եւ ի Նոր Կիրակին» (II. 649-669)
8. «Ի ննջումն Մարիամո Սրբոյ Կուսին եւ Մօրն Տեառն» (VI. 97-107)
9. «Յաղագս Թադէի առաքելոյն եւ Աբգարո, արքային հայոց եւ ասորոց» (Br. 99)
10. «Ի ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (Br. 366):

II. Բնագրեր՝ առանց աստրերեն համարժեքի.

1. «յԱսագ Ուրբաթ»
2. «Ի վերայ Անրիտքայ»
3. «Ներքողեան Աստուածածնի»
4. «Ի յարութեան Տեառն եւ յաղագս զինուորացն որք պահպանէին զգերեզմանն»
5. «Ի վերայ նիկուէացոցն»
6. «Ի դարձն քաղաքին Անրիտքայ»
7. «Ի խորհուրդ Տապանակին»:

109 Ճշգրտման առաջ է եկել հայերեն ձեռագրերում պահպանված փոփոխությունների՝ աստրերեն ձեռագրերի հիշարակությունների հետ համեմատելիս, որոնք իրականացվել են Ս. Բրոկի ջանքերով: Տե՛ս **P. Bedjan**, ed., Brock-ի կողմից արված հավելումներով, *Homilies of Mar Jacob of Sarug*, 6 vols., Piscataway: Gorgias Press, 2006, բուն հրապարակությունը րեն *Homiliae Selectae Mar-Jacobi Sarugensis*, 5 vols., Paris and Leipzig: Harrassowitz, 1905-1910, VI. 372-399: Դեռևս հնարավորություն չունեն այդ ձեռագրերից որևէ մեկն ստուգելու:

110 Այս ցուցակը մեր կողմից պատկանում է «Jacob of Sarug, Homily on Good Friday and other Armenian Treasures: First Glances» ուսումնասիրության համառոտումն է, որտեղ առկա են նաև աստրերեն եւ հայերեն ձեռագրական հղումները: Նույնով եմ առաջիկայում ներկայացնելու հայերենով պահպանված Նակոբ Սրճեցու բոլոր երկերի ամբողջական ցուցակը՝ ձեռագրերի փոփոխական մանրակրկիտ նկարագրությամբ:

111 Այս երկի աստրերեն բնագիրը լույս է փայլել երկիցս՝ րեն **S. P. Brock**, *Turgāmē da-simin l qaddišša Mar Ya'qob de Sarūg Malpānā*, Holland: Losser, 1984, էջ 36-46, հմմտ. նաև **F. Rilliet**, *Jacques de Saroug, Six Homélies Festales en Prose*, PO 43.4 [196], Turnhout: Brepols, 1986, էջ 610-628, ֆրանսերեն զուգադիր թարգմանությամբ: Անգլերեն թարգմանության համար րեն **T. Kollamparampli**, *Jacob of Serugh, Select Festal Homilies*, Rome: Centre for Indian and Interreligious Studies, 1997, էջ 279-291:

112 Այստեղ փակագծերի մեջ փրկված են Բեդյանի հրապարակության մեջ փակագրված քերական (հատորի համարները փրկված են լատինական թվանշաններով), իսկ եթե քերականը հրապարակված չէ, համապատասխան համարը փրկվում է Բրոկի կողմից վերջերս հրապարակված բնագրի հիման վրա (*Homilies of Mar Jacob of Sarug*). փակագծերում փրկված Br.-ն մասնաճյուղն է Բրոկի հրապարակությունը: Ավելի մանրամասն րեն **E. G. Mathews Jr.**, «Jacob of Saroug, Homily on Good Friday and other Armenian Treasures: First Glances»:

Նավերուն վերնոյշյալ երկերի՝ Զարպիանայանն իր ցուցակին մեկ այլ երկ էլ է ավելացնում, որի հեղինակային պատկանելիությունն ի վիճակի չեղանք ճշտելու: Զարպիանայանը նշում է միայն խորագիրը՝ «Յաղագս բռնանալոյ եւ գերութեան փապանակին ի փղշպացոցն»՝ առանց որեւէ բացատրության¹¹³: Նամաձայն Ս. Բրոկի կողմից Նակոր Սրճեցու երկերի վերջերս կազմած ցուցակի՝ գոյություն ունի նաև մի անորիպ մեմբա՝ «Ի վերայ փղշպացոցն» վերնագրով, որը կարող է Զարպիանայանի կողմից մարտնչված երկի աստրերեն համարժեքը լինել¹¹⁴: Բայց առանց հայերեն եւ աստրերեն բնագրերի համեմատության անհնար կլինի որոշել դրանց միջև առկա բնագրային փոխհարաբերությունը:

Այս բանաստեղծական երկերից բացի կարելի է նշել մոտ երեսուն փարի առաջ Լ. Տեր-Պետրոսյանի կողմից հայերենով հայտնի երկու ձեռագրերից մեկի հիման վրա հրապարակված «Ամուն Աստուծոյ Յիսուսի -Բրիսպոսի ակն ունիմ գասացեալ բանս Դանիէլի եւ սբանչելիսն գոր արար, ի պարմել եւ թարքմանել Յակոբայ հայրապետ: Սրորճեցոյ» խորագրով վարքը¹¹⁵, որի աստրերեն բնագիրը դեռևս անփայլ է¹¹⁶: Ֆ. Նաուն սույն երկի հեղինակային պատկանելության վերաբերյալ որոշ կասկածներ է հայտնում¹¹⁷, չնայած, որ Ա. Բաումշտարկն այն միանշանակորեն համարում է Նակոր Սրճեցու գրչի արդյունք¹¹⁸: Ս. Բրոկը նույնպես, որի դիսարկման համաձայն այս բնագիրը -Բրիսպոսի վարչամակի մասին պարմող ամենավաղ տեքստն է, ոչ մի կասկած չի հայտնում նրա հեղինակային պատկանելության վերաբերյալ¹¹⁹: Ի վերջո, հարկ ենք համարում այսպեղ խոսել Նոր Զոդայի ՆՊ 464 ձեռագիր -Քարոզգրքի մասին¹²⁰, որի մեջ գեղեղված են հիմնականում աստրերենից թարգմանված եւ Նակոր Սրճեցուն վերագրված երկեր: Ըստ ձեռագրացուցակի՝ ձեռագիրը պարունակում է մեկական երկեր Անանիա Շիրակացուց (600-670) եւ

113 Նայ.՝ «Բանք վասն առման փապանակին ի Փղշպացոց», Գ. Զարպիանայան, Մարտնադարան Նայական Թարգմանութեանց Նախնեաց (դար Դ.-ԺԳ.), էջ 575:

114 Տե՛ս P. Bedjan, ed., Brock-ի կողմից արված հավելումներով, *Homilies of Mar Jacob of Sarug*, VI. 373, no. 8:

115 Լ. Ն. Տեր-Պետրոսյան, «Յակոբայ Սրճեցոյ Վարք Սրբոյն Դանիէլի Գալաշացոյ», *Էջմիածին* 36.3 (1979), էջ 22-40: Նեղինակը հրապարակում է ՄՄ ՆՊ. 2270 ձեռագրում հայտնաբերած տեքստը: Էական մի քանի տարբերություններով մեկ այլ տեքստ էլ կա Երուսաղեմի ՆՊ. 3681 ձեռագրում, հմմտ. Ն. Պողարեան, Մայր Յուզակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, 11 հր., Երուսաղեմ, 1966-1991, 11.106:

116 Լ. Ն. Տեր-Պետրոսյան, «Յակոբայ Սրճեցոյ Վարք Սրբոյն Դանիէլի Գալաշացոյ», էջ 22: Այս վարքի աստրերեն բնագիրը պահպանվել է հետևյալ ձեռագրերում՝ Մարդինի աստր. ձեռագիր ՆՊ. 259.3 եւ 273, Դամասկոսի աստր. ձեռագիր ՆՊ. 9/8 եւ 12/17:

117 F. Nau, "Hagiographie Syriacque", *ROC 2^{ème} Série V* (1910), էջ 60-62: Այսպեղ հեղինակը նշում է, որ տեքստը հայերենի է միայն Փարիզի աստր. ՆՊ 235 ձեռագրով:

118 A. Baumstark, *Geschichte der syrischen Literatur mit Ausschluss der christlichpalästinensischen Texte*, Bonn: A. Marcus und E. Weber Verlag, 1922, էջ 149: Այս գրքում նույնպես միակ հայտնի բնագիր է նշվում Փարիզի աստր. ՆՊ 235 ձեռագիրը:

119 E. Balicka-Witakowski, S. P. Brock et al., *The Hidden Pearl. The Syrian Orthodox Church and its Ancient Aramaic Heritage, II: The Heirs of the Ancient Aramaic Heritage*, Rome: Trans World Film Italia, 2001, էջ 122: Վարչամակի պարմության մասին տե՛ս S. P. Brock, "Transformations of the Edessa Portrait of Christ", *Journal of Assyrian Academic Studies* 18 (2004), էջ 46-56:

120 Ս. Տեր-Անդրեաս, Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Զոդայի Ամենափրկիչ Վանքի, Վիեննա, 1970, I. 729-730:

Նովիան Օձնեցուց (650-729), երեք գործ Սարգիս Կուրդ վարդապետից (1100-1185)¹²¹, չորս երկ Եփրեմ Ասորուց և 23 գործ՝ վերագրված Նակոբ Սրճեցուն: Դժբախտաբար, ձեռագիրը նկարագրող Տեր-Ավետիսյանը գտնաբերում է միայն համառոտ նշումներով և չի մանրամասնում պարունակությունը: Դարելով Տեր-Ավետիսյանի՝ խորագրերի համար Կրված նկարագրությունից՝ ոչ մի կասկած չի կարող լինել, որ Սրճեցուն վերագրված բոլոր ճառերում էլ առկա են նրա երկերում արձարձված թեմաներն ու նյութերը: Ներկայաբար, հնարավոր է, որ դրանց մի մասն իրոք Նակոբ Սրճեցու գրչի արդյունք են՝ չնայած այդպիսի ենթադրությունն անելուց առաջ հարկ է ձեռքի փակ ունենալ և գննել ձեռագիրը: Նաշվի առնելով, որ մեր ուսումնասիրությունը դեռ քննարկի մնջ է՝ հուսով ենք, Նակոբ Սրճեցուն վերագրված կամ նրա գրչին պատկանող երկերի հայերեն նորանոր թարգմանություններ էլ կարող են հայտնվել: Ինչ վերաբերում է Սրճեցու երկերի թարգմանության ժամանակաշրջանին, այսպեղ դրանք կարող ենք վերագրել Կիլիկյան թարգմանության ժամանակաշրջանին այն վստահությամբ, որ հենց այդպիսի ստույգ թվական էլ փրամադրում են մեզ հասած ձեռագրերը: Իր համառոտ ցուցակում Զարպիհանալյանը մեջբերում է Սեւանի վանքում պահվող ձեռագրից մի հիշարակարան. «Թարգմանեցաւ ճառս յասորոց ի մերս՝ հրամանաւ Տեառն Գրիգորիոսի Նայոց Կաթողիկոսի. ի ձեռն քահանայի ումնմն Իսահակ անուն կոչեցեալ, ասորի յագգէ, անարունսր գովով մերոյ դպրութեանս. շաղփաղփի և կոկորդախօս լեզուաւ. և ստուգեցաւ ի սուրբ և յանրիժ և ի մեծ արհիեպիսկոպոսէ ի փեառն Ներսիսէ հռկտոր իմաստասիրէ»¹²²: Կարելի է անմիջապէս ենթադրել, որ այս Գրիգոր կաթողիկոսը Գրիգոր Վկայասերն է, ով արդեն հիշարակվեց իբրև թարգմանական ակտիվ գործունեության նախաձեռնող: Բայց հիշարակարանն ավելի առաջ է անցնում՝ հավելելով, որ ասորի քահանա Իսահակի թարգմանությունը «ստուգեցաւ ի սուրբ և յանրիժ և ի մեծ արհիեպիսկոպոսէ ի փեառն Ներսիսէ հռկտոր իմաստասիրէ», ով, անշուշտ, Ներսես Շնորհալի կաթողիկոսն է (1102-1173)՝ Գրիգոր Գ.

121 Այս եկեղեցական հեղինակների մասին փեն Ն. Պողոսեան, Նայ Գրողներ, էջ 89-94, 98-102, 243-244:

122 Գ. Զարպիհանալեան, Մարենադարան Նայկական Թարգմանութեանց Նախնեաց (դար Դ-ԺԳ.), էջ 573: *Ն. Մառի կազմած Սեանալանքի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը Ն^թ 59 -ի փակ է դրված (H. Мартъ, Списокъ рукописей Севанского монастыря. изъ лѣтней (1890) поѣздки въ Армению, Москва, 1892, էջ 25-26): Ըստ այսմ, ձեռագիրը պարունակում է հեփեյալ նյութերը՝ ա. «Յոհաննու Որոյնեցոյ արարեալ քաղուածու մեկնութիւն Աւետարանին Յոհաննու և մեկնեաց նորին...», բ. «Խորապ վասն կազմութեան մարդոյ», գ. «Քաղուածոյ աւետարանին Մարթեոսի արարեալ մեծ բարունոյն և քաջ հռկտորի... վարդապետի Զուարթուն անուն կոչեցելոյ...», դ. «Գրիգորի եռամեծի քարոզ վասն ծննդեան», ե. Գրիգոր Տաթեացու մի քանի այլ երկեր, զ. «Յակոբայ սրճոյ եպիսկոպոսի ասացեալ յառաջ մեծի խաչելութեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և յառաջակն որ հրախիբեցաւ ի դրախտ և ի սերովքէն որ պահէր զճանապարհ ծառոյն կենաց» (հենց այսպեղ է դրված վերոնշյալ հիշարակարանը), է. «Երանելոյն Թեոփիլեայ ասացեալ ի սոսկալի թաղումն որդոյն Աստուծոյ Տեառն մերոյ և Փրկչին...», թ. «Տեառն Զարպիայի հայոց կաթողիկոսի ասացեալ ի մեծի շարաթուն ճարագալոցին», թ. «Քարոզք Յակոբայ վարդապետի Դրիմեցոյ Գրիգորի աշակերտի»: Ըստ Մառի նկարագրության՝ ձեռագիրը գրված է թղթի վրա, նորրգիր՝ ընդհանուր առմամբ բաղկացած չորս առանձին ձեռագրերի համակցումից, ինչը ենթադրում է, որ դրանք փարբեր ժամանակներում գրված միավորներ են: Ձեռագրի երրորդ մասի վերջում առկա է հիշարակարան, որի համաձայն ձեռագրի այդ մասը գրվել է ՌՃՆԶ (1697) թվականին Նայոց, Ամրդոյու վանքում՝ Վարդան վարդապետի վանահայրության ժամանակ՝ «մեծ քարունապետիս և քաջ փաղեայիս վարժապետիս մերոյ Վարդան վարդապետին»: Վեցերորդ միավորից հետո դրված է մեկ այլ հիշարակարան, որի համաձայն այդ մասը գրվել է 1678 թ. հուլիսի 6-ին Նասրէկ գրչի կողմից Նակոբ վարդապետի համար:

Պահլավմունու եղբայրը ևս նրա հաջորդը կաթողիկոսական գահին: Գրիգոր Բ. Վկայասերի մահվան ժամանակ Ներսես Շնորհալիին 5-6 տարեկան երեխա էր¹²³: Ներսեսը, այսպեղ խոսքը ոչ թե Վկայասերի, այլ Գրիգոր Գ. Պահլավմունի Կաթողիկոսի մասին է (1113-1166): Մեզ դեռևս չէր հաջողվել ճշտել սույն ձեռագրի գրավելու վայրը, երբ նույն այս հիշատակարանը վերջերս հայտնաբերեցինք այժմ ՄՄ-ում պահվող և թուրքական գրված մի ձեռագրում¹²⁴, ինչպես նաև Արմաշի Ն^Պ 12 ձեռագրում¹²⁵: Երկու այլ ճառեր՝ «Յաղագս Թաղէի առաքելոյն և Արգարու թագաւորին» և «Ի խորհուրդն առաջին և յաղագս նահապետաց և մարգարէից» (հայրնի նաև «Յաղագս խորհրդոյ Տեառն մերոյ» վերնագրով) թարգմանվել են ասորի քահանա Սիմեոնի կողմից և խմբագրվել դրանց պատվիրապետ Վարդան Արեւելցու կողմից¹²⁶: Այսպիսով, առկա փոփոխությանց հիման վրա կարելի է եզրակացնել, որ ինչպես այս, այնպես էլ Սրճեցու մնացած երկերը թարգմանվել են ԺԲ.-ԺԳ. դարերում: Ռ. Թոմսոնն արդեն նշել է, որ ինչ-որ իմաստով չափազանցվել է Մաշտոցի և նրա աշակերտների կողմից վաղ շրջանում կատարված թարգմանական գործունեության դերը¹²⁷: Ասորերենից հայերեն կատարված և վերը նկարագրված թարգմանությունների պարագային էլ, հակառակ ունեցած շատ քիչ ստույգ փոփոխություններին, դեռևս անհրաժեշտություն կա չափազանցության գայթակղությունից խուսափելու: Այնուամենայնիվ, Թոմսոնի դիտարկումը և գգուշացումն իրավացի է հարցի ամբողջական պատկերը դիտարկելիս: Եթե մեր կողմից առաջադրված փոփոխությունը որոշակի արժեք ունի, ուրեմն պետք է ենթադրել, որ ասորերենից հայերեն կատարված թարգմանությունների մեծ մասն իրականացվել է Կիլիկյան ժամանակաշրջանում: Ինչքանով որ մեզ հնարավորություն է տալիս մեր ձեռքի տակ եղած փոփոխությունը, կատարված կամ պատվիրված թարգմանություններն առնչվում են հիմնականում մի փոքրիկ խմբի՝ չորս պատմական անձի հետ՝ Գրիգոր Վկայասեր, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի և Վարդան Արեւելցի, թերևս ամենամեծը Կիլիկյան եկեղեցական լուսավորիչներից: Անտիոքի չի լինի նշել, որ այս չորս դեմքերը մեծ ներգրավվածություն ունեին Էկումենիկ-միջեկեղեցական և պաշտոնական պրամախոսություններում: Ինչպես արդեն նկատել է Լ. Տեր-Պետրոսյանը, ԺԲ.-ԺԳ. դարերը Նայ և Ասորի եկեղեցիների մերձեցման ամենանշանակալի ժամանակաշրջաններն են¹²⁸: Սակայն, ամենայն

123 Տեն Ն. Պողոսյան, Նայ Գրողներ, էջ 194-199, 226-227, 233-239:

124 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անունն Մարտնադարանի», III. 952: Նշադրակարանը գրվում է էջ 98-ում:

125 Տեն Յ. Թովման, Ցուցակ Ձեռագրաց Արմաշի Վանքին, Ս. Ղազար, Վենետիկ, 1962, էջ 76: Նշադրակարանը գրվում է էջ 380-ում: Այս հիշատակարանն արդեն նշված է Պողոսյանի կողմից, տես Ն. Ծովակյան (Պողոսյան), Վանապուր: Բանասիրական Յոդուածներու Ժողովածոյ, Երուսաղէմ, 1993, էջ 193:

126 Լ. Տեր-Պետրոսյան, Ասորական աղբյուրները ԺԲ.-ԺԳ. դարերի հայ-ասորական յարաբերությունների մասին, էջ 153:

127 R. W. Thomson, "The Syriac and Armenian Versions of the Hexaemeron by Basil of Caesarea", էջ 117. «Նայագիտության մեջ Մաշտոցի շուրջ հավաքված աշակերտների դերը չափազանցնելու փորձված դիտարկություն կա, որով նվազեցվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում ընդարձակ թարգմանություններ էին կատարվել, իսկ ավելի ուշ շրջանի հեղինակները, որոնք պատմական և փիլիսոփայական բնույթի կրթական գործեր են գրել, նույնացվում են Մաշտոցի աշակերտների հետ»:

128 Տեն ծնոց. 60-ում մեջբերված աշխատությունները:

հավանականությամբ, թարգմանչական այս լայնածավալ գործը չի կարող սահմանափակվել երկու եկեղեցիների մերձեցման գործընթացի շրջանակով. այն ավելի ծավալուն է ու բնոգրկուն: Գիտնականներին վաղուց ի վեր հայտնի էր, որ մի շարք ատոբերեն երկեր հենց այս ժամանակաշրջանում են թարգմանվել՝ Միքայել Ասորու փաբեր երկեր, Ասորական Դարաստրանագիրքը, Եփրեմի վաբեր եւ Դանիել Սալախացու Սաղմոսաց մեկնությունը: Ներեւաբար, գարմանալի չալիրի թվա, որ այս մեծ թարգմանիչները, իրականացնելով նմանալիա կարեւոր երկերի թարգմանությունը, հեղինակել են նաեւ Նակոր Սրճեցուն եւ Եփրեմ Ասորուն վերագրված երկերի հակա ժողովածուի թարգմանությունը եւ իմբագրումը: Այսալիսով, եթե համարձակվենք վերաճեւակերալել ավանդական որակումները, ապա ալերք է նշել, որ ատոբերենից կարարված թարգմանությունների առումով Կիլիկյան շրջանին է իրավամբ պարկանում «ոսկեդար» պարվանումը: Ներագալի ուսումնասիրությունները, լիահույս ենք, նորանոր լուսաբանումներ ու պարգաբանումներ ալիրի բերեն այս շար իրթին ժամանակագրական սխեմալին:

**Ասոբերենից հալերեն կարարված
երկերի ցանկ¹²⁹**

Ե. դար

Բնագիր

Թարգմանության թվական/թարգմանիչ

Ասրվաճաշունչ	Ս. Մերոպ Մաշրոց/Ս. Սահակ Պարթև
Եսերիոս Կեսարացի, Եկեղեցական պարմություն	Ս. Մերոպ Մաշրոց
Բարսեղ Կեսարացի, Վեցօրէից մեկնություն	-
Ափրահալր Ասորի (Նակոր Սճբնացու անունով հալրնի), Ճառք	-
Եփրեմ Ասորի՞, Մեկնություն Տարլիանու Նամաբարբառի	-
Ալիթալլա, Թուղթ հովվական	-
Զենոբ Գաղիրացի, Ճառք	-
«Վարդապերություն Աղղեի»	-
«Վկալք Արեւելից»	Աբրահամ Խոսրովանող

¹²⁹ Աղլուսակն առկա է նաեւ հերեւյալ ուսումնասիրության մեջ՝ **J. J. S. Weitenberg, Eusebius of Emesa and Armenian Translations**, րեն ծնթգր. 1:

Միջանկյալ շրջան

Արդիշո Մծբնեցի, Թուղթք	Զ. դարի կես
Տիմոթեոս Կուզ, Նակաճառություն Քաղկեդոնի	Զ. դարի կես
Նանա Ասորի, Մեկնություն Նովիան- նու Ավերաբանի	Թ. դարի վերջ

Կիլիկյան շրջան

Վարք Եփրեմ Ասորու	1101 թ., Գրիգոր Բ. Վկայասեր
Վարք Սուրբ Սարգսի	1158 թ., Միքայել/Ներսես Շնորհալի,
Վարք Պարսամ ճգնավորի	Գրիգոր Բ. Վկայասեր, Գրիգոր/Ներ- սես Շնորհալի
Դանիել Սալախացի, Մեկնություն Սաղմո- սաց գրքի	շ. 1100 թ., Գրիգոր Բ. Վկայասեր
Նովիան Ոսկերեբան, Մեկնություն Նովիան- նու Ավերաբանի	Գրիգոր Բ. Վկայասեր, Անդրեաս/ Թեոփիստ/Երիսկոս
Միքայել Ասորի, Ժամանակագրություն	1248 թ., Իշող քահանա/Վարդան Արևելցի
Միքայել Ասորի, Քահանայական կարգի մասին	շ. 1250 թ., Իշող/Վարդան Արևելցի՝
Միքայել Ասորի, Նավարի դավանություն	շ. 1250 թ., Իշող/Վարդան Արևելցի՝
Աբուլ Փարաջ Ասորի, Չիերի խնամքի մասին	ԺԳ. դարի կես
Ասորա-հռոմեական դպրաստանագիրք	1173 թ., Ներսես Լամբրոնացի Թեոդոր Բար-Վահուն
Եւագր Պոնոպացի, Վանական երկեր	ԺԲ. դարի կես՝ս
Նեղոս Սինայեցի, Վանական երկեր	ԺԲ. դարի կես՝ս

Եփրեմ Խուրի Ասորի

Նին Կարակարանի մեկնություն Ծննդոց-Բ. Մնացորդաց	Վարդան Արևելցի՝
Մեկնություն Ավետարանի	Ներսես Լամբրոնացի՝
Օրհներգեր Նիկոմիդիայի գոհերի հիշատակին	Ներսես Լամբրոնացի՝
Նովիաննես Մկրտչի մասին	Գրիգոր Բ. Վկայասեր
Կանոն Ուրնվայի արարողության	Գրիգոր Բ. Վկայասեր

Նակոր Սրճեցի

Ավագ Ուրբաթի մասին	1151 թ., Գրիգոր Գ. Պահլավունի, Իսախակ/Ներսես Շնորհալի
Թաղետսի եւ Աբգար թագավորի վերաբերյալ	1246 թ., Սիմեոն/Վարդան Արևելցի
Մեր Տիրոջ Նշանների մասին	1246 թ., Սիմեոն/Վարդան Արևելցի

ՊԱՏԱՐԱԲԱՆԱԽՐԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՔԱՎԱՇՅԱՆ

փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՆԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Եկեղեցի-պետություն փոխհարաբերության հարցը բազմաճյուղ է և բազմապիսի փոփոխականներ պարունակող կապերի ու հարաբերությունների բարդ ոլորտ է: Իբրև հասարակության քաղաքական համակարգի ոլորտի բնագավառ նշված հարաբերությունները պայմանավորված են հասարակական կյանքի պերսոնալիզմի և կրոնական ոլորտների միջև, որն ավարտվում է ամբողջական է դարձել պետության և կրոնի, պետական ինստիտուտների և կրոնական կազմակերպությունների հարաբերությունների պրոբլեմով:

Այս փոխհարաբերությունների ոլորտը չափազանց դինամիկ է, պայմանավորված փոփոխվել է և հանդես եկել ինստիտուտային տարբեր ձևերով: Վերջին երկու դարերում Արևմուտքի զարգացած հասարակություններում այդ հարաբերությունները դրսևորվել են գերազանցապես աշխարհականացման և աշխարհիկ-կրոնական համագործակցության մոդելների պրոբլեմով: Ընդ որում, հարաբերությունների ինտենսիվության մակարդակը և ուղղվածությունը մեծապես պայմանավորվել է տվյալ երկրի հասարակական-քաղաքական, ազգամշակութային, պայմանական, հավատքային և այլ գործոններով: Այդ առանձնահատկություններով է բացատրվում նաև այն, որ հասարակական կյանքում եկեղեցի-պետություն հարաբերությունների, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների վրա քաղաքական ինստիտուտային կառույցների ազդեցության աստիճանը և մակարդակները տարբեր են ու ժամանակային:

Մերօրյա ժողովրդավարական կողմնորոշման երկրների պետականացման հարաբերությունների հիմքում ընկած են Եւրոպայի՝ Նոր դարաշրջանում ձևավորված սկզբունքները: Հասարակական կյանքի հոգևոր-կրոնական ոլորտի նկատմամբ ունեցած վերաբերմունքով դրանք գերազանցապես չեզոք դիրք գրավող աշխարհիկ պետություններ են, որոնցում եկեղեցու և կրոնական կառույցների նկատմամբ հարաբերությունները կարգավորվում են իրավական (աշխարհիկ) նորմերի՝ խղճի և դավանանքի ազատության օրենսդրական ակտերով: Բուրժուական հարաբերությունների ձևավորման և

արմատավորման ծնունդը լինելով, այս վերջինս, որպես կանոն, նշանավորվել է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կրոնի և կրոնական կառույցների կախվածությունից գիտակցության, գործունեության, վարքագծի, հասարակական հարաբերությունների և ինստիտուտների ազատագրմամբ, հեղուկաբար՝ բուն աշխարհականացման գործընթացների արմատավորմամբ:

Այդ մոտեցումների բազմազանությունը և դրամատիզմը պայմանավորված են եղել իրարամերժ սկզբունքային մոտեցումներով: Աշխարհայացքային առումով այդ իրավիճակի ձևավորմանը մեծապես խթանել է աշխարհականացման երոսպական ըմբռնումը և վերջինիս բովանդակային անբաժան մասը կազմող այնպիսի հիմնարար միություններ, ինչպիսիք են «հեղինակության ազդեցությունից» (այդ թվում՝ կրոնից և եկեղեցուց) մարդու ազատականացումը, «ակտիվ գործառնող սուբյեկտի» հիմնարար գաղափարի արմատավորումը, որի գործունեության ազդակ և դրդապատճառ է հռչակվել մարդու բանականությունը և կամ «բանական հիմունքներով վերակառուցված» հասարակական հարաբերությունների հաստատումը: Այդ մոտեցումներն էլ հիմք են դարձել «անհատական հոգևոր կյանքի» հայեցակարգի վրա կառուցված խղճի (դավանանքի) ազատության հռչակման համար, որի արդյունքում քաղաքական կյանքը լիովին փառանջարվել է կրոնաբարոյական ցանկացած ավանդությունից և առաջնային է համարվել մարդու իրավունքների ուսմունքը: Ազատականացման նշված հարաբերությունների հետագա արմատավորումն ու ծավալումն իր հերթին օբյեկտիվորեն խթանել են քաղաքական և քաղաքացիական ազատությունների արմատավորմանը: Միաժամանակ, հասարակական կյանքում խղճի և դավանանքի ազատության արմատավորմանը գուցե քիչ քանակությամբ երկրներում եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց:

Նայ իրականության մեջ եկեղեցու հասարակական-պատմական դերի վերածությունը հայեցակարգային տեսք է ստացել դեռևս ԺԹ. դարի երկրորդ կեսին, երբ ամենայն սրությամբ միմյանց հակադրվեցին քննարկվող հիմնահարցի վերաբերյալ դարավոր ավանդության վրա խաբսիոված աստվածաբանական-ջապագովական և ազատական-ժողովրդավարական հոսանքների տեսակետները: Ծավալվող վիճաբանությունների դրամատիզմը նրանում էր, որ հակամարտող կողմերը հանդես էին գալիս արմատական դիրքերից, որի պարզառով առաջադրված տեսակետներն ու համապատասխան փաստարկները բացարձակ մերժողական լինելով՝ փրամագծորեն հակադրվում էին մեկը մյուսին: Եւ քանի որ առաջադրված լուծումներով նշված հոսանքները հավակնում էին յուրահատուկ համապարփակության, նրանց դիրքորոշումների հակամեթոդությունն ամենայն սրությամբ դրսևորվեց հատկապես աշխարհայացքային ոլորտում: Նույնը պետք է ասել կողմերի մեթոդաբանական մոտեցումների վերաբերյալ. քանի որ նրանք վիճաբանական հիմնահարցի բոլոր տեսանկյունները գործնականում քննարկում էին առանձնության մեջ, զանց առնելով հիմնահարցին բնորոշ նրբերանգներն ու առանձնահատկությունները: Չնչին ձևավորություններով հակասական այդ միությունները հասել են նաև մեր օրեր՝ համապատասխան արձագանք գտնելով հատկապես հրապարակախոսության մեջ: Այսօր էլ քիչ չեն այն հրապարակումները, որոնց հեղինակները հիմք ընդունելով

կրոնի և եկեղեցու բացառիկ հեղինակությունը՝ անվերապահ պահանջում են արդի հասարակական կյանքը վերակառուցել կրոնական արժեքների առաջնության դիրքերից, իսկ մյուսներն ուղղակի հակադրվում և մերժում են նմանապիպ մոտեցումները:

Այդ ամենը վկայում են, որ **մեզանում եկեղեցի-պետություն փոխհարաբերության հիմնահարցը դեռևս գտնվում է քննարկման փուլում:** Այն արդիական է հարկապես անցման շրջանի իրողությունների հետ կապված և ուղեկցվում է խղճի ազատության և կրոնական միավորումների մասին պետաիրավական նորմերի օպերիմալ տարբերակների որոնումների տեսքով: Եւ քանի որ հասարակական-քաղաքական ու հոգեւոր այս նոր պայմաններում մարդ անհայր շարունակական որոնումների մեջ է, ձգտում է իմաստավորել իր գոյության և սեփական «Ես»-ի հիմնահարցերը, ապա շրջապատող իրականության նկատմամբ **նման մոտեցումներն անխուսափելիորեն ընդգծված աշխարհայացքային երանգավորում են ստանում:** Այդ միպոմներն առավել սրտիցամբ դրսևորվում են հարկապես հերիքաբերողային տարածքում, ուր մի կողմից ավելի ու ավելի ամբողջական տեսք է ստանում ազգային ինքնության և ազգամշակութային ավանդույթների աճող դերը, իսկ մյուս կողմից համաշխարհայնացման տեխնոլոգիական մոդելների ներդրմամբ լուրջ մարտահրավերներ են առաջադրվում ավանդական կրոններին: Այդ ամենից զար ինչպես անցման շրջանի բոլոր երկրներում, այնպես էլ Ղազախստանում համաշխարհայնացվող «հոգեւոր իրականության» արմատավորումն **ուղեկցվում է հասարակական կյանքում կրոնի դերի և կրոնական կառույցների գործառնության նոր՝ «արդիականացված»** ըմբռնմամբ, ինչը նաև դուռ է բացում երկկրոնության և բազմակրոնության համար:

Եւ ինչպես փաստական նյութի վերլուծությունն է ցույց տալիս, մեր օրերում եկեղեցի-պետություն փոխհարաբերության իր օբյեկտիվ ու հավասարակշռված լուծումներով առանձնանում է հարկապես Գարեգին Բ. Ամենայն Տայոց Կաթողիկոսի հայեցակարգը:

Վեհափառ Տայրապետի հայեցակարգային ըմբռնումների ուսումնասիրությունը վկայում է, որ **նրա համար ելակետային է հիմնահարցի ավանդական աստվածաբանական ըմբռնումը:** Եւ դա հասկանալի է, քանի որ քրիստոնեական վարդապետության արմատավորողն ու պահապանը եղել և մնում է եկեղեցին: Բայց եկեղեցին ներփակ չէ և քրիստոնեական ճշմարտություններին հաղորդակից է դարձնում նաև հավաքացյալներին, այն միանգամայն բնականոն ճանապարհ է դեպի հասարակություն, հասարակական-քաղաքական և մշակութային կյանք: Ահա թե ինչու Գարեգին Բ. Կաթողիկոսն աստվածաբանական ընդհանրական մոտեցումների հենքի վրա առաջադրում և հիմնավորում է հիմնահարցի լուծման նորովի մոտեցումներ ու մեկնաբանություններ, որն **ի վերջո հանգեցնում է եկեղեցի-պետություն փոխհարաբերության համակողմանի հիմնավորված ներդաշնակ մոդելի:** Եւս մեկ բնորոշ առանձնահատկություն: Ի հակադրություն հիմնահարցի լուծման միակողմանի մոտեցումների՝ աստվածաբան Տայրապետն ամենեւին չի սահմանափակվում միայն պարամական անցյալի քննությամբ, այլ հիմնահարցի արժեւորմանն անդրադառնում է հասարակական, աշխարհայացքային, իրավական և այլ տեսանկյուններից: Այդ իրողությունը կարելի է

փաստել Ամենայն Տայոց Տայրապետի անդրանիկ կոնդակում արքայացոված այն հիմնադրոյթի օրինակով, որով փաստվում է Տայ Եկեղեցու և ազգային պետականության անբաժանելի միասնությունը և հռչակվում է եկեղեցի-պետություն փոխհարաբերության ծրագրային այն հիմնադրոյթը, թե «Տայ Եկեղեցին և Տայոց պետութիւնը Տայ ժողովուրդն է իր ամբողջութեան մէջ: Ազգային կեանքի հոգեւոր և աշխարհիկ երկու այս կառոյցների միմեանց լրացնող ներդաշնակ միութեամբ միայն ի գօրու ենք կերպել բարգաւաճ ու բարօր գալիքը մեր ժողովրդի»¹:

Պէտք է նկատել նաև, որ առաջնային համարելով ազգային կյանքը պայմանավորող երկու կառույցների՝ պետության և եկեղեցու անխզելի միությունը, վերլուծաբանն ամենևին չի նույնացնում քաղաքական և կրոնաբարոյական ոլորտները: Իսկ դա հավասարում է այն փաստը, որ այդ մտերցմամբ յուրահասարակ ձևով հաղթահարվում է ինչպես քրիստոնեական Արեւմտոյթին բնորոշ «պապերի կեսարիզմի», այնպես էլ քրիստոնեական Արեւելքին բնորոշ «կեսարապապության» հավակնությունները: Միաժամանակ այդ մտերցմամբ հավասարապես կարեւորում է ինչպես պետության, քաղաքական իշխանության և եկեղեցու, այնպես էլ նրանց ներդաշնակ համագործակցության դերն ու նշանակությունը: Ընդ որում, այս պարագային վերլուծաբան Տայրապետի համար քննական արժեւորման օբյեկտ է ոչ միայն արդիականությունն իր բազմազանությամբ, այլև հայ ժողովրդի և Տայ Եկեղեցու պարզական անցյալը: Դա է պարզապէս, որ Տայոց Նվիրապետը եկեղեցի-պետություն ներդաշնակ փոխհարաբերությունն իրագործելի է համարում ոչ թե առանձնության, այլ «հայրենիքին ու ժողովրդին ծառայելու եկեղեցու պարասխառնարվության և պարտքի զգացման», ինչպես նաև «Տայոց պետութեանը գորավիզ լինելու» համարեքստում: Ահա թե ինչու է Գարեգին Բ. Վեհափառը հորդորում. «Փորձությունների ու կորուստների, հերոսացումի ու հաղթանակների անընդմեջ շարքում կարեւորենք Եկեղեցի-պետություն անխախտ միության անհրաժեշտությունը, որ ազգաշահ է ու հայրենակերպ: Նոգ քանենք, որ անխաթար լինի հայոց մեջ 1988-յան միաբանության ու սիրո ոգին, որով սրանձնեցինք ամեն գոհողություն՝ հանուն այսօրվա»²:

Փաստերը վկայում են, որ Ամենայն Տայոց Տայրապետի հայեցակարգում եկեղեցի-պետություն փոխհարաբերության լուծումների հիմքում ընկած ընդհանրական այդ մտերցումները հիմնավորվում են բազմաթիվ քննադատականներին: Մասնավորապես այդ հարաբերությունների արժեւորման գործում մեծապես կարեւորելով ազգային և հայկական պետության գործառնական դերը, քննարկվող հայեցակարգում քաղաքական իշխանության դերն առաջին հերթին գնահատվում է ազգային ինքնության հիմնախնդիրների համարեքստում: Ընդ որում, Վեհափառը նկատում է, որ այս պարագայում միևնույն խնդրի լուծմանը նպարակամղված են և՛ ազգային պետականությունը, և՛ ազգային եկեղեցին: Ահա թե ինչու հստակեցնելով եկեղեցի-պետություն

1 «Էջմիածին», 2000, Բ., էջ 7-8: Այսպես է ստորև ընդգծումները մերն են:

2 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Տայոց, Տարբերիկ պաշտոնականը (1999-2009 թթ.), Ս. Էջմիածին, 2010, էջ 206:

ներդաշնակ գործակցության ըմբռնումները՝ Նայրապերը մարմանն ընդունում է և հիմնավորում է վերջինիս դերն ու կարևորությունը ինչպես համագային խնդիրների լուծման, ազգային պետականության և եկեղեցու առջև կանգնած մարտահրավերներին դիմադարձ կանգնելու գործում, այնպես էլ ազգային ինքնության առջև ծառացած հիմնախնդիրները լուծելու փորձանքում: Ընդ որում, վերլուծաբանն այս «երկբեւեռ» ներդաշնակության» էությունը նույնպես ներկայացնում է սերտ միասնության մեջ, որի **նպատակն է համարում հայրենանվեր և եկեղեցասեր սերնդի ձևավորումը և դաստիարակությունը:** Այդ փաստը կարելի է վկայել Գարեգին Բ. Կաթողիկոսի միանգամայն հիմնավոր այն պնդմամբ, որ «Նայադրոշմ հայորդիք, ծնունդ առած Նայ Եկեղեցու առաջնից, սնուած Անտարանի ճշմարիտ խօսքով, քրիստոնեական բարոյականով ու հայրենեաց ժառանգութեամբ, նորանկախ մեր Նայրենիքի քաղաքացիներն են, հենարանն ու շինարարները կայուն և զօրեղ իրաւական պետութեան»³:

Դժվար չէ համոզվել, որ հիմնահարցի լուծման մեթոդաբանական ելակետերի բնութային գործում հավասարակշռված աստվածաբանական մոտեցմամբ Վեհափառը հավասարապես կարևորում է առաջնային է համարում ինչպես հոգևոր իրականությունը և եկեղեցական ծառայությունը բնութագրող արժեքներն ու կրոնաբարոյական սկզբունքները, այնպես էլ Նայրենիքի և ազգային պետականության անբաժանելի փոքրիկ համարվող ազգային, քաղաքական ու քաղաքացիական գործոնները: Այդ համարեքստում բնութագրական պերք է համարել և այն, որ Վեհափառ Նայրապերի մոտեցումներում եկեղեցու և պետության ներդաշնակ փոխհարաբերությունը պարզաբանող գործոնների շարքում մեծապես կարևորվում է **Նայրենիքի գիտակցումը:** Եւ բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ այդ գիտակցումը, հավասարապես նաեւ «հայրենիքի զգացումը» արժեւորվում է որպէս Խորհուրդ, որպէս «ազգային հարաբերությունները և հոգևոր իրականությունը պայմանավորող» հիմնարար գործոն: Եւ հայեցակարգային այդ ըմբռնումը միանգամայն որոշակի բովանդակություն է ստանում այն պնդման փութքով, որ «**Նայրենիքը մենք ենք՝ յուրաքանչյուրս և ամենքս: Միաբանությամբ ու համերաշխությամբ պիտի գծենք Նայրենիքին ծառայության մեր ճանապարհը:** Միքով միմյանց ծառայելով պիտի վկայենք մեր ճշմարիտ հայրենասիրությունը և մեծագույն հավարարմությունը Նայրենիքին»⁴: Մանրամասնելով շեշտադրում է նաեւ, որ «Նայրենիքի շուրջ համայն հայության համախմբումը երաշխիքն է ազգային մեր կյանքում դժվարությունների ու փորձությունների հաղթահարման, մեր հաղթանակների, մեր հարաբերության»⁵:

Վերլուծաբան Նայրապերը հստակեցնում է նաեւ, որ համագործակցության այս որոնքում խոսք չի կարող լինել ազգային կյանքի աշխարհիկ և հոգևոր թելերի փոխանջարման, մեկը մյուսին հակադրելու և կամ որեւէ կողմի առաջնության մասին: Նակառակը, դրանք զգրվում են անքակտելի միասնության մեջ, քանի որ «Ազգաբանսեր Նայկով

3 «Էջմիածին», 2000, Բ., էջ 8:

4 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նայրենիքի պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 252-253:

5 «Էջմիածին», 2009, ԺԱ., էջ 28:

«միաբուհի» և միաբուհի», հավաքի մեր հայր Սուրբ Լուսավորչով մեկ ու միաբուհի ազգս որդեգրել է նաև իր առաքելության մեկությունը, որով դիմակայել է պարսկության չարաղերս բոլոր շրջադարձերին»⁶։ Նիմնահարցի արժեքման այդ մտքերումը հեղինակը բացատրում է նաև նրանով, որ **եկեղեցին նույնպիսի տեսանելի հասարակություն է, ինչպես ազգությունը, քանի որ ազգությունն էլ կազմում է եկեղեցու տեսանելի հասարակությունը**։ Առավել ևս, որ եկեղեցին նույնպես բնութագրվում է բնդհանրական կյանքով, ավելի ստույգ՝ իրենով պայմանավորում է ազգային-կրոնական կյանքը։ Ահա թե ինչու քննարկվող հայեցակարգում համակողմանի հիմնավորվում է նաև, որ **ազգապահպանության, ազգային ինքնության և հոգեկերպվածքի պահպանման և վերարտադրման գործում ազգային պետականության և եկեղեցու գործառնությունները անբաժանելի են**։ Եւ միանգամայն քրամաբանական ու օրինաչափ պետք է համարել, որ Վեհափառ Նայրապետն այդ սերտ հարաբերությունը պարզաբանում է այն հիման վրա, որ «Աստվածակառույց Միածնաւէ մեծ գմբեթի ներքո եկեղեցի դարձավ մեր Նայրենիքը։ Ինքնացանք մեր սուրբ հավաքով, գորացանք -Բրիստոսով և Տերունական Խաչը կանգուն պահեցինք մեր հողում։ Միասնացան, նույնացան և մեկ դարձան Ազգ, Նայրենիք, Պետություն և Նայոց Եկեղեցի»⁷։

Այդ ամենը վկայում են, որ աստվածաբանական նորովի մեկնաբանության որակով հանդես եկող Գարեգին Բ. Վեհափառի հայեցակարգում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը դիպարկվում է որպես հասարակության կենսագործունեության **երկու ինքնուրույն, բայց ներքնապես անքակտելի կերպով շաղկապված ոլորտների ներդաշնակ համագործակցություն**։ Այդ տեսանկյունից քննարկվող հայեցակարգը հանդես է գալիս որպես ուսումնասիրվող հիմնահարցի օբյեկտիվ և հավասարակշռված արժեքում, որում բարոյական ներդաշնակության աստվածաբանական ըմբռնումը գուցարդվում է պարմականության սկզբունքի հետ, իսկ եկեղեցու հասարակական դերը քննարկվում և արժեքավորվում է ազգային պետականության և ազգային ինքնության հետ ունեցած սերտ կապի մեջ։ Դրանով պետք է բացատրել նաև այն, որ եկեղեցի-պետություն փոխհարաբերության էությունը մեկնաբանելիս Վեհափառ Նայրապետն առաջադրելով ազգային կյանքի աշխարհիկ և հոգևոր ոլորտների օրգանական միասնության հրամայականը՝ հավելում է, որ այդ համագործակցությունը երկրորդաբան չունի։ Եւ ազգային կյանքի աշխարհիկ և հոգևոր ոլորտների սերտ միասնության կարևորությունն արձանագրում է հետևյալ պնդմամբ. «Միավորենք ու գորացնենք մեր ջանքերը, որ հայրենի մեր երկիրը ծաղկունք ապրի աստվածաշնորհ խաղաղության ու ազատության մեջ և հզորանա քրիստոնե ճշմարիտ սիրով, իր գավակների նվիրումով, քաղաքով ու արարումով»⁸։

Վեհափառ Նայրապետի հայեցակարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր

6 Գարեգին Բ. Գաթողիկոս Ամենայն Նայոց, Նայրենիքի պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 265։

7 Անդ, էջ 186։ Այդ կապակցությամբ Վեհափառը հավաստում է նաև, որ «Նայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնեական սուրբ հաւաքով միասնական, ինքն իրեն Նայ Եկեղեցիով ճանաչող ու արքայապետ», անդ, էջ 179։

8 Անդ, էջ 227։

հանել քննարկվող փոխհարաբերության անկողմնակալ և հավասարակշռված լուծումների այլ օրինակներ եւս: Մասնավորապես հիմք ընդունելով այն փաստը, որ ազգակրոնական ինքնությունը կապված է հոգևոր-մշակութային, արևմտական, քաղաքական, հոգեբանական և ազգային կյանքը պայմանավորող այլ գործոնների հետ, վերլուծաբանն այն քննարկում է որպես քարքեր մակարդակներով և քարքեր ձևերով դրսևորվող բազմաչափ երևույթ: Եւ այնուհանդերձ այդ համարեքստում նա առաջնային է համարում և առանձնացնում է **ընդհանրականը**⁹՝ ազգային և կրոնականի փոխադարձ սերք կապը: Այդ հիման վրա մերժելով հասարակական կյանքի աշխարհիկ և հոգևոր թեւերը հակադրելու կամ նույնացնելու արաբավոր մոտեցումները՝ Վեհափառ Նայրապետը հիմնահարցի արժեւորման հիմք է համարում **ներդաշնակ միության և գործակցության** գաղափարը: Կարեւորելով միության ու համագործակցության հրամայականը, նա գրում է. «Ժողովուրդ հայոց, ժողովուրդ շնորհինկալ ու հաղթական, որ դարեդար ապրածդ կյանքով, սխրալի վկայություններով հավաքարիմ ես Սուրբ Էջմիածնով Աստուծո հետ հասարակած ուխտիդ, **հանապազ նորոգվիր հավաքով, պայծառացիր եկեղեցաշեն և հայրենանվեր գործոց արդար ու բարի արգասիքներով, որ Աստուծո օրհնության ներքո հավերժ անսասան մնա Քրիստոսապսակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, միշտ ապրի ազադ ու ինքնիշխան, Արարարով հավերժ թագադրյալ մեր Նայրենիքը, և հայ կյանքը լույսով նայի գալիքին**»⁹: Ակնհայտ է, որ այդ շարակարգում վերլուծաբանը մի կողմից քաղաքական կյանքը բնութագրող որակներն արժեւորում է կրոնաբարոյական ավանդությունների պրիզմայով, իսկ մյուս կողմից՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունն արժեւորում է ազգային կյանքի և եկեղեցու պարամական դերի գուգորոյթամբ: Եւ որ չափազանց կարեւոր է, պարամականության սկզբունքը համարելով հիմնարար, բայց և այնպես քննարկվող հիմնահարցի լուսարանման արեսանկյուններից մեկը միայն, Նայրապետի հայեցակարգում վերլուծական այդ մոտեցումը սերտորեն շաղկապվում է ազգային, քաղաքական և եկեղեցական պրակտիկայի անցյալ-ներկա-ապագա ընթացքի համակողմանի ու հերետոյական արժեւորման հետ:

Խորապես համոզված, որ ազգահոգեբանական ինքնությունը ձևավորվում, պահպանվում և վերարտադրվում է միեւնույն ազգային-կրոնական միջավայրում, վերլուծաբանն այդ յուրաքանչյուր «սրբազան քարածոյթան» ներքին օրինաչափություններով է բացարկում նաեւ այն, որ հասարակական և անհատական գիտակցության ու հոգեբանության վրա կրոնական գործոնի պարբերական ազդեցությամբ **ձեւավորվում է այն համոզումը, թե կրոնն անմիջականորեն ներառվում է ազգային հարաբերությունների մեջ և հանդես է գալիս որպես ազգամիավորման հզոր գործոն**: Եւ որ հիմնահարցի լուսարանության գործում չափազանց կարեւոր է, քննարկվող հայեցակարգում եկեղեցի-պետություն միասնությունը դիտարկվում և արժեւորվում է ոչ թե ներքնապես բաժանված որակների մեխանիկական համագործակցության, այլ օր-

9 Ամո, էջ 228:

զանապես միմյանց կապված եւ ներդաշնակ հարաբերության մեջ գտնվող միության փոքրով: Այդ հենքի վրա է խառնվում նաեւ ազգրոպիք Նայրապերի այն պնդումը, որ եկեղեցի-պետություն ներդաշնակ միությունը միայն ի գործ կլինի «... ամռքելու ազգային վերքերը, հաղթահարելու եկեղեցական մեր կյանքի դժվարությունները, ժամանակի բերած բաժանումներն ու փոքրակարծությունները, **որպեսզի հայոց անդաստանում միշտ եւ առհավեր լինենք մեկ եւ միասնական՝ մեկ ազգ, մեկ հավաք, մեկ Եկեղեցի՝ միասնական Նայրենիքով եւ միական ու միախորհուրդ ընթանանք դեպի նոր ձեռքբերումներ, մեր արդար իղձերի ու արժանի նպատակների իրագործման Աստուծո կողմից նախախնամված բարի հանգրվաններ**»¹⁰: Այդ դիրքերից է անդրադարձ կատարվում նաեւ ազգապահպանության, ազգային ինքնության, ազգամշակութային ավանդությունների ձեռավորման, վերադարձման, արմատավորման ու պահպանման գործում եկեղեցի-պետություն փոխհարաբերության համակողմանի արժեւորմանը:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ Վեհափառ Նայրապերը պարմական փաստերի ընդհանրացմամբ առաջին հերթին անդրադառնում է ազգային պետականության նկատմամբ «եկեղեցու նվիրական առաքելության» եւ դարավոր «մեծագույն երազի» գնահատմանը եւ այդ դիրքերից արձանագրում է. «Անկախությունը եւ պետականության վերահաստատումը հայ ժողովրդի դարերի մեծագույն երազն էր: Ավելի քան 600 տարվա ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց պետականությունը: Արդի աշխարհում՝ քաղաքական բնթացքներում, գիտության ու տեխնիկայի, հաղորդակցության արագ զարգացումներում, քրեական եւ մշակութային ժամ առ ժամ սերտացող առնչություններում հայ ժողովրդի ձգտումն է խաղաղ ու սքեռածագործ կյանքի իր հույսերն իրականություն դարձնել ամուր պետությամբ, կենսունակ սփյուռքով, ազատ եւ ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Նանրապետությամբ»¹¹: Միաժամանակ, եկեղեցի-պետություն ներդաշնակ միության իսկությունը փաստելու միտումով վերլուծաբան Նայրապերը մատնանշում է նաեւ այն, որ ազգային պետականությունը վերականգնելու գաղափարը դարեր շարունակ եղել է «եկեղեցու տեսիլքը»: Դա է պարճառը, որ քննարկվող հայեցակարգում հոգեւորն ու աշխարհիկը, եկեղեցին ու պետությունը ոչ թե հակադրվում են միմյանց, այլ ներկայացվում են օրգանական միության մեջ: Ազգրոպիք Նայրապերի համոզմամբ այս վերջինիս վկայությունը Նայ Առաքելական Եկեղեցու պարմական օրինակն է, որը «... պատմության դժվարին ժամանակներում վառ է պահել ազատության սերը ժողովրդի հոգում եւ կրողը եղել ազգային պետականության վերականգնման տեսիլքի»¹²: Փաստերը վկայում են նաեւ, որ Վեհափառ Նայրապերի համար այդքան թանկ ու նվիրական Նայոց պետականության նկատմամբ հոգաբար վերաբերմունքը խառնված լինելով պարմական անցյալի դասերի ընդհանրացման վրա, միաժամանակ, ներկայի միջոցով կողմնորոշվում է դեպի ապագա, դեպի

¹⁰ Անդ, էջ 227:

¹¹ «Էջմիածին», 2008, Ե., էջ 10:

¹² Գարեգին Բ. Գաթողիկոս Ամենայն Նայոց, Նարեկիքի պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 253:

ժամանակի ինչպես գծային, այնպես էլ ցիկլիկ տիպ: Ահա թե ինչու քրիստոնեական սիրո համընդգրկուն գաղափարի հիման վրա աշխարհիկ և հոգևոր գործունեների սերտ կապն արձանագրելով՝ Ամենայն հայոց հայրապետը նախ փաստում է, որ «Աստված հայաստանի սրբում, Արարարի դիմաց կառուցեց Սուրբ Էջմիածինը, և նրանով ծնունդ առավ քրիստոնյա հայ ժողովուրդը՝ իբրև մեկ մարմին ու մեկ հոգի՝ հայ Եկեղեցի»¹³ և ապա հավաստում, որ քրիստոնեական դարավոր արժեքները, ինչպես նաև ազգային ու հայրենական ավանդների ներդաշնակ գործակցությունն էլ պետք է դառնա հասարակական մեր կյանքի արժեքային համակարգի հիմքը և առաջնորդող ուժը, որով պետք է «... գորացնեն ու ամրապնդեն մեր պետականության հիմքերը»¹⁴:

Քննարկվող համալսարանում արժանահիշարար է և այն, որ հայրապետն ազգային պետականության նկատմամբ հայ Եկեղեցու դիրքորոշումը որակում է որպես «առաքելություն»: Ընդ որում նրա առաջադրած եկեղեցի-պետություն փոխհարաբերության հայեցակարգային լուծումներում եկեղեցու «առաքելության» հիմնարարը է համարվում «երկրային և երկնային հասարակությունների» գործառնական միությունը կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ ներդաշնակ համագործակցությունը: Նրա համոզմամբ ազգային-պետական և ազգակրոնական քնդհանրությունների սիրով շաղախված միությունը կոչված է ծառայելու նաև ազգային քաղաքական կյանքի բոլոր տարրերի դիմամիկ զարգացմանն ու փոխադարձ կապի ամրապնդմանը: Վեհափառ հայրապետն արժեքային այդ մոտեցումը աներկբայելի է հռչակում, քանի որ համոզված է, որ **հայ Եկեղեցին «... իր ողջ կարողությամբ մշտապես գորակցելու է հայոց պետականության առաջընթացին ու հզորությանը՝ հավաքարիմ իր դարավոր, նվիրական առաքելությանը Աստծո, հայրենիքի և ազգի առջև»**¹⁵, իսկ մյուս կողմից առաջին պլանն է մղում «Աստծոյ և հայրենիքի պարսպին խոնարհեալ հայրենիքի սուրբ արժեքներով ապրելու» հրամայականը և հիշեցնում, որ «Ժողովրդավարության մեր ճանապարհը լուսավորված և ուղիղընթաց կլինի, երբ մեր կյանքի անկապտելի մասը դարձնենք ավերարանի պարզվիրաններն ու պարզամենքը, ապրենք քրիստոնեական արժեքներով»¹⁶:

Իբրև այդ ամենի բովանդակային լրացում՝ հայոց ազգնախորհրդի հայրապետը դիմելով համայն հայությանը հորդորում է. «Մեկտեղվենք մեր սիրելի հայրենիքի շուրջ և ուխտավորի մեր գավազանն ի ձեռին՝ Սուրբ Էջմիածին գանք մեր ուխտը վերանորոգելու Աստծու հետ: ... Ծառայենք Աստծուն՝ ծառայելով մարդկանց, մեր ընտանիքներին, ժողովրդին ու հայրենիքին»¹⁷: Այդ ամենն աներկբա վկայում է, որ եկեղեցի-պետություն հարաբերության Գարեգին Բ. Կաթողիկոսի հայեցակարգում մեծապես կարևորվում է հարաբերվող կողմերի «հաղորդակցական համագործակցությունը»: Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այս հարցում

13 Անդ, էջ 271:

14 Անդ, էջ 47:

15 Անդ, էջ 253:

16 Անդ:

17 Անդ, էջ 176:

վերլուծաբանի համար աներկբայելի է, որ վերոնշյալ համագործակցության հենքի վրա է ձևավորվում եկեղեցու հասարակական ծառայության ոլորտը, ինչպես նաև եկեղեցի-պետություն համագործակցության ոլորտում ցանկացած տարաձայնություն կամ հակամարտություն բացառող «**ազգահոգեբանական ինքնության և համապեղելիության**» հիմնարար գաղափարը: Եւ քանի որ «... ժամանակի նոր դրսևորումներում ևւ ընթացքներում առկա են երևույթներ, որ սպառնում են աղավաղել քրիստոնեական ու ազգային մեր նկարագիրը, մեր արժեքները, մեր դարավոր ավանդույթները»¹⁸, եզրակացությունն ինքնին բխում է առաջադրված վերլուծական նախադրյալներից: Բանն այն է, որ «հաղորդակցական համագործությունը» ամրագրում է անուրանալի այն իրողությունը, որ ազգային գործունի կրոնական զարգացումներին ևւ եկեղեցու հասարակական ծառայությանը նպաստող կարևորագույն նախադրյալ է: Միաժամանակ այն փաստում է, որ կրոնն ու եկեղեցին ազգային ինքնության, հոգեկերպվածքի ևւ ազգապահպանության հիմքերից են: Այդ տեսանկյունից ավելի քան ակնհայտ է, որ ազգային կյանքը պայմանավորող հոգևոր ու աշխարհիկ գործոնների համագործակցությանը բացառիկ դեր է վերապահվում նաև արդի մարտահրավերներին դիմադարձելու գործում:

Վերլուծաբան Նայրապետի մոտեցումը համահունչ է նաև հարաբերվող կողմերի «ազգանպասար համապեղելիության» հարցում: Եւ հիմքն այն է, որ նրա համոզմամբ ինչպես եկեղեցին, այնպես ևւ պետությունը իրենց հասարակական-գործառնական դերով մի կողմից նպաստում են ազգահոգեբանական ինքնության ևւ ազգամշակութային ընդհանրությունների հիմնարարների ձևավորմանը, իսկ մյուս կողմից էական դեր են կատարում ազգային, պետական ևւ կրոնական ինստիտուտների հարաբերությունները ևւ համագործակցությունը կարգավորելու բնագավառում: Ահա թե ինչու «ազգանպասար համապեղելիության» գործոնների ընդհանրացմամբ վերլուծաբանը փաստում է, թե «Նայ կեանքը հաց ու գինով է (Նաղորդության Խորհրդով՝ Ա. Զ.) թաթախում, հայոց հողը՝ վանք ու խաչքարով ծաղկուն: Աղօթքն է հայի խօսքը, որ երկինք է բարձրացել Խոր Վիրապի մահուան գուրից, Մաշտոցեան Գրով մարեան դարձել, դարձել Նարեկայ Սրբի երկնամերձ աղերս ու նահապակների սուրբ վկայութիւն: Յարութեան շողակաթ լոյսով հասարարումա՞ծ Սուրբ Էջմիածինն է հայության հոգին՝ պարմության մէջ դարից դար, աւերներից ու մահերից վերածնումա՞ծ հոգին»¹⁹: Այդ ամենը թույլ են տալիս մեկ անգամ ևւս փաստել, որ առաջադրված հայեցակարգային մոտեցումներում մեծապես կարևորվում են ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր գործոնները:

Փաստ է, որ Նայրապետի համար եկեղեցական կյանքն անփոփոխ կերպով բնութագրվում է հոգևոր որակներով՝ որպես աստվածային շնորհ, աստվածային սիրտ վրա հենված խորհուրդ ևւ միության հիմք ևւ այլն: Սակայն աներկբա է նաև, որ իր արժեւորումներում Գաբեգին Բ. Վեհափառը հավասարապես շեշտադրում է ևւ այն, որ լինելով հասարակական կյանքի առանձնահատուկ ոլորտ, եկեղեցական կյանքը «հասարակական գործունեության այնպիսի պոտենցիա» է բովանդակում, որի անբաժան տար-

¹⁸ Անդ, էջ 46:

¹⁹ Անդ, էջ 143:

րը երկրային իրականության դրական փոփոխությանը միպլված նպատակադիր եւ համընդգրկուն ակտիվությունն է: Եւ որ չափազանց կարեւոր է, ազգընտիր Վեհափառի վերլուծական մտքեցումներում այդ ամենի ընդհանրացմամբ «կրոնական էներգիան» ծառայեցվում եւ նպատակամղվում է պետական, հոգեւոր եւ հասարակական կյանքի ներդաշնակ զարգացման եւ կապարելագործման գործին: Ուստի միանգամայն բնական պետք է համարել այն, որ նա մի կողմից կոչ է անում «հավաքի բարի մարտ մղել» եւ հոգիներում նորոգել «սուրբ սրբից, բարի խղճմորանքից, անկեղծ հաւատից» բխած Մէրը: Մէրը առ մեր հայրերի Աստուած, սէրը առ Նայրենիս, սէրը առ հաւատքի անսասան վեմ Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ մեր հոգու ծննդավայրն ու քապանը փրկութեան, մեր միութեան ակունքը եւ յարապետութեան շնորհը մեզ»²⁰, իսկ մյուս կողմից աղոթք է հղում առ Աստված, որպեսզի «... Տերն իմաստութեամբ շնորհագարդի հայրենի մեր պետությունը, սիրով շաղախի հոգիները հայոց մեջ, ազգային մեզ ամեն պետակ անպարկեշտությունից, քինախնդրությունից, չար ու վար զգացումներից ..., որ Աստուծո բարի հայացքը միշտ Նայոց աշխարհի վրա լինի՝ պահելով ու պահպանելով անվրդով ու ապահով, շեն ու պայծառ»²¹:

Փաստերը վկայում են, որ Գաբրելին Բ. Նայրապետը պետության, հասարակական եւ քաղաքական կյանքի ու «կրոնական էներգիայի» ներդաշնակեցման հայեցակարգային քննդրումը կարեւորում է այլ պետականություններից եւս: Նախ այն պարծառով, որ անկախ պետականության հռչակումով Նայ Եկեղեցուն միանգամայն նոր հնարավորություններ են բնօնավելի իր առաքելության եւ գործառնության բնագավառում: Եւ երկրորդ, այդ համարաբար վերլուծաբանը բնական անդրադարձ է կատարում նաեւ համընդհանրացման, միասնացման եւ համամիավորման ուղիով ընթացող հասարակական զարգացումների արդի փուլի մարտահրավերներին: Եւ քանի որ նշված գործընթացներն իրենց բնորոշ իրարամերժությամբ երբեմն կանգնեցնում են ազգային ավանդական արժեքների եւ ժողովրդավարության արդի չափանիշների միջեւ բնորոշություն կատարելու հարկադրանքի առջեւ, այդ իսկ պարծառով Վեհափառ Նայրապետը հիմնահարցի արժեւորման անդրադառնում է նաեւ հինի, ավանդականի եւ նորի ու մոդեռնի փոխհարաբերության պետականությունից: Վերլուծական այդ ձեռագրի շրջանակներում «նորը մոռացված հինն է» կենսափոխության դիրքերից վերլուծաբանը հավաստում է. «Այո, մենք ամենքս գիտենք, որ Եկեղեցին պահպանողական հաստատություն է, նրանում կարեւոր նշանակություն ունեն ավանդույթներն ու սովորույթները»²²: Բայց միաժամանակ պարզաբանում է, որ պահպանողականությունն ամենեւին էլ բացարձակ կախվածություն չի նշանակում այն պարզ պարծառով, որ «... Եկեղեցու պահպանողականությունը դրսևորվում է ոչ թե երևույթներն իրենց ամբողջությամբ գործադրելու իրողության մեջ, այլ դրանց ոգին ժամանակների եւ արարքին պայմանների

20 «Էջմիածին», 2000, Բ., էջ 5-6:

21 «Էջմիածին», 2000, Ա., էջ 7:

22 Գաբրելին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նայրենիք պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 209:

հեղ ԳՈՒԳՈՐԴԵԼՈՒ ԿԱՐԴՈՂՈՒԹՅԱՆ ՄՆՋ»²³: Նա լիառույս է, որ ժողովրդավարության և հրապարակայնության զարգացման ուղին բնորոշում է հայոց պետականությունը նույնպես ազգային ավանդական արժեքների և ժողովրդավարության արդի չափանիշների միջև բնորոշություն կապարելու գործընթացում «սուր իրարամերժության» չի բախվի, քանի որ «... ժողովրդավարական հայեցակարգի բաղադրիչներն ուղղակիորեն ձևավորված են քրիստոնեության բարոյական ու կանոնական նորմաթիվների ներգործության ներքո, որն աղբյուրն է նաև հոգևոր ու ազգային մեր արժեհամակարգի»²⁴: Եւ այդ պարզաբանված հին ու նորի, ազգայինի և համամարդկայինի հավասարակշռված գոյությունը դիրքերից հայ ժողովրդին պարզաբանում է. «Երկխոսությունը պահպանելը մեզ առանձնապես 2000-ամեայ սրբազան ժառանգությունը: Նոր ճանաչումով, նոր արժեքներով, նոր ներշնչանքով կեանք դարձնելը՝ «գի ժամանակ է սկիզբն լինելու» հայոց նոր դարձի: Ազգային արդար իղձերի իրագործման ճանապարհին լինելը հիմնադրում կամուրջ՝ հայոց անցեալը, ներկան ու գալիքը կապող»²⁵:

Այդ ամենն, այսպիսով, վկայում են, որ **ԵԿԵՂԵՑԻ-ՎԵՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ լուծման գործում Ամենայն Տայոց Գարեգին Բ. ՎԵՏԱՓԱՑ Տայրապետի հայեցակարգի հիմքում ընկած են աստվածակենտրոնության սկզբունքը և ավանդական աստվածաբանական լուծումները**: Բայց ակնհայտ է նաև, որ այդ սկզբունքների միակողմանի կամ ծայրահեղ մեկնաբանությունը խորթ է Վեհափառի հայեցակարգի ոգուն, քանի որ այն կառուցվում է նաև հոգևոր և աշխարհիկ գործունեության ներդաշնակ համագործակցության դիրքերից: Այդ եզրակացությունը կարելի է փաստել վերլուծաբանի առաջադրած այն պնդման օրինակով, թե հասարակության զարգացումը նպատակային կլինի, եթե այն գոյություն ունի կրոնաբարոյական արժեքների հեղ, ուստի՝ «Քրիստոնեական բարոյականի վերածնունդը այսօր համազգային խնդիր է և յուրաքանչյուրի մտաբանության առարկա ...»²⁶: Ընդ որում, ազգրևարի Տայրապետն այդ գործընթացում մեծապես կարևորում է նաև պետության և հասարակության դերն այն հիման վրա, որ «... մեր պետության կողմից արժեքավորվում է Տայ Եկեղեցու՝ պարմությամբ վկայված մեծ առաքելությունը մեր ժողովրդի կյանքում»²⁷: Ավելի քան ակնհայտ է, որ եկեղեցի-պետություն փոխադարձության արժեքներն այդ ձևաչափ սկզբունքներն արարանջարվում է մարդակենտրոնության մոդեռնիստական ըմբռնումներից: Նախ այն պարզաբանվում, որ Վեհափառի հայեցակարգն արմատապես հակադրվում է մերժում է «վերափոխիչ-մոդեռնիստական կոշտ քննադատականները» և երկրորդ,

²³ Անդ:

²⁴ Անդ: Այդ կապակցությամբ Տայրապետը հավաստում է նաև. «Լի ենք վստահությամբ Եղեռն վերապրած ժողովրդի, որն աշխարհացրիվ՝ շարունակում է հավատարիմ լինել իր հոգևոր և ազգային արժեքներին», «Էջմիածին», 2001, Ժ.-ԺԱ., էջ 36:

²⁵ «Էջմիածին», 2000, Բ., էջ 5-6:

²⁶ Գարեգին Բ. Կարողիկոս Ամենայն Տայոց, Տարբերիկ պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 117:

²⁷ Անդ, էջ 47-48: Տայրապետը հավելում է. «Մեր Եկեղեցին այս առաքելությունը իրականացրել է իր սկզբնավորման օրից, եւ այն ժամանակներում, երբ կանգուն է եղել հայկական պետականությունը, եւ այն ժամանակներում, երբ միայնակ է մնացել մեր ժողովրդի պարասխանաբարությունը կրելու ծանր բեռի ներքո», անդ, էջ 46:

բնության և բարոյականության ներդաշնակության մասին ավանդական եկեղեցական ըմբռնումների դիրքերից նա առաջնային է համարում այն սկզբունքը, որում հավասարապես կարևորվում են ինչպես «երկնապարզև Նույսը, Մերն ու Նավարը», այնպես և պերությունների, ժողովուրդների ու մարդկանց հարաբերություններում իշխող «հաճության ու բարի կամեցողության շենացնող ոգին»²⁸: Եւ այդ ամենով բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ Գարեգին Բ. Կաթողիկոսի հայեցակարգի երակերը զգայական աշխարհի և նրա վերգգայական ակունքի, եկեղեցու և պերության միջև ներդաշնակ հարաբերություններ հաստատելու հրամայականն է, որը փաստվում է վերլուծաբանի հետևյալ պնդմամբ. «Մերս համագործակցության այդ ոգին պիտի դրսևորվի եկեղեցական ու պերական բոլոր կառույցների հարաբերություններում..., **քանզի Նայոց պերության և Նայ Եկեղեցու միասնականությունը շինություն է, կյանք և հարապերություն Նայրենիքին և ազգիս հայոց**»²⁹:

Ամենայն Նայոց Նայրապերի համոզմամբ ճշմարտության հասնելու բանական և ինքուիտիվ ճանապարհների, հոգու, մարքի և կամքի իշխանության, սուբյեկտի ճանաչողական ակտիվության և կամ «օբյեկտի հետ միաձուլվելու» ձգտումը ներդաշնակ կարող է լինել միայն այն պարագայում, երբ դրանք մի կողմից առաջնորդվում են բարոյական բարձրագույն իդեալով, իսկ մյուս կողմից իրենց գործառնական սահմաններում հաշվի են առնում հասարակության զարգացման և վերակառուցման օրինաչափությունները: Այդ համարեքստում Նայրապերի առաջադրած հայեցակարգում **մեծապես կարևորվում է եկեղեցական այն պրակտիկան, որը միտված է մարդկանց միջև ներդաշնակություն հաստատելուն, որով եկեղեցին հանդես է գալիս որպես միավորման, ազգակրոնական ինքնության վերաբարդության, ինչպես նաև մերձեցման հոգր գործոն**: Իբրեւ նմանապիպ հարաբերությունների դասական օրինակ նա վկայակոչելով Նայ Եկեղեցու պարմական առաքելությունը, գրում է. «Պարմության մեջ մեր Սուրբ Եկեղեցին հավաքարմորեն խնամել ու առաջնորդել է մեր ժողովրդին, դիմագրավել հոգեկործան հողմերի, չարաղեր փորձությունների և նույն հաղթականությամբ պիտի շարունակի փրկագործական իր առաքելությունը: Եկեղեցու գործությունը համայն հավաքացյալ ժողովրդի ճշմարիտ հավաքին է: Ըշմարիտ հավաքով միավորվում և լինում ենք րաճար Սուրբ Նոգու: ... Մեր հոգեղեն րաճարացումը Սուրբ Նոգով իրականություն է դառնում հարկապես աղոթավայր-սրբարեղիների օրհնաբեր հարկի ներքո՝ րնդհանրական ու աղոթաշաղախ միությամբ»³⁰: Եւս մեկ առանձնահարկություն: Ինչպես ցույց է րալիս փաստական նյութի վերլուծությունը, րննարկվող հիմնահարցերի համակարգված ու ամբողջական ուսումնասիրության միտումով օբյեկտիվության դիրքերից հանդես եկող վերլուծաբանն առաջնորդվում է հիմնարար այն սկզբունքով, որ «Եկեղեցու առաքելությունը հիմնադրման օրերից եղել և մնում է մարդուն դեպի Աստված առաջնորդելը, մարդկության կյանքը Ավերարանի բարոյական սկզբունքների,

28 Անդ, էջ 185:

29 Անդ, էջ 48:

30 «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 8:

Աստված պատվիրանների ու պարգամների վրա խաբսխելը»³¹: Այդ ձեռագրի շրջանակներում բավականին բարդ այդ հարցերի լուծման գործը սերտորեն շաղկապվում է հայ ժողովրդի հոգևոր, հասարակական, քաղաքական, մշակութային և ազգային կյանքի այլ ոլորտների հետ եկեղեցու ունեցած անխզելի կապի և փոխազդեցության հետ: «Եկեղեցու առաքելության և անպայմանավոր գործառնության» լուսաբանության գործում Վեհափառ Նայրապետը նաև փաստում է. «Եղավ, որ դարերի հոլովություններում րկաբացավ մեր Եկեղեցին: Տկարացավ, երբ մեր սերը, մեր հավաքը պակասեց, երբ մեր հույսը առ Աստված թուլացավ, սակայն մշտապես՝ գորեղ, թե րկար, րարածեց օրհնության իր թևերը մեր վրա ու խնամեց մեզ՝ լինի հայրենի հողում, թե նրանից հեռու: Խնամեց ու հոգաց որպես ծնող Մայր, որ միշտ գորեղ է իր զավակի հանդեպ ունեցած սիրով: Խորհրդային անաստվածության րասնամյակներին անգամ մեր Եկեղեցին վառ պահեց հավաքի ջանք մեր ժողովրդի հոգում, անկորում՝ քրիստոնյա հայի ինքնության ոգին»³²:

Այդ իրողությունների քննական ընդհանրացման և պարմական փաստերի օբյեկտիվ իմաստավորման հիման վրա Նայոց ընդհանրական Նայրապետը անվտիտի է համարում միայն այն, որ «Սուրբ Էջմիածնով Մասեաց սրորոքի հարթութեան վրայ նոյնացաւ Կամքն Աստուծոյ և կամքը հայոց»³³, և որ այդ «Սրբազան Ուխտով Աստուծու կողմից կնքված հող հայրենիին» անմնացորդ նվիրումն է դարձավ Նայ Եկեղեցու ծառայության շաղախը: Ամենայն Նայոց Կաթողիկոսը միաժամանակ հավերում է, որ սրբազան այդ առաքելության և ազգանվեր գործունեության հիման վրա «Նայ Եկեղեցու ճառագող հավաքով զգեստավորվեցին ազատության ու արդարության սերը մեր ժողովրդի, աղբյուրացավ ու ծովացավ սրեղծագործ ուժը հայոց՝ կերպերով Բրիտանաստղորշմ հայ մշակույթը, որով արժանի ներդրում ունենը համամարդկային քաղաքակրթության մեջ, որով ճանաչելի ենք այլ ժողովուրդների ու հաղորդակից նրանց: Մեր հավաքի անխորրակ բերդամրոցն է Նայ Եկեղեցին, գայթող ու մոլորեցնող ճանապարհներից մեզ հեռու պահող, Միածնաէջ Սուրբ Խորանի լույսով դեպի Աստված առաջնորդող հոգևոր Տաճարը, որ հավերժական է՝ հաստատված Աստուծ Սիրտ վրա, որ «ոչ երբէք անկանի» (Ա. Կորնթ. ԺԳ. 8)»³⁴: Արժանին պերք է մարտուցել նաև այն բանին, որ այդ ամենի հիման վրա ազգընրիր Նայրապետը արմարապես մերժում է եկեղեցի-պետություն փոխհարաբերության շուրջ շահարկվող գաղափարական ծայրահեղությունները և հանգում աշխարհայացքային չափազանց կարեւոր այն եզրակացությանը, որ ուսումնասիրվող ոլորտում համագործակցության և ներդաշնակության ոգին թելադրված է պարմական անհրաժեշտությամբ: Առաջադրված րեսակերի հիմնավորման միտումով վերլուծարանը մեծապես կարեւորելով «ազգային միասնականության և ազգի ինքնության պահպանությունը» հանգում է աշխարհայացքային կարեւոր մի այլ

31 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նալընրիրը պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 208:

32 «Էջմիածին», 2001, Ե., էջ 10:

33 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նալընրիրը պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 191:

34 «Էջմիածին», 2001, Ե., էջ 10:

եզրակացության եւս: Մասնավորապէս նա պնդում է, որ հոգեւոր առաքելությանը գուցրնթաց «Պեղականության չգոյության պայմաններում եկեղեցին իր բուն առաքելությանը գուգահեռ հարկադրված է եղել ստանձնելու նաեւ մեր ազգի ինքնության ու միասնականության պահպանությունը, որը վրանգված էր օտար տիրապետությանը ներքո: Միաժամանակ եկեղեցին պահպանել ու գորացրել է նաեւ անկախության սերը ու պեղականության վերականգնման գաղափարը մեր ժողովրդի հոգում եւ մտքում»³⁵:

Այդ ամենը վկայում են, որ եկեղեցի-պետություն փոխհարաբերության՝ Վեհափառի հայեցակարգում միանգամայն ավարտուն տեսք է ստացել նաեւ **եկեղեցու կրոնական եւ աշխարհիկ գործառույթների** համակարգված արժեւորումը: Եւ այս պարագայում հարկանշականն այն է, որ նշված տեսակետի առաջադրմամբ վերլուծաբանը քննարկվող հիմնահարցը դիտարկում է արժեւորում է իր բոլոր նրբերանգներով, որով վճռական քայլ է կատարվում նաեւ եկեղեցի-պետություն փոխհարաբերության միակողմանի ու ծայրահեղ մեկնությունները հաղթահարելու ուղղությամբ: Արժեքային այդ ձեւաչափի շրջանակներում միանգամայն բնական պէպք է համարել, որ Տերունական սրբավայրում Վեհափառն ի լուր ամենքի հոջակում է. «Նարության հաղթական այս բարձունքից առավել տեսանելի է մեր ապրած 20-դարյա ուղին, որը հինավուրց մեր ժողովրդի կենաց պարմությունն է վասն հավաքի, վասն Նայրենյաց, մաքառումներով, խաչելությամբ լի արարումներով ու հարությամբ հաղթապատկ: «Ժամադրությունը Նիսուսի հետ» պահած նոր դարին հասել եւ Նարության շնչով Նարությունը վերակերպած «Աստուծո սեփական ժողովուրդ» որպէս անկախ պեղականության դրոշմ ենք պարզել Նայաստանում եւ Արցախում: **Անցյալ ու ներկա դժվարին մեր կյանքի բազում հարկադրանքներով մեր ժողովուրդը բաժանված է աշխարհագրական սահմաններով, ճակատագրով ու աշխարհընկալումներով, սակայն մենք նույնն ենք, մեկ ենք, եւ միակ շահախը, որ միավորում է ամենքիս, միակ կամարը, որ կապում եւ համախմբում է բոլորիս, մեծ Մերն է, անձնագոհ Մերը հանդեպ Առաքելահաստատ մեր Սուրբ եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, անպայմանավոր սերը հանդեպ նորանկախ Նայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, նրա անցյալը, այսօրն ու ապագան»³⁶:**

Այսպիսով, հայ ժողովրդի պարմության շրջադարձային փուլերի վերլուծությամբ Գարեգին Բ. Վեհափառը փաստում է, որ եկեղեցի-պետություն փոխհարաբերության կարեւորությունն ամենից առաջ անհրաժեշտ է իմաստավորել ազգային կյանքը պայմանավորող հոգեւոր եւ աշխարհիկ թեւերի ներդաշնակ երկմիության մեջ: Փաստերը վկայում են նաեւ, որ վերլուծաբանն ամենուին էլ չի բավարարվում միայն քրեւտոմարիկ փաստեր վկայակոչելով եւ իր պարպող հայացքն ուղղում է դեպի «Մայր Նայրենիքի ու եկեղեցու վերագարթոնքով» պայմանավորված պարմական նոր իրողությունների օրյեկտիվ ուսումնասիրություն: Նամոզված, որ Նայաստանի անկախությամբ հայ ժո-

35 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նարքնրիլ պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 208:

36 «Էջմիածին», 2000, Ա., էջ 66:

ղովորդն ու Տայ Եկեղեցին առաջնությանի նոր ժամանակներ են թեալեղիսել³⁷, Վեհափառ Տայրապետը դա բացառում է նրանով, որ «Տայոց կյանքի հորիզոնի վրա նոր արեւածագ է, նոր ուժգնությամբ է ճառագայթում հույսի ու հավատի լույսը մեր կյանքի վրա: **Մենք այս ժամանակի օրհնյալ գավակներն ենք, որ առավելաբար պարտք ունենք մեր հայրենիքի այդ լույսը, մեր հայրենիքի ապագայի հանդեպ հավատարմորեն գործադնելու, ամրացնելու, աննահանջ դարձնելու, անդառնալի դարձնելու**»³⁸: Վերլուծաբանը միանգամայն օրինաչափ է համարում այն, որ ազգային կյանքի նոր իրողություններն օրյեկտիվորեն թելադրում են նաեւ Տայոց պետության եւ եկեղեցու ներդաշնակ համագործակցությունն այն պարզ պարճառով, որ «Մեր ձեռքում է մեր պետականության վաղվա օրը, մեր ձեռքում է ճակարագիրը մեր ժողովրդի: Որքան որ գորգուրանք ու սեր քաշենք Տայրենյաց նկարմամբ, այնքան Տայրենիքի սերը կարաւորվի հայրողյաց վրա ու կլինի նրանց վահան ամրության եւ հաղթության: Որքան գորացնենք մեր Տայրենին, այնքան պիտի գորանանք որպէս ազգ ու ժողովուրդ, որպէս երկիր ու որպէս պետություն»³⁹: Եկեղեցի-պետություն փոխհարաբերության համակարգված արժեւորման այդ դիրքերից ազգրկորի Տայրապետը միաժամանակ հորդորում է. «Մեր փոքր ածուխ յուրաքանչյուր գավակ թող հավատարմությամբ նայի երկիրն եւ ունկնդիր լինի մեր հայրերին, ովքեր **հավատարմով Աստուծո նախախնամությանը Իր փոքր հոգի նկարմամբ, իրենց մահով իմացյալ ու կյանքով գիտակից փառքը կերպեցին մեր ժողովրդի: Հավատարիմ մնացեք նրանց հայրենապաշտ լույս պարգամներին, նրանց հեղած արշանը, որից ծնունդ առավ մեր Տայրենիքի նոր, անկախ պետականությունը եւ մնաց անսասան ու կանգուն մեր Սուրբ Եկեղեցին**»⁴⁰:

Դժվար է չնկարել, որ Վեհափառ Տայրապետն ազգային կյանքի քաղաքական եւ հոգևոր թելերի ներդաշնակեցման անվիճարկելիությունը կարեւորում է բացառապէս ազգային շահերի համարեքստում: Եւ որ ամենակարեւորն է, հայոց ընդհանրական Նվիրապետը հայեցակարգային այդ մոտեցումը խարսխում է ազգային կյանքի իրողությունների անկողմնակալ վերլուծության վրա: Այդ պնդումը կարելի է փաստել հետևյալ փողերով. «Տայրենիքը ձեռք է բերել անկախություն: Այսօր դժվարությանց միջով է անցնում մեր ժողովրդի կյանքը հայրենիքում: Տայր շարունակում է մաքառել, պայքարել իր անկախության, իր ազատ ապրելու աստվածաշնորհ իրավունքի համար: Հակառակ բոլոր քրեական բազում դժվարություններին, հանձնառություններին, նեղություններին, որ կրում են մեր ժողովրդի գավակները, ... հավատով, հույսով եւ վճռականությամբ են լցված նրանց հոգիները, հաստատում ու ամուր է նրանց կամքը՝ Տայրենիքը գորացնելու, շինացնելու եւ կյանքը բարձր դարձնելու հայոց պարմական հողի վրա, Մասյաց հայացքի ներքո, Էջմիածնի օրհնության ներքո»⁴¹: Այդ շարակարգում վերլուծաբանը եկեղեցի-պե-

37 Տե՛ս «Էջմիածին», 2008, Ե., էջ 10:

38 «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 40:

39 «Էջմիածին», 2002, ԺԱ.-ԺԲ., էջ 21-22:

40 «Էջմիածին», 2002, Զ.-Է., էջ 15:

41 «Էջմիածին», 2000, Ժ., էջ 8:

պություն փոխհարաբերության օբյեկտիվ ու հավասարակշռված բնութմունն ու իմաստավորումը կարևորում է նաև եկեղեցու գործառնական դերի պեսանկյունից, ելակերպյին համարելով այն, որ «Իր սիրով ու ողորմությամբ Աստված հավաքի յույս շնորհեց մեր հայրերին, հավաքի յույսով պահպանեց Արարարի փեշերին, դարեր-դարեր խնամեց ու աշխարհասփյուռ պահպանեց՝ հավաքի յույսով առաջնորդելով ազգս հայոց դեպի Սուրբ Էջմիածին: Ընտրեց մեզ լինելու սեփական ժողովուրդ, օրհնեց հավաքարմությամբ եւ բազում հաղթանակներ պարգևեց հավաքի գործությամբ: Նավաքով սնված ու ջերմացած՝ շքեղորեն ծաղկեց մեր մշակույթը, հավաքով անմար մնացին Նայրենիքի ու ազապության սերը մեր ժողովրդի հոգում ու հաղթանակած փայլեցին Ավարայրից մինչև Սարդարապատ ու մեր օրերի Արցախյան ազապամարտերը: Աստված արժանացրեց քննելու մեզ յույս Իր ողորմության, շնորհ Իր փրկության՝ մահվան ճանապարհներին ապրելու, Մեծ եղեռնը վերապրելու ու վերածնվելու եւ մեր Նայրենիքի փրկված հողակտորի վրա վերակերպելու ազապ մեր պեպությունը եւ այսօր քննելու պայծառ հույսերն ու պարզված հորիզոնները համայն մեր ժողովրդի միավորված կյանքի»⁴²:

Ահա թե ինչու **ազգային կյանքի քաղաքական եւ հոգևոր թելերի ներդաշնակությունը Վեհափառը քննում է ապահով, շեն ու պայծառ ազգային պեպականության եւ քրիստոնեական սիրո գուգորդության մեջ**, քանի որ համոզված է, թե «... խաչին ապավինած ու Նարության հավաքով այսօր մեր ժողովուրդը նոր օրն է կերպում անկախ Նայաստանի ու ազապագրված Արցախի: Նայոց եկեղեցիների նորոգված ու նորակառույց գմբեթներից Տերունական խաչը վերստին օրհնություն է սփում մեր Նայրենիքում, վերստին խաչի պյառնագրությամբ հայորդիք դառնում են դեպի խնկաբույր խորանները մեր սրբավայրերի եւ նրանց յույս անթելում իրենց հոգիներում ու հաստապում բնախնկան իրենց հարկերում: Դժվարությունների ու հոգսերի բեռն ներքո, բայց հույսով ու լավաբնությամբ մեր ժողովուրդը ձեռնամուխ է հայրենական կյանքի վերաշինությանը, ազգային մեր իղձերի իրականացմանը»⁴³: Ակնհայտ է, որ եկեղեցի-պեպություն հարաբերությունների մեկնաբանության ոլորտում վերլուծաբան Նայրապերը առանցքային է համարում հոգևոր գործընթակ, ավելի սպույզ՝ այն հոգևոր շնորհները, ծառայությունն ու առաքելությունը, որը բնորոշ է եկեղեցուն: Նա համոզված է նաև, որ ազգային պեպության կողմից իրախուսվող հոգևոր վերածնունդը կոչում է հավաքի եւ գործի կապարյալ ներդաշնակության: Եւ քանի որ «բնդհանուր սիրո հաղորդությամբ» եկեղեցին կապարելության է հասնում իր անդամներով համախումբ, հավաքականության հավաքի եւ գործի միությամբ, Գարեգին Բ. Վեհափառը եկեղեցու ծառայական այդ մանրակերպը նույնացնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորհրդի եւ եկեղեցու ազգանվեր ծառայության հետ՝ գրում է. «Այսօր նույն այդ սրբավայրի՝ Սուրբ Էջմիածնի անմահ խորհրդով, հզոր ներշնչանքով ու օրհնությամբ է, որ ջանում ենք պայծառացնել ու շենացնել Նայ Եկեղեցու առաքելությունը վերածնվող Նայաստանի ազապ իրականության մեջ: Հոգևոր զարթոնքի պայմաններում բնդլայնվող գործունեությամբ ու իրա-

42 «Էջմիածին», 2005, Ձ., էջ 49:

43 «Էջմիածին», 2001, Ե., էջ 7:

կանացվող ծրագրերով մեր Եկեղեցին պիտի վերականգնի իր առօրյա ներկայությունը համայն մեր ժողովրդի կյանքում՝ իրեն հոգևոր կենդանության ու գործության ակունք, լույս և հույս, որոնցից հեռու մնաց 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության, իսկ Արևելյան Հայաստանում՝ խորհրդային իշխանության բերած հոգևոր սովի արդյունքում»⁴⁴:

Ներկաբար մնում է քնդունել, որ հիմնահարցի լուծման Գարեգին Բ. Վեհափառի առաջադրած ձևաչափում **եկեղեցու առաքելությունը մեկնաբանվում է առանցքային համարվող հավաքի և գործի ներդաշնակ միության դիրքերից**: Միաժամանակ եկեղեցու առաքելությունը կարեւորում է նաև պետական շինարարության, աշխարհասփյուռ հայ ժողովրդի համախմբման և ազգասպասկանության համարեքստում: Եւ լայնահոտի այդ մոտեցման դիրքերից վերլուծաբան հայրապետն իր պարտքն է համարում զգուշացնել, որ «Բրիտանոնեայ առաջին պետութիւնն ու ազգը լինելու իրողութիւնն այսօր սոսկ հարարութեան առիթ չպէրք է լինի մեզ համար, այլ պարասխանարարութեան քաջակերող ու ոգեղէն կոչ: Պարտք ունենք մեր հաւաքն ու հայրենիքը պահպանած ու մեզ ժառանգած մեր նախնեաց, այս հողը մեզ շնորհած ու Միածնի Էջըով այն սրբացրած Աստուծոյ առջեւ: «Եւ մի լիցի մեզ» փկարանալ ու ընկրկել մեզ վիճակուած հրամայականների առջեւ, թերանալ առ հայրենին մեր պարտքի ու պապասխանապտութեան, առ Աստուած մեր սուրբ ուխտի մէջ»⁴⁵: Ընդհանրացնելով այդ ամենը կարող ենք պնդել, որ ի հակադրություն եկեղեցի-պետություն փոխհարաբերության ծայրահեղ, միակողմանի ու կանխակալ լուծումների, Գարեգին Բ. Կաթողիկոսի հայեցակարգում ազգային կյանքի քաղաքական և հոգևոր թելերի գործառնական հարաբերակցությունը դիպարվում և արժեւորում է ինքնության և միաժամանակ՝ ներդաշնակ երկմիության մեջ: Այդ հայեցակարգում «ազգային կյանքի փոխլրցնող թելերը» չեն նույնացվում, միմյանց չեն հակադրվում, ինչպես նաև չեն ստորակարգվում, այլ ներկայացվում են փոխադարձաբար մեկը մյուսին լրացնող օրգանական ամբողջության տեսքով: Ահա թե ինչու վերլուծաբանը մի կողմից ժողովրդին կոչ է անում «հայոց Մայր հայրենիքի նոր կյանքի տեսիլքը պիտի պայծառ պահենք, մեր սիրելիներ, ու կարողանանք կյանքի կոչել, որպեսզի հրաշագործենք նոր հազարամյակում՝ կերտելով հայոց հզոր պետականությունը, որ ազգս հայոց այլևս չդենսի եղեռն, չդառնա աստանդական, չլինի որք ու սխալդուխտ, ապաստան չփնտրի հեռավոր օտար ափերում»⁴⁶, իսկ մյուս կողմից այդ վեհ նպատակների իրագործման միպտմով ժողովրդին հորդորում է. «Միքեցյալ զավակներ Մեր, արթուն պահեցեք եկեղեցախորության և ազգանվիրումի ձեր ոգին: Այս է Մեր հայրական հորդորը ձեզ և հայրապետական պարգամբ: Հաստատուն և վստահ քայլերով մուտք գործեք արքայության դռները ձեր առջև բացող հայոց Սուրբ Եկեղեցին,

44 «Էջմիածին», 2004, Ձ., էջ 8:

45 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն հայոց, Նալբանդի պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 181:

46 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ., էջ 21:

որը գործություն պիտի փառանքին՝ պայքարելու հարավսլավոնական պարբեր մարտահրավերների դեմ եւ հավասարիմ մնալու հայի ինքնությանը, լուսավորչականը հայոց հավասարին»⁴⁷:

Այդ ամենը վկայում են նաեւ այն փաստը, որ **եկեղեցի-պետություն փոխանցության՝ Գարեգին Բ. Կաթողիկոսի հայեցակարգը օրյեկրիվ, հավասարակշռված եւ միանգամայն նոր խոսք է խնդրո առարկայի կրոնաաստվածաբանական արժեւորումների մեջ**: Պէտք է նկատել նաեւ, որ իր յուրաքանչեւում եւ արժեքային ընդհանրացումներով այս հայեցակարգն էապէս նպաստում է քննարկվող հիմնահարցի լուծման գործում րեղ գրած ծայրահեղությունների հաղթանաքման գործին, քանի որ նրանում միանգամայն հիմնավոր մարտացոյց է արվում **եկեղեցու եւ պետության «անպարճառական ու ներդաշնակ» համագործակցության դերը եւ մերժվում են այդ հարցում րեղ գրած միակողմանի ու կանխակալ լուծումները**: Ահա թէ ինչու հավասարակշռված եւ համակողմանի հիմնավորված այդ մտրեցման դիրքերից Վեհափառ Տայրապետն ազգային պետականությունը համարում է այն հենքը, որի «... հովանու ներքո նոր շունչ ու ոգի է սրացել Մայր Եկեղեցու առաքելությունը»⁴⁸, այն հենքը, որի վրա կառուցվում է «սիրով շաղախված հայրենաշինության սրբազան առաքելությունը»: Եւ միանգամայն բնական է նաեւ, որ աստվածաշնչական «... սէրն Աստուծոց է (Ա. Տովհ. Դ. 7)» պարզիրանի դիրքերից Վեհափառ Տայրապետը «կյանքը սիրով շաղախելու» կոչ է անում եւ վերջինս հիմնավորում է այն պնդմամբ, որ «Մերը իշխանավորի՝ բարիք ու շինություն է երկրին, սերը եկեղեցականի՝ հավասար, ապրելու բերկրանք ու արարելու կամք է ժողովրդին, համընդհանուր սերը՝ համագգային առաջընթացի ու ապահովության, վաղվա երջանիկ օրվա պայման»⁴⁹: Դժվար չէ համոզվել, որ վերլուծաբան Տայրապետը քրիստոնեական սերը մեկնաբանում է իբրեւ այնպիսի հիմնարար գործուն, որն իր մարդասիրական ուղղվածությամբ եւ համընդհանրական բնույթով կարող է էապէս նպաստել համագգային առաջընթացին: Եւ քանի որ Գարեգին Բ. Տայոց Տայրապետը համոզված է, որ քրիստոնեական սերը եւ եկեղեցին անբակարելիորեն շաղկապված են համագգային հիմնախնդիրների հետ, այդ դիրքերից անդրադառնալով եկեղեցի-պետություն ներդաշնակ գործակցությանը՝ հավաստում է, «... որ այլևս հոգեւոր հաղթանակի պայծառ օրվա անմայրամուր արշալույսն է բացվել հայ ժողովրդի վրա, որը Արդարության Արեգակի շնորհներով մշտապէս պիտի լուսավորի աստվածաբանակ այգին՝ Եկեղեցիս Տայաստանայոց, որպէսզի Նրա շնորհարու պտուղներով գորացյալ՝ ազգս հայոց ճշմարիտ կյանքով ու աստվածաշարությամբ շարունակի իր ճամփան դեպի հավիրենություն»⁵⁰:

Փաստերը վկայում են, որ Վեհափառ Տայրապետի հայեցակարգում եկեղեցի-պետություն ներդաշնակ փոխհարաբերությանը մեծ կարեւորություն է վերագրվում մի շարք

47 «Էջմիածին», 2005, Ձ., էջ 12:

48 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Տայոց, Տարբերիք պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 213:

49 Անդ, էջ 175:

50 «Էջմիածին», 2005, Ձ., էջ 39:

այլ փեսանկյուններից եւս: Ազգային հոգներով ապրող Հայոց Նվիրապետի համար մեծ բերկրանք է, որ հայ ժողովուրդը «եղեռնահար մեջքը շրկած եւ խորհրդային բռնությունն ու անասովածությունը հաղթահարած»՝ **նոր հազարամյակ է թելակոխել ազապ ու անկախ հայկական պետականության հպարտությամբ:** Ու քանի որ երկիրը դեռեւս «ծանրաբեռնված է բազում դժվարություններով, հոգներով ու խնդիրներով», «կարող է վերաշինության, առողջացման ու կառուցողական հաղթանակների, որոնց կենսավիշը միաբանությունն ու սերն է», ազգրնայի Հայրապետը համայն հայությանը պարզամտում է. «Միտ նորոգությամբ գորացնենք ազապ ու անկախ մեր Հայրենիքը, բոլոր-վենք նրա շուրջ եւ միասնաբար կերպենք նորօրյա պարմությունը մեր՝ հայ կյանքը աշխարհասփյուռ»⁵¹: Վեհափառի համար «ազապագրական պայքարով» հիմնարկված Հայոց պետականությունը թանկ է ու նվիրական նաեւ այն առումով, որ «Այսօր ազապ մեր Հայրենիքից են հնչում Սուրբ Էջմիածնի դողանջները, ազապ ու վերաշինվող Հայրենիքից է Սուրբ Էջմիածինը իր բոլոր զավակներին բաշխում օրհնություն ու շնորհ, նոր հույս եւ հավաք՝ մեր ժողովրդի միացյալ ու պայծառ գալիքի հանդեպ»⁵²: Վերջապես, վերածափան Հայրապետի հայեցակարգում ազգային պետականությանն արժանին է մարտովում այն բանի համար, որ այն «կարեւորում է Հայ Եկեղեցու առաքելությունն ազգային կյանքում»: Եւ քանի որ քրիստոնեությունը սիրո եւ միավորման կրոն է, նա մարմնանշում է նաեւ, որ որպէս այդպիսին այն կարող է էապէս նպաստել, որպէս-գի «հասարակական ամուր դաշինք լինի մեր բնկերային կյանքը»: Ահա թե ինչու Վեհափառ Հայրապետը բարոյական պարտք է համարում միասնացման կոչով հորդորել՝ **«Հավաքարիմ մնանք մեր ընտրությանը, լինենք աստվածապարգեւ մեր երկրի փրկն ու բարի փրկեսը եւ մեր գործերով, մեր սիրով ու նվիրումով արդյունավորենք նրա ամեն օրը»**⁵³:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայեցակարգում մեծապէս կարեւորվում է նաեւ այն իրողությունը, որ մեր ժողովրդի հոգեւոր եւ հասարակական կյանքում Հայ Եկեղեցու ունեցած բացառիկ դերը եւ առաքելությունը պետական ճանաչողություն է ստացել, ինչը լայն հնարավորություններ է բնօրէնել եկեղեցու առաքելությունն անարգել իրականացնելու համար: Լայնախոհության դիրքերից հանդես եկող վերածափան Հայրապետն այդ փաստի իր գնահատումներում լիաժույս է, որ Հայաստանի անկախության հաստատումով հայրենի եզերքում փրապետող ազապության հուսաբեր շունչը ոչ միայն ինքնաբերական ու ազգային մեր իրավունքների պաշտպանության առաջին հաղթանակների բերկրանքով համազգային լավարեսություն եւ վստահություն են հաստատել⁵⁴, այլեւ հրապապ են դարձրել այդ գործընթացներում Հայ Եկեղեցու դերակատարության գիտակցումը: Եւ համոզված, որ «Աստվածաշնչյան Արարապ լեռան հայացքի ներքո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր թեւերն է սփռել մեր բոլոր եկեղեցիների

51 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայրենային պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 175:

52 «Էջմիածին», 2004, Ջ., էջ 24-25:

53 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայրենային պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 248:

54 Տե՛ս անդ, էջ 180:

... վրա՝ իր հարազատ գավակներին հավաքելով իր փրկարար փապանում՝ Նայասփանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում, որպեսզի բոլորը, համախումբ եւ միասնական, կարողանաք այսուհետ եւս «հաստատուն կալ եւ մնալ ի հաւար, ի յոյս, ի սէր» եւ «միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ ի գործս բարեաց»⁵⁵, Վեհափառ վստահ եւ նաեւ, որ եկեղեցի-պեպոյթոյն ներդաշնակ համագործակցությամբ կյանքի կոչված «վերագարթեալ կյանքը եւ վերագարթեալ հույսերը» այսօր **«Նայրենեաց սիրով ապրելու, Նայրենիքով համախմբված մնալու հրաւեր»**⁵⁶ է։ Նրա համար նույնքան աներկբայելի է նաեւ այն, որ այդ ամենի գործնական կիրառման արդյունքում «... այլեւս հոգեւոր հաղթանակի պայծառ օրվա անմայրամուտ արշալոյսն է բացվել հայ ժողովրդի վրա, որը Արդարության Արեգակի շնորհներով մշտապես պիտի լուսավորի աստվածաբանիկ այգին՝ Եկեղեցիս Նայասփանյայց, որպեսզի Նրա շնորհաբառ պարտքներով զորացալ՝ ազգս հայոց ճշմարիտ կյանքով ու աստվածպաշտությամբ շարունակի իր ճամփան դեպի հավիտենություն»⁵⁷:

Նայրապետի համոզմամբ այդ եզրակացության առարկայական հիմքերը վկայվում են նաեւ հայոց պարմության կողմից։ Փաստ է, գրում է նա, որ ազգային եւ հասարակական կյանքի անբաժան մասը հանդիսանալով, եկեղեցական կյանքն իր գրեւորումն է գրել ամենուր, որպէսզի ազգային հավաքական կյանք է եղել։ Եւ այդ իրողության ընդհանրացմամբ Գարեգին Բ. Վեհափառը ոչ միայն փաստում է ազգակրոնական ինքնության անանց արժեքը, այլեւ այդ գործընթացում հետեւողական կերպով լուսաբանելով հոգեւոր գործունի դերը, պարմական փաստերի ընդհանրացմամբ գրում է՝ այդ հիման վրա է, որ ամենուր «Սեփական քուն կառուցելու հետ ձեռնամուխ ենք եղել Աստուծո քան շնությունը, քանզի հավաքացել ենք, որ մեր Եկեղեցին ծնողավայրն է հայ հոգու, մեր հոգեւոր ազգային ինքնության աներեք սյունը, անառիկ ամրոցը ազգիս, մեր քրիստոսության փարատողն ու երջանկության ճանապարհը եւ հույսի ապավինը։ Եկեղեցին նաեւ մեր ազգային ամբողջականության հոգեւոր մարմնացումն է, հոգեւոր մեր Նայրենիքը, մեկ ու միասնական աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում»⁵⁸։ Վեհափառը հռչակում է, որ եկեղեցի-պեպոյթոյն միասնության մեջ է անթելված նաեւ «ազատության, ազգային միասնության, ազգային իղձերի ու ձգտումների արդար դատը», ինչն իրենով պայմանավորում է նաեւ «վասն հայրենյաց եւ վասն հավաքի ուխտի նորոգյալ ճանապարհը»։ Այդ հիման վրա նա համոզված պնդում է, որ ազգային կյանքը պայմանավորող աշխարհիկ եւ հոգեւոր կողմերի ներդաշնակ միասնությամբ է պայմանավորված նաեւ այն, որ «ազատ ու անկախ Նայասփանի պեպոյթյան հովանու նորքո լծվելով Բանին Կենաց քարոզության առաքելությանը», «... օրավոր գորանում է Նայ Եկեղեցին Նայասփանի անկախության դրոշի ներքո՝ հոգեւոր անանց արժեքներով զորացնելով պետականությունը հայոց եւ համար հայ կյանքը»⁵⁹:

55 «Էջմիածին», 2006, Թ., էջ 10:

56 Տե՛ս Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նաբրևրիք պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 308:

57 «Էջմիածին», 2005, Ձ., էջ 39:

58 Անդ, էջ 10:

59 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նաբրևրիք պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 223:

Նամոզված, որ եկեղեցի-պետություն ներդաշնակ միությունը համագգային կյանքի առաջնահերթություններից է, Գաբեգին Բ. Նայրապետը հորդորում է մշտապես հոգալ այդ միությունը պահպանելու և գորացնելու համար, քանի որ համոզված է, թե դա է համագգային միության և ազգային նվիրական իդեոլոգիայի իրագործման խելամիտ և անկոքուսք ուղին: Ահա թե ինչու ազգային-պետական և եկեղեցական գործունեների միասնության ընդհանրացված արժեքորման դիրքերից վերլուծաբանը գրում է. «Նույտ մեծ լինի, ժողովուրդ հայոց, որ դարերի փորձություններից, ավերներից ու կորուստներից փրկեցիր, պաշտպանեցիր ու բարձր պահեցիր քրիստոնեական հավաքող ու հավաքելի գործությանը ելար քեզ համար փորված գերեզմաններից և այսօր հայրենի պետականությունը վերականգնած, հայրենի Արցախն ազատագրած, պիտի պաշտպանես քո արդար դար ու պիտի շարունակես քո քրիստոնեական առաքելությունը՝ ազգերի կողքին քո ջանքերն ու մասնակցությունը բերելով նոր ժամանակների, նոր աշխարհի կառուցմանը: Մնանք հավաքավոր ազատության, խաղաղության, արդարության և իրավունքի արժեքներին, որոնցով մարդկային աշխարհում պիտի դրսևորվի և իրական դառնա Աստուծո ավանդած սերը միմյանց հանդեպ: Այս արժեքներով դեպի իր հաղթանակները, դեպի նոր դարի առավուրդը բնթացավ մեր ժողովուրդը՝ հավաքարիմ Սուրբ Ավետարանին մեր Տեր Նիսիմ Բրիստոսի, որ Նարուցյալ է, միշտ՝ Լույսն աշխարհի, Առաջնորդը կյանքի»⁶⁰:

Գաբեգին Բ. Նայրապետի աշխարհընկալմանը լիովին հոգեհարազատ է նաև ընդհանրացնող այն եզրահանգումը, որ **եկեղեցի-պետություն ներդաշնակ համագործակցությունն այլընտրանք չունի**, քանի որ այն կոչված է էապես նպաստելու ինչպես համագգային և ազգապետական, այնպես էլ յուրաքանչյուր անհատի իդեոլոգիայի իրականացմանը, որով նախադրյալներ են ստեղծվում նաև ազգային, հոգևոր ու մշակութային փարանջարվածության առանձին միությունները հաղթահարելու գործում: Այդ փեսանկյունից միանգամայն օրինազատ պետք է համարել, որ բնարկվող հիմնահարցի հայեցակարգային լուծումների ընդհանրացմամբ Վեհափառը կոչ է անում, որպեսզի այդ միության գիտակցությամբ մեր ժողովուրդը մեկտեղի ջանքերը, քանի որ «Միասնաբար, եկեղեցատե ու հայրենատե ոգով պիտի յաղթահարենք այսօրույ դժուարություններն ու խնդիրները՝ պարմութիւն մեզ ուսուցիչ ունենալով և միշտ առաջնորդուելով մեր ժողովրդի լուսաւոր գալիքի փեսիլքով: Արարարի ազատ հայեացքի ներքոյ պիտի ծաղկի մեր Նայրենիքը, հօրանայ, բարգաւաճի, խաղաղ կեանքի խնդութեամբ ապրի աշխարհասփիւռ իր բոլոր գաւակների հետ: Այս հաւատով, միշտ Աստուծոյ հետ հաւատարիմ բնթացքով մեր ջանքերը համախմբենք, մեր նուիրումը գորացնենք՝ յաւելելու համար այն յաջողութիւններն ու յաղթանակները, որ գոհողութիւնների գնով, անլուր դժուարութիւններ ու խռնոցներ յաղթահարելով ձեռք է բերել մեր ժողովուրդը, և որոնց պարծանքն ու քաջալերութիւնը միշտ պիտի ուղեկցեն հայոց կեանքին»⁶¹:

Բնագրային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ **եկեղեցի-պետություն**

Նմմա՝ անդ, էջ 430:

60 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 16-17:

61 Գաբեգին Բ. **Կաթողիկոս Ամենայն Նայոց**, Նարեկի ղարշտոնականը (1999-2009 թթ.), էջ 308-309:

փոխհարաբերության հայեցակարգային ու համակարգված լուծումներին գուզրնթաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծ տեղ է հատկացրել նաև հիմնախնդրի գործնական լուծումների, մասնավորապես եկեղեցի-պետություն հարաբերությունների պետաիրավական կանոնակարգման գործընթացին: Վեհափառի այդ մտայնությունը ծրագրային հիմնադրույթի տեսքով արտացոլված է դեռևս նրա անդրանիկ կոնդակում, որտեղ հռչակվում է. «Անկախ ազգային պետականության պայմաններում անհրաժեշտորեն նոր որակ են ենթադրում Հայ Եկեղեցու և Հայոց պետության յարաբերությունները՝ իրավական հիմքերով ամրագրուած»⁶²: Քանի որ Վեհափառ Հայրապետի համոզմամբ «օրենքը արդարության և իրավունքի հաստատման հասարակական ձգտումն է», նրա վերլուծական մոտեցումներում իրավական հիմքերով ամրագրված եկեղեցի-պետություն հարաբերությունների անհրաժեշտությունը դիտարկվում է նաև օրինաստեղծ դաշտում: Այդ պնդման հիմքում ընկած է վերլուծաբանի այն տեսակետը, որ «օրենքները միաժամանակ հասարակական մրաժողություն են կրթում և դիմագիծ հավելում մեր ազգային նկարագրին», հետևաբար «... օրենսդրությունը՝ իբրև արտահայտություն հասարակական շահի մեր իրական մրահոգության՝ պետք է խարսխված լինի ազգային մեր ավանդներին, քրիստոնեական բարոյական մեր սկզբունքներին ու արժեքներին»⁶³: Եւ ինչպես փաստերն են վկայում, այդ նպատակին հետամտր Հայոց Կաթողիկոսը և նրա գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մեծ ծավալի կազմակերպչական աշխատանք են իրականացրել եկեղեցի-պետություն հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում⁶⁴: Այդ նույն նպատակին է միարված նաև այն, որ փոխադարձ համաձայնությամբ Մայր Աթոռն իր մշրական ներկայացուցիչն ունի ՀՀ Ազգային ժողովում⁶⁵: Վերջապես, Վեհափառը փաստում է. «Եկեղեցու և հայրենի պետության հարաբերություններն առավել ամրապնդվում են նաև փոխադարձ Մեր այցերով և երկուստեք հեղաբրբություն ներկայացնող խնդիրների բնարկման բնթացքին դրսևորվող պարրասրական ու ջերմ վերաբերմունքով»⁶⁶:

Ինչպես արդեն նշվել է, եկեղեցի-պետություն հարաբերությունների ոլորտը չափազանց դինամիկ է, որը պարմականորեն փոփոխվել է և դրսևորվել ինսրիպտրային րարբեր ձևերով: Եւ պետք է նկատել, որ երկկողմանի հեղաեղական համագործակցության արդյունքում Հայասրանի Հանրապետությունում **եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող պետիրավական նորմերում արտացոլվել**

62 «Էջմիածին», 2000, Բ., էջ 7:

63 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հարրերի պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 255:

64 Այդ նպատակին են ծառայում նաև Վեհափառ Հայրապետի 2008 թ. նոյեմբերի 10-ի հրամանով Մայր Աթոռում բացված «Եկեղեցի-պետություն հարաբերությունների» գրասենյակի աշխատանքները:

65 2001 թ. ՀՀ Ազգային ժողովում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Լապ. Խաչատրյանը, րեն Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հարրերի պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 245:

66 Անդ, էջ 213:

են ինչպես աշխարհիկ եւ հոգեւոր ոլորտների ներդաշնակեցման սկզբունքները, այնպես էլ համագգային կյանքում Նայ Եկեղեցու դերի եւ առաքելության ըմբռնումը: Ահա թե ինչու արժեւորելով այդ ամենը՝ Վեհափառ գոհունակությամբ արձանագրում է, որ «Պեպության հետ Եկեղեցու բնականոն ու առաջագնաց հարաբերությունների արտահայտություն պետք է նկատել մեր կողմից բարձրացված հարցերի նկատմամբ բարյացակամ ընդառաջումները, ինչպես նաեւ՝ պարբերականությունը Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ ճանաչելու եւ ամրագրելու Նայ Եկեղեցու պարմական բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի կյանքում»⁶⁷: Ընդ որում, գործնական քննանկյունից մեծ կարեւորություն ունի հարկապես այն փաստը, որ եկեղեցի-պետություն հարաբերությունների օրենսդրական կարգավորումն իրականացվում է փոքրեր հարթություններով: Այդ ամենը նկատի ունի նաեւ ազգրւորի Նայրապետը, որը գրում է. «Արդարեւ, առաքելահաստատ Նայ Եկեղեցին, ուր հոգին է, պարմությունն ու ժառանգությունը հայի՝ հայոց պետության օրենսդրությամբ համարժեքորեն ներկայացված պիտի լինի իբրեւ համագգային հոգեւոր հաստատություն»⁶⁸:

Պետք է փաստել, որ քննարկվող հիմնահարցի նկատմամբ համահունչ մոտեցումների հանդիպում ենք նաեւ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության մեջ եւ օրենսդրական այլ ակտերում: Վկայությունն օրենսդրորեն ամրագրված այն փաստն է, որ «Նայաստանի Նանրապետության եւ Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների կարգավորման սկզբունքները սահմանված են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ, ընդհանուր հարաբերությունները՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ միջազգային պայմանագրերով, իսկ առանձնահատուկ հարաբերությունները՝ որպէս պետության եւ նրա կողմից ազգային ճանաչված Եկեղեցու հարաբերություններ, սույն օրենքով (Նայաստանի Նանրապետության եւ Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին 2007 թ. փետր-

67 Այդ, էջ 48: Այդ մասին ՆՆ Սահմանադրությունն ամրագրում է հետևյալը. «Նայաստանի Նանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Նայաստանի Նանրապետությունը ճանաչում է Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպէս ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում: Նայաստանի Նանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Նայաստանի Նանրապետության եւ Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով», «Նայաստանի Նանրապետության Սահմանադրություն», Երևան 2006, հոդվ. 8.1, սրէն նաեւ Նայաստանի Նանրապետության «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի (փոփոխված եւ լրամշակված) նախաբանը:

Սահմանադրորեն ամրագրվում է նաեւ, որ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների եւ պաշտամունքի այլ ծիսակարարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար», «Նայաստանի Նանրապետության Սահմանադրություն», հոդվ. 26:

68 Գարեգին Բ. Գաթողիկոս Ամենայն Տայոց, Տարբերիկ պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 48:

վարի 22-ի՝ Ա. Բ.)»⁶⁹: Այդ րեւանկյունից անհնար է չնկարել ակնհայտ այն փաստը, որ եկեղեցու նկարմամբ ազգային պետականության մոտեցման հիմքում ընկած է ոչ միայն պարմականության զգացումը, այլև հասարակական-քաղաքական, ազգամշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում եկեղեցու դերի օբյեկտիվ ընկալումը, ինչն, անկասկած, **էապես խթանում է Նայ Եկեղեցու առաքելությանը ոչ միայն Մայր Նայաստանում, այլև՝ հայկական Սփյուռքում**:

Այդ սերը գործակցությունը Վեհափառ Նայրապետը բացառում է նաև նրանով, որ ազգային պետականության գոյությամբ պայմանավորված հասարակական կյանքի վերափոխումներին ու վերակառուցումներին զուգընթաց «Վերափոխվում և ամրապնդվում են նաև մեր երկրի օրենսդրական հիմքերը, որոնց վրա պիտի բարձրանա հասարակական մեր կյանքի նորագ շինվածքը՝ ապահովելով րեւանկյունի կենսունակ զարգացումը, գիտության ու կրթության և հոգևոր կյանքի շարունակական առաջընթացը»⁷⁰: Վեհափառ Նայրապետի համոզմամբ այդ ներդաշնակ գործակցության հիմքում ընկած է նաև այն, որ ազգային պետականության կողմից «... երբեմն **Նայ Եկեղեցին չի դիպվում միայն կրոնական համայնք, այլ հայ ժողովրդի հոգևոր կյանքը կազմակերպող ավանդական հաստատություն**»⁷¹: Այդ րեւանկյունից եւս բնութագրական պետք է համարել եկեղեցի-պետություն փոխհարաբերության էությունը պարզաբանող Նայոց ազգընտիր Կաթողիկոսի այն պնդումը, թե «Մեր պարմութեան որոշիչ այս շրջանում հարկ է, որ հաւատով ու քրիստոնէական ճշմարիտ արժէքներով իմաստաւորենք մեր կեանքը: **Գիտակցենք Նայ Եկեղեցու դերակատարութիւնն իր կոչման բարձունքում, որպէսզի հասարակական մեր կեանքում Նայ Եկեղեցին իրապէս դառնայ խիղճը և երաշխաւորը բարոյականութեան, ժողովրդի կամքի արքայայտիչը պետութեան առջև և պետութեան աջակիցը ժողովրդին ծառայելու սրբազան կոչման մէջ**»⁷²: Նիմնահարցի համակողմանի արժեւորման գործում հարկ է փաստել նաև այն, որ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունն ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական առումներով մեծ կարեւորություն ունի ազգային պետականության համար: Վկայությունն այն է, որ **Նայաստանի Նանրապետությունը Նայ Առաքելական Եկեղեցին ճանաչում է որպես ազգային եկեղեցի, որպես հայ ժողովրդի հոգևոր կյանքի շինության և ազգապահպանության կարևոր պարվար**⁷³:

69 Նայաստանի Նանրապետության և Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին 2007 թ. փետրվարի 22-ի օրենքը, հոդվ. 4:

70 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նաբրեքի պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 255:

71 Անդ, էջ 214: Եկեղեցի-պետություն փոխհարաբերության լուծումներում աստվածաբանական աշխարհընկալման հավաքարիմ Վեհափառ Նայրապետը անդադարձ է կապարում նաև **հավաքարիմ գործոնի** դերի պարզաբանմանը: Նա այդ մոտեցումն ամենից առաջ պարճառաբանում է նրանով, «... որ քրիստոնեությունը ներթափանցված է մեր ժողովրդի էության բոլոր ծալքերում» (անդ, էջ 210): Այդ դիրքերից էլ նա ընդհանրացնելով փաստում է նաև այն իրողությունը, որ անկախ այն բանից «Նայրենիքում ապրեց մեր ժողովուրդը, թե հալածանքներից սփռվեց այլ երկրներում, իր հավաքով միշտ միասնական մնաց հայության հոգին, մնաց իր հողի հետ ու աստվածասեր հայրերի, մնաց փրկության հույսի ու հավաքի հետ», անդ, էջ 219:

72 Անդ, էջ 180:

73 «Նայաստանի Նանրապետության Սահմանադրություն», հոդվ. 8.1: «Նայաստանի Նանրապետությունը ճանաչում է Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային

դրանի Նանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի սահմաններում⁷⁵:

Եւս մեկ բնորոշ առանձնահատկություն: Եկեղեցի-պետություն փոխհարաբերության Գարեգին Բ. Վեհափառի հայեցակարգում հոգեւորի եւ աշխարհիկի ներդաշնակ հարաբերությունները եւ համագործակցությունը կարեւորվում է նաեւ այն պնասակցունից, որ «... հաւարն է լուսավորում մեր Նայրենիքի բարգաւաճման, մեր ժողովրդի բարօրության ուղին»⁷⁶: Այդ հարցում համահունչ է նաեւ ՆՇ օրենսդրական դիրքորոշումը, որպէղ ազգային ինքնության, ազգային հոգեկերպովաճքի պահպանման, ինչպէս նաեւ ազգամշակութային ավանդությունների վերարպադրության գործընթացում եկեղեցի-պետություն համագործակցության պերաիրավական կարգավորման կարեւորագույն գործոնների շարքում ամրագրվում է նաեւ հասարակական եւ հոգեւոր կյանքի ներդաշնակեցմանը միպովաճ օրենսդրական այն դրույթը, որ «Ազգային քաղավար քոնէրին հաջորդող աշխաքանքային օրը Նայասքանի Նանրապետության կառավարության որոշմամբ կարող է քեղափոխվել նախորդ կամ հաջորդ շաքաթ օրը»⁷⁷:

Փասքերն աներկքա վկայում են, որ եկեղեցի-պետություն գործակցության շրջանակներում երկկողմանի ուշադրության կենքրոնում է գքրովել նաեւ ազգային կրթության եւ դասքիարակության հիմնահարցերը: Այդ ոքրքում պերաիրավական քաղաքակաւնության ռազմավարական դիրքորոշումն արքացովաճ է ՆՇ օրենսդրական մի շարք ալքերով: Ինչպէս ՆՇ «Խղճի ազաքության», այնպէս էլ «Նայասքանի Նանրապետության եւ Նայասքանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաքերությունների մասին» օրենքներում ամրագրվում է Նայ Առաքելական Եկեղեցու դերակաքարութաւնը կրթական ոլորքում: Մասնավորապէս, օրենքի 8-րդ հոդվաճն ամրագրում է այն փասքը, որ «Նայասքանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի՝ ա) հիմնելու կամ հովանավորելու նախադաքոցական հասքարություններ, քարրական, միջնակարգ եւ ավազ դաքոցներ, միջնակարգ մասնազիքական եւ բարձրագույն ուսումնական հասքարություններ՝ Նայասքանի Նանրապետության օրենսդրության շրջա-

⁷⁵ Անդ:

⁷⁶ Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նայոց, Նաքրերքիք պաշքոնականք (1999-2009 թթ.), էջ 206:

⁷⁷ Նայասքանի Նանրապետության «Խղճի ազաքության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը (փովոխվաճ եւ լքամշակվաճ), հոդվ. 17, գ ենթ.: «Նայասքանի Նանրապետության եւ Նայասքանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաքերությունների մասին» 2007 թ. փեքրվարի 22-ի օրենքով ես ամրագրվում է, որ «Նայասքանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի ունենալու մշքական հոգեւոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, մանկաքներում, քուն-իւնքերնաքներում, գորամասքերում, ազաքագրկման վաքրքում, ներաշալ՝ քննչական մեկուսաքաններում» (հոդվ. 10): Այդ համաքերքքում պերք է կարեւորել նաեւ Գարեգին Բ. Ամենայն Նայոց Կաթողիկոսի եւ ՆՇ պաշքոնության նախարար Ս. Մարգաքանի կողմից 2000 թ. սեպտեմբերի 14-ին հասքարվաճ «Նայասքանի Նանրապետության գինվաճ ուժքում Նայասքանյայց Առաքելական Եկեղեցու հոգեւոր ճառաքության կանոնադրության» հասքարքում:

Եւ վերջապէս, եկեղեցի-պետություն ներդաշնակ իրավահարաքերություններ հասքարաքելու էական բնութագրիչներից պերք է համարել նաեւ Նայասքանի Նանրապետության օրենքով ամրագրվաճ այն փասքը, որ «Պերքություն ճանաշում է խոսքովանության գաղքնիքությունը: Քննչական եւ դաքական արքաններում որպէս վկա չի կարող հարցաքննվել ճեռնադրվաճ հոգեւորական-խոսքովանախարք գործի այն հանգամանքների մասին, որոնք նրան հայքնի են դարճել խոսքովանության ժամանակ», անդ, հոդվ. 20: Այդ իրողություն ամրագրվաճ է նաեւ «Նայասքանի Նանրապետության եւ Նայասքանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաքերությունների մասին» 2007 թ. փեքրվարի 22-ի օրենքով (հոդվ. 12):

նակներում, բ) մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Նայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցների և ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները, գ) պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները՝ այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացմանն առնչվող խնդիրները, դ) նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով:

Նայասրանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբազան ուսումնական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունը, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին:

Պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը՝ կամավորության հիման վրա:

Նայասրանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հաղորդագրությունները զանգվածային լրատվության միջոցները հրապարակում են անվտանգ»⁷⁸:

Եկեղեցի-պետություն գործակցության շրջանակներում երկկողմանի ուշադրության կենտրոնում գտնվող կրթության և դաստիարակության հիմնահարցերի մեկ այլ օրինակ է **Գարեգին Բ. Ամենայն Նայոց Կաթողիկոսի անձնական անուրանալի ջանքերի, ինչպես նաև Նայ Եկեղեցու նկատմամբ պետական քաղաքականության դրսևորում հանդիսացող ՆՄ Կառավարության 2002 թ. հունիսի 13-ի որոշումը, որով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանին բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ է տրվում**⁷⁹:

Եկեղեցի-պետություն համագործակցության էությունը բնութագրող իրողությունների շարքում անհրաժեշտաբար պետք է մտնան ինչպես **ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում Նայ Եկեղեցու**

78 Տե՛ս Նայասրանի Նանրապետության և Նայասրանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին 2007 թ. փետրվարի 22-ի օրենքը, հոդվ. 8: Վճար.՝ Նայասրանի Նանրապետության «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը (փոփոխված և լրամշակված), հոդվ. 17, գ ենթ.:

79 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանին բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ տալու գործընթացում և սանտրանալի է Գարեգին Բ. Կաթողիկոսի անձնական ներդրումը: Դա է վկայում նաև Նայասրանի Նանրապետության Կառավարության 2002 թ. հունիսի 13-ի «Էջմիածնի հոգևոր ճեմարանի մասին» թ 833-Ա որոշումը, որտեղ արձանագրված է. «Նաշվի առնելով Ամենայն Նայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ներսիսյանի միջնորդությունը և Նայասրանի Նանրապետության կրթական ոլորտում ու հոգևոր-մշակութային կյանքում Էջմիածնի հոգևոր ճեմարանի բացառիկ դերը՝ Նայասրանի Նանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Էջմիածնի հոգևոր ճեմարանը համարել բարձրագույն ուսումնական հաստատություն:

2. Նայասրանի Նանրապետության կրթության և գիտության նախարարին՝ թույլատրել Էջմիածնի հոգևոր ճեմարանի սովորողների փոխափոխությունը Նայասրանի Նանրապետության այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ և շրջանավարտների հետադարձական մասնագիտական կրթությունը Նայասրանի Նանրապետության գիտակրթական համակարգում», **Եղիշե ավագ քահանա Մարգարյան**, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան (1945-2006, Գեորգյան ճեմարան - Աստվածաբանական համալսարան), Ս. Էջմիածին, 2009, էջ 225:

առաքելության և դերակարարության պետական ճանաչումը, որի վկայություններ օրենսդրորեն ամրագրված այն սկզբունքներն են, որոնք վերաբերում են Նայ Եկեղեցու հոգևոր-մշակութային ժառանգությանը, վերջինիս պահպանմանն ու այդ գործում ազգային պետականության դերակարարությանը: Այդ փաստը վկայվում է «Նայասարանի Նանրապետության և Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածով, որով ամրագրվում է իրավական այն նորմը, որ «Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մասն է: Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական արժեքների՝ պետական սեփականություն հանդիսացող հարվածը կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն»: Նույն նպատակին է ծառայում նաև օրենքի հաջորդ՝ 6-րդ հոդվածը, որն ամրագրում է այն սկզբունքը, թե «Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի կառուցելու վանքեր, եկեղեցիներ և պաշտամունքային այլ շինություններ, գործող դարձնելու պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող վանքերն ու եկեղեցիները: Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող եկեղեցիների և պաշտամունքային այլ շինությունների պահպանությունը Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և Նայասարանի Նանրապետությունն իրականացնում են համարել»: Նայ Եկեղեցու պատմամշակութային ժառանգության պետական գնահատման անուրանալի փաստերից պետք է համարել նաև օրենսդրորեն ամրագրված սկզբունքը, համաձայն որի «Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սեփականությունը և ազգային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը հանդիսացող մշակութային հասարակությունների, հավաքածուների, թանգարանների, գրադարանների, արխիվների պահպանության և հարստացման համար պետական աջակցության ծավալն ու նպատակը Նայասարանի Նանրապետության կառավարությունը սահմանում է րովյալ տարվա պետական բյուջեի նախագծով՝ նախապես այն բնութագրելով Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ⁸⁰:

Կարելի է վկայակոչել եկեղեցի-պետություն համագործակցությունը կարգավորող նորմատիվ այլ ակտեր եւս, սակայն կարծում ենք եղածն էլ լիովին բավարար է Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառի, նրա ղեկավարած Մայր Աթոռի և Նայասարանի Նանրապետության համագործակցության հանրագումարային արդյունքը բնութագրելու որպես **ներդաշնակ համագործակցություն: Ավելացնենք միայն, որ ազգային**

80 Տե՛ս Նայասարանի Նանրապետության և Նայասարանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հարաբերությունների մասին 2007 թ. փետրվարի 22-ի օրենքը, հոդվ. 5, 6, 7: Վերջիններիս օրգանական լրացումը պետք է համարել Նայ Եկեղեցու հարկումից ազատ եկամուտներին վերաբերող օրենսդրորեն ամրագրված իրավունքը, որով հռչակում է. «Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի կազմակերպելու հասարակական դրամահավաքներ և սրանալու նվիրատվություններ ու բնձաներ, որոնք ազատ են հարկումից: Հարկումից ազատ են նաև ծխական նշանակության առարկաների ու պարագաների արտադրությունը և իրացումը», անդ, հոդվ. 11:

կյանքում պետաիրավական վերոնշյալ նորմերի արմատավորումը, հաստատարապես նաև դրանց պրակտիկ իրագործումը Նալ Եկեղեցու համար անարգել գործունեության լայն հնարավորություններ են ընձեռել ոչ միայն Նախապետնում, այլև Սփյուռքում: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ պետք է համարել եկեղեցի-պետություն փոխհարաբերության իրավական ըմբռնումների՝ Վեհափառ Նախապետի ընդհանրացնող արժեքային մոտեցումը. «Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում, որ հայրենի մեր պետության կողմից մշտապես գիտակցումը կա Նախապանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ մեր ժողովրդի կյանքում ունեցած բացառիկ դերի եւ առաքելության մասին»⁸¹: Ահա թե ինչու միանգամայն պրամաբանական է նաև վերլուծաբան Նախապետի այն վստահեցումը, որ պետության եւ ազգի առաջընթացն արգելակող եւ նրանց առջև կանգնած մարտահրավերներն ու խոչընդոտները հաղթահարելու, երկրի ազապ կյանքը զորացնելու միպոմով խաղաղության, արդարության եւ իրավունքի հաստատման որոնումներում «... մեր Սուրբ Եկեղեցին աջակից է ... եւ զորավիգ հայրենի պետությանը, ինչպես որ եղել է դարեր ի վեր»⁸²:

81 Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Նապոց, Նապրնպիք պաշտոնականը (1999-2009 թթ.), էջ 213-214:

82 Անդ, էջ 261:

ՆԱՅԿԵԱՆ ԱՌԱՍՊԵԼԻՆ ԱՌԸՆՉՈՒՈՂ ԴՐՈՒԱԳՆԵՐ ՅԵՏՋՐՆԵՂԵՂԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Սուրբգրական ցանկացած հապտում իր ծառայի փասնապարհիկ և հարիւրապարհիկ չափով գեղարուեստական, քննական և մեկնողական սրեղծագործությունների հիմք և ոգեշնչման աղբյուր է հանդիսացել: Երբ Աստուածաշնչին նայում ենք իբրև գրական սրեղծագործություն, իբրև հրեական բանահյուսության գրառեալ մաս, փնտրում ենք, որ կան նաև հապտումներ, որոնք արտացոլել են հին ժողովուրդների մօտ առկայ հարուստ նիւթի միայն մի մասը: Այդպիսիների թուին պէտք է դատուն, անշուշտ, համաշխարհային ջրհեղեղի և դրան յաջորդած դէպքերի, Նոյի և երկրի վերաբնակեցման ու բուսականութեամբ ծածկուելու մասին պատմւները, որ աշխարհի փարբեր ծագերում գոյարևել են այլազան ժողովուրդների յիշողութեան մէջ:

Օրինակ՝ դեռևս ԺԱ. դարում Գրիգոր Մագիստրոսը գուգադրել է որթափունկի առաջացման նկարագրությունները. «Մատեանն Կռիտասայ ծերոյ յայտնէ զորթ տնկեալ Դիոնեսեայ: Հետեւին եւ նմա այլք ժամանակադրաց Աթենացւոց եւ Ելլադացւոց եւ բոլորք հեթանոսական մատենադիրք: Եւ ի սկզբանն իսկ յայտնէ նոյնս Կռիտաս այսպիսի յեղանակաւ. «Առեալ,- ասէ,- հող եռորական զանդեալ ջրով եւ յարենէ ինքեան որակացեալ զնա ատրորական զառաջինն, իսկ զերկրորդն շիկորակ. քանզի սակաւ յայն ամանեաց զարիւնն, իսկ երկրորդն դարձեալ սակաւ քան զայլսն. եւ ստեղծնոյր սպիտակափառ եւ ի սոցունց այլք յորորականք եղեալք. եւ այս յաղադս նախկին դոյացութեանն: Արդ սա մինչ տակաւին մանուկ տղայն էր, պատրանօք խաբամաբ խաղուց խաբեցին Տիտանքն, եւ զենեալ յօշմամբ, ի սան ամանեալ, եղին ի վերայ Հեփեստեայ, իսկ յանդամոցն ի շամփուրս հարեալ, ի վերայ ունելով հրատին: Զոր ի ճենճերաց հոտոյն ազդ եղեալ հօրն Արամազդայ, շանթիւ զՏիտանսն տանջէր, եւ զանդամսն ի տապանակի եղեալ, Ապոլոնի որդւոյ իւրոյ յանձն առնէր. իսկ նորա առեալ ի Պառնասոս տարեալ, անդ ուրեմն եղեալ: Յորոյ դրան տաճարին բուսանէր որթն հրաշատեսիլ, յորոյ միոյ յողկուզէ եռապատիկ իննուց հազարաց ճմլիւր ի միում սանի. բայց ի մեռանել սորա Դիոնեսեայ ի կաթլաց արենէն կարծեցին բուսանել զնուունսն»: Արդ այսոքիկ Կռէտասայն, եւ որք զկնի նորա: Բայց առ հրէից եւ յաստուածեղէն Մատենից նաեւ ի Քաղդեաց զՔսիւսութիւնսն իմանամք զորթ տնկեալ: Եւ ի ծերոց առասպելաբանեն ասել՝ յԱկոռի, եւ ստուգաբանեն եթէ՝ արկ ուռի: Զոր թուի ինձ ոչ նախուստ այսոքիկ բաղկացութեան պատճառ, այլ իմանամք նախ

եղեալ այդիս, ապա ի մեծ ի ջրհեղեղէն ապականեալ, եւ ապա Նոյի ի մայրս ուրեք անտառի ի մնացելոցն ի ծայրս ծառոցն հատեալ, կրկին տնկէր զնա: Զի եթէ ոչ այսպէս, զի՞նչ արդեօք. մի՞թէ ստեղծող զնա կարծեմք: Եւ եթէ ոչ նախ էր տեսեալ զնա հարցն ճմլեալ եւ ամանեալ, զիա՞րդ ընդ երեկոն ըմպեալ արբենայր, վասն որոյ ծիծաղեալ Քամայ:

Այլ ինձ յոյժ նախապատուելի մանաւանդ պաշտելի եւ երկրպագելի իմոյն Յիսուսի եւ Աստուծոյն եւ Փրկչի, որ տնկեցաւ յերկրի որթ ճշմարիտ եւ ճմլեցաւ ի խաչին Ողկոյզն անսպառ յուրախութիւն տրտմեցելոց...»¹: Ինչպէս րեսնում ենք, հեղինակը ոչ միայն քաջածանօթ է նիւթին, այլև իրեն յարուկ վայելչութեամբ վերլուծում ու մեկնում է եւ ժողովրդական սրտագրանությունը րարով՝ բացարարում է, թէ իրականում ինչպէս կարող էին ընթանալ դէպքերը, այլապէս՝ «մի՞թէ ստեղծող զնա կարծեմք», որին յաւելում է, որ իր համար «նախապարտելի եւ պաշտելի» է ասարածարանական «Որթի» պարմությունը:

Ներկայ քաղութան պարագայում հայ բանահիստութեամբ հերարքրքրուողի համար կարելու է, որ թէկուզ ժպտ, սակայն ուշագրաւ րեղեկություն կայ հայկական բաղկացուցչի վերաբերմամբ, ուր «ի ծերոց առասպելաբանեն» ասելով՝ Մագիսարոսը մարմանւում է իր աղբիւրը:

Նմանաբիւ աղբիւրներում պահպանուած նիւթի ուսումնասիրությունը հնարատրություն է ընձեռում, որ կարողանանք այլ րեսանկիւնով դիարակել պարումը, իսկ շարք դէպքերում անգամ վերականգնենք մեզ առնչուող մանրամասները, որ բացակայում են Ասարածաշնում: Նախկինում այսպիսի անդրադարձեր կարարելու հնարատրություն ունեցել ենք յերօրհեղեղեան շրջանի կապակցութեամբ, երբ րործում էինք պարականոն Յոբելենից գրքի եւ միջնադարեան ուղեգիր ռաբբի Փեթահիայի² յիշարակումները յաւելել հայկական աւանդություններին: Իրեն հին աւանդությունը րարբեր կերպերով վերարարարելու վառ օրինակ կարելի է յիշել, ասենք, Յովսէպոսի խօսքերը, սկզբում ագոս, իսկ յերայ աղանի բաց թողնելու մասին, ուր յունագիր հրեայ պարմագիրը նշում է, թէ ագոսը վերադարձաւ, սակայն եօթ օր անց Նոյր աղանի բաց թողեց³: Արիւղէնոսի մօր պահպանուած Բերոսոսին վերագրուող համարարարասիան րողերում պարգապէս թոշուններ են. «Քսիւսուլթրէսը թռչուններ բաց թողեց, րործելու համար, որ կարողանայ դատել, թէ արդեօք ջրերը քաշուել են: Սակայն թռչուններն անցնելով անափ ծովի վրայով, հանդստի տեղ չգտան [եւ] կրկին վերադարձան Քսիւսուլթրէսի մօտ: Քսիւսուլթրէսը սա կրկնեց այլ թռչունների հետ: Եւ միայն երրորդ րործի ժամանակ նա յաջողեց, որովհետեւ թռչունները վերադարձան ցեխոտուած ոտքերով»⁴: Արդէն Յոբելենից գրքում

1 «Գրիգոր Մագիսարոսի թղթերը», բնագիրն յառաջարկում եւ ծանօթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910, էջ 79-80:

2 Տե՛ս մեր՝ «Միջնադարեան մի ուղեգրական անդրադարձ Ղայասարանին», «Էջմիածին», 2011, ԺԲ., եւ «Յոբելենից գիրքը՝ Ղայքի մասին», «Էջմիածին», 2012, Բ. յօդուածները:

3 Տե՛ս «The works of Flavius Josephus», translated by William Whiston, London, 1737, էջ 29:

4 Տե՛ս <http://www.sacred-texts.com/cla/af/af04.htm>:

րնդհանրապես խօսք չկայ թոշունների միջոցով ջրերի նահանջելու մասին արեղեկանալու առնչությամբ⁵: Ինչպես պնդում է թարգմանիչ Չարլզը, թոշնաբնակի մատրանշման բացակայությունը հաւանաբար կարելի է բացատրել նրանով, որ Յոբելենիցի հեղինակը չի կամեցել դրական գոյներով ներկայացնել՝ հրեական կրօնով անմաքուր համարուող աղանիներին⁶: Մրանով իսկ նկարելի է դառնում, որ ցանկացած վերապարմող իր կողմնակալ վերաբերմունքն է նաև դրոշմում:

Ազոաւ, ապա եւ աղանի բաց թողնելուց չի խօսում նաև «Պարմական ակնարկ Նոյի՝ Երոպայում կայարած պոպոսների» գրքոյկը, որ անգլերէնի է վերածել Ռիչարդ Լինչը⁷: Այսպէղ առկայ պարմութիւնները շար արեղերում քարբերում են իրենց գուգահեո՝ թէ՛ ապրումաշնչեան, թէ՛ պարականոն հարումաշնչից: Օրինակ՝ եթէ այլ դէպքերում ասում է՝ «*Եւ ետես Քամ զհայր Քանանու զմերկուլթիւն հաւր իւրոյ, եւ եւ պատմեաց երկուց եղբարց իւրոց արտաքոյ... Եւ սթափեցաւ Նոյ ի գինւոյ անտի իւրմէ, եւ գիտաց զինչ արար ընդ նա որդին իւր կրտսեր»*⁸, կամ ինչպէս Յոբելենից գրքում է՝ «*Եւ Քամն իւր հայր Նոյին մերկ տեսաւ, եւ դուրս եկաւ, եւ պատմեց իւր երկու եղբայրներին... Եւ երբ Նոյն իւր քնից արթնացաւ, իմացաւ այն ամենը, ինչ կրտսեր որդին արեւ էր իւր հետ»*⁹, արդեօ՞ք հօր պարմախան քայր չափագանց խիստ չի թում՝ «*Եւ ասէ [Նոյ]. Անիծեալ Քանան մանուկ, եւ եղիցի ծառայ եղբարց իւրոց»*¹⁰: Նաև հարց է առաջանում, թէ ինչ ասել է՝ «*իմացաւ այն ամենը, ինչ կրտսեր որդին արեւ էր*». այն ամենը արեւնէլն ու դուրս գալով պարմեղն էին... Սրա փոխարէն «Պոպոսների գրքում» արդէն գործողութիւնների ընթացքը լիովին բացատրում է, ինչի շնորհիւ անգամ հօր մօտից արարաբաւելը ոչ միայն հիմնատը, այլև չնչին պարիթ է թում: Բերենք համապարմախան հարումաշնչը. «(6) *Նոյեան բոլոր որդիներին մէջ Քամը (Cham) յետինն էր հօր բարեացկամութեան առումով: Իր կախարդական արուեստի համար (ուր մեծ գիտելիքներ ունէր). նա Զրադաշտ (Zoroast) էր կոչուում, որ եւ ամբողջովին նուիրուել էր վայրի եւ անկիրթ վարքին՝ հետեւելով մինչ ջրհեղեղը եղած հսկաների զազիր եւ չար*

5 Տե՛ս «*The Book of Jubilees or The Little Genesis*», Translated from the editor's ethiopic text and edited, with introduction, notes and indices by R. H. Charles, London, 1902, էջ 48:

6 Տե՛ս անդ. թարգմանիչ Ներածութիւնը՝ էջ xlviii.

7 «An historical treatise of the travels of Noah into Europe: Containing the first inhabitation and peopling thereof». Done into English by Richard Lynche, Gent. London, 1601. Նուպիսի անյաջող պապգութեան, թէ թղթի վար ընտրութեան արդիւնքում որոշ էջերում քառերի թանաքը թափանցել է միա երես՝ գրեթէ ամբողջությամբ մրորելով այն, մարի օգրուել ենք նաև գրքի համացանցային քարբերակից՝ <http://www.argyou.eclipse.co.uk/myths/bible/Travels.htm>, որպէղ բնագրում կիրառում էջերի քառային համարակալման փոխարէն պարբերութիւններն են համարակալում, ինչն օգրագործել ենք նաև մենք:

Ցաւով պիտի նշենք, որ անգլերէնի վերածողի մասին ոչինչ յայտնի չէ, եւ անգամ իր անունը երբեմն գրում է նաև Lynche (ի հակադրութիւն Lynche-ի) ձեւով: Ընդունում է կարծել, որ Ռիչարդ Բարնֆելդի սօնէրներից մէկը՝ «*Poems in Divers Humors*», ձօնում իր ընկեր «Master R. L.»-ին, նուիրում է Ռիչարդ Լինչին. քնն <http://www.bookrags.com/biography/richard-lynche-dlb/>

8 «Ապրումաշնչն մարեան Նիւ եւ Նոյ՝ Կրակարանաց», Նայսարանի Ապրումաշնչային ընկերութիւն, 1997, Ծննդ. Թ., 22, 24:

9 Տե՛ս «*The Book of Jubilees...*», գլ. Է., 8, 10:

10 Ծննդ. Թ., 25. հմմտ. «*The Book of Jubilees*», Է., 10:

դործերին: [Եւ] քանի որ նա ատում էր իր հարազատ հօրը, որովհետեւ իրեն քիչ սիրուած էր նկատում նրա կողմից, երբ հօրը տեսաւ այսպէս խուճար քնած (ի դործ դնելով իր հմայական [կարողութիւնները]) վրէժի առիթ ունեցաւ եւ իր արուեստով կախարդեց հօր սերնդափոխութեան տեղերը, յաշմելով նրան, որ այդուհետ կնոջ կարիք չզգայ կամ զաւակներ չունենայ: Իր այս եւ նման քստմնելի եւ անյարգալից [դործերի] համար ամենածանր կերպով նա իր վրայ սեւեռեց Աստծու զայրոյթն ու դժգոհութիւնը եւ դրա համար արտաքսուեց հօր մօտից, որ դրանից աւելի մեծ պատիժ չսահմանեց նրա յիշեալ հրեշաւոր արարքի համար»:

Համարում է, որ Լինչի թարգմանութեան համար հիմք հանդիսացած լատիներէն բնագիրը այլազան մարեաններից կարարուած հաւաքմունք է կամ սեղմ վերաբարդութիւն: Իսկ թէ լատիներէնի համար ինչ երկ է աղբիւր հանդիսացել, փորձել են պարզել «Մարդկանց, ազգերի եւ վայրերի անունների պարմութեան» աշխարասիրողները, որ պնդում են, թէ համառօտումը շարք վաղ շրջանում կարարուել է հայերէն եւ հայերէնից է թարգմանուել լատիներէն¹¹: Իբրեւ փաստարկ նրանք բերում են ուշագրաւ օրինակներ: Միջնադարեան բնագրի լուսանցքներում իբրեւ աղբիւր յիշուած են Կարբեր հեղինակներ¹²: Յարկապէս յերջրեհեղեան շրջանի համար լուսանցագրութեան մէջ յիշուած է Բերոսոսը, որ մեր պարմիչների շարք օգտագործած աղբիւրներից է: «Անունների պարմութեան» հեղինակները գտնում են, որ Բերոսոսը պէտք է օգտագործած լինէր Քսիստոթէ ձեռք, եւ ծանօթ չլինէր Նոյ անուանը: Միւս դէպքում, ըստ նրանց, քաղուածագիրը Նոյի որդի Քամին Զրադաշտ անուանելով՝ հետեւում է Մովսէս Խորենացուն եւ Մար Աբասին¹³, դրանով իսկ մարմնելով իր ինքնութիւնը:

Հիմնականում նուիրում լինելով Եւրոպայի բնակեցմանը, «Պարտարների» գիրքը բազմաթիւ ուշագրաւ դրուագներ է ներկայացնում նաեւ Արարարեան երկրի մասին: Ի թիւս այլոց, յարուկ կարեւորութիւն ունեն մեր կարծիքով Հայկեան առասպելի հետ զուգարդելի հարուածները, որ այլ կերպ են ներկայացնում Հայոց առաջին նահապետ-թագաւորի հանգամանքը: Ուստի նախ բերենք համապարասխան քաղուածները, իսկ այնուհետ փորձենք կողմնորոշուել դրանցում:

«(5) Այսպիսով աշխարհն ամբողջութեամբ ծածկուեց եւ ենթարկուեց ջրերի՝ ամեն բան սանձող զօրութեանը (բացառութեամբ Նոյի (Noe) եւ իր ընտանիքի): Վերջում ջրերն սկսեցին յետ հորդել եւ անցնել երկրի ընդերքը: Երբ Նոյը նկատեց այս (իր Տապանը կանգ էր առել Արմենիայի Գորդիկուս (Gordicus) բարձունքի դադաթին), կամօք եւ հրամանով Աստուծոյ միւսնների հետ (որ եօթն էին) միասին դուրս եկաւ իր նաւից եւ ներքեւ իջաւ դէպի նոր ցամաքացած երկիրը. սա եղաւ Տրոյայի (Troy) հիմնումից ութ հարիւր

11 Stū E. Salverte u L. H. Mordaque, *History of the Names of Men, Nations and Places in Their Connection with the Progress of Civilization*, 2005, էջ 339:

12 Stū «An historical treatise...», էջ Biii, Ciii, D tui:

13 Stū E. Salverte u L. H. Mordaque, *History of the Names...*, էջ 339-344:

երեսուն եւ երեք, եւ Քրիստոսի մարգեղութիւնից՝ երկու հազար երեք հարիւր եւ եօթ տարի առաջ: Ապա Նոյը տեսաւ, որ ինքն է մնացել իբրեւ համայն աշխարհի միակ արքայ, միապետ, կայսր, հայրապետ, տէր եւ տիրակալ. հիացեալ ցնցուեց այս արտասովոր եւ զարմանահրաշ գէպքից: Եւ առաջ շարժուելով՝ մի հարթավայրում մարմարիօն մի սիւն գտաւ, որին զգուշօրէն գրօշմելով պատմագրական երկի նմանութեամբ գրառեց ջրերի բարձրանալն ու աշխարհի մեծ հեղեղումը: Եւ այս քարը (ինչպէս ասուած է) տեղացիների կողմից մինչ օրս Միրի-Ադամ (Myri-Adam) է կոչւում, որ մեկնւում է իբրեւ Նոյեան արգիւնք: Եւ այն կանգնած է Մեծ (great?) Ասիայի զգալի մաս կազմող Արմենիա երկրում, որ արեւելքում հանգիստացած է Հիւսիսեան (Hyrcanian-Կասպիական) ծովին, գէպի հարաւ ընկած է Մեսոպոտամիան (Միջագետք), հիւսիսում կոլխերն ու ալաններն են (Colchos and Albania) եւ արեւմուտքում՝ Կապադովկիան: Եւ նրա կենտրոնով հոսում են երկու հանրայայտ գետերը՝ Տիգրիսն ու Եփրատը (Tigris and Euphrates) [եւ] որից այսուհետ սոյն պատմութեան ընթացքում շատ պիտի խօսուի: Գրուած է, որ Ջրհեղեղից յետոյ Նոյն իր Տիթեա (Tytea) կնոջից երեսուն զաւակ ունեցաւ, որ են՝ Մեծն Տոյսքօնը (Tuyscon), Պրոմէթէսը (Prometheus), Յապետը (Iapetus), Մաքրոսը (Macrus), նաեւ տասնվեց տիտանները, որ բոլորն էլ հսկաներ էին, նաեւ Քրանոսը (Cranus), Գրանաոսը (Granaus), Օվկիանոսը (Oceanus) եւ Տիֆէոսը (Tipheus): Եւ գուստրերից՝ Արաքսան (Araxa), որ Մեծ էր կոչւում, Ռեգինան (Regina), Պանդորան (Pandora), Քրանուան (Cranua) եւ Թետիսը (Thetis): Որոշ հեղինակներ աւելին են պնդում, սակայն յանուն հակիրճութեան առաջիկայում չենք գիտարկի այլոց կարծիքները: Եւ այսպէս ապրելով Արմենիայում, Նոյն իր այս զաւակներին ուսուցանեց սրբազան աստուածգիտութիւնը, [ծանօթացրեց] նաեւ հոգեւոր պաշտամունքի եւ սուրբ ողջակէզի արարողութեանը, ինչպէս եւ [սովորեցրեց] ընկալել մարգկային վարքութեամբն ու բնութեան գաղտնիքները, որոնց մասին նա գրել էր բազում գրքեր, որ յետագայում սկիւթացւոց (Scythians) եւ հայոց քուրմերն ու հոգեւորականները պահեցին ու պահպանեցին մեծագոյն խնամքով եւ երկիւղածութեամբ¹⁴: Այս իսկ պատճառով սկիւթացիները նրան Օգիգէս Սագա (Ogyges Saga) էին անուանում, որ սկիւթերէն մեկնութեամբ Մեծ Նահապետ է նշանակում, հոգեւոր գերագոյն առաջնորդ եւ զօրեղ քուրմ: Եւ այս Բերոսոսը պնդում է՝ ասելով. «Primum itaque dix-

14 Գրքերի առկայութեան մասին քննարկ են նաեւ այլ աղբիւրներ. «Նոյի մասին խօսող Միդրաշին մէջ, որ Փոքր Ծննդոցի հետ նմանութեան կէտեր կը ցուցնէ, կ'ըսուի նմանապէս. «Այս է բժշկութեան դեղաց գիրքը, զոր էին իմաստունները թարգմանած (կա՞մ խմբագրած) են Սեմի՝ Նոյի որդւոյն գրքէն, որ քրիստոնէական եւրոպայի Նոյին փրօւեցաւ Լուրար լեռան վրայ, որ Արարապեան լեռներուն մաս կը կազմէ». Rösensch, *Das Buch der Jubiläen, Oder die Kleine Genesis*, Leipzig, 1874, s. 385». քնն Վ. Ինգլիզեան, Տայասարան Սուրբ Գրքին մէջ, Վիեննա, 1947, էջ 87:

*erunt Ogygesn Sagasn, id est, Illustrem Sacrorum Pontificem Noam*¹⁵: Նոյը նաեւ սովորեցրեց եւ բացատրեց նրանց մոլորականների ծիրերը եւ տարին բաժանեց տասներկու ամսուայ՝ համաձայն լուսնի ուղեծրի եւ շրջապտոյտի: Նաեւ իր տիեզերագիտական իմացութեամբ եւ երկնային մարմինների շարժման դիտարկմամբ նա կարողանում էր կանխատեսել յաջորդ տարուայ եղանակային փոփոխութիւնները, ինչի համար սկիւթացիներն ու հայերը մեծապէս պատուում էին նրան, աստուածային բնութեան եւ տիեզերական գիտութեան դերակատար համարելով, եւ դրա համար նրան կոչում էին Օլիբամա (*Olybama*) եւ Արսա (*Arsa*), որ նոյնն է, թէ ասենք Երկինք եւ Արեւ: Եւ յետագայում սկիւթացիներն ու հայերը կառուցեցին եւ նրա ու նրա կնոջ՝ Տիթեայի անուամբ կոչեցին բազում մեծ քաղաքներ, այնքան պատուում էին նրանց շնորհների եւ աստուածահաճոյ զրոյցների համար: Յետագայում նա սովորեցրեց այդ ժողովուրդներին գիւղատնտեսութեան եւ հողի մշակութեան կարեւորութիւնը՝ նաեւ ցուցանելով խաղողի կիրառութիւնն ու վազի մշակման եղանակը, ինչպէս եւ այլ պիտանի բաներ՝ դիւրին ապրելու համար պիտանի, ինչի արդիւնքում նա կոչուեց Իանուս (*Ianus*), որ սկիւթացուց լեզուով նշանակում է «գինի շնորհող»: Բայց քանի որ նա առաջինն էր, որ յայտնագործեց այդ, ուստի առաջինը եղաւ, որ զգաց դրա ոյժն ու կարողութիւնը եւ ի զօրու չլինելով դիմակայել նիւթափոխանակութեանը՝ մի մեծ տօնակատրութեան ժամանակ, երբ հրաւիրել էր իր ընկերներից շատերին, ծայրայեղ հարբեց եւ չկարողանալով յաղթահարել՝ այս հրաւիրեալ հիւրերի եւ ընկերների մէջտեղում պառկեց եւ անպարկեշտ կերպով քնեց. այսպիսին էր նոր յայտնագործուած սոյն խմիչքի ցասումը»:

«(11) Այս [եւրոպական] թագաւորութիւնների եւ իշխանութիւնների հիմնումից եւ երկիրը դարձեալ լաւ բնակեցնելուց յետոյ Նոյը ձեռնարկեց իր երկրորդ շրջագայութիւնը դէպի Եւրոպա, թողնելով իր թոռանը¹⁶, Բաբելոնի արքայ Նեմբրոթի (*Nembroth*) եղբայր Սաբատիուս Սագային (*Sabatus Saga*), որ կառավարի եւ ղեկավարի Արմենիա աշխարհը, որտեղից ինքն այժմ հեռացաւ զաւակներին այցելելու եւ նրանց կալուածներից տեղեկանալու համար: Եւ տիրում էր այս Սաբատիուս Սագան (*Սատուրն* (*Saturn*))

15 Այսպիսով, առաջին բանն ասում էին Ogygesn Sagasn, այսինքն, Սուրբ հովուապետ հոջակատր Նոյ:

16 Բնագրում «nephew» բառն է, որ հնարանութիւն է եւ ենթակայ է թարգմանութեան ոչ թէ «a son of one's brother or sisters» եւրօր կամ քուերոդի իմաստներով, այլ՝ «*Obsolete*, a direct descendant, especially a grandson» թոռ: Դիւրեղի է նաեւ, որ յետագայ շարադրանքում Նոյր յիշում է իբրեւ Սաբատիուսի պապ՝ բացայայտելով «nephew»-ի նախնական կիրառութիւնը. Կեն 15-րդ պարբերութիւնը: Ժամանակակից հեղափոխողները վերցնում են բառի ներկայիս իմաստը եւ շփոթութեան մէջ ընկնում: Օրինակ՝ Ռիչարդ Ուասուոն, խօսելով Սաբատիուսի մասին, ասում է. «...in some recensions called a "nephew" of Noah, which is hardly possible» (որոշ խմբագրութիւններում [Սաբատիուսը] կոչում է Նոյեան զարմիկ, որ քիչ հաւանական է). Կեն **Richard Waswo**, *Everybody's Genealogy: Pop History in the Renaissance*, «*Spell. Swiss Papers in English Language and Literature*», vol. 9, edited by Werner Senn, Tübingen: Narr, 1996, p. 56:

անուանեալ), եւ իր կամքի ու իշխանութեան տակ էր աշխարհն ընդհուպ մինչեւ Բաքտրիա (*Bactria*)՝ տարածուելով մինչեւ Հնդկաստան (*India*) (որ այսօր Թարթարիա է կոչուում): Այս ամենը տանն այսպէս կարգաւորելով՝ Նոյն (Իանուս անուանեալ) իր կնոջ՝ Տիթեայի եւ բազում մարդկանց հետ սկսեց իր ուղեւորութիւնը (որ ջրհեղեղից յետոյ հարիւր վաթսուներեքորդ եւ Նեմբրոթի իշխանութեան երեսունութերորդ տարում էր) դէպի Հիւրկանիա (*Hyrkania*), որը յետագայում ինքը բնակեցրեց եւ կոչեց իր անուամբ՝ Իանիջ (*Ianij*): Այնտեղից նա եկաւ Մեսոպոտամիա, ուր եւս իր ետեւում թողեց բազում մարդկանց՝ բնակութեան համար, եւ այնտեղից նա հասաւ Արաբիա Փոքիկի (*Arabia Foelix*) կոչուած երկիրը, ուր երկու քաղաք հիմնելով եւ բնակեցնելով՝ մէկն անուանեց Նոա (*Noa*-Նոյ), միւսը՝ Իանինեա (*Ianineia*): Յետոյ նա անցաւ այնտեղից եւ եկաւ Աֆրիկա՝ աշխարհի այն մասը, որ ինքը նախապէս նշանակել էր իր երկրորդ որդի Քամի իշխանութեան եւ կամքի ներքոյ, սակայն տուեալ ժամանակ այնտեղ կառավարում էր նոյն Քամի երէց որդու՝ Քուշի (*Cus*) զաւակ Սաբայի (*Saba*) որդի Տրիտոնը (*Triton*): Այս Տրիտոնը մեծ ցնծութեամբ եւ սրտի բերկրութեամբ ընդունեց Նոյին եւ նրա ուղեկիցներին, եւ Նոյն այնտեղ կէս տարի մնաց: Այդ ընթացքում Տրիտոնը մահացաւ եւ իր որդի Համմոնին (*Hammon*) թողեց իբրեւ ժառանգորդ թաղաւորութեան Աֆրիկայի, որ այլ կերպ Լիբիա (*Lybia*) է կոչուում: Սրանից յետոյ Նոյն առաջ շարժուեց եւ վերջապէս Իսպանիա (*Spain*) հասաւ, որ ջրհեղեղից յետոյ երկու հարիւր յիսուներեքորդ եւ Բաբելոնի երրորդ թաղաւոր Նինուսի (*Ninus*) կառավարման տասներորդ տարում էր»:

«(15) Նախկինում նշուել էր, թէ ինչպէս Արմենիայից առաջին անգամ հեռանալիս Նոյը տնօրինեց եւ հիմնեց [թաղաւորութիւնը] եւ իր թոռ Սաբատիոս Սադային, Սատուրն մականուանեալ, վստահեց, որ թաղաւորն ու նահապետը լինի այդ երկրի, որից յետոյ վերջինս խաղաղութեամբ կառավարեց մինչեւ Բաբելոնի երկրորդ արքայ Իւպիտեր Բելի (*Jupiter Belus*) իշխանութեան ժամանակները, որ տրուել էր չենթարկուող մօլի ձգտումներին եւ տենչում էր իշխել իբրեւ համայն աշխարհի միակ կառավարիչ, այն օրերին եղած պատգամների առաջին խախտողն ու ոտնահարողը եղաւ, որի պատճառով յետագայում ոսկէ դարաշրջանը կորցրեց իր այդ կոչումը եւ այլեւս երբէք այդպէս չանուանուեց, քանի որ մինչ իր այս դոռոզ քայլը, ամեն բան խաղաղ էր, պարզ, հասարակ եւ ազատ: Այս Իւպիտերը հնարաւոր բոլոր միջոցներով փորձեց տապալել Սատուրն անուանեալ Սաբատիոս Սադայի իշխանութիւնը ու հրամայեց նաեւ իր որդի Նինուսին անել հնարաւոր ամեն բան Սաբատիոսին եւ նրա տոհմը կործանելու համար, որ իրենք միասին այնքան առաջ տարան, որ Սաբատիոսն իր իմաստութեամբ հազիւ փրկուեց իր համար հիւսուած որդեայթից: Այդ իսկ պատճառով

Սատուրնը տեսնելով վտանգն ու չարիքները [եւ հասկանալով], որ [կարող է] զրկուել իր իշխանութիւնից եւ ինչքից, օղնութեան եւ ապաստանի համար փախաւ իր պապ Նոյի մօտ՝ հուսալով այնտեղ պաշտպանուել եւ ապահով պատսպարուել, որն այդպէս է յիշում նաեւ Վերդիլիուսը. «*Primus ab ethereo venit Saturnus Olimpo arma locis fugiens & regnit exul ademptis*»¹⁷: Նոյն արդարացրեց Սատուրնի սպասումները, ջերմօրէն եւ բարեացկամ ընդունեց եւ ողջունեց նրա դալուստը եւ պատուեց նրան եւ իր մտերիմ վերաբերմունքն ի ցոյց դնելու համար նրան կարգեց առաջնորդ, արքայ եւ նահապետ տեղաբնակներին, որոնց քիչ առաջ մատնանշել էինք, եւ առիթ հանդիսացաւ նաեւ, որ նա քաղաք կառուցի, որն անուանեց իր անունով Սատուրնիա (*Saturnia*), ինչպէս Իանուսինն էր կոչւում Իանիկուլում (*Ianiculum*): Եւ ճիշտ այդ տեղում այժմ Հռոմի մի մասն է, որ տարածւում եւ բարձրանում է Տիբրէ (*Tybre*) գետի միւս ափին, ինչպէս Վերդիլիուսը եւս նշում է իր էնէականում, ուր բերում է Աենասի (*Aeneas*) խօսքերը էվանդերին (*Evander*) ասելով. «*Hac quo preterea disiectis opida muris, Religatas veterum vides monumenta virorum, Ianiculum buie fuerat, illi Saturnia nomen*»¹⁸: Այնուհետեւ Իանուսը եւ Սատուրնը թաղաւորեցին միասին: Մեծն Տիթեան՝ Նոյան կինը, այն ժամանակներում սկսեց կազմաւորել միանձնուհիներին եւ Վեստա (*Vesta*) դիցուհուն նուիրուած կոյսերի արարողութիւնները, կուսութեան եւ ողջախոհութեան եկեղեցիներ ու տաճարներ ներմուծելով

17 Վիրգիլիոսի քաղն ամբողջական կտրուով բերում ենք արեւմտահայերէն թարգմանութեամբ.

Արամազդի յաղթող զէնքէն փախչելով
Եւ Ոլիմբեան իր գահոյքէն փարագիր՝
Զրուանն եկաւ նախ, ու խմբեց միասին
Լեռներու բարձր ծայրերուն վրայ ցրտած
Այն խեռ, ըմբոսք եւ խոսքերախ ժողովուրդին,
Անոնց քրտալ օրէնք ու կարգ, եւ ուզեց
Որ այն երկիրը Լատին յորջորջուի,
Զի հո՛ն կորցաւ գրքնէլ թաքուսք մնապահով:

Տե՛ս «Պոլլիոսի Վիրգիլեայ Մարոնի Ենէական», բնագրէն աշխարհաբար թարգմանեաց Կ. Արսէն Ղազիկեան, Վենետիկ, 1933, էջ 329: Թարգմանութեան մէջ Ղազիկեանը օտար աստուածութիւնները փոխարինել է հայկական համարժեքներով՝ Արամազդը Իւպիտերն է, Զրուանն՝ Մարտիրը:

Այսպէս նախապէս քաղն Սատուրնի բառն ստուգաբանելի է *latere*՝ թաքցնել, պահել իմաստով: Պոլլիոսների գրքում ներկայ հայտնածի կողքին՝ լուսանցքում գրառումը է՝ «Whereupon Poets feign Saturn was banished heaven by Jupiter»՝ Դրանից յետոյ բանաստեղծները յօդինեցին, թէ՛ Իւպիտերը Մարտիրին երկինքը արտաքսեց:

18 Վիրգիլիոսի քաղն ամբողջական կտրուով բերում ենք արեւմտահայերէն թարգմանութեամբ.

Նոն քիչ մանդին դու կը քտեսես այն երկու
Քաղաքներուն հիմնադրակ պարիսպներն.
Յիշարակներ ու մնացորդներ հիւներուն.
Մէկուն հիմնողն Յանուս, միւսինն՝ Էր Կրոնոս,
Մին Կրոնիա կոչուած ու միւսն՝ Յանիկուլ:

Տե՛ս «Պոլլիոսի Վիրգիլեայ Մարոնի Ենէական», էջ 329: Ինչպէս նշել ենք ծան. 17-ի կապակցութեամբ, այսպէս եւս անունները փոփոխուած են, կարելի է ասել աղտաաղուած. հմմտ. լատին. քաղն ընդգծեալ անունների հետ:

մոմա~ եւ ճրագավառութիւնը, սովորոյթ, որ այն օրերում պատիւ եւ հեղինակութիւն էր վայելում ընդհուպ մինչեւ հռոմեացիների (Romans) ժամանակները: Սատուրնը եւս ժողովրդին քրտնաջան ուսուցանում էր հողի յատկութիւններն ու երկրագործութիւնը, ուր մեծ վարպետութիւն եւ գիտելիքներ ունէր, ինչպէսեւ պաշտամունքի եւ կրօնի ասպարէզում: Եւ ոչ շատ ժամանակ անց (իր որդի Սաբուսին (Sabus) ժառանգորդ եւ արքայ կարգելով Սաբինեսների (Sabines) եւ տեղաբնակների վրայ) Սաբատիուսը վախճանուեց ջրհեղեղից յետոյ երեք հարիւր քառասունչորս թուին»:

«(40) Եւ այս օրէնքները մտցուեցին Բաբելոնի երրորդ տիրակալ Նինուսի իշխանութեան չորրորդ տարում, երբ Տիւսքոն (Tuyscon) հսկան եւ իր հօրեղբայրը, Ալմայնի (Almaigne) արքան եւ Թուբալը՝ Իսպանիայի թագաւոր, նոյնն արեցին իրենց ժողովուրդներին ջանադաբար սովորեցնելով փիլիսոփայութեան, ֆիզիկայի եւ տիեզերագիտութեան սահմանումները, որ իրենց հերթին սովորել էին իրենց պապ Նոյից եւ իրենց հայր Յաբեթից: Եւ եթէ այստեղ հարցուի, թէ ինչ գրեր էին նրանք օգտագործում, Բերոսոսը պատասխան է տալիս, որ գրանք Փիւնիկեան (Phoenician) նշանագրեր եւ տառեր էին (որ օգտագործւում էին նաեւ Արմենիայում), որ շատ նման էին նրանց, որոնք շատ ժամանակ անց Կադմոսը (Cadmus)¹⁹ Փիւնիկեայից Յունաստան բերեց, եւ դրա համար Յուլիոս Կեսարը իր Մեկնութիւնների (Commentaries) առաջին գրքում ասում է, թէ այն ժամանակներում գալերը Յունական տառերն էին օգտագործում իրենց գրութիւնների համար, բայց անկասկած այդ նշանագրերը ստեղծուել էին շատ աւելի առաջ, քան յայտնի դարձան Յունաստանում, ինչպէս վստահաբար պնդում են Քսենոփոնը եւ շատ այլ հեղինակներ»:

Նախ նշենք, որ քաղաւածներից կարող ենք նաեւ մի շարք, մեր հարցին չադրնչուող, սակայն կարեւոր հետաքննարկումներ անել, որ բերում ենք իբրեւ ուշագրաւ.

Ա. «Պատմագրական երկի նմանութեամբ գրառեց ջրերի բարձրանալն ու աշխարհի մեծ հեղեղումը» Կողով ուղղակիօրէն նշում է, որ ջրհեղեղից յետոյ առաջին գրաւոր խօսքը Նայբում է եղել: Այնույնպէս Նոյր ներկայանում է իբրեւ հնագոյն հեղինակ, որ «գրել էր բազում գրքեր, որ յետագայում սկիւթացւոց եւ հայոց քուրմերն ու հոգեւորականները պահեցին ու պահպանեցին մեծագոյն խնամքով եւ երկիւղածութեամբ», այսինքն՝ գրաւոր ամենախիւն եւ կարեւորագոյն յուշարձանները երկար ժամանակ պահուել են Արարարեան երկրում, եւ բնական է, որ պահողները պիտի փրապելպէին թէ՛ ընթերցանութեանը, թէ՛ գրաւոր խօսքին: 40-րդ պարբերութեան Կողմերը («Եւ եթէ այստեղ հարցուի, թէ ինչ գրեր էին նրանք

19 Այս առասպելական հերոսի եւ Նայկի թոռան անունների բացարձակ համընկնությունը դժուար է պարահականութեանը վերագրել, մանաւանդ երբ հաշուի ենք առնում, որ ըստ այս աղբիւրի՝ Նոյի առնուած գրերը պահպանողներից մէկը հայերն էին:

օգտագործում, Բերոսոսը պատասխան է տալիս, որ զրանք Փիլնիկեան նշանագրերը եւ տառեր էին (որ օգտագործւում էին նաեւ Արմենիայում)) կրկին անգամ պնդում են, որ վաղնջական ժամանակներում հայերը գիր են օգտագործել:

Բ. Շարադրանքում իրար հակասող հայրուածներ կան՝ «Այսպիսով աշխարհն ամբողջութեամբ ծածկուեց»: Այնուհետեւ Նոյր՝ «կամօք եւ հրամանով Աստուծոյ միւսներէ հետ (որ եօթն էին) միասին գուրս եկաւ իր նաւից...»: Եւ «...մի մեծ տօնակատարութեան ժամանակ, երբ [Նոյը] հրաւիրել էր իր ընկերներից շատերին, հիւրերի եւ ընկերների մէջտեղում պառկեց եւ քնեց». եթէ աշխարհն ամբողջութեամբ ծածկուել էր ջրով, եւ քապանով փրկուածներն ընդամենը ութ հոգի էին, ո՞րպէս ինքիս երաւիրում եիրերն ու յարկապէս «ընկերներից շարերը»: Այս կապակցութիւնը պայմանաւորում է նաեւ, որ եթէ ընկերներից շարերը եկել էին, կար ընկերների մէկ այլ խումբ եւս, որ չէր եկել, այսինքն ըստ այս աղբիւրի՝ ջրհեղեղից փրկուած մարդկանց թիւն աւելի մեծ էր²⁰:

Գ. Տիեզերքը պարբերութեան վերջին մասը հաստատում է, որ իստոյազործութեան եւ գինեգործութեան հայրենիքը Արարարեան երկիրն է, ինչն այժմ ապացուցում է նաեւ հնագիտական հարուստ նիւթով:

Դ. «Այս ամենը տանն այսպէս կարգաւորելով» քողը որոշակի մասնաւորում է, որ Նոյ նահապետի քունը Նայքում էր:

Ե. «Նոյը նաեւ սովորեցրեց եւ բացատրեց նրանց մոլորակների ծիրերը եւ տարին բաժանեց տասներկու ամսուայ՝ համաձայն լուսնի ուղեծրի եւ շրջապտոյտի: Նաեւ իր տիեզերագիտական իմացութեամբ եւ երկնային մարմինների շարժման գիտարկմամբ նա կարողանում էր կանխատեսել յաջորդ տարուայ եղանակային փոփոխութիւնները». հայրուածը միանշանակ զօրեղ կռուան է, եթէ ոչ փաստարկ, այն հեղափոխութիւնների օգտին, որ պնդում են, թէ քիեզերագիտութիւնը Նայքում քարածուծ է եղել դեռեւս վաղնջական շրջանում, իսկ «երկնային մարմինների շարժման գիտարկմամբ» ասելով, համոզում ենք, որ իրաւամբ Նայսարանում քիեզերքի դիտարկման կայան է եղել:

Այժմ քննարկենք միւս հայրուածները, որ մեր կարծիքով գուցադրելի են Նայկեան առասպելի հետ:

Առաջինը նկարենք, որ Սարախուսի եւ Նայկի մասին պարմող դէպքերի ժամանակաշրջանը եւ վայրը լիովին համընկնում են: Կարեւոր է նաեւ, որ անգլիական աղբիւրի գործող հերոսներից մէկը վարահաբար հայկական առասպելի անձն է՝ «Բաբելոնի երկրորդ արքայ Իւսիպըր Բելը», որ կամենում էր «իշխել իբրեւ համայն աշխարհի միակ կառավարիչ»²¹: Այսպէս համընկնումը ոչ միայն անուան հանգամանքով է, այլ նաեւ էութեամբ:

20 Այս առթիւ քննադատելի «Յոբելեանից գիրք» Նայքի մասին՝ յօդուածը. «Էջմիածին», 2012, Բ., էջ 60:

21 Խորենացին ասում է. «որ պարսիստներ ի դէպ երանէին Բելայ՝ բոնասկայ ունեղ զամենայն երկիր» (Պարմութիւն, գիրք Ա., գլ. Ժ.), Սեբեոսը՝ «զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր» («Մարմնագիրք Նայոց», հայր. Դ., էջ 454):

Տարկ է անդրադառնալ Սաբարիուս Սագային, որ յիշում է իբրև առաջին փրակալ և առաջնորդ Արարարեան երկրի: Ի՞նչ լեզուով է այս արպայայությունը և ի՞նչ է նշանակում: Նախաձեռնից մեկում րեսանք, որ Սագայով կապակցություններն ստուգաբանում են սկիթերեն: «Սաբանան րնդդեմ Ասործու» գրքի հեղինակ Ներման Սաինին²² պնդում է, որ Սաբարիուս Սագա կապակցության բառերն սկիթերենից անցել են փարսեր լեզուների, և sancta, santas, saint, Sabasius, Sabazius, Sabazios ձևերը թուրքով այն կարծիքն է յայտնում, թե խօսքն Արարչի մասին է, որը Նոյին չէր կամեցել մենակ թողնել և իբրև Սաբարիուս Սագա նախ նրա հետ էր Նայասարանում, իսկ յետոյ նաև Լապինացոց երկրում²³: Saga-ն saint-ով (սուրբ) ստուգաբանելու փաստարկներից մեկը բառական հետաքրքիր է. «Exploring...» աշխատության մեջ²⁴, հետևաբար նաև Սաինիի գրքում²⁵, նշում է, որ Բերոսոսն²⁶ իր երկրորդ գրքում կիրառում է Armenia Saga կապակցությունը, որ պետք է հասկանալ սուրբ (կամ՝ սրբազան) Նայասարան ձևով: Այսպեղից հետևում է, որ երկիրը սուրբ կամ սրբազան կկոչու էր յայն դեպքում, եթե այնպեղ ներկայ լինէր Տէրը: Եւ եթե Օգիգէս Սագան Նոյն էր, ապա պետք է կարծել, որ Սաբարիուս Սագան Ինքն Արարիչն էր: Սակայն, ի պարասխան այս փրամաբանության, բնական հարց է առաջանում. եթե Տէրը Սագա (սուրբ) էր, որովհետև Արարիչն էր, Նայասարան Սագա (սուրբ) էր, որովհետև Տէրն այնպեղ էր, ապա ինչո՞ւ էր Սագա որոշիչը դրում նաև Նոյի անունն հետ, մի՞թե այս երեքն իրար համահասարար էին: Ջորջ Ֆաբերի²⁷ կարծիքով Իանուսը (Օգիգէս, Նոյ) և Սաբուրներ (Սաբարիուս) միևնույն անձն (աստուածությունն) են, և իրալացիների Սաբուրներ փինիկեան փոխառեալ աստուածություն է: Ֆաբերը նաև պնդում է, թե Սագա-ն Արարարեան (Տապանի) երկրի հին անունանումն է, և Saga-ն ստուգաբանում է Z-Ag-Ai հզօր ջրերի երկիր²⁸:

Սաբարիուս Սագա-Սաբուրնի պարագայում անկարելի է անտեսել «սկիթական» և «փինիկեան» որոշիչները, որ մշտապես հանդէս են գալիս թէ՛ անգլիական աղբիւրում, թէ՛ հետազօտողների գործերում: Պարմագիտության ասպարէզ խուժելուց խուսափելով՝ փորձենք հիմնուել գուր առկայ նիթի փրամաբանության վրայ:

Ինչպէս յայտնի է, ոչ մի ժողովուրդ չի ունեցել այնպիսի աստուածություն, որի

22 Նշենք, որ Սաինին իր մրքերն ու անգամ բառակապակցությունները, առանց աղբիւր նշելու, «փոխ է առել» «Exploring Ancient History--The First 2500 Years», Compiled by **Roy Schulz**, *Social Studies Department, Imperial Schools at Pasadena, Pasadena, California*, 1967, քստրքստալիսի 106-107 էջերից, հաաւաբար նկարի ունենալով, որ «Ընդամենը եօթ օրինակ է րպում՝ գրադարանային սահմանափակ օգրագործման համար» (րեն «Exploring...», էջ 2), և մրաժելով, որ նկարող չի լինի: Մենք սրիալաժ ենք բերում Սաինիի գիրքը, որովհետև «Exploring...»-ը ո՛չ դասիչ ունի, ո՛չ ISBN:

23 Տէն **Herman Saini**, *Satan Vs. God*, Vol. 2, "From the Flood to Abrahams Call", Copyright 2008, Printed in USA, էջ 85-88, 407-410:

24 Տէն էջ 106:

25 Տէն էջ 87:

26 Այս երկն աւելի շար յիշարակում է իբրև Կեղծ-Բերոսոս. րեն օր. **Leo Wiener**, *Contributions Toward a History of Arabico-Gothic Culture*, Volume 3, Gorgias Press, 2002, էջ 174-218:

27 Ջորջ Սթէլիի Ֆաբեր (1773-1854) Անգլիկան Եկեղեցու աստուածաբան:

28 Տէն **George Stanley Faber**, *A Dissertation on the Mysteries of the Cabiri or the Great Gods of Phenicia, Samothrace, Egypt, Troas, Greece, Italy, and Crete*, vol. I., Oxford, 1803, էջ 75 և c. ծանօթագրություն:

մասին պարմուր, թե ինչպես է թագաւորել եւ առաւել եւս հովանաւորել հաբեւան ազգին: Նկրտաբար յաճախ յիշարակեալ սկիւթերն ու փինիկեցիները նոյնպէս պէտք է մտաւոր չլինէին հայերի կամ լաւիւնների համար աստուածութիւն յօրինելով: Այլապէս եթէ փորձենք վերաշարադրել ասէնք Փաբերի միւրքը, կստացուի՝ «Սաւորնր փինիկեան աստուածութիւն է, որ սկզբում ապրել է Նայթում, այնույեպն հեռացել Ապենիններ», որից յետոյ բնական հարց կառաջանայ, թէ փինիկեցիներն ի՞նչ կապ ունէին: Բացի այս՝ Չարլզի թարգմանութեան մէջ սկիւթներն ու փինիկեցիները միշտ չէ, որ առանձին են հանդէս գալիս՝ *«յետագայում սկիւթացւոց եւ Հայոց քուրմերն ու Հոգեւորականները պահեցին ու պահպանեցին... սկիւթացիներն ու Հայերը մեծապէս պատուում էին նրան... սկիւթացիներն ու Հայերը կառուցեցին... Փիւնիկեան նշանագրեր եւ տառեր էին (որ օգտագործուում էին նաեւ Արմենիայում)»*: Ուստի Սաբարիոս Սագա-Սաւորնին զուր փինիկեան կամ սկիւթական չի կարելի անուանել:

«The works of sir Thomas Urquhart»²⁹ գրքում գեղեղում է Urquhart-ների Կոնստանտինոպոլիսի ժողովրդականութիւնը, որ սկսում է Ադամից ու Եւայից: Նոյնապէս 10-րդ դարում է. իբրեւ նրա կին նշում է Տիթեան: Այնույեպն Յաբերն (11-րդ) ամուսնանում է Նեգինոթի (Neginothi) հետ, եւ ծնում է Փենուէլը (Penuel): Սա (13-րդ) ամուսնանում է Տիթի (Hittir) հետ, ծնում է Տիչերոսը (Tycheros): Տիչերոսն (14-րդ) ամուսնանում է Օրփահի (Orpah-թերեւս կարող ենք կարդալ Արփայ) հետ: Նկրտաբարական է այս ճիւղին վերաբերող գրառումը, որ Կարթագոնում է բոլոր միւսներից. *«Այս Տիչերոսին Հայոց արքայ Սաբարիոս Սագայի գոտար Օրփահն ընտրեց, որ իր ամուսինը լինի...»*³⁰: Ուրիշ նմանաբան գրառում այսպէս մենք չհանդիպեցինք, ուր բնութիւնը կարարած լինէր իգական սեռի ներկայացուցիչը:

Նայկական աւանդութեան եւ անգլիական աղբիւրի համադրութիւնը պէտք է սկսել այն կէտից, երբ խօսում է առաջին նախապէս-կառավարչի մասին: Մեր կարծիքով լիովին բնութեան է, որ միեւնոյն կերպար մի աւանդութեան մէջ կարող էր Սաբարիոս Սագա, մէկ այլ դէպքում Սաւորնր եւ վերջապէս Նայկ կոչուել, մասնաւոր երբ ի նկար ենք առնում, որ նրա ախոյեանի հանգամանքը որոշում է, եւ Բաբելոնի կառավարիչ Իւպիպեր-Բելը հակասութեան մէջ է մտնում Նայքի առաջնորդ Սաւորնր-Սաբարիոս Սագա-Նայկի հետ: Յաջորդը պէտք է ուշադրութիւն դարձնել, որ անգլիական աղբիւրի Սաբարիոս Սագան Նոյի շառաւիղը կամ թոռն է, հանգամանք, որ բնութեան է նաեւ հայկական աւանդութեան դիրքերից: Նամրսկնում կայ նաեւ այն դրուագում, երբ Բաբելոնի կառավարչի եւ Նայքի նախապէսի հակամարտութեան սկսում է մասնակցել նաեւ Բելի որդին: Անգլերէնում Բելը *«Հրամայեց նաեւ իր որդի Նինուսին անել Հնարաւոր ամեն բան Սաբարիոսին եւ նրա տոհմը կործանելու համար»*, հայոց մէջ յիշում է, որ Նայկի մօտ ուղարկուած պարտիրակութիւնը գլխաւորում էր Բելի որդին:

²⁹ Edinburgh, 1641:

³⁰ Տե՛ս անդ, էջ 156:

Միաժամանակ պետք է նկատել, որ Խորենացին դեմ է Բելի և Նինոսի ազգակցական կապին. «Այլ այս մեզ ամենեւին աւտար եւ արտաքոյ ճշմարտութեան, որք զՆինոս որդի Բելայ ասեն, կամ թէ նոյն ինքն Բէլ. զի ոչ ազգաբանութիւնն եւ ոչ ամացն ժողովումն այսոցիկ վկայէ»³¹: Նշելով, որ ինքը դեմ է Նինոսի և Բելի ազգակցութեանը, Խորենացին անուղղակի կերպով հաստատում է, որ Նայկի և Բելի պատմութեան շրջանակներում այս մասին խօսուել է, և ինքը ծանօթ է այդ հանգամանքին, ուստի այս դրուագը լիովին ընդունելի և գուցադրելի է:

Պատմամետրոսն սկսում են առանձնանալ, երբ մօտենում է հանգուցալուծումը: «Պարոյարների գրքում» Սաբարիոս Սագան պարզապէս հեռանում է իր պապի մօտ: Նայկական առասպելում Կադմոսն էր սրիպումած հեռանալ. այսինքն՝ երկու պատմությունում Նոյր, Սաբարիոս Սագա-Նայկը և Կադմոսը փոխում են տեղերով: Երբ այս տեսանկիւնով ենք նայում, փարբերությունը մեծ է: Սակայն երբ վերանում ենք անուններից, տեսնում ենք, որ բուն շարադրանքը նոյնն է. թշնամին եկել էր իր դուռը, և թռն սրիպումած հեռացաւ պապի մօտ: Փաստօրէն գործողությունն անցել է մի հերոսից միւսին, և նման այլ օրինակներ եւս կարելի է տեսնել: Ի մասնաւորի ժամանակի յարրերաց հոսքը մասերի բաժանելու հանգամանքն անգլիական աղբիւրը վերագրում է Նոյ նահապետին, իսկ նրա սերունդները այդ գիպելիքի փարածողն ու սերմանողը եղան. «Տիւսքոն Հսկան եւ Թուբալը իրենց ժողովուրդներին ջանադրաբար սովորեցրին փելիսոփայութեան, Ֆիզիկայի եւ տիեզերադիտութեան սահմանումները, որ իրենց հերթին սովորել էին իրենց պապ Նոյից եւ իրենց հայր Յաբեթից»: Իսկ ինչպէս նշում է Ղևոնդ Ալիշանը. «Հայկն առաջին տօմարադիր կ'ըսուէի, որ է՝ ժամանակի եւ տարւոյ չափ ու չըջան որոշող. եւ այս ի հարկէ աստեղագիտութեամբ կ'ըլլայ»³²: Անհնար է չընդունել, որ օտար և հայկական պատմությունում փոմարադիրը փարբեր անձ է, սակայն նախ պետք է յիշել գործողութեան՝ մի սերնդից միւսին անցման մասին, ինչպէս և այն հանգամանքի, թէ ինչու է յարկապէս այս շրջանը յիշում իբրեւ փոմարադրութեան սկիզբ. եթէ աւելի ուշ շրջանը կարելի էր բացառել, որովհետեւ մինչ այդ արդէն պետք է եղած լինէր այս բաժանումը, ապա կարելի է նաեւ զարմանալ, որ մինչև յերջոյնեղեղեան շրջանը ժամանակը դեռ չէր բաժանուել փարիների, ամիսների, շաբաթների:

Դիպելի է նաեւ, որ քննարկուող պատմությունից փրամաբանութեամբ ժամանակը միառնների բաժանելիս՝ գլխաւոր հերոսների անունները պիտի արտացոլուէին ասեւր ամսանունների մէջ: Այսպէս՝ Լապին աւանդութեան համաձայն յունուարը (Januarius, Ianuarius) փարաւայ դուռն (*ianua*) է³³: Եւ սա սոսկ նմանութիւն չէ Բանուս-Նոյի անունն հետ

31 «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Նայոց», Թիֆլիս, 1913, գիրք Ա., գլ. Ե.: Այս փողերն առնելուց եւս նաեւ «Անունների պատմութեան» մէջ առաջ քաշուած այն դրոյթին, թէ Խորենացին ու Մար-Աբասն ազդեցութիւն են գործել անգլիական աղբիւրի վրայ. թերեւս այդ դէպքում նաեւ վերացուէին Խորենացուն հակասող հասկացումները:

32 Ղ. Ալիշան, Տիւն հաւաքը կամ հեթանոսական կրօնը Նայոց, Վենետիկ, 1895, էջ 119-120:

33 Տե՛ս <http://www.reference.com/browse/ianua>:

Իսնուսը դռների և դարպասների և յարկապէս ժամանակի փրակալն է³⁴։ Բնական է կարծել, որ Սաբաթիոս Սաբաթին անունը նույնպէս պէտք է արտացոլուէր։ Առաջին իսկ հայեացքից կարող ենք փեսնել, որ Նայքի նահապետին փրումը թէ՛ «Սկիթական», թէ՛ Լարին անունները համապատասխանում են միեւնոյն օրուան՝ Սաբաթիոս-Shabat³⁵ և Սաբաթին-Saturday (day of Saturn-Սաբաթինի օր)։ Ինչպէս նշում է Նրաչեայ Աճառեանը. «Նկատելի է, որ օրերի անունները զանազան լեզուների մէջ կազմուած են կա՛մ երկնային մարմինների անունից եւ կա՛մ թուականներից. առաջինին են պատկանում օրինակ՝ եւրոպական լեզուները... երկրորդին են պատկանում միւսները... նաեւ հայերէնը»³⁶։ Ուշագրաւ է, որ կազմութեան երկու եղանակով էլ Սաբաթիոս Սաբաթինն է անուն փոխել շաբաթուայ միեւնոյն օրուան։

Իբրեւ երկու աւանդութիւնների փարբերութիւն կարող է դիպուել, որ «Պարոյրների գրքում» Բելի և Սաբաթիոս Սագայի առճակարման, մենամարտի կամ պարերազմի մասին խօսք չկայ, բայց դէպքերի նման ընթացքը գուշակում է. նախ նշում է, թէ՛ «Սաբաթիոսն իր իմաստութեամբ հազիւ փրկուեց որոգայթից», որից յետոյ ասում է, որ Սաբաթիոսն «օգնութեան» համար հեռացաւ իր պապի մօտ։ Արդեօ՞ք այս օգնութիւնը սոսկ բարոյական աջակցութիւն է պէտք հասկանալ, թէ՞ նաեւ պարերազմական։ Աղբիւրը նշում է, որ Բելը կամենում էր «անել հնարաւոր ամեն բան Սաբաթիոսին եւ նրա տոհմը կործանելու համար», և դժուար թէ առանց լուրջ փաստարկների (իմա՝ ուժի դէմ ուժ ցոյց տալու) Բելը երաժարուէր իր մտադրութիւնից։ Թերեւս այս են վկայում նաեւ 15-րդ պարբերութեան փողերը. «Սաբաթիոսը խաղաղութեամբ կառավարեց մինչեւ Բաբելոնի երկրորդ արքայ Իւպիտեր Բելի իշխանութեան ժամանակները», ուր եթէ «խաղաղութեամբ»-ը³⁷ չհասկանանք «հանգիստ» իմաստով, կռիւն ակներեւ է դառնում։

Միւս կողմից, պարմիչների խօսքում, կարծես, իրար են միահիստուել հայկական ու բաբելական պարմունները. «Պատասխանի ետ Բէլ, եւ ասէ. «Վասն այնորիկ, զի մի՛ անկցիս ի ձեռս մանկուոյ իմոյ եւ մեռանիցիս. այլ ե՛կ ի ձեռս իմ, եւ կեա՛ց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի դործս զմանկունս ի տան իմոյ զորսականս» (Սեր., գլ. Ա.) կամ՝ «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա՛ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, եւ հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ո՛ւր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան» (Խոր., գլ. ԺԱ.)։ Իբրեւ թէ մարդասիրութիւն դրսևորելով՝ Բելը կամենում է, որ Նայքը չընկնի հասարակ գիւտորների ձեռքն ու գոհուի, այլ գնայ Բելի մօտ և «խաղաղութեամբ» ապրի «ուր հաճոյ է»։ Մինչդեռ խայրական հսկան «խաղաղութեամբ» (Խոր.) պարասխանում է՝ «Շո՛ւն ես դու եւ յերամակէ շանց» (Սեր.)։ Կարող է թուալ, որ այս հապուածներում Տիբանեան Բելն առաւել դրական է ներկայացում,

34 Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Ianus#cite_ref-0:

35 Աճառեանը գրում է. «*հանգիստ*» (ըստ եբր. *נֹחַ, որի համեմատ է նաև յն. sabbatizw*)». փն՝ Նր. Աճառեան, Նայքեւն արմարական բառարան, հայր. Դ., Երևան, 1979, էջ 479:

36 Անդ:

37 Բնագրում՝ peaceably:

քան Նայիր, ինչո՞ւ քաղաքապետին կսպելո՞ծի, թե՛ պարտումն առաջացել է ոչ թե՛ հայկական միջավայրում, այլ մի որևէ ուրիշ րեղում, ուր պիտի աշխատէին դրական գոյներով ներկայացնել «խաղաղության ձգտող» Բելին եւ բացասական՝ «խռեմնության կոչերին անարեղի կոպտութեամբ պարասխանող» Նայկին: Սակայն իրականում այդպէս չէ. պարտության հէնց սկզբում պարմիչները ուշում են, որ Բելն իրեն աստուած էր կարծել, *«Կանգնեաց զպատկերն իւր, եւ ետ երկիր պագանել իբրեւ աստուծոյ»* (Մեր.), եւ բոլորին ենթարկել էր իր իշխանութեանը: Եւ այս պարագայում չի կարելի մտածել, թե՛ Բելը կարող էր ներել Նայկի անհնազանդութիւնը: Իսկ եթէ ընդունենք, որ անգլիական աղբիւրը մեզ է փոխանցում հէնց Նայկի եւ Բելի պարտության որոշ դրուագներ, նկարելի կլինի, որ Տիպառեանը միայն մէկ ցանկութիւն ունէր՝ *«անել Հնարաւոր ամեն բան Սաբատիուսին եւ նրա տոհմը կործանելու համար»*: Ուստի պէտք է մտածել, որ վերադառնալու եւ խաղաղ ապրելու մասին Նայկին ուղղուած խօսքերը, մի կողմից թաքցնում, իսկ միւս կողմից յուշում են Բելի բուն նպատակը. խաբէութեամբ իր մօտ կանգնել Նայկին եւ դառաղիք կերպով սպանել: Յիշենք, որ նման հանգամանք եւս ուրուագծւում է *«Դրոյարների»* գրքում. *«Սաբատիուսն իր իմաստնութեամբ հազիւ փրկուեց իր համար հիւսուած որոգայթից»*:

Այժմ փորձենք անդրադառնալ Սաբուրն անուանը, որ պահպանուել է լատին աւանդութեան մէջ: Երբ խօսում է անգլիական աղբիւրի Սաբատիուս Սագայի մասին, բացայայտ է, որ դէպքերը կարարում են երկրի վրայ եւ որոշակի վայրերում՝ Նայքում կամ Լարիների աշխարհում: Սակայն երբ յիշարակում է լատին աւանդութեան Սաբուրնը, միանշանակ է, որ նա «գերինն կառնած» չէ. *«Սատուրնը եկաւ Օլիմպոսի եթերային բարձունքներից»*, կամ *«Իւպիտերը Սատուրնին երկինք արտաքսեց»*: Այսինքն՝ կարող ենք վստահ լինել, որ ըստ լատինական աւանդութեան, Նայքի առաջին կառավարիչը, որ այնուհետեւ Ապենիններ պիտի գնար, իր վերջնական հանգրուանը գրաւ երկնքում՝ վերածուելով Սաբուրն մոլորակի: Միևնուհեմ, ինչպէս գիտենք, մեր աւանդութեան մէջ, Նայկն աւելի յաճախ յունաց Օրիոնի հետ է նոյնացուել. Եսայիի մարգարէութեան ԺԳ. 10 հարուածում Օրիոնը Նայկով փոխարինւելով՝ մեր սուրբ թարգմանիչները խնդրի են սրելո՞ծել բանասէրների համար: Եւ չնայեա՞ծ դեռնու 1800-ականների վերջին Ա. Գարագաշեանը ուշում էր, թե՛ *«Մեր նախնիք փոխանակ Օրիոնի գրած են զՆայկ, իբրեւ հսկայ որսորդ, բայց պատմութիւնն Օրիոնի նմանութիւն ունի մանաւանդ ընդ պատմութեան Արայի...»*³⁸, շարերը շարունակել են հետելել Ալիշանի այս փողերին՝ ասում Եւ Օրիոնի կապակցութեամբ. *«Հայոց աւանգուլթիւնն այլ իրենց Հայկին՝ գրեթէ զուգահաւասարի յունականիս...»*³⁹: Սակայն ուշադրութեան չի առնուել այն փաստը, որ բացի Օրիոն համաստեղութիւնից Ալիշանը ուշում է նաեւ, թե՛ *«...աւելցընեմք, որ ըստ ոմանց*

38 Ա. Գարագաշեան, Քննական պարմութիւն Նայոց, մասն Ա., Թիֆլիս, 1895, էջ 4:

39 Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 119: Այս հանգամանքին մենք անդրադարձել ենք ըստ հայկի (տե՛ս «Ներպակալ բառի մեկնաբանութեան փորձ Նայկի առասպելի լոյսի ներքոյ». «Բանբեր Երեսնի համալսարանի», 2004, հ. 2, 36-38 էջերը), նշելով նաեւ, որ հայերը կարող էին համաստեղութիւնը Նայկ անուանել անկախ Օրիոնի եւ Նայկի որսորդ լինելուց կամ թուացնալ նմանութիւններից, այսինքն՝ առանց որևէ օգտար ազդեցութեան:

Հայկ կոչի եւ Կշիւ Կենդանակերպ Համաստեղութիւնն... Ոմանք զՀրատ մոլորակն եւս Համարին Հայկ կոչուած. այս... մոլորակն եւ իր անձնաւորն՝ չաստուած պատերազմի՝ չէր անպատշաճ... Հայկին»⁴⁰: Այնպէս որ՝ միայն Օրիոնով սահմանափակուել պէտք չէր:

Անունների մասին խօսելիս փեղին է անդրադառնալ Ջէյմս Անդերսոնի⁴¹ փողերին: Իր գրքում նա բերում է Իսրայիլայի եւ Թուսկանայի հին թագաւորների ժամանակագրական մի աղիւսակ⁴², ուր իբրեւ առաջին արքայ նշուած է Գոմերը, ապա՝ Իանուսը (Վերպումնուս կամ Նոյ): Երրորդը Սաբարիուս Սագան է. «Սաբատիուս Սագան յաջորդեց Աբրամի ծնունդից երկու տարի անց: Այս Սաբատիուսը կոչվել է Նինուսի հօրեղբայր կամ քեռի եւ Հայքի նահապետ»⁴³: Նա նախ փախաւ Գերմանիա՝ <...>⁴⁴ ի մօտ, իսկ այնտեղից Իտալիա՝ իր նախորդ Իանուս կամ Նոյի մօտ՝ իր տիրոյթները թողնելով իր որդի Բարզանէսին (Barzanes), որին պարտութեան մատնեց Նինուսն ու իր հարկատուն դարձրեց»⁴⁵: Նինուսի եւ Բարզանէսի հակամարտութեան առնչութեամբ մի փոքր ատելի շար փեղեկութիւններ կան Դիոդորոս Սիկիլիացու «Պարմական գրադարանում», ուր, սակայն, խօսք չկայ Բարզանէսի հօր մասին. «Այնույնտեւ, նա [Նինուսը] մեծ զօրքով ներխուժելով Արմենիա եւ մի շարք քաղաքներ աւերելուց յետոյ կոտորեց տեղի բնակիչներին, ուստի եւ նրանց թագաւոր Բարզանէսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դէմ կռուելու, առատ նուէրներով դիմաւորեց նրան եւ ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները: Իսկ Նինուսը նրան վերբերուեց մեծահոգաբար եւ համաձայնուեց, որ նա տիրի Արմենիային, եւ մնալով որպէս իր բարեկամը, զօրք ուղարկի եւ միջոցներ իր բանակի համար»⁴⁶:

Այս հապտածները դիպարելիս որքան ցաւալի է, որ հօրից Հայոց թագաւորութիւնը ժառանգած Բարզանէսը պարպութիւն է կրել, կրկնակի ուրախալի է, որ այս պարմութեան մէջ պահպանուել է հայկական հարիկը: Մեր բերած բոլոր հապտածներում անուններն արպարնապէս խորթ էին, եւ միայն այսպէղ է, որ աւանդում է Սաբարիուս Սագայի որդու անունը՝ Բարզանէս: Չնայեա՞ծ առաջին հայեացքից թուացեալ օտարութեանը, պէտք է նշել, որ այսօր եւս «Բարզանէս»-ը գործածական է հայոց մէջ: Եթէ օրինաչափ համարենք *բ-ւ* հնչիւնական անցումը (հմմտ. Բարսեղ-Վասիլ, Բարձարա-Վար-ձարա եւն), իսկ *-էս*-ն առանձնացնենք իբրեւ օտար յաւելում (Տիգրանէս-Տիգրան, Տրդատէս-Տրդատ) կտրանանք *Վարդ-ան* ձեւը: Այսպիսի անուն եւս չկայ Աճառեանի

40 Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 123:

41 Ջէյմս Անդերսոն (1679-1739), մատն, հոգեւորական, Անգլիայի Մեծ օթեակի առաջին սահմանորոշեան եղիմակ:

42 James Anderson, *Royal genealogies: or, The genealogical tables of emperors, kings and princes, from Adam to these times*; in two parts, London, 1732, աղիւսակ ccccxiv:

43 Բնագրում «high priest» է՝ «գերագոյն քուրմ, քահանայապետ, հոգեւոր գերագոյն առաջնորդ»:

44 Յարուկ անուն է, որ մեզ չյաջողուեց կարդալ:

45 James Anderson, *Royal genealogies*..., էջ 677:

46 Դիոդորոս Սիկիլիացի, Պարմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանօթ. Ս. Կրկեաշարեանի, Երևան, 1985, էջ 16:

անձնանունների բառարանում, և սպուգաբանության համար սպիալուած ենք դիմել հեղինակի մեկ այլ բառարանի օգնությանը: Վարդապետ բառի մեկնության մեջ նա առում է. «=ՊՀ. (Հարաւային արեւմտեան բարբառ) *varda=Հարս. -varda «դործ, աշխատանք»+պետ (pati) բառից, որով ամբողջը լինում է *vardapati: Այս արմատի այլ ձեւերն են զնդ. varz «աշխատիլ եռանդուն կերպով», պՀ. varz, պրս. varz «ցանք», varza «սերմանում», varzand «սերմնացանութիւն եւ շահ օգտութեան, եւ ուսումն»⁴⁷: Ինչպէս պետում ենք զննողներն, պահպանել են պարսկերէն ձևերում vard-varz անցում կայ: Այս ձևերը պէրք է գուցադրուեն նաեւ հայերէնի վարժ-վարժել և վարժապետ-վարդապետ ձևերին և դժուար չի լինի նկատել, որ այլոց «Բարգան»-ը, իրականում մեր «Վարդան»-ն է: Այս անունն Աճառեանը չի սպուգաբանում և իրանեան փոխառութիւն է համարում՝ իբրեւ վկայութիւն բերելով մեր թուականության սկզբներին կառավարած Պարթեւ թագավորների անուններ⁴⁸, որ անհամեմատ աւելի ուշ են դիպարկում օրինակից: Նարկ է ընդունել նաեւ, որ փոխառեալ չեն ոչ միայն վարդապետ և վարժապետ ձևերը, այլ նաեւ Վարդան (Վարդ) անունը, որ փաստօրէն ծագում է յերջրեղեղեան ժամանակներից և առանկում իբրեւ Տայոց նահապետի որդու անուն: Մեր խորին համոզմամբ անգլիական աղբիւրում յիշարակուած Սաբար-(իուս) անունը գուցադրելի է ներկայիս Սմբար (Մումբար-Շամբար-Սամբար) անուանը, որ «մեր մէջ յիշատակուած է ամենահին օրերից»⁴⁹: Խորեմացին անունը հրեական է համարում, և աւելի ուշ պարմիջները յերևում են նրան: Սակայն, ինչպէս պնդում է Աճառեանը. «...այսպիսի հրէական անուն այլուստ ծանօթ չէ»⁵⁰: Ինչպէս ընդգծում է Աճառեանը, Սմբար անունն նկարմամբ «յարուկ վերաբերմունք» է եղել. «Կարեւոր է նկատել, որ հին Տայոց մէջ Սմբատ անունը հատուկ էր աշխարհական անձանց, այն էլ ամենամեծ մասամբ մեծ ու փոքր թագաւորների, իշխանների եւ նախարարների: Մեր ունեցած անուանացանկում ո՛չ մի դրիչ չկայ. կրօնական անձերից ունինք միայն Սմբատ Թոնդրակեցի քարոզիչ, Սմբատ քահանայ եւ Սմբատ երէց: Աշխարհականներից նրանք, որ Սմբատ անունն էին կրում, կրօնաւոր դառնալով նոր անուն են ստացել...»⁵¹: Վերելում հնչած մեր «խորին համոզմունքը» ո՛չ միայն Սաբար և Սմբար անունների հնչիւնական մերձութեան վրայ է հիմնուած, այլ նաեւ աճառեանական այն պնդման, որ Սմբար անունը յարուկ էր լոկ թագաւորներին, իշխաններին և նախարարներին:

Ամփոփելով մեր խօսքն ու ի մի բերելով ասուածը՝ կարող ենք պնդել, որ եւրոպական աւանդութիւններում յիշարակուող, յերջրեղեղեան պարմութեան հերոս Սաբարի-Սմբար-Սարգիս-Տայի վերաբերմամբ հայկական և անգլիական աղբիւրները չնչին կէրերում հակասելով հանդերձ, իրար հարազատ են և փոխըմբռնում են միմեանց:

47 Տր. Աճառեան, Տայերէն արմաբական բառարան, հայր. Դ., էջ 319:

48 Տե՛ս Տր. Աճառեան, Տայոց անձնանունների բառարան, հայր. Ե., Երևան, 1962:

49 Տե՛ս Տր. Աճառեան, Տայոց անձնանունների բառարան, հայր. Դ., Երևան, 1948:

50 Տե՛ս անդ:

51 Անդ:

ՄԵՐԺ ՍՐԱԴԻՈՆՅԱՆ

**1894-96 ԹԹ. ՋԱՐԴԵՐԻ ՆՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ԴՐՄԵՒՐՈՒՄԸ Տ. ՉՅՈՎՅՈՒՐՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**

Գրականության մեջ կան անուններ, դեմքեր, որոնց մասին քիչ է խոսվում կամ գրեթե չի խոսվում: Ժամանակն է «անարդար», թե՛ բախարն է «մեղավոր», դժվար է ասել: Գուցե երկուսը միասին: Նամենայն դեպս, նրանք՝ այդ «քիչ ներկայացվածները», երբեք չեն մոռացվում, չեն հեռանում գրականության պարմության փրությունից: Նրանք թողնում են իրենց կայուն հետագիծը գրականության ծիրում, հավելում մի կարևոր խորհուրդ իրենց քիչ տեսանելի, բայց մշտամնա ներկայությամբ հայրենի գեղարվեստի անդասարանում:

Նայ գրականության այդ «քիչ հիշվող» անհայտներից է Ի. դարի սկզբի աչքի ընկած գործիչներից մեկը՝ Տ. Չյոկյուրյանը: Ակտիվ գրական կյանքը համընկնում է Օսմանյան սահմանադրության հաստատման թվականին՝ 1908-ին, թեև 1905-ից արդեն սրելոծագործում էր: Չնայած երիտասարդ տարիքին և կենսափորձի պակասին՝ սահմանադրությունից հետո Տ. Չյոկյուրյանի՝ «Բյուզանդիանում» տպագրված գավառական կյանքը ներկայացնող արձակ երկերը գրավեցին Պոլսի գրական մարդկանց ուշադրությունը: Վ. Բյուրապը, Միք. Շամպանճյանը, ուրիշները նկատեցին բարձրացող տաղանդի արվեստի յուրահատկությունը, ուշագրավ դիմագիծը: 1910-ին Բյուրապի ջանքերով լույս են տեսնում Չյոկյուրյանի յոթ պատմվածքները «Նայրենի ձայներ» խոստովանագրով ժողովածուում:

Սակայն իր բաժին բախտի նման գրական ժամանակը ես անբարենպաստ էր նորրոճա գրողի համար: Նախ՝ բախտի խնդիրը: Նագիվ 10 տարեկան՝ մահանում է հայրը, քիչ ժամանակ անց՝ նաև մայրը: Սկսվում է որբի թափառիկ ու տառապանքներով լեցուն կյանքը, որի դառնությունը ցմրուր ճաշակել է ապագա գեղագետը: 1887-ին Պոլսից տարվում է Էնկյուրիի Կարմիր վանքի որբանոց, 1888-ին Պոլսի մեկ այլ որբանոց: Որբան էլ տարօրինակ է, երբեմն փոքրիկ երջանկությունից անմասն չեն մնում նաև ճակատագրից զարկվածները: Տ. Չյոկյուրյանին մի քանի այլ որբերի հետ նկատում է իր մոտ՝ իբրև ձրիավարժ աշակերտի, վերցնում է հայ մանկավարժության մեծ երախտավոր Ռ. Պեպերյանը: Դա իսկական մեծ շրջադարձ էր որբի ճակատագրում: Թե՛ ուսուցիչը՝ Ռ. Պեպերյանը, թե՛ գեղանկարչության վարպետը՝ Ս. Նակոբյանը, խնամքով գոյրգոյրանքներով են վերաբերվում օժտված սանին, որ հավասար ունակություններ է դրսևորում գեղարվեստի և նկարչության ասպարեզներում: Պեպերյան վարժարանն ավարտելուց հետո Չյոկյուրյանն անցնում է մանկավարժական աշխատանքի՝ միաժամանակ զբաղվելով ինքնակրթությամբ: Գրեթե անթերի փորագրված է ֆրանսերենին, բնագրով կարդում ողջ ֆրանսիական գրականությունը, նաև համաշխարհային գրականության գլոխգործոցները՝ ֆրանսերեն թարգմանությամբ: Գրողը բռնել էր հասունացման ուղին:

Առաջին գործերը բանաստեղծական էին: «Ամենուն տարեցույցում», «Ուրախում», «Սատուում» եւ այլ պարբերականներում տպագրված գործերում ապագա արձակագիրը տալիս էր ազդեցությունների տալիս էր, անկումային, հոռետես ու լավիկան տրամադրությունների երգիչ: Արդեն չափածոն, քնարերգությունն էլ իր տարերքը չէր: Պակասում էր ինչ-որ կարեւոր, կենսական որակ այդ երկերում:

Ապա նաեւ, ինչպես նշվեց, ժամանակն էլ գրողի օգտին չէր: Որքան էլ արտառոց թվա, սակայն պիտի նշել, որ 1908-1915 թթ-ը՝ երիտթուրքերի տիրապետության յոթնամյակը, արեւմտահայ մտավոր ու մշակութային կյանքի ծաղկումի շրջանն էր: Սրբաշուն էին նոր պարբերականներ, բացվում էին նոր դպրոցներ, լույս էին տեսնում բազմաթիվ գրքեր: Անուախաղեպ աշխուժացում էր նկատվում գրական կյանքում: Ասպարեզում էին նոր անուններ՝ Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սեւակ, Մ. Մեծարեւոյ, Իսկարա: Տրապառակվում էին 80-ականների ռեալիստների գործերը: Իր հաղթարշավն էր շարունակում Եր. Օրբանյանը: Դժվար, շար դժվար էր այս անունների կողքին տեղ նվաճել սեփական գրականության համար: Նաեւ ժամանակը բանաստեղծությանն էր: Այսինքն՝ բանաստեղծական խոսքն ավելի փնտրված էր, իսկ Տ. Չոկյուրյանի տարերքը... արձակն էր: Եւ, սակայն, ուս գրավ իր տեղը: Նույնիսկ ժամանակը, ամենագոր ժամանակը, որքան էլ անբարենպաստ, անգոր գրվեց տաղանդի հանդեպ: Իսկ տաղանդն արտասովոր զարգացման ուղի էր անցել: Արագ զարգացման:

Որբության դանթեական ճանապարհն անցնող պատանին նաեւ ականապետաբար 19-րդ դարավերջի ջարդի սարսափների: Եւ ... հասունացավ: Դրանք իրենց անողորմությամբ դաջվեցին պատանու հիշողության մեջ, դառնացրին եւ միտքը, եւ հոգին: Եւ զգայուն հոգում ծնված երգերը վերածվեցին «Տոռետեսի երգերի»:¹ Գրականությանը գուցեթե ճանաչել էր նաեւ կյանքը: Ավելի ճիշտ՝ կյանքի խմացությունը հարստացել էր գրականության ուսումնասիրությամբ: Ձեռավորվել էր գրական հեղափոխությունների շրջանակը, ապա՝ ամբողջացել գավառական կյանքի ճանաչողությամբ: Ծննդավայրը Տրապիզոնի նահանգի Կյոնուշսանի փոքրիկ քաղաքը, մեծ երեսկայությամբ կարելի էր քաղաք համարել: Այն տիպիկ գավառական բնակավայր էր՝ իր մարդկանցով, կենսակերպով, նիստուկացով: Այդպիսին էր նաեւ Սիլիվրին, որ սիրում էր երբեմն լինել գրողը: Նենց այստեղ էլ ծանոթանում են հայ գավառական կյանքին եւ ուսումնասիրում այն, որ առաջ նյութ էր մատակարարում նրա արձակ գործերին: 1908թ. նամակներից մեկում գրում է. «Վեպերուս համար թիվեր կան հոս. անոր համար մանավանդ կուզեմ շփում ունենալ այս գեղջուկ մարդոց հետ, որպեսզի կարենամ մտքն ղեկը իրենց հոգին ու մարածումները» /էջ 17/: Նենց գավառի կյանքն էլ դառնում է գրողի ստեղծագործության

1 Մինչ 1908թ. կազմել եւ պատրաստել էր հրապարակել «Տոռետեսի երգեր» արձակ եւ չափածո բանաստեղծությունների ժողովածու Ռ. Պերպերյանի խմբագրությամբ: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Մարգարյանը. «Կրթական նախարարության գրաքննությունն իր միջամտությամբ այնպես էր խեղաթյուրել ստեղծագործությունը, որ երկրասարդ հեղինակը բարվոք էր համարել հրաժարվել տպագրության արարողությունից»:

Տե՛ս ՆԴԳ. Տ. Կամսարական, Տ. Չոկյուրյան, Եր.՝ 1984, էջ 16 (այսուհետեւ սույն գրքից կատարվող մեջբերումների էջը կնշվի շարադրանքում):

նյութը: Այս առումով եւս իրավացի է հեղափոխողը, երբ նկատում է. «Թեման, որ Չյոկյուրյանը բերեց իր պարմվածքներով, ինքնին, նոր չէր: Նրանից առաջ կային շարերը՝ Փափագյան, Պարթևյան եւ ուրիշներ, որոնք արձարծել էին այն» (էջ 17): Նավեղենը՝ նաեւ ժամանակակիցները՝ Երուխան, Ռ. Զարդարյան, Մշո Գեղամ (Տապրակ), Թվապինցի ու էլի շարերը: Բայց նշենք նաեւ, որ Չյոկյուրյանը մի կարեւոր բանում տարբեր էր նրանցից, յուրահատուկ նախընտրած թեմայի մեկնաբանության մեջ: Եթե Երուխանը իր հերոսներին (ձկնորսներ, մանրավաճառներ, լվացարարուհիներ եւ հասարակական կյանքի «հատարկում» ապրող այլ խավի մարդիկ) ներկայացնում է առօրեական, կենցաղային իրավիճակներում՝ երբեմն-երբեմն դիմելով նախնախնայական ոճի հնարքներին, Մշո Գեղամն ու Թվապինցին կերպում էին արեւմտահայ գավառական կյանքի համապարկերը՝ հաճախ մնալով Արփի. Արփիարյանի եւ, առհասարակ, արեւմտահայ 80-ականների գեղագիտական ըմբռումների փորձություն, ապա Տ. Չյոկյուրյանը եւ որոշ չափով նաեւ Ռ. Զարդարյանը հակված էին ներկայացնելու ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքը՝ **համապարսխան հոգեբանական իրողությունների ձեւավորման ընթացքի պատկերմամբ**²: Դա, կարծում եմ, պայմանավորված է երկու կարեւոր իրողություններով: Նախ՝ փակավիճակի երեխա՝ 10-12 տարեկան, ինչպես նշվեց, 1894-96թթ. կոտորածները անջնջելի կնիք են դնում նրա հոգեկերպվածքի վրա, որից չձերբագարվեց մինչեւ կարճատեւ կյանքի եղերական վախճանը³: Ապա՝ վիպական արվեստի մասին նրա գեղագիտական ըմբռումները՝ ձեւավորված հայ եւ համաշխարհային գրականության քաջիմացության շնորհիվ: Դա երևում է հատկապես Ալ. Շիրվանզադեի գրական ժառանգությանը տրված նրա գնահատումներում: Այս առումով հեղափոխող է այն, որ Տ. Չյոկյուրյանի «Նայրենի ձայներ» պարմվածքների ժողովածուն, «Ոստան» եռամսյայի հրատարակումը (1911թ.), նրա կողմից Մոսկվայի «Ճարտագուրդ» եւ Լ. Անդրեյենի «Կարմիր ծիծաղ» երկի թարգմանությունները, «Շիրվանզադեի գրական գործը» ուսումնասիրության արեղծումը ժամանակային առումով համընկնում են՝ 1910-1911 թթ: Նույն ժամանակահատվածում (1910-1912) Ֆրանսիա, Իտալիա եւ Նոբելյան կապարած ճամփորդությունների արդյունքում ծնվում է «ճամփուս վրա» ուղեգրությունը: Ուզում եմ ասել, որ Շիրվանզադեի ստեղծագործությանը տրված նրա գնահատումներում վստահաբար կարելի է ոչ միայն եզրահանգումներ անել նրա գեղագիտական ըմբռումների, այլև գեղարվեստի վերաբերյալ: Այսպես՝ Չյոկյուրյանը Շիրվանզադեի վիպական արվեստի մի կարեւոր յուրահատկությունն ու արժեքն է համարում այն, որ նրա «...գլխավոր վեպերը հոգեբանական-բարոյացուցական ուսումնասիրություններ են գրեթե, **տեսակ մը հոգեբանական վավերաթղթեր**»: ... Նախապ, վարպետի ձեռքով ան հավասարապես բոլոր բազմաթիվ հոգեբանությունները կվարեն՝ զանոնք հասցնելու համար իրենց վախճանին» /էջ 558/:

2 Այս եւ հեղափոխող բոլոր բնոյութներն իմն են:

3 Այս իրողությունների՝ հոգեկերպվածքն աղավաղելով կերպրելու հարկանշային արժեք ունենալու վկայությունն է նաեւ Դ. Վարդուհանի, Ռ. Մուսկի, Սիամանթոյի, Եր. Օրբանի՝ այս սերնդի գրեթե բոլոր գրողների ստեղծագործությունը, որոնք, չնչին բացառություններով, չկարողացան ազատվել այդ եղերական իրողությունների ազդեցությունից եւ իրենց ստեղծագործություններում միշտ անդրադառնում էին դրանց:

Տ. Չյուկյուրյանի այս համոզման վկան են նրա գործերը՝ «Վանքը» վիպակը, «Տեր-սերին ոճիրը», ուրիշներ։ Մի այլ առավելությունն էլ է փեսնում Շիրվանզադեի գեղարվեստում, «Շիրվանզադեն արվեստագետ մըն է, խորապես զգացող մը ու բանաստեղծ մը, քիչ չեն այն էջերը, որոնք զմայլելի փափկություն մը, փխուր բանաստեղծություն մը ունին...»։ Ընդգծված արտահայտությունը վերագրելի է նաև իրեն՝ Տ. Չյուկյուրյանին, որը չի վրիպել արդեն իր հեղափոխողի աչքից. «...իր արձակ լավագույն գործերում էլ նա պաշտպանեց (թե՛ պահպանեց - Ս.Ս) բանաստեղծական մի ընդգծված շեշտ (էջ 17)»։ Շիրվանզադեի ստեղծագործության վերաբերյալ Տ. Չյուկյուրյանն ունի նաև որոշ վերապահումներ։ Նա մեծ վիպասանին մեղադրում է բնության հանդեպ անսարքերության մեջ՝ «...չեմ կրնար ըմբռնել այն անսարքերությունը, գոր ցույց կուրա ան (Շիրվանզադեն - Ս.Ս.) հանդեպ բնության։ Մարդկային կյանքն ինչ բանի մեջ՝ կշարժի, կգործի. բնության մեջ, չէ՛։ Արդ ինչու մերժել կամ քիչ օգտվիլ իրերու և կյանքի այդ հրաշալի շրջանակեն (էջ 558-559)»

Մի կողմ թողնելով Տ. Չյուկյուրյանի իրավացի կամ անիրավացի լինելու խնդիրը՝ միանգամից նշեմ, որ ինքը ոչ միայն չմերժեց, այլև լիովին օգտվեց «կյանքի այդ հրաշալի շրջանակից»՝ առավել հիմնավոր ու համոզիչ դարձնելու համար իր ստեղծած գրական կերպարների հոգեկերպովածքային յուրահատկությունները։ Այսպիսով՝ Տ. Չյուկյուրյանի գեղարվեստական ժառանգության հիմքում ընկած են երկու որոշիչ իրողություններ. կենսաճանաչողությունն ու համաշխարհային գրականության իմացության արդյունքում ձևավորված գեղագիտական մարածողությունը։

Զարդերի պարկերները, ինչպես նշվեց, հանդիպում են ժամանակի արեւմտահայ բոլոր գրողների ստեղծագործություններում՝ չնչին բացառություններով։

Դրանցում, սակայն, քրիստոնեական է եղել թուրքական խուժանի վայրագ, անմարդկային վարքագծի, արյունոտ պարկերների սոսկալի նկարագրությունը, բան դրանց արդյունքում մարդկային հոգեբանության աղավաղումը, դրա արդյունքում՝ նոր, ավերակված հոգեկերպովածքների ձևավորման ողբերգականության պարկերումը։ Տ. Չյուկյուրյանը այն քննարկեց, որոնք կարևորեցին այս վերջին իրողությունը։ Մի իրողություն, որին գրականագիտությունը գրեթե չի անդրադարձել։ Չյուկյուրյանի ստեղծագործության այս յուրահատկության վկայությունն են «Վանքը» վիպակը, «Տերսերին ոճիրը», «Նաքսին վրեժը», «Տկարին իրավունքը», «Լուռ հերոսը» գործերը։

«Վանքը» վիպակը միշտ էլ եղել է գրականագիտության ուշադրության առարկա՝ իբրև Չյուկյուրյանի ստեղծագործության գլուխգործոց։ Զննվել են և՛ կառուցվածքային-սյուժետային, և՛ բովանդակային-գաղափարական խնդիրներ։ Վիպակի հիմնախնդիրը համարվել է մարդու աշխարհիկ-կենսական և հոգեւոր ձգտումների հակասականության և դրանցից բխող ողբերգականության բացահայտումը, դրանց դիտարկումը 20-րդ դարասկզբի հայ գրականության մեջ լայն տարածում գտած գրական երկերի («Նին աստվածներ», «Մերժած օրեր») փխրությունը։ Ճշմարիտ է և փաստարկված։ Սակայն պակաս կարևոր ու ճշմարտացի չեն նաև այն բացահայտումները, որ կատարում է գեղագետ Տ. Չյուկյուրյանը՝ ներկայացնելով ջարդերի արդյունքում որբացած մի խումբ հայ

մանուկների հոգեբանության փոփոխության և նոր՝ աղավաղված հոգեկերպվածքի ձևավորման ընթացքը պարկերելիս:

Այլ կերպ՝ վիպակը երկշերտ է, և երկպառակաբանությամբ բացահայտվում են նաև 1894-96 թթ. ջարդերի հետևանքները: Վանքի նկարագարող ձեռագրերով ու հնօրյա արժեքներով հիացած, զարմանալի թարմությամբ շենշող Շուշանի հանդեպ ծնված սիրով ապրող Արարիկ վարդապետի կյանքը հիմնովոր շրջվում է որբերի՝ մենաստան մուտքով: Վանական միջավայրը միանգամից անորոշ ստեղծվում է լցվում, որ ծնունդ է տալիս նոր փառքի և փառքի մի գագաթին նրա հոգում: «Զգացումներուս երկրորդը աղերսն անողորմ չարութենէն կծնի, իրավ այդ փողոց, փառքիս որբերու մերկ կարավանը ազգային բոլոր թշվառությանց ամփոփումն է»,- նոր ու անսովոր միտքը բռնում է Արարիկ վանականի հոգեշարժումը: Ու նա այլևս դարձապարզված է՝ անգոր ազատվելու սև ոճրի հետապնդող ներկայությունից: Ու թեև որբերը իրենց որբերությունը են պարտադրում «պարգորեն», «իբրև բնական և սովորական բան մը», բայց իր ներաշխարհում, իր ես-ի մեջ պարփակված թվացող վարդապետի ուղեղը շարժվում ու իր անողորմ ծանրությամբ ճնշում է անպարտախախտ թվացող հարցը. «Ինչո՞ւ կողոպտել, այրացավեր դարձնել երկիր մը, փարբեր գործիով և ձեռքով բոլոր վերբեր ստեղծել մարդկային միսին վրա, հողին ներքե հարյուր հազարավոր կործան կյանքեր: Ինչո՞ւ չընել այս ամենը՝ պիտի բեր աշխարհը... Աստուծանային կամքը այս ոճիրներուն ինչպե՞ս կհանդուրժե» (361): Անպարտախախտ մնացած հարցը առավել թնջուկային է թվում առանձին, անհարձակաբանության բացահայտումներում: Չյոկյուրյանը մեծ ճանապարհ անցած գրողի հմտությամբ, որ նրա փառանքի վկայությունն է, փոքրիկ Խաչերի կյանքի պարտությունը հյուսում է հոգեւորականի փառապանքի և մարածումների ընթացքին, ինչը՝ նաև հոգեբանության փոփոխության ու հոգեկերպվածքի ձևավորման ընթացքն է: «Ամենն փոքր, Խաչերը, արթուն կրեսնեմ միշտ. ինչու չի կրնար բնական. այդ փոքրակազմ փառք»,- վարդապետի միտքը փառքվում է շարժվում ու հասկանալի, բայց հենց դրանով անմեղքունի հարցի ճնշումից: Զարմանալիորեն անողորմ այդ ժամանակներում, երբ անսովոր սովորական է թվում, անսիրտ ու սառն են թվում հոգեւորականի մարածումները. «Ընկերները բռնի, թե Ա... քաղաքի մեծագույն հարուստը էր հայրը. փառքը պարտեզին մեջ իր թուրք ծառաները սպանեցին, գլուխը հոր մը ներքեով, իսկ մարմինը՝ ավազանին մեջ: **Խաչեր ինքն ալ կհիշէ այս մանրամասնությունները**» (362):

Վիպակում օրագրային ձևն իբրև հնարան կիրառելով՝ Չյոկյուրյանը ոչ միայն հավաստություն է հաղորդում պարտմին, այլև հոգեբանորեն առավել ապրված ու փեսանելի է դարձնում հերոսի ներաշխարհում կարգավոր փառքաշարժերը: Գրողի յուրօրինակ ձիրքով, կիրառելով երկխոսության հնարանը, Չյոկյուրյանը որբությունը վիճակից վերածում է բնավորության, հոգեկերպվածքի, որ փեսանելի չէ նույնիսկ ականաբաններին, նույնիսկ ուսուցիչներին: «Նայր սուրբ,- վիպական դրվագներից մեկում դժգոհում է ուսուցիչ Ալեքսանդրը:- զարմանալի են այս փառքը, օրերով փառքը, լուռ ու մունջ կնստին, ասիկա իմ հուսահատությունն է, **իրենց վիճակներից կրնեն գիտալ** (368)»: Նմուշ մի պարկերով գրողը եղերական կյանքի ընդգրկումների շրջանակը լայնացնում է՝ մղելով

դեպի անրնդգրկելի, րնդհուպ մինչև դաժան, բայց իրական մի եզրահանգման՝ «բոլոր Նայասպան դիակնարան մրն է»:

Վիպակի երկշերտ կառուցվածքում որբերի կյանքի նկարագրությունը թերևս նպատակ է ունեցել առավել խորունկ ու րնդգրկուն ներկայացնելու Արարկ վարդապետի հոգեաշխարհը, հոգեբանական վերուվարումների րնթացքը, սակայն րնդհանրության մեջ այն վերածվում է ինքնություն դիպաշարի՝ ուրույն նպատակադրմամբ ու բացահայտումներով:

Որբերի, մասնավորապես փոքրիկ Խաչերի ներաշխարհում ջարդերը սոսկ հիշողություն չեն: Նիշողությունը հենց նրանով է հիշողություն որ անցյալինն է, հեռվում մնացողը, ու դրանով էլ մոռացության՝ դժվար կամ հեշտ, դարապարտված: Այն ջնջվում-վերանում է մարդու ներաշխարհից հաջորդող լուսավոր ու կենսահասարակ դրվագների, օրերի շնորհիվ: Մինչդեռ ջարդերի դաջվածքը, թվում է, հավերժական է, անանց, այսինքն՝ այնքան մնայուն, որ դառնում է վարք ու կենսակերպ, մարածողություն, այսինքն՝ հոգեկերպվածք: Որբերի րնդհանուր կենակերպի ու վարքագծի նկարագրությունների միջից աստիճանաբար գալովում-առանձնանում է փոքրիկ Խաչերի դիմանկարը, որ իր գալուստով առավել շեշտում է ողբերգության րնդհանրականությունը: Երեխայի անուր պառապանքը բացահայտելիս Տ. Չոկյուրյանը վերածվում է նկարագրության անգուգական վարպետի: Երբ լռակյաց փոքրիկի հետ վարդապետը փորձում է հաղորդակցվել, երեխան դառն ու լուռ, սիրտ կեղեքող արցունքներով լալիս է. «Բոլոր հարցումներս, պնդումս, պաղապանքս անօգուտ անցան. ի վերջո սկսավ արտասվել լիորեն ու ես բեկյալ կոյիքի արտասուքներուն կապերեն ծագիլը, արածվիլը սառնենիին ու բիբերուն վրա, հետո այրերեն մեղմորեն հոսելով բարձի սրվերին մեջ անհերիլը» (373): Այդ լացը մանկական լինելով՝ իմացական ցավի մեջ վաղաժամ հասունացած մարդու գիտակցական լաց է, որ առավել ծանր է ու րառապանք շեշտող: Խաչերի կերպարն աստիճանաբար վերածվում է ջարդերի արդյունքում ձևավորվող մանկան րնդհանրական րեսակը բացահայտող կերպարի: Ողբերգական դրվագները գնալով հզորանում ու ավելի րիքական են դառնում այդ հոգեկերպվածքներով՝ վերածվելով ավելի իրական կյանքի, բան բուն կյանքն է: Իրենց անույս ու անհրապույր առօրյայում որբերը կառչած են ապրած կարճ կյանքի լուսավոր ափերից, հիշում են «հավանք բուրսուին վրա» կալի ապրած խաղողը, պարսեզը, թթի ծառերը, փշաբենիների անուշ բուրմունքը, Սուրբ Ծնունդի պայծառ գիշերները, գյուղի խնթերին: Գրողը նկարել է րալիս մի կարեուր յուրահարկություն որբացածների հիշողության մեջ. «Բոլոր անշունչ իրերուն վրա կիսսին, բայց չեն խոսիր մոր, քոջ, եղբայրներու վրա՝ գանուք երագելով կգոհանան» (388): Եվ հասկանալի է՝ ինչու. նրանք արդեն չկան, հռչարված են ու դրանով էլ եղծվում է լուսն երագների աշխարհը: Բայց որբան էլ փախչեն, խուսափեն անկարելի է:

Անցյալի արյունոտ պարկերները ամուր նստած են նրանց հոգու եւ հիշողության պարունակներում, ու որբան էլ անցանկալի, դրանք իրենց ձևավորող ելուգակների նման հանկարծ ներխուժում են անսպասելիորեն, նույն դաժանությամբ, ինչպես ծնվել են, եւ ավերակում են մանկության պայծառ հուշերի պարսեզը.

- Քյուրդերը լեռան ճամփով եկան...
- Եկեղեցին այրեցին... հայրս ան ապեն ձեռքը ծունկերուն զարկավ... /388/:

Ու պրծում չկա: Միսրը չի գործում ազապվել նույնիսկ մահվան անկողնում: Ասում են՝ կյանքի վերջին վայրկյաններին՝ դեպի հավերժը գնալիս, մարդու գիտակցության մեջ առկայծում ու վայրկյանների ընթացքում անցնում է նրա ողջ կյանքը՝ ինչ-ինչ լուսավոր պարկերների ընթացքով: Գեհենի միջով անցածների մոտ դա բացառում է Տ. Չյուկյուրյանը: Նրա հերոսները գրկված են մահի լուսեղեն արահեպներով անցնելու հնարավորությունից անգամ: փոքրիկ Խաչերը մահվան մահճում՝ մահաջերմի մեջ, վերապրում է սարսափների ամբողջ ընթացքը: Արյունոտ քրտինքները չեն թողնում հանգիստ մեռնել անգամ. «Խաչերը սկսած էր մենախոսել...

- Կուգան, մայր... կուգան... հայրս սպանեցին... **ինչու՞ զարկին**, ահա մարմինը մեր պարսեղի ավազանին թով. չի՛շարժիր... մեռա՞ծ է, մայր, **ինչու՞ մարդիկ կմեռնին**... կուլան, մայր...

- Մա՛յր, մա՛յր... ահա **ծուխ կելլե պարսեղներու մեջեն... կարմիր բոցերը կալերուն վրա...** «Ամբողջ հայ ազգը որք է... կրսեիր... ճի՛շտ է: **Ինչու՞ որք կմնան փոքրերը...** (427)»:

Նասկանալի ու պարասխան ունեցող հարցերը՝ «ինչու՞ զարկին, ինչու՞ մարդիկ կմեռնին, ինչու՞ որք կմնան փոքրերը», միշտ կմնան անպարասխան. բոլոր հասկանալի ու պարզ հարցերը չունեն պարասխան, երբ ունեն մարդկային մարքի համար անընդգրկելի դաժանություն, երբ «ծուխ կելլե պարսեղներու մեջեն», երբ «կարմիր բոցեր են «կալերուն վրա»: Կյանքի սպանությունը բացառություն չունի:

Նուսահապ ու մեռնող հոգիների նման փոքրիկ Խաչերն էլ մահվան ճամփեքին, մեծ ու անեզրական, աշխարհի ցուրտ ու մութ փարածության մեջ որոնում է իր ապահով ու փաթ անկյունը: Ու բոլորի նման գտնում է նրան: Մղձավանջի մշուշների միջից, իբրև փրկության լուսեղեն երազ, բարձրանում է մոր կերպարը՝ իր ջերմ համբույրներով, փաթ ու գործվագութ գրկով: «Երբ հայրս ողջ էր, դուրս լալով կսիրեիր ժամուն դուռը կայնող որբերը... Նիմա վանքն եմ... ե՛րբ պիտի գաս համբուրել գիս... այս որբաւոցը... հոս չեմ կրնար ապրել ես... մա՛յր: Քեզի գալ կուզեմ... աղվոր է դեմքդ, մայրի՛կ... քիչ մը նիհար կերելիս, կմրածես իմ վրաս ու կուլաս... ես ալ քեզ կերագեմ ու կուզեմ... (427)»: Իսկ երագը չի կարող իրականանալ անգամ մահվան անկողնում: Դժոխքի միջով անցածներին տրված չէ անգամ խաղաղ մեռնելը: Նրանց վերջին կապը աշխարհի հետ, կյանքի վերջին ակնթարթն անգամ խաթարվում է տոսկանքի հարապելու ներկայությունից. «Եկա՛ն... ազապեցե՛ք գիս... կերթան, մա՛յր...» (432):

Մեռնողի վերջին ճիշդ դաջվում է մարդկային հիշողության մեջ՝ իբրև հավերժական խաբան աշխարհի դեմքին: Ակամայից հիշում ես Եղեռնի մեծ փարեզրի՝ Սիամանթոյի՝ խաղաղ ու հանդարտ մեռնելու մասին որբան էլ փարօրինակ, բայց եղեռնագարկվածների համար նույնքան բնական հնչող երագը.

Տե՛ր, հիվանդներուն ու լքվածներու սնաբեն

Ոճրագործներդ ու իրենց սուրերուն սարսափը հեռացու՛ր,

Եւ ջուրերդ թո՛ղ քիչ մը իրենց կապաղութենէն հանդարտին,

Որպէսզի մահապարսները արտօրանքի նալերուն մեջ.

Թե՛ն քեզի անիծելով, բայց գոնէ խաղաղությամբ ոգեւարին...

Տ. Չոկյուրյանը եւս, իր մեծ ժամանակակցի նման փիրապետելով բառի արվեստին, կարողանում է բացահայտել զարհուրանքի հոգեբանական ազդեցությունների փրությունը: Մեռնող հերոսի մենախոսության մեջ հաճախակի գործածելով բազմակերպերը՝ նա ոչ միայն սրելով մեռնողի գաղափարների զգացողության, այլև դրա՝ իրեն իրողության անանցակալության պատրանք, որով էլ փեսաների է դարձնում երեսույթը իր ողջ ընդգրկումներով:

Եթե «Վանք» վիպակում ջարդերի՝ իրեն հոգեկերպվածքային խաթարումների հիմքերի էության ներկայացվում էին կառուցվածքի երկրորդ հեղքում եւ միջոց էին Արարակ վարդապետի ներաշխարհային բացահայտումների համար, ապա «Տերպերին ոճիրը» պարզվածքում դրանք առաջնային ու հիմնական են դիպվում: Գրողն այսպեղ եւս ներկայացնում է հոգեւոր աշխարհի մարդուն՝ միանգամայն այլ նպատակադրումներով ու հղացմամբ: Սա պարահանականություն չպետք է համարել: Հոգեւոր աշխարհի մարդն, ի տարբերություն աշխարհիկի, ավելի զգայուն է, հեղեղաբար եւ խոցելի: Նրա փեսակի վրա աշխարհային անցուղարձերը՝ մանավանդ անարդար ու ռդերգական, առավել արագ ու խորք անդրադարձեր են ունենում: Հավասարը գորելով ուժ է նրանց կենսամրաձողության մեջ, իսկ դրա փուլումը՝ կործանարար: Այս փեսակն է Բ... քաղաքի քահանան. «Տեր Բարթողի համար **հավասարը կյանքի արժեքն ունեւ,**» փաստում է գրողը, **ինքն անոր մեջ էր ծնած, անով սնած, անով մեծցած ու անով ալ կապրեր**»: Քահանան աղոթքին, սուրբերուն, մատուցներուն գորությանը, բարեխոսությանը, հրաշքին ապավինելով՝ հանգիստ քնած էր մինչեւ այդ վերջին օրերը (445):

Եթե որբերի հոգեբանության վրա դեպքերի ազդեցությունը ինչ-որ փուլ հասկանալի է բացատրելի լինելու չափ, ապա փեր Բարթողի վրա դրանք չափի ունենալին նույնապիպ հեղեղաբեր: Եւ դա ոչ թե այն պարճառով, որ նա պակաս զգայուն է: Պարզապէս պաշտոնի բերումով նա կյանքում մահեր շար է փեսել, եւ դրանք ընկալվել են որպէս կյանքի տրամաբանական ընթացք, որովհետեւ... **քնական են եղել:** Անբանական մահերը խախտել են հոգեւորականի հոգու անդորրը, փշրել կարծր թվացող սրտի անդորրը, անհասկանալի դողով լցրել այն «Տեր Բարթողը կարծր սիրտ մը ունեւ, ինչպէս բոլոր իր ընկերակիցները, ան շար մահ փեսած էր,» փաստում է գրողը, բայց նաեւ գնում բացահայտումների, բայց հուզումնէ կողողար փուն վերադարձի միջոցին ու իրեն անանկ կթվեր, թե **հայուն գործը լրացած էր ալ:** **Աստված վերջին դատաստանը հայեն սկսած էր՝ կկարծեր** (444)»: Մահվան սովոր մարդու մեջ մահը տեսնում է ազդում հարկապէս, երբ դուրս է գալիս բնականության սահմանները, սպառնում վերածվել մեծ Ոչնչացումի: Տերպերի հոգում ծնվում է զարմանք, որ շվար ու անպարասխան մի հարցով կեղեքում է հոգին. «Աստված ինչո՞ւ չպարժեց իր փունն անպարզողները. սա ի՞նչ զարմանալի բան (444)»:

Թվում է՝ մարքի մեծ թոնջքներին անրնալով ու կարծր սրտի փեր հոգեւորականի հա-

մար առավել ազդեցիկ են եկեղեցու ավերումը, քան բյուրավոր սպանությունների սարսափը: Մանավանդ որ հոգեբանական փրկաշարժերը սկսվում են, երբ փրկարար եղերական դեպքերից հետո մտնում է փաճար ու փեսնում Աստվածածնի նկարը՝ «ձիու թրիքով աղարկված», ծակծկված սրբապատկերներ, համապարած ավեր, պղծում, փլուզում: Գրողը դիպուկ պատկերներով բացահայտում է ոչ միայն երևույթի բնականությունը, այլև հոգեբանական մեծ փրկաշարժերը, որ սկզբում թվում են անկոհարար, բայց աստիճանաբար ձեռք են բերում արագ ընթացք ու այլ ուղղվածություն. «Աստծու պաշտոնյան մոռցած իր, իրեններուն գոհերը, ավարի փված ինչքը, ահաբեկումով, գայրույթով փաճարին դարարկ, կողոպտված երևույթը կերպեր ականա եւ զարմանքով:

Կրոնավորին ուղեղը փեսակ մը թմրություն կստանար, հիմարական շարժում մը անոր կտրուկները երբեմն: Աչքերուն մտքին հանկարծական սեռություն մը կանցներ» (441):

Տեր Բարթողն այլևս դարապարտված էր մարքի շարժումին, ստիպված էր խորհել, ու խոհերը, մղելով նրան դեպի կենսական արժեք ունեցող հավաքի հիմքերը, նրա մարքի զգացողությանը դամոկլյան սրի պես կախում են դժվարին հարց, թե՛ «աստված ինչու՞ թող փվավ, որ իր փունը թալլեն»: Ու խախտում են հավաքի հիմքերը. «Այ քահանան սուրբերու գործությանը չէր անդրադառնար, **անոնք արժեք չունեին**, մեղք այնքան խունկին ու մոմին»:

Բարդ ու դժվարին է կրոնավորի խոհերի ընթացքը: Տեղի է ունենում մեծ դարձ նրա ներաշխարհում, որ սկզբում դժվար ըմբռնելի է, բայց աստիճանաբար վերածվում է սովորական բանի՝ նման աշխարհության: Ու թերևս սա է նաև պարճառը, որ գրողը, ի տարբերություն «Վանք» վիպակի, այսօր ավելի հաճախ է միջամտում այդ խոհերի ընթացքին, ավելի սրեալ փայլա մեկնաբանություններ. «Բայց վարժությունով մը, որ մտածումի մը եւ զգացողության մը հաճախակի կրկնումն է կծնի, այդ հարցումը սովորական աշխարհության մը վերածվեցավ իր մեջ: **Տակավին փրկապետդ ալ կրլար նախախնամության անգործության գաղափարը այդ կրած գանկին փակ**» (445):

Միասին ու ցմրոր անդորությունները փրկի են փայլա հոգեւորականի ներաշխարհում՝ փրկ բացելով աշխարհիկ ու իրական զգացողությունների առջև: Դրան նպաստում են ջարդերին հաջորդած առավել դժին, առավել մահահոտ օրերի ցնցող պատկերները՝ սովահարների, ձմռան բուքերի մեջ մերկ ու սոված մնացած մարդկանց դեմքերով: Մրանք իրականությունից աստիճանաբար վերածվում են մղձավանջային պատկերների՝ առավել կաշուն ու փեսական: Պարտքի գիտակցումը, սեփական եսը բնականորեն գոհելու կարողության փակավին չգիտակցված, բայց հաստատ գոյությունը, սրբերի գործության աստիճանական արժեգրկումը ավելի ու ավելի են խաբխրում հավաքի հիմքերը, մանավանդ, երբ այդ մարային անսովոր վիճակից խուսափելու համար քահանան սկսում է ավելի հաճախ այցելել. «Իր ծուխերուն», երբ մարիկից է ականափես դառնում, թե ինչպես «Ամեն փուն հավասարապես աղքատացած էր, ամեն փուն արյուն կուլար, ու ամեն աչքն արցունքը չորցրե էր»: Քահանան սոսկումով է լցվում, երբ հասկանում է, որ մարդիկ լքում են հավաքը, դառնում օտարերկրյա կաթոլիկ միսիոներների

գոհր, որոնք, օգտվելով նրանց անելանելի վիճակից, հոգեորսությամբ էին զբաղված: Եւ արդէն զարմանալի էլ չի թվում, որ «թեւեւ ալ ջարդի օրերուն սարսափը, անխոյս դեմքերը չէին մնացած», քեր Բարթողը շվար ու մոլոր էր էր. չգիտեր ու՛մ օգնէր, ու՛մ պարգեր իր «ջլար» թները, ու ցավով է խորհում, որ «Նայր՝ վարժ միշտ համակերպության, քառասպանքի կյանքին՝ կրնդգրկեր զայն իբրեւ ճակատագրական նվեր մը /446/»: Եւ քահանայի սահմանափակ միտքը այս համարաբար քառսից դուրս պրծնելու ուղիներ է որոնում, պարեպար խփվում՝ պարճառ դառնալով հոգեբանական մեծ քեղաշարժերի: Տերտերի ներշխարքում քեղի ունեցող փոփոխությունների դիպուկ նկարագիրն է ներկայացնում գրողը. «Մեկ բան մը միայն կավրեր, կրնկներ հաղթ մարմինով մարդը եւ զայն կկքեր. մարծում մը ականի պէս կծակեր հոգին հավաքավոր մարդուկին ու անոր մեջ անհավատության քանի մը սերմեր կնկեր: Անոր մեջ երկու հակադիր տարրեր կայաքարէին: Նավարքն ու Տարակույսը» (448): Այս պայքարը քեր Բարթողի մեջ ոչ մի պահի չի դադարում: Միայն երբեմն գերակշռում է Նավարքը, երբեմն՝ Տարակույսը: Ու երբ առաջին անգամ նկատում է Նիսուսի՝ հրաշքով փրկված դիմապարկերը՝ արծաթե շրջանակի մեջ, քահանան հրճվանք է ապրում, որ «Ան իր քեղն է. անօրենները չեն քեսեր»: Նավարքը ներաշխարհում դեռ գերակշռող է. Նիսուսը՝ ամենագոր, ու նկարվում է դիմապարկերը: Արծաթե շրջանակը չի նկարվում: Բայց «ցավին դժուգ կուրակումն ողբալի վիճակներ կսրեղծե», ու քեր Բարթողը սքիպված է շարքը «ցրտի ու անութության գոհ», չորս-հինգ փոքրեր թաղել, քենդորեն նպաստի ու օգնության աղբյուրներ որոնել, նամակներ հղել Պոլիս, բայց ելք չի գտնում: Վիճակի անելանելիությունն անգամ թույլ չի տալիս թուլացած, բայց դեռ քիրապկտող Նավարքի քիրությունը գրնվող հոգեորականին գիտակցել, թե ինչու՞ «Կամարին մեջքեղը Նիսուսի նկարին արծաթե շրջանակը կփայլեր սովորականէն ավելի: Այս արծաթին քեսը թեթևություն մը տվավ քեր Բարթողին, անհասկանալի հույս մը ձգեց անոր մեջ: Երկար գննեց կամարն ու արծաթե շրջանակը» (448):

Բայց Տարակույսը ասքիճանաբար գորեղանում էր, ու քերքերի հոգում սկզբում քարքամ, անորոշ, բայց հեքգեկտե հսքակ ուրվագծվող միտքը, թե՛ հարյուրավորներ կողոպտած էին եկեղեցին, զայն ավերած, պղծած ու անպարիժ մանացած, ի՞նչ պիտի պարահեր իրեն, եթե ինքն էլ արծաթե շրջանակը վերցներ իր քեղեն (450): Այդ զարեուրելի միտքը՝ բացաքություն, հիմնավորում պահանջող, քերքերին կանգնեցնում է ծանր երկվության առաջ: Անհրաժեշտ էր արդարացնել ոճի թվացող արարքը՝ պարժից խուսափելու համար: Եւ, թվում է, գրնում է: Չէ՞ որ իր համար չի անելու, չէ՞ որ դրանով հարյուրավորների պիտի «փրկեր սքույգ մահեն»: Բայց սա էլ դեռ փրկություն չէ: Եւ մի պահ խռվված հոգուն խաղաղություն է իջնում, երբ հայրնաբերում է, որ «Ասքված ալ կուգեր, խորեցավ, որ իր արարածներն անութութեն կորսվին:

Այս գյուքը գոհունակությունով լեցուց կրոնականի հոգուն» (450). Նավարքը քակավին գորեղ է՝ թույլ չի տալիս ոճրագործության, բայց Տարակույսը շարունակում է հզորանալ՝ նոր քառասպանքների մարնելով հոգին: Գնալով խորանում է հոգու երկվությունը, քահանան չի ազարվում իրարամբժ ապրումներից, քանի որ՝ «Միեւնույն քանջող

մրաժնուներուն երկար դեգերումն այդ գեղջուկ գանկին փակ ապականած էր հոգին, թեև ան երբեմն ցնորանքի, կապաղության վայրկյաններ կունենար իր նոր ծրագրով զբաղված աբենին» (451): Սակայն իրական կյանքի նահանջող պարկերները վերածվում են մղձավանջային փեսիլների, որոնք առավել թանձր ձայներով ու շոշափելի պարկերներով ավելի իրական ու փեսանելի են ներկայացնում իրեն երկարած կմախքների բռնացքները, սոված ու կապաղի բերանների հայհուլները, եւ փեր Բարթողը երեսակայված իրականության մեջ շոշափելի պարզությամբ փեսնում է ծանոթ մարդկանց՝ դրացի հնակարկապ Նուսեփին՝ «որուն կապույցած լեզուն երկու կզակներուն մեջեն դուրս կիյնար», կամ իր նախկին սպասուհի Մարիամին՝ «իւ խրճիթին անկյունը կռնակի վրա փառածված, կոճղի մը նման անզգա»: Սակայն Նավարքը փերփերի հոգում դեռ իշխող է, իսկ Տարակույսն էլ փակավին Նամոզմունք չի դարձել, ու նա ստեղծում է իր իսկ ծրագրից. «Ե՛ս ալ խեղճ խնուր պիտի մերկացնեմ իր շրջանակեն, իր զարդեն. վա՛յ ինձի» (451): Ո՛չ կնոջ պարզ ու հստակ պատրաստանները, ո՛չ իր պրպրումները չեն կարող հանգիստ բերել երկպառակության մեջ ծվարվող հոգուն, որ փենդի մեջ է կարծես: Նոգեւորականը չի գտնում ելքը եւ «օրեր ի վեր փված որոշումին հետ հիմա կրկին կպայքարեք», եւ հալումաշ անող սպասումը՝ վերջնական վճիռ փալու, վերածվում է մի ամբողջ կյանք արժեցող սոսկումի գիշերի: Նրա հոգում փեղի են ունենում զարմանալի վերուվարումներ: Նավարքն ու Տարակույսը արագորեն հաջորդում են իրարու, իրար են փոխարինում Նույսն ու Նուսահատությունը, ու երբ թվում է, թե մի պահ եկել է փրկարար միտքը, ու հնարավոր է երկ կանգնել ոճրապարտություն փանող միտքից, նորից հոգուն փառապանք են բերում սոսկումի պարկերները, սովահար մայրերի աղեխարշ ձայները. «Տե՛ր Բարթող, փե՛ր Բարթող, մեր մարդաշ մանուկները հոգի կբաղեն, հասի՛ր, մեր ցամբած ծիծերուն մեջ կաթ չմնաց, կործքերնիս փախարակի պես հարթեցավ, հասի՛ր, հասի՛ր...»

Ներսիս սուրմունք, հեփո հայհուլներ, ավելի բիրտ՝ ռոնումներ, կմախքներ՝ խնդացող չար դեմքով, կոճեր, ավերակներ, անոնց վրա պառավ կիներ՝ թներինն քահանային ցցած սպառնական: Կրկին դիակներ փոսերու մեջ՝ ցուցամարերնին քահանային վրա ուղղած» /454/:

Այս պարկերներից քահանան այլևս անկարող է ազատվել: Դրանք, իբրեւ կեցության կերպ, նրա հավերժական ուղեկիցներն են, ու այլևս փեսիլներ չեն: Դրանք իրական կյանքն են, ու թեև Նավարքը չի մեռել կրոնի մարդու մեջ ու երբեք չի մեռնելու, բայց իրական այդ պարկերները նրան արդեն Ոճի կապարելու վճռին են բերում: Այդ վճիռը նրա՝ արդեն Պարթին պարբաստ լինելու վկայությունն է նաև: Նա գողանում է խնուսի դիմապարկերի արծաթե շրջանակը, որովհետև հասարակ էր որոշել, որ «Զայն հալեցնելով պիտի ծախսեւ եւ դրամը պիտի բաժնեւ աղքատներուն »: Սակայն այս նպատակն էլ արդարացում չէ: Զոյկությունը հոգեբանական շար համոզիչ լուծում է գրել: Նավարավոր մարդու մեջ երբեք վերջնականապես չի մեռնում Նավարքը: Միտքի զգացողությունը միտք է թելադրում. Ոճի միշտ էլ Ոճի է, իսկ Պարթի՞ր՝ անխուսափելի: Ահա թե ինչու միանգամայն համոզիչ է թվում գրողի սրելոծած պարկերը, որ փեսնում են եկեղեցի մրած հավարացյալ պառավները. «Կրոնքին մարդը պարապին մեջ մորուքը դե-

պի վեր, գլուխն ետին հակած, մեղմորեն կճոճվեր, ջահակալին կեռնն կախված ու ուսնն ձգված պարկին մեջն արծաթե շրջանակին ցցված լեզվակը կփայլարակեր /455/:

Ու արդեն կարևոր չէ, թե քահանան ի՞նքն է ինքնասպան եղել, թե՛ պարահարի կամ անզգուշության գոհ է: Նա ոչ մի պահ չգրավ հիմնավոր արդարացում, ու ոչ մի պահի էլ չկարողացավ անսրարբեր մնալ ուրիշի ցավի հանդեպ: Այլասեր էր մարդը՝ ինչպես վայել է ճշմարիտ հոգևոր հովվին, ինչպես էր իր գերագույն Տերը՝ Նիսուր: Բայց գիտակցության մեջ՝ ոչ նրա չափ անմեղ եւ իր պարսքի մեջ միշտ հուղայականություն գրավ իր Տիրոջ հանդեպ: Եւ ինչպես մարդիկ իրենց Տիրոջ մարդեղեն կերպարանքի մեջ չկարողացան փնտնել նրա աստվածայնությունը, այնպես էլ փեր Բարթողի մեջ նրա հոգը չփնտնեց իր իրավունքն ու փառասլացին, չփնտնեց քահանային, այլ չքահանային:

«Բ.-ի բոլոր սոված բերանները հրճվանքով ըսին այն օրը.

Վերջին թախնչին... չքահանան...

Ու մահամերձներն իսկ աստիճան արդար դարաստանը երգեցին...»:

Տ. Չոկյուրյանը մի շարք այլ գործերում եւս անդրադարձել է 1894-96 թթ. դեպքերին: Դրանցում ներկայացված են եւ՝ խիզախումներ ու անկուրբում ոգի («Նարսին վրեժը», «Լուռ հերոսը»), եւ՝ ոգու խեղճություն ու ոչնչացված կամք («Տկարին իրավունքը»), եւ՝ լուռ ու արքայատուր նվիրում («Կաղնուրին գոհը»), սակայն, կարծում եմ, դրանցում գրողի ճշմարիտ ձիրքը մեծ ծավալումներ չունի: Մանավանդ, որ նմանապիպ թեմաներով շարերն էին գրում: «Նարսին վրեժը» գործի դիպաշարը, օրինակ, շատ է հիշեցնում Թումանյանի «Մեքի» պոեմը, «Լուռ հերոսը» մոտ է Զարդարյանի «Ցեղին գավակը» պատմվածքին եւ այլն: Դրանցում հոգեբանական բացահայտումներն էլ մեծ փուլ չեն գրավում: Մինչդեռ վերը բնութագրված գործերում, կարծում եմ գրողը, ի տարբերություն շարերի, չի բավականացել թուրքական վայրագությունները պարկերեղով: Նա ձգարել է ներակայացնել ոչ միայն արեւմտիկ իր կործանարար դրսևորումներով, այլև դրա բերած հոգեբանական ձեռնադրումների հետևանքները, որոնք հաճախ ավելի փնտնական ու ծանր են, քան ավերն ու սպանդը: Եւ հաջողել է:

ՀԱՂԱՌՈՐԴԻՈՒՄՆԵՐ

ՏԱՐՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նայ ժողովուրդը հեռավոր անցյալից ամենագոր մշակույթի հեղ քերել, կարարել-լագործել ու մեզ է հասցրել հնագույն դպրոցաշինության և հայ անհարի դաստիարակության հեղ կապված պարմական հիշարժան րեղեկություններ: 301 թ. քրիստոնեությունը Նայասարանում հռչակվեց պերական կրոն. անհրաժեշտ էր ժողովրդին հաղորդակից դարձնել քրիստոնեական վարդապետությանն ու բարոյագիտությանը, ձևավորել մշակութային արժեհամակարգ: Նոր կրոնի փրկագործության ողջ խորհուրդն առավել մարչելի դարձնելու համար հարկավոր էր ունենալ քրիստոնեական ազգային հիմնական դաստիարակություն: Նագարամյակների ընթացքում հայ հեթանոս քուրմերն սրեղծել էին դաստիարակության հզոր համակարգ և ժողովրդին կրթել այդ սկզբունքներով: Քրիստոնեության արարածումից հեղո Նայոց աշխարհի լցվեց հույն և ասորի քարոզիչներով և ուսուցիչներով: Լուսավորչահիմն առաջին դպրոցները պարասպում էին եկեղեցական քարոզիչներ՝ օրար լեզվով, օրար մարծողությամբ և հոգեբանությամբ: Չարյաց փոքրագույնն էր դա. կրթությունն այլևս քուրմերի մենաշնորհի չէր: Ազաթանգեղոս պարմիչն այդ մասին գրում է. «Բագմութիւն մանկրոյ կարգեալ ի վերայ հաւարարին դարապերս, առաւել զազգս պրդագործ քրմոցն»¹: Նայ Եկեղեցու հայրերը, որոնց համար ազգային-քրիստոնեական դաստիարակության գործում չկային մանրութներ, րեսան և այն վրանգը, որ կարող էին քերել օրարալեզու դաստիարակությունն ու կրթությունը: Մեր իմաստուն նախնիներն այդ շրջանում սրիպված որդեգրեցին հելլենական դպրոցական և կրթական համակարգը՝ ուսումնարենչ երիարասարդներին ծանոթացնելով արեւմրյան լուսավորությանը և մշակույթին: Անկասկած այս քայլը որոշակի դեր կարարեց ոչ միայն ժողովրդի քրիստոնեական դաստիարակության և մշակույթի, այլև հայոց պերականության համար: Դաստիարակության այս ճանապարհով երիարասարդությունը մարենում էր հելլենականությունը: Նայ երիարասարդները՝ հեռավոր Աթենքում, Կ. Պոլսում և լուսավորության մյուս կենրոններում հին աշխարհի մշակույթը լուրացրած վերադառնում էին հայրենիք: Լեռն այս շրջանի մասին գրում է. «Բաղաբական կործան-

1 «Ազաթանգեղայ պարմութիւն Նայոց», Երևան, 1983, էջ 314:

ման փյափակների մեջ (խոսքը Արշակունյաց քաղաքական իշխանության կործանման մասին է - Տ. Ս.) կանգնում էր մի նոր հայություն, քաղաքականապես փկար ու հարուստացած, բայց, մտադրականապես անհամեմատ ուժեղ և բարձր, քան առաջ: Նեղենական կամ որ նույնն է՝ երոպական քաղաքակրթությունը, որքան նա կարող էր ամփոփուել քրիստոնեության մեջ, հասարակ հող նուստեց Ասիայի այս անհիշարար խորքերում, և Նայասարան դարձաւ միջնորդ Երոպայի և Ասիայի մեջ»²: Ունեցանք գերազանց ուսուցիչներ և գիտնականներ, որոնք պարիլ և փառք կարող էին բերել յուրաքանչյուր ժողովրդի: Նակառակ այս ամենին, Նայոց աշխարհում ծանրագույն ժամանակներ էին՝ ազգային դպրոցի և կրթության պակասի պարճառով: Օրար դպրոցի շրջանավարտների սովար մի սերնդի կողքին ժողովրդի լայն գանգվածն էր՝ գրկված ազգային դաստիարակության և քրիստոնեության էությունը կարարելապես յուրացնելու հնարավորությունից. Եկեղեցու և ժողովրդի օրարացման նախադրյալներ էին սրելով: Դժվարագույն այս կացությունը շարունակվեց մինչև Ե. դարի սկիզբը:

Ցեղային բնագոր պարմական բախտորոշ այդ օրերին իր ծոցից երկնեց Ս. Սահակին և Ս. Մեսրոպին. նրանք իրենց հանճարով և Աստծո օգնությամբ գրան սպեղանին՝ հայոց 36 աստվածաբուր քառերը, ապանովելով մեր ժողովրդի և Ս. Եկեղեցու հավիտենական հաղթական երթը: Մեծ ուսուցչակերն իր հանճարի յույսով քննում էր նաև հայոց դպրոցի ոսկեդարը, որ գալու էր: Առակաց գրքից իր թարգմանած՝ «Ճանաչել գիմաստություն և գիտար, իմանալ գրանս հանճարոյ, ի միար առնուլ գարդարություն ճշմարիտ» խորիմաստ նախադասությունը պարգամեց իր ժողովրդին: Նայոց աշխարհի մեծ և փոքր շենքում խանդավառությամբ ագնիլ մրցակցություն սկսվեց հայաշունչ դպրոցների բացման համար: Թերևս հենց այդ ժամանակ մեր առաջին ուսուցիչները համոզվեցին, որ ժողովրդին գենքից առավել անհրաժեշտ է՝ հոգևոր և ազգային ճիշտ դաստիարակությունը: Այս ճշմարտությունը ուղեկցեց մեզ ողջ պարմության ընթացքում: Ս. Սահակի և Ս. Մեսրոպի բացած առաջին դպրոցների օրինակը շղթայական փոխազդեցության ուժով վերածվեց դպրոցաբացման համազգային ագնիլ շարժման, որի կենտրոնարեղին Արարաբյան աշխարհն էր՝ իր Միածնաեջ Մայր Աթոռով: Նենց սկզբից բացառիկ այն համագործակցությունը, որ գոյություն ուներ Նայ Եկեղեցու և դպրոցի միջև, ժողովրդին պարրասարեց հոգևոր առաքինության, ազգային և հավաքական հերոսության, որ դարձավ պարգամ և ավանդ պարմական բոլոր ժամանակների համար: Նայ մանուկների հոգևոր և հայրենասիրական դաստիարակությունը կանխորոշեց ազգային առաջընթացի հերազա ուղիները: Ե. դարի յուսավորական ագնիլ շարժման հենց սկզբից դպրոցական գործում հարուստի և աղքատի հարց չորվեց: Ս. Սահակ Պարթև Նայրապերի Վարդան և Նմայակ թոռների, մեծահամբավ իշխանների և նախարարների գավակների կողքին նստում էին նաև շինականների գավակները՝ մոռանալով իրենց ընկերային ծագումը, կրթվում էին նույն պայմաններում: Կորյուն վարդապետն այդ մասին գրում է. «Որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Նայասարան աշխարհին յորդեալք և

2 **Լեո**, Պարմություն Արարաբղի հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1838 -1913 թթ., Թիֆլիս, 1914, էջ 32:

դրդեալք հասանելին ի բացեալ աղբիւրն գիւրթեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարաբեան գաւառին՝ ի կայս թագաւորացն եւ քահանայապետացն, բխեցին Նայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»³: Փառք ու պատիվ Նայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցուն, նրա ուսումնասեր հայրերին, որոնք, քաջ գիտենալով քրիստոնեական ռամկավարական ոգին, 1500 տարի առաջ այն կիրառեցին նաև հայոց նորաստեղծ դպրոցներում: 387 թվականին, երբ մեր Նայրենիքը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, իսկ 428-ին վերացրին նաև Նայոց քաղաքական իշխանությունը, Նայոց Եկեղեցին էր, որ առանց երկմտելու իր ուսերին առավ նաև Նայոց կորուստյալ քաղաքական իշխանության հոգսը՝ ուշադրության կենտրոնում պահելով հայ դպրոցի և մշակույթի զարգացման ու պահպանության խնդիրները: Ըստ Կորյուն վարդապետի՝ սպագա դպրոցներն ուսուցիչներով ապահովելու մտահոգությամբ հիմնադրվում են վանական նոր միաբանություններ. «Եւ դարձեալ բազում եւ անհամար գումղոս վանականաց եւ ի շէնս եւ յանշէնս... բնակեցուցեալ հասարակէր»⁴: Այս վանականներից շատերը դարձան նորարաց դպրոցների և հայացման ընթացքի մեջ զարմով մեր սրբազան Եկեղեցու ուսուցիչներ:

Առաջին ուսուցչապետների համար շատ կարևոր էր, որ սպագա ուսուցիչ-եկեղեցականները լինեին անբասիր, օրինակելի, ուսումնասեր, մարդասեր: Ս. Մահակ Պարթև Նայրապետին վերագրվող կանոններից մեկում ուշագրավ կերպ կա, որում ի մասնավորի ասվում է. «Զորեպիսկոպոս չկարգել, մանաւանդ գոսումնաբեացս, զի որ կամաւոր յուսմանէ՝ անկանի ի չարիս... վասն որոյ անընդհար պարտի պահել յարդարուն դպրոցս ի վանս և յայլ արժանաւոր տեղիս զի յուսաւորեացեն յուսով պատուիրանաց Աստուծոյ՝ զամենեսեան յուսաւորեացեն»⁵:

Սույն կանոնի բովանդակությունից նկատելի է նախանձախնդիր այն վերաբերմունքը, որ ունեցել են առաջին ուսուցիչները հայ դպրոցի և հայաշունչ դաստիարակության նկատմամբ: Կանոնը փակել է ճանապարհի բոլոր այն եկեղեցականների առջև, որոնք ուսումնալոյսաց են և չեն նպաստի հայ դպրոցի և հայաշունչ դաստիարակության գործին: Նայ մանկավարժական միտքը, հասկանալի պարճառներով, հիմնականում զարգացել է Նայ Եկեղեցու կամարների ներքո: Տակավին Դ. դարում Մեծն Ներսէս Նայրապետի (353-373 թթ.) հոգաժողովով Նայաստանում հիմնադրվեցին վանքեր, որտեղ վանականները պիտի զբաղվեին նաև մտավոր աշխատանքով: Տառերի գյուրդից հետո այս վանքերից շատերը փաստորեն դարձան հայաշունչ բարոգիչների և ուսուցիչների պատրաստման կենտրոններ: Մերօրյան դարաշրջանում հայ մանկավարժության մտահոգությունը մանուկներին քրիստոնեական բարեպաշտության և մարդասիրության գաղափարներով դաստիարակելն էր: Նայ մանուկին բարեպաշտ, ազնիվ, մարդասեր և կարարյալ տեսնելու մտահոգությամբ վարդապետ-ուսուցիչները, օրինակ վերցնելով Ս. Գրքից, պատգամում էին. «Մի՛ սպանաներ... Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ

3 Կորիւն, Վարդ Մաշտոցի, Երևան, 2005, էջ 59:

4 Անդ:

5 Ն. վրդ. Մելիք Թանգեան, Նայոց եկեղեցական իրաւունք, Շուշի, 1903, էջ 419. «Կանոնագիրք Նայոց», աշխ.՝ Վ. Նակոբյանի, Խ. Ա., Երևան, 1964, էջ 369-370:

յամենայն անձէ՛քումմէ՛, եւ յամենայն գօրութենէ՛քումմէ՛: Եւ եղիցին պարզամքս այսոքիկ գորս ես պարտուիրեմ քեզ ի սրբէ՛քում եւ յանձին քում: Եւ իմացուցես զայս որդւոց քոց»⁶: Ս. Գրքի լուսավոր ու համամարդկային այս գաղափարներն էին դրված հայ քրիստոնեական մանկավարժության հիմքում: Այսօր դժվար է հստակ ասել, թե մեր հեթանոս նախնիները սերունդների դաստիարակման հիմքում ինչ սկզբունքներ ունեին, որը կարող էր անհատին և հասարակությանը նպաստակամողել կարարելագործման: Նստակ է սակայն, որ հայ ժողովուրդը, երբ իր ազնիվ հոգին ու միտքը ջերմացրեց քրիստոնեական հավատքով, Եկեղեցու կամարների ներքո մարմին ու շունչ առած հայ դպրոցի գերխնդիրը դարձավ հայ մանկանց, բնականիքի, եկեղեցական ու հասարակական դաստիարակությունը՝ ուղեցույց ունենալով Տիրոջ պարգամբ. «Ամենայն ծառ բարի՛ պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՛ պտուղ չար առնէ: Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար պտուղ բարի առնել»⁷: Նայոց Եկեղեցին սերունդների դաստիարակության գործը Տերունական այս պարգամբով շարունակեց՝ հաստատելով համոզմամբ, որ այն կդառնա որոշիչ և առաջընթացի ուղենիշ, կենսաբան աղբյուր բնականական և ազգային հավաքական առաքինությունների, եկեղեցասիրության, հայրենասիրության, ինչու չէ՞ նաև նորահարաշ հերոսությունների: Նայ ժողովրդի բազմադարյա պարմությունից օրինակներ կարելի է բերել մանկանց և սերունդների ճիշդ դաստիարակության արդյունքը հանդիսացող այն հրաշքի, որ իմաստ ու փայլ է տվել հերոսական պարմական անցյալին:

Երբեմն հարցադրումներ են լինում՝ հազարամյա պարմական ճանապարհ անցած հայ դպրոցն ուսումնառության բնագրքի համար արդյոք ունեցե՞լ է կայուն և պարտադիր ծրագիր: Այս հարցադրմանը կարելի է միանշանակ դրական պատասխանել: Նայր Վարդան Նացունին, հենվելով Մովսես Կաղանկարվացու պարմության մեջ եղած փաստերի վրա, աներկբայորեն հաստատում է, որ Ս. Մեսրոպ Մաշտոցը մանուկների համար եւս մտաբերեց էր. նորաբաց հայկական դպրոցների համար ինքն անձամբ պարտաստեց հայոց այբուբենին համապատասխան փախարակներ և պարզ հեգարաններ, որոնք օգտագործում էին այբուբենի նախնական բնութեցման ժամանակ: Մաշտոցյան այս հեգարանները լրիվ յուրացնելուց հետո, հայ մանուկներն անցնում էին դասագրքերին⁸: Ղազար Փարպեցին հաստատում է, որ սահակ-մեսրոպյան դպրոցում իրենք մի բանի անգամ սերպում էին Կրակարանները և Մաղմոսները, ուսանում երաժշտություն, թվաբանություն: Այն որ հայկական նորաբաց դպրոցներն ուսումնական ծրագրեր ունեին՝ կասկած չի հարուցում: Ուսումնական ծրագրեր ունենալու օգտին է խոստում նաև այն փաստը, որ Ե. դարի արշալույսին, երբ հագիվ մի բանի փարի էր անցել հայ դպրոցների բացումից, առաջին շրջանավարտները հասարակությանը ներկայացան որպես գրագետ ու կազմակերպված սքանչելի սերունդ, մի իրողություն, որ կարող էր միմիայն ծրագրված ուսումնառության արդյունք լինել: Ահա շնորհաշար այդ աշակերտներից մի բանիսի անունները՝ Վարդան և Տմայակ Մամիկոնյաններ, Վահան Ամարունի, Նովսեփ երեց,

6 Բ. Օրինաց Զ. 4-7:

7 Մարթ. Է. 17-18:

8 Տե՛ս **Նայր Վարդան Նացունի**, Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 115:

Աբրահամ Խոստովանող, Անանիա եպիսկոպոս, Գինթ կամ Գնիթ եպիսկոպոս, Կորյուն, Մովսես, Մուշեղ, Սամուել, Ադան և շար ու շար վարդապետներ⁹:

Մեծ եւ Փոքր Նայքերում բացված դպրոցների ուսումնական ծրագրերում մեծ տեղ էր հարկացված մայրենի լեզվին: Օտար լեզուների ուսուցումը պարսպաղի կերպով կապարվում էր մայրենիի իմացության հիման վրա: Այս ուսումնական ծրագիրը կիրառվեց գրեթե ողջ միջնադարում:

Նայ դպրոցի վերրևթաց զարգացումը, դժբախտաբար, համաչափ չի եղել: Զաղաքական ծանր պայմաններն իրենց բացասական ազդեցությունն են թողել նաև հայ դպրոցի կանոնավոր զարգացման վրա: Ե. դարի առաջին կեսին հայ դպրոցական ու մշակութային արտասովոր բուռն զարգացման գաղափարական արդյունքը երևաց բնդամներ մի քանի տասնամյակ հետո՝ 451 թվականին, երբ մեր ժողովրդին պարսադրվեց «Վասն Նայրենյաց և վասն Տիսուսի» Ավարայր իջնել: Նակառակորդը չէր կարծում, որ կհանդիպի գաղափարապես պարբաստ ժողովրդի, որին Նայ Եկեղեցին և դպրոցն այդքան կարճ ժամանակում հասցրել էին հայրենասիրության և եկեղեցասիրության ավիշը ներարկել. «Յայսմ հասարոց գմեզ ոչ ոք կարէ խախտել՝ ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և ուառն հարուածք»¹⁰: Արմենական առաջին այս պարերագւր ավարտվեց 484 թվականին, երբ Վահան Մամիկոնյանն սրիպեց Պարսկաստանին՝ դադարեցնելու իր համար անհետանկար պարերագւր և համաձայնելու Նվարսակի դաշնագրին, որով ավարտվեց 30-ամյա պայքարը ռազմական ու գաղափարական բիրտ ուժի դեմ: Այս պայքարը, ծանրագույն փորձություններով հանդերձ, հայ ժողովրդին առավել կոփեց: Մեր ազգը ձեռք բերեց հոգեկան և այլ անգնահատելի արժեքներ, ի պահանջել հարկին՝ իմացյալ մահով, վրանգված Նայրենին և մեր սրբազան Եկեղեցին պաշտպանելու օտարի ուրնձգություններին: Ե. դարի երկար ու հոգեմաշ գոյամարտը սովորեցրեց, որ գալիք բոլոր դարերում սարսափելի չեն ոսոխները, եթե պահպանենք ռազմական ոգին, ազգային Եկեղեցին, դպրոցը, ինքնաբիպ և հարուստ մշակույթը: Այսօր արդեն վստահաբար կարող ենք հաստատել, որ ապարդյուն անցան հակառակորդների ջանքերը՝ ազգային ձուլման քաղաքականությունը, որն այնքան ջանադրաբար գործադրում էին մեր նկատմամբ բոլոր ժամանակներում: Այս բոլորի գաղտնիքը հավարարմության մեջ է՝ Նայրենիք, Եկեղեցի և Դպրոց երրորդությանը: Չնայած փորձություններին, իսկ երբեմն էլ անխուսափելի թվացող ազգային կորսությանը, երբեք անուշադրության չմարնվեց դպրոցական գործը, որը գրավականն էր հարապետման և ազգային մշակույթի զարգացման: Մարկավարտը, Ս. Մեսրոպի գործը համեմատելով գերմանական լուսավորիչներ Պիպինի և Վինֆրիդի հետ, գրում է. «Եթե նկարի ունենանք այն պայմանները, որոնցում Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը իրենց մարքի գործունեությամբ հոգևոր ու ժողովրդական ինքնագիտակցության բերեցին հայ ժողովրդին, և նրանց գործի հետ համեմատենք Դանայան այն պարգևը, որ Ֆրանկ Պիպինը

9 Այս մասին տնն Յով. վրդ. Միսրճեան, Սրբոյ Սահակայ Կաթողիկոսի և Մեսրոպայ վարդապետի ձեռնասուն և երիցագոյն աշակերտք, Վիեննա, 1902:

10 «Սրբոյ Տօրն մերոյ Եղիշէի վարդապետի մարենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 31:

նվիրեց գերմանական ժողովրդին՝ իր ձեռքում ունենալով քաղաքական և եկեղեցական ամեն միջոց, կրեսնենք, որ Պիպլինը և իր զինակից Վինֆրիդը խեղճ թգուկներ են երևում մարքի այս հսկաների համեմատությամբ: Մի ժողովուրդ, որ իր ծոցից ծնել է այսպիսի մարդիկ և նրանց հարգում է որպես իր դյուցազնի, անկարելի է, որ խապառ ջնջվի, քանի հեպևում է նրանց օրինակին»¹¹:

Զ-Է. դարերը քաղաքական և փոփոխական փոփոխություններից մեր ժողովրդին շատ քիչ դրական բան տվեցին: Երբ Նայասարան բաժանված էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, հայ ժողովրդի գլխին կախված էր ազգային ձուլման վտանգը: Նայ Եկեղեցին, որ ազգի հոգևոր և ֆիզիկական միասնականության պահապանն էր, չէր կարող լուռ ու կողմնակի դիրքով դերում լինել: Նարեկավոր էր գորակոչել ազգի առողջ ուժերը՝ խափանելու ազգակործան այն ծրագիրը, որի իրագործմանն այնքան կրքով լծվել էին դարի երկու հզոր պետությունները: Բյուզանդիային փանջում էր «հերձվածող» հայ ժողովրդի «դարձը», իսկ Պարսկաստանին՝ երբեմնի դաշնակցի կորուստը: Շատ մասնագետներ, ելակեր ունենալով Զ-Է. դարերի մայրենագրական սակավությունը նախորդ դարի հետ համեմատած, այն կարծիքն են հայտնել, թե Նայասարում այդ դարերը անկման ժամանակահատված էին, որովհետև ոսկեդարից հետո այս շրջանը կարելի է համարել ամուլ: Ուսումնասիրողները մասամբ իրավացի են. ճիշտ է՝ գրավոր մշակույթի բնագավառում նկատվում է հսկայական բաց, սակայն դա չի վերաբերում կրթական գործին: Նայ Եկեղեցին ուրբի հանեց մեր եռամեծ վարդապետներին, որոնք կոչված էին ոչ միայն պաշտպանելու մեր Եկեղեցին, այլև դաստիարակներն էին հայության, արթուն պահապանն ու պաշտպանը հայ դպրոցի, կենսագործողը ազգային հոգևոր մշակույթի: Նայ Եկեղեցին, ինչպես միշտ, Զ-Է. դարերում եւս, ազգային պետականության բացակայության պայմաններում ժողովրդին վերահաս վտանգից փրկելու համար վերադասավորեց իր ողջ գիտական միտքն ու աշխարհային ուժերը՝ ազգային դպրոցն ու ուսումնական համակարգը շարժման մեջ դնելու: Խնդիրը պարզ էր, պահանջը՝ միանշանակ՝ հարկավոր էր ժողովրդին ցույց տալ իր դեմ նյութիկ ազգային ձուլման վտանգի կործանարարությունը: Ինչպես, որ ինքը՝ հայ ժողովուրդը, մկրտվել ու վերածնվել է Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած Ս. Ավագանում և վերամկրտվել սահակ-մեսրոպյան լուսավորչալ դպրոցական ու մշակութային փառքում: Նայ Եկեղեցին ոչ միայն պահեց ինն դպրոցները, այլև հիշյալ ժամանակահատվածում հիմնադրվեցին կրթական նոր կենտրոններ Տարնում, Բագրեւանդում, Արշարունյաց և Սյունյաց աշխարհներում, ինչպես նաև Դվինում, Երուսաղեմում և Կոստանդնուպոլսում: Դպրոցական այս կենտրոնները ոչ փարբական դպրոցներ կարելի է համարել: Բախտորոշ այս ժամանակաշրջանում հայ դպրոցն իր առջև դրված խնդիրները պարզով հաղթահարեց՝ ապահովելով մանկանց հայեցի դաստիարակությունը, որով լավագույնս օգնեց Նայ Եկեղեցուն պահելու և ամրապնդելու ազգի քաղաքական և կրթական միասնականությունը, ազգային անաղարք դիմագիծն ու մարածելակերպը: Այդ շրջանում Նայոց Նայրենիքը և ժողովուրդը գտնվում էին

11 «Նայ ժողովրդի պարունություն», Երևան, 1975, էջ 327:

քաղաքական և կրոնական փառքեր ուղղություններ ունեցող պետությունների գերիշխանության փակ: Մշակութային և կրոնական ճնշումը են Արևելյան, են Արևմտյան Նախասլավոնում կապարվում էր ծրագրված կերպով:

Խոսելով Թ. դարի հայ դպրոցի մասին՝ նշենք, որ քաղաքական փոփոխություններից պայմանները շատ աննպաստ էին: Նախասլավոն գրելովում էր արաբական լծի փակ: Դժվարությամբ, բայց և այնպես կրթական գործը երկրում զարգանում էր: Հին դպրոցների կողքին, առանձին անհատ նվիրյալների գործունեության շնորհիվ, հիմնադրվում են մի քանի նոր դպրոցներ՝ Մաքենացվոց, Թեղեկյանց և Սևանա անապատները, որոնք փորձում են դարի վերջում հիմնադրված Տաթևի հոգևակալոր մենաստանի հետ միասին լուսավորության ջանք վառ պահել:

Թ. դարի կարևոր մի դեպք զգալի դեր է ունեցել հայ օրիորդների դաստիարակության գործում: Նայրնի է, որ հայ իրականության մեջ կուսանոցներ մենք ունեցել ենք միայն Ներսես Մեծ Նայրապետի (353-373) ժամանակ: Պապ թագավորի (369-373) հրամանով փակվեցին այդ կուսանոցները: Դարի առաջին քառորդում Աղվանից Վարագ-Տրդատ իշխանի դուստրը՝ գեղեցկուհի Շահանդուխտը, կնության է փոխվում Սյունիք: Ծանապարհին Տաթևի վանքի մոտ հարսանյաց խմբի վրա հարձակվում են այլազգիները: Շահանդուխտին ուղեկցողները (գրեթե բոլորը) սպանվում են: Շահանդուխտը, խուսափելով առևանգման վրանգից, մտնում է ձիուն և գահավիժում ձորը: Ֆիզիկապես անվնաս հայրնվելով ձորում, դրանում փնտրում է Աստուծո օգնությունը, որոշում է հենց նույն վայրում ապրել որպես միանձնուհի: Կարճ ժամանակ անց Շահանդուխտի համբավը փարածվում է, և նա շուրջն է հավաքում բազմաթիվ երիտասարդ աղջիկների: Շուրջ 30 փարի Շահանդուխտը անձանձրույթ ուսուցում է հայ օրիորդներին: Կանանց դաստիարակության և կրթության խնդրի լուծումը կարելի է համարել դարի հայ դպրոցի բացառիկ հաղթանակ: Կային գրագետ կանայք, բայց նրանք հիմնականում իշխանական փոխներից էին: Կանանց կրթության նկատմամբ մտահոգություն նկատվում է նաև Ժ. դարում: Բագրատունի Աշոտ Գ. Ողորմած թագավորի (953-977) կողակիցը՝ Խոսրովանուշ թագուհին, կառուցել փայլով Սանահին (957) և Նաղապար (967) վանքերը, բացառիկ հոգատարություն է ցուցաբերում, որ այդ վանքերը փխպար ուսումնական կենտրոններ դառնան: Բացի փոքրահասակ ասպետությունից, թագուհին հրավիրում է ժամանակի լավագույն վարդապետներին՝ ուսման մակարդակը ասպետելու: Վանական այս դպրոցի սաները ԺԱ-ԺԲ. դարերում մեծ հմտությամբ կազմակերպեցին և մյուս դպրոցների մասնակցությամբ պաշտպանեցին մեր Ս. Եկեղեցին օտար ուրվագծություններից:

ԺԱ. դարում Նայրապետական Աթոռը փոխադրվեց արևմուտք: Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսի (1065-1105) օրոք արդեն Կիլիկիայում բավական սրվար հայ բնակչություն կար: Վկայասեր Նայրապետը ջանք էր գործադրում՝ հայ մանկանց դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա փոխելու: Շուրջ չորս փաստանյակ լինելով հովվապետ՝ նա կարողացավ դպրոցական գործը այնքան կարարելագործել, որ Ներսես Շնորհալի Նայրապետը (1166-1176) Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսին բնորոշել է որպես «Երկրորդ Մեսրոպ»: Կիլիկյան Նախասլավոնում դպրոցական և կրթական գործը

նկարելիորեն ընդարձակվում և կայարելագործվում էր: ԺԱ-ԺԳ. դարերում Կիլիկիայում բացվում են հասարակական և մասնավոր դպրոցներ: Նավահաբար այդ շրջանում հայ երեխաներին դպրոց ընդունելիս երբեմն պարտադրվում էին օրինախախտումներ, որի համար Սմբար Սպարապետը իր Դապաստանագրքում օրինազանցներին զգուշացնում է՝ նախնական կամ քաղաքական դպրոցում ուսումնառությունը բացառապես ձրի և բոլորին մարտնչելի պարք է լինի. «Կու հրամայե՛ օրէնքս, որ բնաւ վարդապետ վարձ չառնու վասն գրոց կարդալոյ կամ այլ գիտութեան եկեղեցոյ ուսմանց, իսկի չէ պարեհ վարձ առնուլ եւ ապա ուսուցանել: Ապա կու հրամայե՛ օրէնքս գորբերն եւ գրառապետքն սրածել եւ խնամել եւ անուշացնել ի գործ, որ շարք դիմեն ու գան ի յուսումն»¹²:

ԺԶ-ԺԴ. դարերում Կիլիկիայի Նայաստանում դպրոցական կենտրոնները, ինչպես Նայր Դևոնդ Ալիշանն է հաստատում, հիմնականում կենտրոնացված էին Սև լեռան շրջակայքում: Լևոն Գ. թագավորը (1270-1289) հսկայական ներդրում ունի նոր դպրոցների հիմնադրման և իռավանավորման գործում: Այդ դարերում, առավելապես Կիլիկիայի հայկական դպրոցներում, մեծ կարևորություն է փրվում փիլիսոփայության, պրամաբանության, աստվածաբանության, ճարտասանության, քերականության, աստղաբաշխության և այլ գիտությունների զարգացմանը:

ԺԳ. դարում Գլաձորի համալսարանը գրնվում էր իր զարգացման բարձրակետում: Ուսումնասիրողներից շարերը (Լ. Խաչիկյան, Ա. Մովսիսյան, Ա. Ավերիսյան, Կ. Սարաֆյան) միջնադարյան մեր այս համալսարանն իր ուսումնական ծրագրով համեմատել են Նոմի, Փարիզի համալսարանների հետ, որոնց հիմնադրության թվականները գրեթե նույնն են: Գլաձորը, ըստ այդ ուսումնասիրողների, առավել ազգային էր, քանի որ դասավանդման լեզուն հայերենն էր: Գլաձորում հայոց լեզվի կարաբայալ իմացությունից հետո էին միայն ուսանում օտար լեզուներ: Մինչդեռ ողջ միջնադարում եւրոպական համալսարաններում ուսուցման լեզուն բացառապես եղել է լատիներենը:

ԺԴ. դարից հետո եւ Կիլիկիայում, եւ Մեծ ու Փոքր Նայքերում քաղաքական անկայաստ պայմանների պարտադրով դպրոցական և մշակութային գործը շարք է հետադիմում: Նայ եկեղեցականները նախորդ դարերում ուսուցման հրաշալի համակարգ էին ստեղծել, ԺԶ. դարում, նույնիսկ ԺԷ. դարի սկզբներին դպրոցական նախկին լավագույն ավանդույթները մոռացվել էին: Ըստ Առաքել վրդ. Դավրիժեցի պարմիչի՝ «Տգիտութեամբ խաղանացեալ եւ կորդացեալ էր ազգս Նայոց եւ ոչ միայն ոչ ընթերնութիւն, այլ եւ ոչ գգիրս գիտէին, եւ ոչ գորութիւնս գրոց, վասն զի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան, եւ իբրեւ զկոճեղս փայտից անկել յանկեան որք՝ լցեալ հողով եւ մոխրով»¹³: Այդ դժբախտություններից հավանաբար ոչ մեկը այնքան ողբերգական և ցավալի չէր, որքան այն, որ արդեն մեկ հազարամյակից ավելի գիր, դպրոց և ծաղկուն մշակույթ ունեցող ժողովուրդը ԺԶ. դարում դարձել էր ազգովին անգրագետ: Բարեբախտաբար, նման փառք շրջաններ շարք են եղել: Անեկանելի թվացող այս շրջանում եւս Ե. դարի օրինակով փայլաբանվում է հայկական ցեղային միտքը, և արդեն ԺԷ. դարի կեսերին մի

12 «Նայ ժողովրդի պարմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 789:

13 **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պարմութեանց, Երևան, 1990, էջ 219:

քանի անհապ եկեղեցականներ՝ Սարգիս եպիսկոպոս, Կիրակոս քահանան, Պողոս և Մովսես վարդապետները համախմբվելով, նորից վառում են լուսավորության ջահը, և 1610 թվականին ոչ միայն հիմնում են Սյունյաց Մեծ անապատը, այլև որոշ ժամանակ անց այդ անապատի սաները փասնյակ դպրոցներ են հիմնում Հայաստանի փոքրեր շրջաններում:

Ուշագրավ է, որ ԺԷ. դարի սկզբին Մովսես Տաթևացի և Պողոս վարդապետների հոգածությամբ և ջանքերով մանուկների համար նախակրթարաններ են բացվում Հայաստանի մի շարք վայրերում՝ Աստապատում, Ագուլիսում, Շոթթթում: Այս մեծ եկեղեցականները մտադրված էին հայ օրիորդների դաստիարակության խնդրով: Նրանք օրիորդաց դպրոցներ են հիմնադրում Կարբիում, Նախճորում, Շնհերում և այլ վայրերում, որոնք մեծ հաջողությամբ էին գործում¹⁴:

Դպրոցական գործը ԺԷ-ԺԹ. դարերում նոր բարձունքի է հասնում: Մեծ Անապատի օրինակով, նրա սաները, միշտ հեղափոխական ուսման գործին, դպրոցներ են բացում՝ Անանիա առաքյալի անապատը, Երևանում Նովիանովանքը, որը Փիլիպպոս Կաթողիկոսի (1633-1655) հրամանով, մտադրապես 1640 թ. փոխադրվում է Ս. Էջմիածին: Մեծ Անապատի ճյուղավորման արդյունք են Սևանի, Տանձատափի, Լիմ և Կրուց անապատների դպրոցները: Այս դպրոցների հիմքի վրա, Ամրդուլու դպրոցի նշանավոր շրջանավարտ Նովիանոս Կոյուր վարդապետը (հեղափոխում՝ Կ. Պոլսի Պապրիարք), Պոլսի Սկյուրար հայաշատ թաղամասում 1719 թ. հիմնադրում է նոր դպրոց, որ ծաղկում ապրելով Նակոբ Նալյան (1741-1764) և Զաքարիա (1768-1790) պապրիարքների ժամանակ, 1790 թվականին ծնունդ է տալիս Արմաշի դպրեվանքին, որի շրջանավարտներն զգալի փառք են բերել Հայ Եկեղեցուն և մշակույթին: Այս նույն ժամանակահատվածում դպրոցական գործը յուրովի ծաղկում է ապրում Նոր Զուղայում: Խաչատուր վրդ. Կեսարացին, որ նույնպես Մեծ անապատի սաներից էր, Նոր Զուղա վերադառնալով՝ հիմնում է դպրոց: Եռամեծ այս վարդապետը, օգտվելով Նոր Զուղայի փոքրահասակ անապատներից, բնագործակում է դպրոցի աշակերտների քանակը և ավանդվող առարկաների թիվը: Քանի որ պարսկահայ գաղութը մեծ կապեր ուներ Երուսալեմի, Նուրկաստանի, Հայաստանի և այլ երկրների հետ, ավանդական առարկաներից բացի այս դպրոցում ուսուցում էին փոստապետություն, հաշվողական առարկաներ, գիտելիքներ չափերի և կշիռների մասին: Այս դպրոցի շրջանավարտները ոչ միայն լավ եկեղեցականներ էին, ինչպեսիք էին Նակոբ Դ. Զուղայեցի (1655-1680), Ալեքսանդր Զուղայեցի (1706-1714), Աստվածատուր Ա. Համադանցի (1745-1725) կաթողիկոսները, այլ նաև՝ գիտնական-վարդապետներ: Նոր Զուղայի դպրոցը ուսումնական ծրագրում ուներ այնպիսի առարկաներ, որոնք օգնում էին շրջանավարտ առարկաներին միջազգային առարկում հաջողությամբ մրցակցելու երոպացի վաճառականների հետ:

Վանական և բարձրագույն կարգի դպրոցներին զուգընթաց Հայաստանում և արտերկրում հիշարակվում են նաև փոքրահասակ կամ նախակրթական դպրոցներ Ամի-

14 Այս մասին փնտ. Ն. Ներսես Աղիսեան, Մովսես Դ. Տաթևացի Հայոց Կաթողիկոսը և իր ժամանակը, Վիեննա, 1936:

թում, Նախայում, Կեսարիայում, Լվովում, Սուջավայում, Թոխայում, Մերասիայում և այլ վայրերում: Այս դպրոցների մի մասը եղել է երկսեռ, որով մեղմվել է հայ օրիորդների կրթության բնագավառում եղած բացը:

ԺԹ. դարի կեսերից կրթական գործը Նայասարանյայց Եկեղեցու միջոցով բարելավվում է՝ բարեփոխման ենթարկելով դպրոցական ծրագրերը: 1823 թ. Արևելյան Նայասարանն անցավ Ռուսաստանի գերիշխանության տակ: Յարական կառավարությունը, ընդունելով հանդերձ հայկական դպրոցի ինքնավարությունը Նայ Եկեղեցու հովանու ներքո, բացեիքաց ճնշում էր գործադրում՝ դպրոցական ծրագրերի իրագործումը սահմանափակելով փարբական կրթությամբ: Կառավարական ճնշումն ուներ մեկ նպատակ՝ հայ երեխաների առջև փակել բարձրագույն ուսումնական հաստատությունների դռները: Խստագույն հեղափոխումն այդ պայմաններում անգամ Նայ Եկեղեցին գրավ դպրոցական հարցի լուծման լավագույն եղանակը: Ծխական դպրոցները, որ գոյություն ունեին բոլոր համայնքներում, առանձնացվեցին առավել բարձր ուսումնական ծրագրեր ունեցող դպրոցներից: Վերջինները կոչվեցին «հոգևոր» դպրոցներ: ԺԹ. դարի վերջին, փաստորեն մենք ունեցանք երկու տիպի դպրոցներ՝ ծխական և «հոգևոր»: Վերջինի պիտակավորումը ցարական կառավարության՝ հայ դպրոցական գործի վերահսկումը սահմանափակելու միջոցներից էր: Այս դպրոցները գրկված էին ուսումնական ծրագրերից և բացառապես առաջնորդվում էին մանկավարժների նախաձեռնությամբ: 1866 թ. Պերճ Պռոշյանի ջանքերով Երևանում հիմնադրվում է Գայանյան իգական առաջին դպրոցը: Կարճ ժամանակ անց այս դպրոցի օրինակով իգական վարժարաններ են բացվում ամենուրեք: 1914-1915 ուսումնական տարում Անդրկովկասում կար մոտավորապես 400-ից ավելի եկեղեցական դպրոց, որոնցում պաշտոնավարում էր ավելի քան 1000 ուսուցիչ:

Արևմտյան Նայասարանում քիչ այլ ընթացք ունեցավ դպրոցական գործը: Մինչև 1869 թվականը Օսմանյան Թուրքիան գրավում էր հեղափոխության և փոփոխության ճիրաններում: 1869 թ. Թուրքիայում առաջին անգամ, Ֆրանսիայի լուսավորության օրենսդրության օրինակով, ընդունվեց դպրոցներին վերաբերող օրենք: Թուրքիայում ապրող փոքրամասնությունները դպրոցական գործում ունեին դարավոր փորձ և շարք բարձր էին թուրքերից: Նիշյալ կրթական օրենքի համաձայն՝ հայերը Թուրքիայում հիմնեցին «Նասարական կրթասիրաց ընկերություններ», որոնք պիտի զբաղվեին հայ դպրոցի և երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության գործերով: Արևմտյան Նայասարանում պարասխանաբար այս գործի առաջին նախաձեռնողները եղան Ներսես պարթևաբե Վարժապետյանը, Մինաս Զերագը, Ա. Արփիարյանը, Ն. Ասատուրը, Մ. Փոքրթուգալյանը և ուրիշներ: Դպրոցական օրենքի հրապարակումից 10 տարի անց՝ 1879 թվականին, Զապել Ասատուրը (Սիպի) հիմնադրեց «Ազգանվեր հայուհյաց ընկերություն»։ Կ. Պոլսում, հարկապես զավառներում այս կազմակերպությունը հայ օրիորդների համար բազմաթիվ դպրոցներ բացեց: Նույն թվականին մեկ այլ մեծ հայուհու՝ Սրբուհի Տյուսաբի ջանքերով Կ. Պոլսում հիմնադրվեց «Դպրոցասեր հայուհյաց ընկերությունը», որի խնդիրն էր հայ դպրոցների համար ուսուցիչների պատրաստումը: Արևմտյան Նայասարանում դպրոցական գործը զարգանում էր: 1915 թ. Արևմտյան Նայասարանում մեր

ժողովրդի նկատմամբ Թուրքիայի իրականացրած եղերագործությունը վերջ տվեց հայ դպրոցի գործունեությանն ընդհանրապես: Կորցնելով ողջ Արևմտյան Նայասարան՝ հայ ժողովուրդը 1918 թվականը թևակոխեց բզկված և հոշոկ: Արևմտահայության մնացորդացից մի մեծ հատված՝ շուրջ 350 հազար հայերի, ապաստան գտավ ափազափ այս հողակտրի վրա: Երկիրթուրքական ջարդարարները որոշել էին արևելահայությանը ես բնաջնջել: Նայ ժողովուրդը բռնկեցվելով, Սարդարապատ իջավ թուրք բռնակռիների դեմ՝ ապահովելով վճռական այն հաղթանակը, որին սպասում և երագում էինք 600 տարի շարունակ: Սարդարապատի փառավոր հաղթանակով ծնվեց Նայասարանի առաջին Նանրապետությունը, որի ընդամենը երկու տարվա գոյության ընթացքում կրկին մեծ տեղ տրվեց կրթությանը: Դժբախտաբար նորաստեղծ Նանրապետության կյանքը դեռ չէր բուրբել իր երկրորդ տարին, երբ հյուսիսից եկող վրանագր մահացու հարված հասցրեց՝ հաստատելով խորհրդային կարգեր:

Նայասարանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, դպրոցական գործը վերցվեց Եկեղեցուց: Սահմանադրության այդ կետի բովանդակությունը մոտավորապես հետևյալն էր՝ Եկեղեցին բաժանվում է պետությունից, դպրոցը՝ Եկեղեցուց: Այս վիճակը շարունակվեց շուրջ 70 տարի: Նայասարանում գործում էին մի քանի հարյուր տարրական և միջնակարգ դպրոցներ, որոնց աշակերտությունը գիտակցաբար հեռու էր պահվում Եկեղեցուց: Այս տասնամյակների ընթացքում Արևմտահայ դպրոցական գործը այլ ընթացք ունեցավ: Սեփական Նայրենիքից բռնի տեղահանվելուց հետո, հայության մնացած մասը, վերահաստատվելով մեր մոլորակի տարբեր մասերում, կրկին վերամիավորվելով, հիմնեց իր առաջին եկեղեցիներն ու դպրոցները: Աշխարհասփյուռ հայ ժողովուրդը, զգալով հայրենի հողի ու ջրի կարոտը, համախմբվել է Սուրբ Եկեղեցու և հայ դպրոցի շուրջը՝ ամուր պահելու մեր հավաքքը, ազգային անաղարտ դիմագիծը, արժանի կրողը և պահապանը լինելու նախնիներից մեզ ավանդված ծանրակշիռ, հայաշունչ մշակույթի և կորցրած ազգային իրավունքների, քանգի, ինչպես կասեր բազմավաստակ գրագետ, ուսուցիչ ու դաստիարակ Բյուզանդ Եղիայանը, «ազգային դպրոցի գոյությունը, մեր այսքան նեղ կացության մեջ, կարդարանայ առաելապես ասով, որ ան կը ծառայե, պետք է ծառայե ազգային նկարագրի յարարուման: Գիտուն Նայր ամեն դպրոցը կրնայ ելլել, բայց Նայ դպրոցին առաւելութիւնը այստեղ պիտի կայանայ, որ իր պարրաստարածը գիտուն բլլալով՝ առաւել պիտի բլլայ ազգին շահերուն պահանջած բարոյականի տեր անձը»¹⁵:

15 Բիւզանդ Եղիայան, Մերուղի մը դաստիարակութիւնը, Պէյրոս, 1962, էջ 204:

Տ. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԹՆՆ, ՆԱԿՈՒԲԱՆ

ՎԱՍԿՈՒՐԱԿԱՆԻ ԱՌԱՔԵԼԱՏԻՄՆ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ԺԱ. դարում Մեծ Նայքի Վասպուրական աշխարհում պարմիչ Մապրեոս Ուռհայեցու վկայությամբ կար 115 վանք ու եկեղեցի¹, իսկ ըստ Մմբար Գունսարամբլի՝ 400-ից ավելի², որոնք կառուցվել են ժամանակի ընթացքում Վասպուրականի իշխանների, Ս. Գրիգոր Լուսավորչի, առաքյալների ու հավաքավոր վասպուրականցիների կողմից: Յայսօր եկեղեցաշինության պարմության մեջ հայրնի չէ թե քա՞նի եկեղեցի են կառուցել առաքյալներն Նայասարանում քարոզչության ժամանակ, եւ կամ բաց հարց է, թե արդյոք Ս. առաքյալներն ընդհանրապես եկեղեցի կառուցե՞լ են, թե ոչ:

Ըստ ավանդության՝ Ս. Թադեոս ու Ս. Բարդուղիմեոս առաքյալները Նայասարանում քարոզչության ժամանակ անցել են նաեւ Մեծ Նայքի Վասպուրական նահագով եւ կառուցել եկեղեցիներ³: Ճիշդ է, այդ ժամանակ չկար ճարտարապետական որեւէ հորինվածք կամ եկեղեցու որեւէ փայ, ըստ որի կարողանային կառուցել եկեղեցիներ, բայց գիտենք, որ Ս. առաքյալները որեւէ փեղ քարոզելուց հետո իրենց աշակերտներից կամ այդպեղի մարդկանցից մեկին նշանակում էին որպես նորաստեղծ համայնքի պատասխանատու, հետեւաբար անհրաժեշտ էր շինություն, որպեսզի նոր կազմավորված համայնքի անդամներն այդպեղ հավաքվեին ճշմարիտ Աստծուն պաշտելու համար: Նրանք հավանաբար վկայարաններ էին կառուցում կամ քանդում էին հերթանոսական բազիլիկներն ու փաճարները եւ դրանց փեղում կանգնեցնում քրիստոնեական վկայարանները, որոնց վրա դարերի ընթացքում կառուցվում էին բազմապիսի ճարտարապետական հորինվածքով եկեղեցիներ. դրանք ըստ էության հիմնվել են Ս. առաքյալների կողմից:

Վասպուրական աշխարհում փասից ավելի եկեղեցիներ, ըստ ավանդության, կառուցել են Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալները: Իհարկե, այս առաքելահիմն եկեղեցիների ու վանքերի պարմական ճշմարտացիությունը հիմնված է միմիայն մեր Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սրբազան ավանդության վրա: Սպորեւ ներկայացնում ենք Վասպուրականի առաքելահիմն եկեղեցիների ու վանքերի նկարագրությունը:

Ալպարահի վանք. գտնվում է Վասպուրականի Աղբակ գավառի Առակ գյուղի մոտ: Բնական քարայրի մեջ է կառուցված, ճակարին դռնված են փարօրինակ ու անրե-

1 Տե՛ս Մապրեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 32:

2 Տե՛ս Մմբար Գունսարամբլ, Պարմություն, 1856, էջ 27-28:

3 Տե՛ս Մովսես Խորենացի, Պարմություն Նայոց, Երևան, 1968, էջ 169:

թեմնելի գրեր, րեղ-րեղ երեսում են փորված խաչեր: Այս վանքի հեր կապված մի շար հերաքրքիր ավանդություն է պահպանվել, որի ակունքը հասնում է մինչև Ս. Բարդուղիմեոսի քարոզությունը Նայասփանում: Ըստ ավանդության՝ այս քարայրում մի վիշապ օձ է ապրելիս եղել, որը փակել է գերի աղբյուրը ու գյուղի բնակչությանը գրկել խմելու ջրից: Գյուղացիները ամեն օր մի երեխա են բերել վիշապի մոտ, որ նա ուրի, եւ այդ ընթացքում նրանք կարողացել են ջուր վերցնել: Մի օր էլ մի կին իր միակ փոքրիկ աղջկան րանում էր վիշապի մոտ եւ ճանապարհին հանդիպում է Ս. Բարդուղիմեոս առաքյալին: Ս. առաքյալը, իմանալով վիշապի մասին, վերցնում է երեխային ու մօտենում քարայրին: Երբ վիշապը դուրս է գալիս, առաքյալը րեզով հարվածում ու սպանում է վիշապին:

Ներազայում, հավանաբար հենց առաջին դարում, այս քարայրում վանք են կառուցում: Յավոք սրբի այս վանքի մասին ուրիշ ոչ մի րեղեկություն չի պահպանվել⁴:

Ս. Ամենափրկիչ. մարտը գրնվում է Վասպուրականի Տոսպ գավառի Լեզք գյուղում՝ քարաժայռի վրա: Ըստ ավանդության՝ այս մարտը կառուցվել է այն վայրում, որրեղ Ատրեսարանի Շամիրամ թագուհին հայոց Արա Գեղեցիկ թագավորի մարմինն է դրել, որպեսզի հարալեզները լիզեն ու հարություն րան թագավորին: Այդ վայրում կառուցվել է մեհյան, որ քանդղ է Ս. Թադեոս առաքյալը եւ կառուցել Ս. Ամենափրկիչ մարտը⁵:

Առաքելոց Դար. եկեղեցին գրնվում է Վասպուրականի Գուկան գավառի Իշխանագոմ գյուղի արեմփյան կողմում՝ բլրի վրա: Ըստ ավանդության՝ եկեղեցին կառուցել է Ս. Թադեոս առաքյալը⁶:

Ասպարածին. վանք Վասպուրականի Տոսպ գավառի⁷ Ասպարածին գյուղի, կամ ինչպես Ն. Ոսկյանն է նշում Ջանիկ կամ Ճանիկ գյուղի մոտ⁸: Վանքը Վան քաղաքից մոտ 40 կմ հեռու է: Ունի սպիարակ քարերով կառուցված գմբեթավոր եկեղեցի: Ըստ ավանդության՝ Ասպարածին վանքի րեղը հնում մեհյան է եղել, որի առաջնորդները՝ Շիրակը, Զիրակը եւ Միրաքը եղբայրներ են եղել: Սրանք Ս. Թադեոսի քարոզությունից դարձի են գալիս եւ մկրվում, այնուհետքեւ քանդում են կոստյումը եւ րեղում հիմնում Ասպարածնի վանքը, որի առաջնորդներն են դառնում հենց իրենք: Ս. առաքյալը վանքի րաքածքում է անփոփում Ս. Տիրամոր գլխաշորը, որը բերել էր իր հեր: Վանքը կոչվել է նաեւ Ս. Ասքավածանի, Խաթուն Տիրամայր, Տիրամոր վանք անուններով⁹:

4 Տեն Սօս-Վանի, Վասպուրական մեր աշխարհ, Աթենք, 1938, էջ 95 (այսուհետքեւ՝ Սօս-Վանի):

5 Տեն անղ, էջ 45: Նմմ. Սք. Մելիք-Բախչյան, Նայոց պաշարամուկքային վայրերը, Երեան, 2009, էջ 15 (այսուհետքեւ՝ Սք. Մելիք-Բախչյան):

6 Իշխանագոմը մրնում է ներկայիս Նայոց ձոր գավառակի կազմի մեջ, գյուղը շար մոտիկ է Վանա լճին: Բ. Նարությունյան, Նայասփանի պարմության արվաս, մաս Ա., Երեան, 2005, էջ 42 (այսուհետքեւ՝ Բ. Նարությունյան): Նմմ. Սօս-Վանի, էջ 87:

7 Վան նահանգի համանուն գավառի Թիմար գավառակի Ասպարածին գյուղ: Ըստ րեղանունների քառարանի (Թ. Նակորյան, Սք. Մելիք-Բախչյան, Ն. Բարսեղյան, Նայասփանի եւ հարակից շրջանների րեղանունների քառարան, մաս Ե., Երեան, 2001, էջ 122 (այսուհետքեւ՝ Տեղանունների քառարան, Ե). Թիմար գավառակը պարմական Տոսպ գավառն է:

8 Ն. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա., Վիեննա, 1940, էջ 352 (այսուհետքեւ՝ Ն. Ոսկյան, Ա.):

9 Սք. Մելիք-Բախչյան, էջ 31:

Ս. Ասրվածածին. վանք Վասպուրականի Երվանդունիք գավառի Անգղ գյուղի մոտ, հողաբլուրի վրա՝ համանուն գետի ծառախիտ ափին: Նասարակ, փոքրիկ ու անշուք վանք է: Ունի երեք խորան. ավագ խորանը նվիրված է Ս. Ասրվածածին, աջակողմյանը՝ Ս. Գեորգին, իսկ ձախակողմյանը՝ Ս. Սյրեփանոսին, որից քիչ հեռու է գտնվում Նովհաննես Մկրտչին նվիրված փոքրիկ խորանը, որտեղից ամեն առավոտ ձեռք ու յուղ է ծորացել և ժողովրդի կողմից անվանվել է «Ասրվածածնի արքատուր»։ Վանքի միաբաններն այնքան են շահագործել այդ ձեռքը, որ աղբյուրը կամաց-կամաց չորացել է¹⁰:

Ըստ ավանդության այսպեղ են պահվել Ս. Գեղարդը, Տիրամոր քոյր և յուղի շիշը, որը Ս. Թադեոսը իր հետ բերել էր Նայասարան: Ավանդության համաձայն կառուցել է Ս. Թադեոս առաքյալը: Վանքը կոչվել է նաև Գաբենից Ս. Գեորգ, Չիթապուր վանք: Պահպանվել է նաև մի ուրիշ ավանդություն, ըստ որի վանքի հիմնադիրներն են եղել մի խումբ ճգնավորներ, որոնց օգնել է Ս. Գեորգ գորավարը՝ հալածելով դեռերին, որոնք փորձում էին խանգարել շինարարությանը¹¹:

Վանքի միաբան ԺԳ. դարի գրիչ Նովհաննես Աթիպարմադյանի շնորհիվ մեզ է հասել Ս. Ասրվածածին վանքի կոնդակը, ըստ որի վանքի հիմնադիր Ս. Թադեոս առաքյալը, Նայասարանում բարոզության ժամանակ անցնելով Վասպուրականով, հավանում է այս բնակավայրը: Սրա տեղում կուռք է եղել, և մարդիկ հավաքվելով երկրպագել են դրան, առաքյալը գիշերը աղոթքի ժամանակ Ս. Ասրվածածնից և Մանուկ Տիսուսից հայրնություն է ստանում քանդելու կուռքը և տեղում վանք կառուցելու: Առավոտյան առաքյալը ի կատար է ածում Ս. Տիրամոր հրամանը, մարդկանց դարձի է բերում, խորտակում է կուռքերն ու սկսում վանքի շինարարությունը, այսպեղ է ամփոփում մի լիքը շշով յուղ: Այս ամենը, ինքսկե, դուր չի գալիս դեռերին և նրանք փորձում են խանգարել վանքի կառուցմանը. ցերեկը վարպետները շինում էին, իսկ գիշերը, երբ բնում էին, դուրս էին գալիս դեռերն ու քանդում պատերը: Ս. առաքյալը Ս. Տիրամորից հրաման է ստանում մի խաչքար կանգնեցնել և վրան դնել յուղով լիք շիշ: Սա դառնում է քաճարի հիմքը և այդ օրվանից դեռերը չեն կարողանում քանդել պատերը: Նկրագայում այսպեղից աղբյուրի պես յուղ է դուրս եկել՝ բժշկելով հիվանդներին: Իսկ դեռերը վերածվել են սև ագռավների ու բնկել պատերի մոտ, և առաքյալի հրամանով գալիս են անգղները, կրցելով սև ագռավներին քանդում են գցում Սաչեն ջրվեժից, այսպեղից էլ առաջացել է գյուղի Անգղ անվանումը, իսկ վանքը ստանում է Անգղա Ս. Ասրվածածին անվանումը:

Մի շարք գեղեցիկ ավանդություն կապված է Ս. Գրիգոր Նարեկացու հետ: Երբ Նարեկացին ուխտի էր գնում Անգղա Ս. Ասրվածածին, ճանապարհին հանդիպում է վերքերի մեջ ծածկված մի ծերունու, որը խնդրում է իրեն շալակած քանկել վանք: Ս. Գրիգորը ծերունուն դնում է իր ուտերի վրա և քանդում մինչև վանք, որից հետո համաձայնում է նաև լիզել ծերունու վերքերը: Այս ամենից հետո ծերունին այլափոխվում է և Նարեկացուն գովելով աներևույթանում¹²:

10 **Գ. Շերենց,** Սրբավայրեր. Տեղագրություն Վասպուրականի-Վանա նահանգի գլխավոր եկեղեցեաց, Վանքից և ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 98 (այսուհետև՝ **Գ. Շերենց**):

11 **Տ. Ոսկեան,** Վասպուրական-Վանի վանքերը, մաս Գ., Վիեննա, 1947, էջ 748 (այսուհետև՝ **Տ. Ոսկեան, Գ.**):

12 Տե՛ս անոթ, էջ 749:

Ինչպես նշեցինք, բավական հարուստ ավանդություններ են պահպանվել վանքի մասին, բայց վանքի գործունեության մասին շատ քիչ բան է հայտնի: 1569 թ. և 1596 թ. այսպեղ արպագրվել են Ավերաբաններ: Այն ունեցել է աղյուսաշեն պարիսպ, բաղկացած է եղել մարտոխից, քաճարից և մի քանի այլ շինություններից: 1584 թ. Նովհաննես վրդ. Բրգությունը վերանորոգել է վանքը: Վանքն ունեցել է բնդարձակ հող, ծառասարան, ջրաղաց, մարգագետին: Ս. Ասրվածածինը Աղթամարի կաթողիկոսության իրավասության տակ է եղել: Ավերվել ու լքվել է 1895 թ. կոտորածների ժամանակ¹³:

Ս. Ասրվածածին. մարտո Վասպուրականի Երվանդունիք գավառում՝ Առասար լեռան վրա: Ըստ ավանդության՝ մարտո կառուցել է Ս. Թադեոս առաքյալը¹⁴:

Ս. Ասրվածածին. վանք Վասպուրականի Տոսպ գավառի Կենդանանց գյուղում: Ըստ ավանդության՝ վանքի հիմնադիրները Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալներն են: Վանքը գյուղի անունով կոչվել է նաև Կենդանակից Ս. Ասրվածածին: Ունի երկու խորան, որոնցից մեկը Ս. Թադեոսին է նվիրված, իսկ մյուսը՝ Վարդանանց պարերազմին մասնակցած Մուշեղ վարդապետին, որը պարերազմից վերադառնալիս այսպեղ է կնքել իր մահկանացուն: Վանքը ավերվել է 1651 թ. երկրաշարժից¹⁵:

Ս. Ասրվածածին (Կարմրավոր). վանք Վասպուրականի Տոսպ գավառի Շուշանց գյուղի մոտ՝ Վարագա և Ջիաթնուկ լեռների լանջին մի փոքրիկ հարթության վրա: Ավանդության համաձայն՝ վանքը կառուցել է Ս. Թադեոս առաքյալը: Ըստ այդմ՝ քաղաքության ժամանակ այսպեղով անցնելիս Ս. առաքյալին երևում է Ս. Ասրվածածինը և հրամայում է Կենդան վանք հիմնել: Վանքը կոչվում է նաև «Կարմրավոր», որովհետև Ասրվածածինը կարմրագետնի փառքով է երևացել Ս. Թադեոսին: Առաքյալը այս նուրակառուց վանքում է թողնում մի շիշ անուշաբույր յուղ, Ս. Գեղարդը, Տիրամոր քողը, որոնք իր հետ բերել էր Նայասարան:

Վանական համալիրի մեջ են մտնում մի եկեղեցի, մի գավիթ, 15 սենյակներ միաբանների և հյուրերի համար: Վանքը շրջապարված է պարիսպով: Եկեղեցին կառուցվել է անսրաշ քարերից: Երկու քառանկյունի ամբողջական և ութ կիսասյուների վրա բոլորում են պայքաձև կամարներ, որոնց վրա բարձրանում է կլոր գմբեթը՝ կոնաձև կաթողիկեով: Կողակը կիսաբոլոր է, ունի խաչկալ Ս. Ասրվածածնի պարկերով: Կողքի խորանները նվիրված են Ս. Նովհաննեսին և Ս. Գևորգին: Եկեղեցին լուսավորվում է մի քանի նեղ, փոքրիկ պատուհաններով: Գավիթը երկու ամբողջական և ութ կիսասյուններով հասարակ, առանց գմբեթի շենք է¹⁶:

Կարմրավորի Ս. Ասրվածածին վանքը երկու անգամ է վերանորոգվել. առաջինը 1617 թ. Միքայել և Մելքոն խոջաների ձեռքերով, իսկ երկրորդը՝ 1779 թ. վանքի առաջնորդ Բաղդասար վարդապետի ձեռքով: Վանքի պարիսպը վերանորոգել է Ղարասաֆարենց Նակոր աղան 1817 թ.¹⁷:

13 Սյր. Մելիք-Բախչյան, էջ 22:

14 Տե՛ս անդ, էջ 62:

15 Տե՛ս անդ, էջ 221:

16 Ն. Ոսկեան, Ա., էջ 237:

17 Տե՛ս անդ, էջ 241:

Միջնադարում վանքը եղել է հայ գրչության կենտրոններից մեկը: Ի. դարի սկզբներին վանքը կանգուն էր, ուներ գիշերօթիկ դպրոց ու որբանոց: 1915-1916 թթ. ավերվել ու լքվել է¹⁸:

Ս. Բարդուղիմեոս. վանք Վասպուրականի Ադրակ գավառում՝ համանուն գետի աջ ափին՝ արհեստական բարձր բլրի վրա: Կառուցված է Ս. Բարդուղիմեոսի նախապական վայրում՝ Արեփանոս քաղաքում: Վանքի կառուցման ժամանակի ու կառուցողի մասին մեր մարենագրության մեջ պահպանվել են մի քանի ավանդություններ: Պահպանվել է Արեփանոսում առաքյալի գործած հրաշքներից մեկի պատմությունը: «Արեփանոսում Ս. Բարդուղիմեոսը մի ծերունու է փեսնում, որը ողբում էր իր միակ գավակի մահվան պարծառով: Առաքյալի հրամանով երեխային փանում են գետի մոտ ու երեք անգամ «Տիսուս Քրիստոս» անունը փայով ջրով լվանում են, և փոքրիկը հարություն է առնում»¹⁹:

Վանքի կառուցման հետ կապված եւս երկու նշանավոր ավանդություն գոյություն ունի, ըստ դրանցից մեկի՝ վանքը կառուցել է հայոց Սանապրուկ թագավորը Ա-Բ. դարերում: Ս. Բարդուղիմեոսի նախապաշտոնից հետո թագավորը բորբոքությամբ հիվանդանում է և «Կաթնաղբյուրի» ջրով լվացվելով բժշկվում է, որպես շնորհակալություն, կառուցում է Ս. Բարդուղիմեոսի վանքը: Մյուս ավանդության համաձայն վանքը կառուցել է հայոց Տրդատ Գ. թագավորի որդին, որը նույապես բորբոքությունից մաքրվելուց հետո Ս. Բարդուղիմեոսի գերեզմանի վրա կառուցում է այս վանքը Դ. դարում, որի բացմանն այցելում են Ս. Տրդատ թագավորը և Ս. Գրիգոր Լուսավորիչը²⁰:

Վանքը թե՛ դրսից, թե՛ ներսից շար գեղեցիկ է: «Երեք կողմից շրջապարված է աշտարակավոր պարիսպներով, փաճարը կառուցված է սրբապաշ բարերով, սյունազարդ է, ունի քանդակներ»²¹: Եկեղեցին ներքուստ բաղկացած է երեք մասից, ավագ Սեղան, որը մեջտեղում է, աջակողմյանը Նազարապետի սեղանն է, իսկ ձախ կողմում փոքրիկ մարտու է, որտեղ գրնվում է Ս. Բարդուղիմեոսի գերեզմանը: Տաճարը հասարակված է վեց կյուրակ քարե սյուների վրա: Մեջտեղը սյուն ու հենարան չկա: Եկեղեցու ներքին շրջապարը զարդարում են այն վեց սյուները, որոնց վերեի գլուխները հրաշակերպ արվեստով բարձրանում ու խառնվում են հսկա կամարին: Նույն փխյի կամար է կազմում նաև փաճարի առասպաղը: Այս երկու կամարների կենտրոնական ուղղությամբ դեպի դուրս շինված են միջին մեծությամբ երկու կաթողիկեններ առանց զանգակարան, որոնցից համեմատաբար ավելի մեծը 1877-1878թթ. վերանորոգել է Եղիազար վանահայրը: Վանքը շրջապարված է պարիսպներով ու աշտարակներով, ներսում ունի միաբնակության ու հյուրերի համար սենյակներ²²:

Եկեղեցու դռան վրա պարկերված է Նայր Աստծո պարկերը ըստ Եզեկիել մարգարեի փեսիլքի, իսկ մի քիչ ներքև փորագրված է Ս. Բարդուղիմեոս առաքյալը՝ փեցը ձեռ-

18 Տե՛ս Սյր. Մելիք-Բախչյան, էջ 220:

19 Սոս-Վանի, էջ 94:

20 Տե՛ս Ն. Ոսկեան, Գ., էջ 789:

21 Սյր. Մելիք-Բախչյան, էջ 81:

22 Տե՛ս Ն. Ոսկեան, Գ., էջ 786:

քին, որով սպանում է երեխաներ ու փոքր վիշապին: Սրանց վրա փորագրված են վանքը կառուցող չորս ճարպարապետների պատկերներն իրենց հասակով, որոնց մեջտեղում պատկերված է Ս. Նովիանին Մկրտչի գլուխը, որի երկու կողմերում կանգնած են բուրվառակիքներ²³:

Թեև Ս. Բարդուղիմեոս վանքը շարքի է, ցավոք, մեզ մինչև ժՂ. դար վանքի գործունեության մասին ոչինչ չի հասել: Մեր ունեցած տեղեկությունները սկսվում են ժՂ. դարից՝ ավերարանների, հայսմավորքների և այլ գրքերի հիշատակարանների շնորհիվ: Ս. Բարդուղիմեոսը եղել է Աղբակի թեմի եպիսկոպոսանիստ աթոռ:

Վանքում գրվել են հայսմավորքներ, ավերարաններ, «Շարակնոց», «Ոսկեփորիկ» և այլ գրքեր: Նաճախ փորձ է արվել թեմը միացնել ուրիշ թեմերին: 1647 թ. վանահայր Կիրակոս վարդապետը Վարագավանքի առաջնորդության հետ ստանձնել էր նաև Ս. Բարդուղիմեոսի վանահայրությունը, որը տեսել է երկու փարի, որից հետո վանքերի վանահայրերը առանձնանում են, ինչպես նաև 1843 թ. Նիկողայոս եպիսկոպոսը միաժամանակ Ս. Թադևի և Ս. Բարդուղիմեոսի վանքերի վանահայրն էր: 1715 թ. երկրաշարժից ավերվել է Ս. Բարդուղիմեոս վանքի գմբեթը: Աբրահամ Կրեպուցի Կաթողիկոսը Ս. Բարդուղիմեոսի համար Աստապարի վանքում եպիսկոպոս է ձեռնադրում:

1751 թ. Կիրակոս վարդապետի վանահայրության փարիներին վանքի աջ թևը վերանորոգվել է, որը վնասվել էր երկրաշարժից: Ս. Բարդուղիմեոսը 1897 թ. դարձյալ երկրաշարժից փոժել է, բանդվել է փաճարի պարը²⁴: «Ս. Բարդուղիմեոս վանքն ունեցել է շարք նվիրական սրբություններ. Ս. Բարդուղիմեոսի ծնոյրը, որը մի սնդուկի մեջ դրված թաղել են, և Ս. առաքյալի աջը»²⁵:

Ս. Բարդուղիմեոս վանքը հարուստ է եղել ոչ միայն ավանդություններով ու սրբություններով, այլ նաև նյութականով: Վասպուրականի հարուստ ու ժողովրդի կողմից սիրված վանքերից մեկն է եղել: Վանքն իր ենթակայության տակ է ունեցել գյուղեր, ագարակներ, հանդեր, արտեր, արտաբերողներ ու անտառներ: Որոշ ժամանակ վանքում վարժարան են բացել, որը 1915 թ. փակվել է: Չնայած վանքի նյութական ապահովությանը՝ այստեղ գիտությունը համեմատած Վասպուրականի մյուս վանքերի հետ չի զարգացել:

Բուրա Ս. Ասրվաձաձին. վանք Վասպուրականի Տրպարունիք գավառում: Վանքը շրջապարված է Շինական, Մանկանեզ և Ս. Մարգիս լեռներով: Ըստ ավանդության՝ վանքն առաքելաշեն է, բայց թե որ առաքյալն է կառուցել՝ հայտնի չէ: Վանական համալիրի մեջ են մտնում «Պահեստներ և օժանդակ շինություններ, իսկ վանքի շրջակայքում կա հայկական գերեզմանոց՝ իսաչքաբ-փապանաբարերով»²⁶:

Մասնագրության մեջ այս վանքի մասին ուրիշ ոչ մի տեղեկություն չի պահպանվել, միայն հայտնի է, որ Բուրա Ս. Ասրվաձաձին վանքն այժմ ավերված վիճակում է:

23 Տե՛ս Սոս-Վանի, էջ 93:

24 Տե՛ս Գ. Շերենց, էջ 157:

25 Ն. Ոսկեան, Գ., էջ 789:

26 Սրբ. Մելիք-Բախչյան, էջ 88:

Ս. Գևորգ (Ականից Ս. Գևորգ), վանք Վասպուրականի Աղիովիտ գավառում: Ավանդության համաձայն այս վանքը առաքյալների կողմից է կառուցվել²⁷: Այսպիսի դարեր շարունակ երկյուղածությամբ պահել են Ս. Գևորգ գորավարի մատուները:

Վանական համալիրի մեջ են մտնում Ս. Աստվածածին և Ս. Գևորգ եկեղեցիները: Ս. Գևորգ եկեղեցին միջնադարում եղել է կրոնական ու մշակութային կենտրոն, որպես 1441 թ. «Ճաշոց» է ընդօրինակվել, իսկ 1450 թ. «Անեղարան» և այլ ձեռագրեր²⁸: 1915 թ. ջարդերի ժամանակ վանքն ավերվել ու լքվել է:

Ս. Թ-աղե. վանք Վասպուրականի Արարազ գավառում՝ Ավարայրի դաշրի հյուսիս-սարենմրյան կողմում՝ Ալական լեռան փեշին²⁹: Ս. Թ-աղեն կառուցվել է հեթանոսական քաճարի քրեղում Ս. Թ-աղեոս առաքյալի ու Ս. Սանդուխար կույսի հիշարակին: «Վանքն անվանվել է Ս. Թ-աղեոս, որովհետև այսպեղ հայրնաբերվել են Ս. Թ-աղեոս առաքյալի մատուները»³⁰: Մատուները հայրնվել են Ե. դարում, որոնց վրա կառուցվել է սբբավայր, իսկ Թ. դարում կառուցվել է Ս. Թ-աղեի վանքը: Մակայն մինչև Ե. դարը այսպեղ մի ինչ-որ շինություն է եղել, որի մասին նշում է Զենոբ Գյակը: Դա հավանաբար հենց Ս. Թ-աղեոսի կողմից կառուցված վկայարանն է: Վանքը վերանորոգվել է մի քանի անգամ. 1247 թ., 1329 թ. և 1653 թ.:

Ս. Թադևի վանքը բաղկացած է կրկնակի փամբաներից, որոնց չորս կողմը կառուցված են միաբանների համար նախատեսված կացարաններ և ուրիշ շենքեր, որոնք շրջապարված են բրգաձև պարիսպներով: Տաճարի այժմյան հին բաժինը վերանորոգել է Զաքարիա եպիսկոպոսը: Նյութապիւն պարի վրայի արձանագրությունից պարզ է դառնում, որ այսպեղ է գրվում Ս. Թադեոսի շիրիմը, որը կառուցված է կապրագույն քարով: Տաճարի այդ հարվածն ունի խաչաձև կաթողիկե, երկու խորան, երկու սեղան, հինգ լուսամուկ: Անայուն գմբեթը հասարակված է կամարների վրա: Մեղանի վրա բարձրանում է քարաշեն, քանդակագարդ ու գմբեթագարդ խաչկալ: Մեղանի առջև գաղղարված է խորաքանդակ նկարներով ու արձանագրություններով: Գլխավոր դռան աջ կողմում պարկերված է Ս. Թադեոսը, իսկ ձախ կողմում՝ Ս. Բարդուղիմեոսը³¹:

Եկեղեցու հարավային խորանի փակ թաղված են Զաքարիա և Մինաս վարդապետները: Տին շենքին կից ԺԹ. դարում կառուցվել է նոր եկեղեցի, որը ձևով, կերպով և մեծությամբ նման է Ս. Էջմիածնի փաճարին: Ներսիս եկեղեցու շինարարությունը ամբողջությամբ չեն ավարտել. փաճարը դրսից փառահեղ է, իսկ ներսից՝ անշուք: Ամբողջ փաճարը գոյրիաձև, ժապավենանման քանդակներով է զարդարված, կառուցված է սպիտակ քարից: Եկեղեցին ունի 11 լուսամուկ, 2 սեղան և 3 դուռ, իսկ գմբեթն ունի 8 լուսամուկ: Արևմտյան դռան ճակարը զարդարված է քանդակներով, որոնց վրա պարսկերեն արձանագրություն է գրված: Եկեղեցու արևելյան, արևմտյան ու հյուսիսային պատերը զարդարված են նկարաքանդակներով ու արձանագրություններով³²:

27 Տե՛ս Գ. Շերենգ, էջ 86:

28 Տե՛ս **Ն. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Բ., Վիեննա, 1942, էջ 389 (այսուհետև՝ **Ն. Ոսկեան, Բ.**):

29 Տե՛ս Սյր. Մելիք-Բախշյան, էջ 148:

30 Ն. Ոսկեան, Բ., էջ 448:

31 Տե՛ս անդ, էջ 460:

32 Տե՛ս Ն. Ռսկեան, Բ., էջ 462:

Ս. Թադե վանքի արևմտյան կողմում՝ պարիսպից դուրս, հարույժ շրջապարի մեջ են գտնվում փրկեսական պարագանների բակը, ձիթահանքն ու գոմերը: Բոլոր շինությունները կավաքարով ու հասարակ շաղախով են կառուցված, իսկ խցերի մեծ մասը թաղակալ է: Վանքի մեջ էին մտնում Ս. Աստվածածին ու Ս. Թադե եկեղեցիները: Վերջինի անունով էլ կոչվել է նաև թեմը՝ Թադեոսի վիճակը³³: Այս վանքը հավանաբար Ամարունիներն են կառուցել, որովհետև Արարազի Ամարունիների կալվածքն էր եւ «այսպեղ էր նստում Ամարունյաց Գրիգոր եպիսկոպոսը»³⁴: Կոստանդին Կաթողիկոսի կոնդակով Ս. Թադեի վանքը սրացել է իր շրջակա գյուղերը: Վանքի նշանավոր առաջնորդներից է Զաքարիան, որ շար լավ հարաբերությունների մեջ էր իր ժամանակի բոլոր նշանավոր անձերի ու գործիչների հետ: Զաքարիան կարողանում է վերանորոգել 1321 թ. երկրաշարժից ավերված վանքը: Վանքի նշանավոր վանահայրերից է Պողոս եպիսկոպոսը: 1653 թ. վերանորոգվել է վանքը, որի կառուցումից հետո նույն ժամանակ կառուցվում են նաև ժամբուր, Սանդուխտ կույսի վկայարանն ու Նահապետի անունով եկեղեցի: Իսահակ Մակվիցու վանահայրության ժամանակ նորոգում են վանքի պարիսպը: Վանքն ունեցել է քարածքներ ու վարելահողեր³⁵:

Վանահայր Նիկողայոս Կարբեցին միացրել է Ս. Բարդուղիմեոսի եւ Ս. Թադեոսի թեմերը: Ս. Թադեի թեմը վերջնականապես մի քանի անհաջող փորձերից հետո միացվում է Արարազականի թեմին, որի առաջնորդարանը Թավրիզում է: Ս. Թադեի վանքում սրբորեն պահել են Ս. Վարդան Մամիկոնյանի ճկույթը:

Միջին դարերում վանքը եղել է հայ գրչության նշանավոր կենտրոններից մեկը, այսպեղ գրվել են ավերարաններ, քարեր բնույթի մեկնություններ, այլ ձեռագրեր: Նայ իրականության մեջ Արարազի աթոռը՝ Ս. Թադեի վանքը, մեծ հեղինակություն է ունեցել եւ միջնադարում Կաթողիկոս ընտրելիս միշտ հաշվի էին առել Արարազի աթոռակալի կարծիքը. այն չորս աթոռներից մեկն էր, որի եպիսկոպոսի ձայնը պարտադիր էր Կաթողիկոս ընտրելիս:

Այժմ վանքը գտնվում է Իրանի Իսլամական Նախապետության քարածքում, բարվոք վիճակում է, մտնում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Արարազականի թեմի մեջ:

Ս. Խաչ. վանք Վասպուրականի Տոսպ գավառում, Վան քաղաքից դեպի հարավ-արևելք Կուռուբաշ գյուղի մոտ գտնվող բլրի գագաթին: Այսպեղ կա մի աղբյուր, որից արհեստական լճակ է առաջացել, որը կրում է Ս. Գայանե կույսի անունը: Ըստ ավանդության՝ սրբուհին շար է սիրել նստել այս աղբյուրի կողքին³⁶: Ինչպես փեսմում ենք, այս վանքը արդեն Դ. դարում գոյություն ուներ եւ դեռ ավելին, Ս. Խաչի «արմարները» հասնում են մինչև Ա. դար: Վանքը կառուցել է Ս. Թադեոս առաքյալը, սակայն վանքի անունը ոչ թե Ս. Խաչ է եղել, այլ Ս. Աստվածածին, իսկ Ս. Խաչ անվանվել է այն ժամա-

33 Տե՛ս անդ. էջ 468:

34 **Ռ. Աղսպան,** Ս. Թադեի վանքը, Ս. Էջմիածին, 1994, էջ 23-26:

35 **M. Polytechnic, Documents of Armenian Architecture,** S. Thade vank, № 4, 1974.

36 Տե՛ս **Ե. Լալայան,** Վասպուրականի նշանավոր վանքեր, Ա. պրակ, Թիֆլիս, 1912, էջ 69 (այսուհետև՝ **Ե. Լալայան**):

նակ, երբ Տոբիսիմյանց կույսերը հանգրվանել են այսպեղ ևս քեղում են թողել իրենց մոտ եղած Խաչավալարի մասունքից մի փոքրիկ կտոր³⁷:

Վանքը բաղկացած է մի եկեղեցուց, մի մաքրոցից և մի գավիթից: Եկեղեցին շինված է քաշած քարերով, անսյուն է, միայն երկու առաջացած որմնասյուն ունի, որոնց վրա բոլորվում են կիսաբոլոր կամարներ, որ իրենց վրա պահում են ութանկյունի փոքրիկ գմբեթը: Ունի կիսաբոլոր ու կամարակապ կոզակ, որն իր կողքերին ունի մեկական խորաններ: Եկեղեցին ունի արևմտյան կողմից մի դուռ, երկու նեղ ու երկար պատուհան, իսկ գմբեթն ունի ընդհամենը չորս պատուհան: Եկեղեցու երկարությունը 9 մ է, լայնությունը 5.5 մ է, իսկ բարձրությունը՝ 12 մ: Եկեղեցու հարավային կողմում է գտնվում 9 մ երկարությամբ և 3 մ լայնությամբ թաղակապ, անսյուն Ս. Գեորգ մաքրոց, որի միակ պայքաձևն կամարով զարդարված արևմտյան դուռը բացվում է գավիթի մեջ: Ս. Գեորգ մաքրոց կառուցվել է 1614 թ.³⁸: Դռան վրա կա մի արձանագրություն, որից երևում է, որ այսպեղ կառուցվել է նաև Ս. Սանդուխտ անունով մի ուրիշ մաքրոց. «Ռ-ԿԳ. թիմ շինեցաւ Ս. Խաչս, Ս. Գեորգ, Ս. Սանդուխտ...»³⁹, սակայն այս մաքրոցի մասին քեղեկություն չի պահպանվել մեր մաքրեռագրության մեջ:

Ս. Խաչ վանքը պարսպապար է, ունի հյուրերի համար սենյակներ: Ունեցել է նաև մեծ կալվածքներ: Եկեղեցին վերանորոգվել է 1321 թ., 1709 թ., իսկ գավիթը՝ 1887 թ.: Ս. Խաչը ավերվել ու լքվել է 1915 թ.:

Ս. Խաչ (Քրմենից). վանք Վասպուրականի Բուժունիք գավառում⁴⁰ Քաբանա ձորի մոտ՝ Տիգրիսի աջ ափին: Ըստ ավանդության՝ Վասպուրականի ամենահին վանքերից է: Ս. Խաչ վանքի քեղում հեթանոսական բազին է եղել, որը քանդել են Ս. առաքյալները և քեղում կանգնեցրել փրկչական Ս. Խաչը, որից վանքը հաճախ անվանվել է Քրմենից Ս. Խաչ⁴¹:

Շիժաղաբեր Ս. Ասրվաձաձին. վանք Վասպուրականի Երվանդունիք գավառի Էրեմների գյուղի արևելյան կողմում՝ Խոշաբ գետի ձախ ափին⁴²: Վանքը հաճախ գյուղի անունով կոչվել է Էրեմների Ս. Ասրվաձաձին: Այն ունի շատ հին պարմություն և նրա ակունքները գալիս են դեռևս առաքելական շրջանից, սակայն վանքի կառուցման մասին ճշգրիտ քեղեկություն չկա: Ըստ ավանդության՝ կառուցել է Ս. Թադեոս առաքյալը Ա. դարում: Շինված է այն վայրում, ուր Տիրամայրը երևացել է Ս. Թադեոսին ժպտուն

37 Տե՛ս Ն. Ոսկեան, Ա., էջ 234:

38 Տե՛ս Ե. Լալայան, էջ 70:

39 Ն. Ոսկեան, Ա., էջ 233:

40 Ս. Խաչ վանքը գտնվում է Շաքախ գյուղաքաղաքից արևելք (Ն. Ոսկեան, Գ., էջ 863), իսկ այդ քաղաքը, ըստ Բ. Նարությունյանի (Բ. Նարությունյան, էջ 42-43) ու R. Hewsen-ի (Robert H. Hewsen, *Armenia A Historical Atlas, Chicago and London*, 2001 (այսուհետև՝ R. Hewsen)) համապարասխանում է պարմական Բուժունիք գավառին:

41 Տե՛ս Գ. Շերենց, էջ 147:

42 Ե. Լալայանը Ռշտունիքում է քեղադրում այս վանքը (Ե. Լալայան, էջ 68), իսկ Ն. Ոսկեանը (Ն. Ոսկեան, Գ., էջ 757)՝ Վան նահանգի Նայոց ձոր գավառակում, որն ըստ Տեղանունների բառարանի (Թ. Նախըրյան, Սյր. Մելիք-Քախչյան, Ն. Բարսեղյան, Նայասարանի և հարակից շրջանների քեղանունների բառարան, Կ. Բ, Երևան, 1988, էջ 252 (այսուհետև՝ Տեղանունների բառարան, Բ.)). դա նույն Երվանդունիք գավառն է: Խոշաբ գետը, որի ափին գտնվում է սույն վանքը, Երվանդունիք գավառով է անցնում:

ղեմքով և պարվիրել եկեղեցի կառուցել, որպեղից առաջացել է վանքի Ծիծաղաբեր Ս. Աստվածածին անվանումը⁴³: «Վանքը բաղկացած է միանալ թաղածածկ եկեղեցուց և գավիթից: Եկեղեցու ներսում հյուսիսային ու հարավային պարերն ունեն որմնասյուններին հանգեղ կամարներ: Գավիթն ունի անշուք, փոքրիկ գմբեթ, որը կառուցված է անմշակ, անրաշ քարերով»⁴⁴:

Ծիծաղաբեր Ս. Աստվածածինը 1648 թ. երկրաշարժից ավերվել է, բայց հետո վերանորոգվել է, իսկ պարիսպը կառուցել է Գրիգոր ճարտարապետը 1663 թ.⁴⁵: Վանքի մոտ կա հայկական մի գերեզմանոց: Վանքն իր հողերով հանդերձ ենթարկվել է Աղթամարի կաթողիկոսությանը:

1895 թ. Ծիծաղաբեր Ս. Աստվածածինը կողոպտվել է թուրքերի կողմից, իսկ 1915 թ. վերջնականապես ավերվել ու լքվել է: Վանքի գիտական, գրչական գործունեության մասին մեզ ոչինչ չի հասել:

Առունկի վանք. գտնվում է Վասպուրականի Արարաշխյան գավառի⁴⁶ Ծվսարան գյուղի մոտ՝ Վանա լճի ափին, որի պարծառով հաճախ անվանվել է Ծովահայաց Ս. Աստվածածին: Ներելուով ավանդությանը՝ կարող ենք ասել, որ վանքն առաքելաշեն է և երկար փորիններ անմխիթար վիճակում է եղել: Վանքը վերանորոգել է Դավիթ Արարամեցի եպիսկոպոսը: Այս վանքի անվան հետ կապված գոյություն ունի երկու պարմություն. պարարագի ժամանակ հանկարծ գինու պակասություն է զգացվում, և քահանայի աղոթքով եկեղեցու պարուհանից ներս է մտնում մի կռունկ՝ բերանին խաղողի ողկույզ: Իսկ մյուս պարմությունը հերելույն է. հունձի ժամանակ վանքի հնձվորների համար կաթսայի մեջ կերակուր էին պարարաստում և հանկարծ մի կռունկ է քնկնում այդ կաթսայի մեջ: Սրիպված են լինում թափել կաթսայի պարունակությունը և տեսնում են կաթսայի մեջը մի մեծ օձ⁴⁷:

Առունկի վանքը կառուցված է անրաշ քարերով, ունի մի եկեղեցի, հասարակ գավիթ, որոնք շրջապարված են պարիսպով: Վանքն ունի նաև մի քանի սենյակ: Եկեղեցու դուռը արևմտյան կողմում է: Տաճարը լուսավորվում է մի քանի նեղ ու փոքրիկ պարուհաններով: Առունկի վանքը եղել է Աղթամարի կաթողիկոսության իրավասության ներքո: 1648 թ. երկրաշարժը գրեթե ամբողջությամբ ավերել է վանքը:

Նոգյաց վանք. գտնվում Վասպուրականի Անձեուացիք գավառում՝ Աորդուկ լեռան ծառախիտ հովտում: Նոգյաց վանքը հարուստ է բազմաթիվ ավանդություններով, որոնք վանքի կառուցումը հասցնում են մինչև առաքելական ժամանակաշրջանը: Վանքի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցել է Ս. Բարդուղիմեոս առաքյալը Ա. դարում: Ըստ ավանդության՝ առաքյալը Նայասարում քարոզչության ժամանակ այս

43 Տե՛ս Ն. Ոսկեան, Գ., էջ 757:

44 Սյր. Մելիք-Բախչյան, էջ 199:

45 Տե՛ս Ն. Ոսկեան, Գ., էջ 757:

46 Այս Արարամեցին ու իր շրջակա գյուղերը մտել են Արարաշխյան գավառի կազմի մեջ (Թ. Նավոյան, Սյր. Մելիք-Բախչյան, Ն. Բարսեղյան, Նայասարան և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ա., Երևան, 1986, էջ 498 (այսուհետև՝ Տեղանունների բառարան, Ա.):

47 Ն. Ոսկեան, Ա., էջ 247:

հովիւրով անցնելիս քանոնում է քասնյակ հովիվների, որոնք երեկոյան հավաքվել էին խառնայկի շուրջը: Առաքյալը նրանց բարեւում է, իսկ նրանք սկսում են ծաղրել նրան: Երբ առաքյալը հասնում է մոտակա գյուղը և մարդկանց պարմում իր հետ քեղի ունեցածի մասին, մարդիկ նրան ասում են, որ դրանք ոչ թե սովորական հովիվներ են, այլ սաւրանաներ, որոնք հովիվների զգեստներ են հագել և շարունակ ծաղրում են անցորդներին, հալածում նորադարձ քրիստոնյաներին: Նրանք առաքյալին ցույց են ցույց տալիս նաև այն քարանձավը, որտեղ ապրում են «հովիվները»: Առավոտյան Ս. առաքյալը գնում է սաւրանաների քարանձավը և այդ հովիվ-սաւրանաներին հար-հար բռնելով գցում է մի սրվակի մեջ: Վերջին քասներորդը չի քեղավորվում այդ սրվակում և որքան էլ առաքյալը փորձում է քեղավորել՝ չի սպացվում: Այդ սաւրանան խնդրում է իրեն չգցել այդ սրվակի մեջ, փոխարենը թող առաքյալը մի վանք կառուցի այստեղ, իսկ ինքը հավերժ կծառայի այդ վանքում: Առաքյալը հավանում է սաւրանայի առաջարկը և կառուցում է Նոգյաց վանքը, որտեղ էլ ծառայում է այդ կաղիլիկ սաւրանան⁴⁸:

Գոյություն ունի նաև մի ուրիշ ավանդություն՝ կապված Նոգյաց վանքի կառուցման հետ, ըստ որի, այստեղ կա մի քարակույտ, որի մեջ կա մի քափարակ քար, ասում են՝ այս քարի վրա Ս. Բարդուղիմեոսին երևացել է Ս. Աստվածածինը և հրամայել է առաքյալին այդտեղ իր անունով մի վանք կառուցել⁴⁹: Մեկ այլ ավանդություն ունի, որ վանքը Անահիպ չաստվածուհու մեկյանի քեղում է կառուցվել, որի կառուցմանը խանգարել են չար հոգիները, և հենց այդ պարագայով վանքը անվանվել է Նոգյաց վանք:

Նոգյաց վանքի մասին մեզ հասած քեղեկությունները այնքան էլ համակարծիք չեն վանքի կառուցման պարմության ու ժամանակաշրջանի հարցում: Ըստ մեկ այլ ավանդության՝ Նոգյաց վանքը կառուցվել է Դ. դարում Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից⁵⁰: Ս. Գրիգոր Լուսավորիչը ոչ թե Նոգյաց վանքն է կառուցել, այլ Նոգյաց վանքի մեջ մտնող Ս. Սիմոն եկեղեցին:

Նոգյաց վանքը սկսած Դ. դարից եղել է Անձնացյաց գավառի եպիսկոպոսական թեմի առաջնորդանիստ վանքը:

Վանական համալիրի մեջ է մտնում Առաջնորդարանը, որը պարզ շենք է, իսկ եկեղեցին կոչվում է Ս. Աստվածածին: Տաճարը կամարակապ է և քարուկիրով շինված: Ունի երեք կանգուն լայնություն, ութ կանգուն երկարություն, վեց ու կես կանգուն բարձրություն: Վանքն ունի պարիսպ, դարպաս և կաթողիկե. նաև ամրացի դեր է կատարել: Բնականից անմարչելի դիրք ունի, շրջապատված է եղել երկշարք պարիսպով: Ունեցել է բազմաթիվ սենյակներ, որոնք բացվելով իրար մեջ՝ դժվարացնում էին մուտքը դնելի քաճար: Ս. Աստվածածնի աջակողմում է Ս. Հրեշտակապետի մատուռն է, որի գավիթը կամարակապ, նեղ ու երկար է, իսկ ձախակողմում է գտնվում Ս. Սիմոն եկեղեցին⁵¹:

Ս. Աստվածածին եկեղեցին հարուստ է ոչ միայն ավանդություններով, այլ այնտեղ

48 Տե՛ս Սոս-Վանք, էջ 101:

49 Տե՛ս Ն. Ոսկեան, Գ., էջ 763:

50 Տե՛ս Տրդատ Եսայ. Պալյան, Հայ Վանորայք, Ս. Էջմիածին, 2008, էջ 266 (այսուհետք՝ Տ. Պալյան):

51 Տե՛ս Ն. Ոսկեան, Գ., էջ 761: Նման. Սյր. Մելիք-Բաշխյան, էջ 761:

պահվող սրբություններով: Վանքի խորանի փակ է պահվել Ս. Բարդուղիմեոսի բերած Ս. Տիրամոր պատկերը՝ փորագրված Ս. Անդրեաս եւ Ս. Նովհաննես առաքյալների կողմից: Վանքի վանահայրերը հաճախ անվանվել են «Ս. Աստվածածնի Պարկերի առաջնորդ»⁵²:

Ինչպես նշեցինք, սկսած Դ. դարից Նոգյաց վանքը եղել է Անձեռացյաց եպիսկոպոսական աթոռն, ու որպես առաջին առաջնորդ է հիշվում Աբիսողոմ եպիսկոպոսը, որ այսօրեղ հիվանդանոց է կառուցել: Ժ. դարում Թովմա Արծրունին Նոգյաց վանքի առաջնորդ է հիշում Թեոդորոսին⁵³: Մարթեոս Ուռհայեցին վանքի առաջնորդ հիշում է Նովհաննես արքեպիսկոպոսին⁵⁴: ԺԵ-ԺԶ. դարերում Սյրեփանոս ու Պերբոս եպիսկոպոսների վանահայրության ժամանակ վանքն ունեցել է մեծ թվով միաբաններ եւ վանքը բավական հարուստ է եղել: Վանքը վերանորոգվել է 1765 թ.: Վերջին շրջանի նշանավոր վանահայրերից էր Մարթեոս Ծ. վրդ. Կարճկանցին⁵⁵:

Նոգյաց վանքը եղել է հայ գրչության նշանավոր կենտրոններից մեկը, այսօրեղ միջնադարում գրվել են ավերարաններ, ճաշոցներ, սաղմոսարաններ, հայամավորքներ եւ այլ ձեռագրեր: «ԺԷ. դարում վանքը հարկապես հայրնի էր որպես ձեռագրերի նկարագրողման կենտրոն եւ ուներ ձեռագիր մագրյանների հարուստ գրադարան»⁵⁶:

1895 թ. Նոգյաց վանքը ավերել ու կողոպտել են թուրքերը: Վերանորոգվել է 1904 թ.: 1915 թ. վանքը վերջնականապես ավերվել ու լքվել է:

Ս. Նախավկա. Ս. Սյրեփանոս նախավկայի անունը հավերժացնող Ս. Սյրեփանոս Նախավկա վանքը գտնվում է Վասպուրականի նահանգում: Դեռեսու հսրակ հայրնի չէ, թե Վասպուրականի որ գավառում է գտնվում: Ն. Ոսկեանը վանքը փրկադրում է Նախաջավան գավառում⁵⁷, մեկ այլ ուսումնասիրող՝ Սյր. Մելիք-Բախչյանը՝ Արարազ գավառում⁵⁸: Մերթապ արք. Սմբարեանցը, նկարագրելով այս վանքը, փրկադրում է Երնջակ գավառում⁵⁹, իսկ Զարյանը՝ Գողթն գավառում⁶⁰: Ինչպես փեսնում ենք, բոլոր ուսումնասիրողները փարքեր գավառներում են փրկադրում, բայց բոլորի նկարագրությամբ էլ վանքը գտնվում է Նախճավան քաղաքից հարավ Մաղարդա լեռան ստորոտում՝ Արարսի աջակողմյան վրակ Կարմիր գետի գետաբերանի մոտ՝ Շամբի ձորի մեջ: Մաղարդա լեռը գտնվում է Ճվաշտոտ գավառում⁶¹, իսկ Արարսի աջակողմյան վրակ Կարմիր գետը Արարազ եւ Ճվաշտոտ գավառների սահմանաբաժանն է: Արդեն Արարս գետի աջ կողմում

52 Ն. Ոսկեան, Գ., էջ 767:

53 Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պարմութիւն Տանն Արծրունեայց, Երեւան, 1985, էջ 281 (այսուհետեւ՝ Թովմա Արծրունի):

54 Տե՛ս Մարթեոս Ուռհայեցի, էջ 255:

55 Տե՛ս Գ. Շերենց, էջ 107: Նմմը. Տ. Պալյան, էջ 266: Նմմը. Ն. Ոսկեան, Գ., էջ 777:

56 Սյր. Մելիք-Բախչյան, էջ 252:

57 Տե՛ս Ն. Ոսկեան, Ա., էջ 527:

58 Տե՛ս Սյր. Մելիք-Բախչյան, էջ 127:

59 Տե՛ս Մերթոփ արք. Սմբարեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 487:

60 Տե՛ս Ա. Զարյան, Հայ Ճարգարապետություն, Երեւան, 1996, էջ 125:

61 Թ. Հակոբյան, Սյր. Մելիք-Բախչյան, Ն. Բարսեղյան, Հայաստանի եւ Հարակից շրջանների փրկանունների բառարան, Կ. Գ., Երեւան, 1991, էջ 619:

լինելը մերժում է վանքի Նախնավանում, Երևջակում կամ Գողթնում լինելու վարկածը, իսկ քանի որ Մաղարդա լեռն ու Շամբի ձորը գտնվում են Ճվաշտոյ գավառում, որով էլ մերժվում է նաև վանքի Արարագում լինելու վարկածը, ապա Ս. Սյրեփանոս Նախավկա վանքը գտնվում է Ճվաշտոյում:

Ս. Սյրեփանոս Նախավկայի վանքի պարսմության ակունքները հասնում են մինչև Ս. Բարդուղիմեոս առաքյալի՝ Նայասարանում քարոզչության ժամանակաշրջանը: Պահպանվել է նաև Խաչիկ Կաթողիկոսի կոնդակը (976 թ.) Ս. Սյրեփանոս Նախավկա վանքին ուղղված, ըստ որի, վանքը կառուցել է Ս. Թադեոս առաքյալը⁶²: Արդեն Դ. դարում Ներսես Մեծ Նայրապետը վանքի շուրջը թեմ է կազմում, իսկ 976 թ. Աշոտ Գ. Ողորմած թագավորը գյուղեր է նվիրում Ս. Նախավկային, վանքի առաջնորդ է նշանակում Բարկեն արքեպիսկոպոսին, որ դառնում է այս վանքի մեզ հայրնի առաջին վանահայրը:

Ժ. դարում Ս. Սյրեփանոս Նախավկա վանքում Աշոտ Գ. Ողորմած թագավորի նախաձեռնությամբ շինարարական աշխատանքներ են իրականացվել, որոնց մասին Կրեդեկանում ենք նաև վանքում պահպանված կոնդակից: Բարկեն արքեպիսկոպոսից առաջ Մաղարդա Ս. Սյրեփանոս Նախավկայի միաբան, բայց ոչ առաջնորդ հիշվում է Նովհաննես վարդապետը: ԺԲ. դարում վանքի վանահայր է հիշվում Գրիգորը՝ Ապիրայի որդին, որի վանահայրության ժամանակ վանքը սկսել է ծաղկել: Մովսես Գ. Տաթևացի Կաթողիկոսի (1629-1632թթ.) օրոք Ս. Սյրեփանոս Նախավկայի առաջնորդ են եղել Շմավոն եպիսկոպոսն ու Նակոր վարդապետ Զուղայեցին, վերջինիս ջանքերի շնորհիվ վերանորոգվել է ողջ Ս. Սյրեփանոս Նախավկայի վանքը⁶³: Նակոր վարդապետ Զուղայեցին Ս. Սյրեփանոս Նախավկա վանքում ամփոփում է Ս. Նովհաննես Մկրտչի մասունքը՝ արծաթյա, աղյուսածեղ, ակնակաշի արկղի մեջ: Սակայն ինչ-ինչ պարսմաներով Նակոր Զուղայեցու շինարարական աշխատանքները երկար չտևեցին: Վանահայրեր Ազարիա վարդապետն ու Մանվել վարդապետը վերանորոգել են վանքի եկեղեցու տանիքը, պարիսպն ու խցերը, որոնք անմխիթար վիճակում էին: Ս. Սյրեփանոս Նախավկա վանքի բոլոր վանահայրերը՝ լինեին եպիսկոպոս, վարդապետ կամ արեղա հարսուկ կոնդակով կաթողիկոսների կողմից են նշանակվել:

Ս. Սյրեփանոս Նախավկա վանքը հարուստ է եղել սրբություններով, այսպեղ դարեր շարունակ երկյուղածությամբ պահվել են սրբերի մասունքները: Վանքի գլխավոր սրբությունն է եղել Ս. Սյրեփանոս Նախավկայի մասունքը: Այս վանքում են պահվել նաև Նովհաննես Մկրտչի, Պանդալիոն բժշկի մասունքները, Ս. Բարդուղիմեոսի գավազանը, Ղուկաս քարոզողի գլուխը, Ս. Նքիփսիմյանց կույսերի մասունքները, Ս. հայրապետների աջեր, Ս. Սարգիս գորավարի եւ Ս. Վարդան Մամիկոնյանի մասունքները եւ այլ սրբություններ⁶⁴: Վանական համալիրի մեջ են մտնում Ս. Սյրեփանոս Նախավկա,

62 Տե՛ս Ն. Ոսկեան, Բ., էջ 533:

63 Տե՛ս Ն. Ոսկեան, Բ., էջ, էջ 545:

64 Տե՛ս անդ, էջ 566:

Տիրամայր Ս. Աստվածածին եւ Ս. Գեորգ եկեղեցիները, որոնցից քիչ հեռու է գտնվում Ս. Նախը եկեղեցին⁶⁵:

Ս. Սյրեփանոս Նախավկայի եկեղեցին միջին մեծությամբ, կոփածո քարերով կառուցված քառակուսի եկեղեցի է: Ունի մի Ս. սեղան, երկու ավանդատուն, արեւմտյան կողմում վերնատուն, որը սյուների մեջտեղում է գտնվել եւ նախադրեալ էր կանանց համար: Եկեղեցու արեւմտյան անկյունում երկու մատուռ կա, որոնք կոփածո քարերով են կառուցված: Ս. Սյրեփանոս եկեղեցու լայնահաս, բազմաթանգակ կաթողիկեն շարժեցիկ է, գմբեթը շառավիղաձեւ ծածկ ունի, իսկ շառավիղներից մեկի ծայրին փոքրիկ խաչ է կանգնեցված: Կաթողիկեի պարի վրա՝ շուրջանակի մարմարե քարերի վրա, թանդակված են փոքրիկ 24 խաչքարեր⁶⁶:

Եկեղեցու հարավային կողմին կից բարձրանում է երկհարկանի զանգակատունը, որ կրում է չորս սյուների վրա հանգչող գմբեթը: Արեւմտյան դռան մոտ կա երկու զանգակատուն:

Այս տաճարին կից շինված է փոքրիկ եկեղեցի Պողոս Պեպրոս առաքյալների անունով, որի բեմի ճակարին սեւ մարմարի քարի վրա պահպանվել է մի արձանագրություն: Ս. Նախավկայի վանքն ունի զույգ պարիսպ եւ փոքր տաճար: Նախավկայի վանքի մեջ են առաջնորդի, վանահոր եւ միաբանների սենյակները: Վանքն ունեցել է մարտնչապարան, որտեղ պահվել է 989 թ. գրված մի «Աւետարան» եւ շուրջ 40 ձեռագրեր, որոնք 1848 թ. տեղափոխվել են Ս. Էջմիածին:

65 Տե՛ս Սփ. Մելիք-Բախչյան, էջ 127:

66 M. Polytechnic, *Documents of Armenian Architecture*, S. Stephanos, № 10, 1980.

ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՏՐԱՎԵՐՆԵՐ*

ՓՈՂՐ, ԹԵ՝ ՆԱՎԱՍԱՐ

«Ես եւ իմ Նայրբ մի ենք»:

Նովհ. Ժ. 30

Ս. Գրքի մեկնության եւ այն հասկանալու համար բրուկլինյան կազմակերպությունը հեպտոմ է միայն եւ միայն իրենց իսկ մշակած սկզբունքներին՝ մերժելով այլ փեսակերները եւ սկզբունքները: Եւ այդ ամենը նրանք ներկայացնում են որպես միակ ճշմարիտ, ինչպես իրենք են ասում՝ հիմնված միայն Ս. Գրքի վրա: Նշենք, որ այդպես են ասում այսօր գոյություն ունեցող բոլոր՝ հազարավոր ադանդավորական շարժումները: Այլ կերպ ասած sola scriptura-ն հանգեց նրան, որ բոլորը եղան ճիշտ, բոլորի համար միակ վստահելի աղբյուրը Ս. Գիրքն է, բոլորի համար Ս. Գիրքը հասկանալի է միայն իրենց մոտ եւ իրենց մեջ: Ավելին. Գ. դարի Կիպրիանոս Կաթագենացու **extra Ecclesiam nulla salus** սկզբունքն էլ միայն իրենց վերագրելով՝ Ընդհանրական եկեղեցին համարվեց մոլորված եւ Աստուծոց մերժված:

Բրուկլինյան կազմակերպության դիրարանները այդ առումով անգերազանցելի են: Եեովայի վկաների համար մտածել, խորհել, քննել այս կամ այն հարցը, որն է խնդիր լուծել՝ անիրական է, նրանք այդ ամենի պարասխանը գիրքն (եւ գրքում են) երկշաբաբայա այդ ամսագրերում, որոնց նպատակն էլ հենց այդ է. բրուկլինյան հզոր մեքենայի ուսմունքն ու կարեւորությունը ներկայացնել այնպես, որ ոչ մեկի մտքով այլ բան չանցնի, այլ միայն այն, ինչ ուզում են իրենք: Սա ժամանակակից հոգևոր ստրկության ամենահաջողված մոդելն է.

«Եեովա Աստվածը օգնություն է ցույց տալիս Իր ներշնչյալ Խոսքի միջոցով, Իր սուրբ հոգու միջոցով եւ Իր փեսաների կազմակերպության միջոցով», - հստակեցնում է Դիրարանը²:

Սա նշանակում է, որ մի կազմակերպություն, մարդկանց մի խումբ, եւ միայն իրենք ներկայացնում են Աստծուն եւ խոսում Նրա անունից: Եւ եթե այդպես է, ուրեմն այդ կազ-

*Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Ե.:

2 Դիրարան, 15.02.1991, էջ 29: Նշենք, որ այսօրեղ «սուրբ հոգի» գրությունը սխալմունք չէ, քանի որ Եեովայի վկաների դավանանքով Ս. Նոգի գոյություն չունի, առկա է միայն «սուրբ հոգի» - Եեովայի գոյություն, գործուն ուժ իմաստով:

մակերպության անդամները՝ Եհովայի վկաները, մի նպատակ ունեն՝ ապրել, մտածել, գործել այնպես, ինչպես թելադրում է Դիպարանը: Նկատենք, որ այդ ուղեցույցը Դիպարանն է, եւ ոչ թե Ս. Գիրքը, թեեւ նրանք՝ վկաները, պնդում են, որ դա նույն բանն է: Նենց սա էլ կոչվում է հոգեւոր սպրկություն:

Շատ կարեւոր է այս հարցը քննելիս հիշել Գործքում նկարագրված Պողոս Առաքյալի քարոզության դրվագը Բերիայում.

«Բայց եղբայրները գիշերով շրտապ ճանապարհ դրեցին դեպի Բերիա Պողոսին եւ Շիդային, որոնք, երբ այնտեղ հասան, գնացին հրեաների ժողովարանը, քանի որ սրանք ավելի ազնիվ մարդիկ էին, քան թե Թեսսաղոնիկեում եղածները: Սրանք ամենայն հոժարությամբ ընդունեցին խոսքը, ամբողջ ժամանակ քննում էին գրվածքները՝ խմանալու, թե այդ բաները այդպե՞ս են»³ (Գործք. ԺԷ. 10-11):

Այսինքն՝ Բերիայի քրիստոնյաները Պողոս Առաքյալի խոսքերը լսում էին, քննում, բայց միաժամանակ նաեւ քննում էին Գրքերը, այսինքն՝ Նին Կրակարանը⁴, համոզվելով՝ Առաքյալի ասածները համապատասխանում են արդյոք գրվածքներին:

Բրուկլինյան կազմակերպությունը, անշուշտ, լավ գիտակցում է, որ իրենց մոտ էլ կարող են գրնվել «Բերիացիներ», որոնք փորձեն քննել Դիպարանի պնդումները: Նախահարձակության սկզբունքը Դիպարանի ռազմավարության հիմնական առանցքն է. Դիպարաններում նյութերը այնպես են պեղադրված ու կազմած, որ բնթերցողի մեջ ենթադրաբար առաջացած հարցերն անգամ ստանում են իրենց պատասխանները: Այդ էլ բացատրում է, որ նրանց մեջ գրնվեն «բերիացիներ»:

«Որպեսզի ավելի հաջողությամբ փառաբանվի Եհովայի անունը, մեզ համար անհրաժեշտ է ավելի ու ավելի օգտագործել քրիստոնեական հրապարակումները, որոնք ներկայացնում է Եհովա Աստվածը օձյալ «հավատարիմ ու խնաստուն ծառայի» միջոցով (Մարթ. ԻԴ. 45-47)»⁵:

Նամանակն բրուկլինյան կազմակերպության, ուրեմն, «հավատարիմ ու խնաստուն ծառա»-ն այն «օձյալ» ծերունիների խումբն է, որը ղեկավարում է կազմակերպությունը: Այս է պարզապես, որ այդ կազմակերպության անդամները Դիպարանից դուրս այլ գրականություն չեն օգտագործում, չեն քննարկում: Անգամ Դիպարանում առկա հակասությունները նրանց համար սխալ չեն:

«...Սուրբ հոգին առաջին քրիստոնյաներին ուղղորդեց գործել միասին, որպես «հավատարիմ ու խնաստուն ծառա», որպեսզի առանձին օձյալ քրիստոնյաներին «իր ժամին կերակուր տան»⁶:

«Այսինքն այսօր ամբողջ աշխարհին՝ մարդկությանը, կերակուր տալու համար Աստված ընտրել է այդ կազմակերպությունը կամ «հավատարիմ ու

3 Ընդգծումը մերն է - Ղ. ք. Մ.:

4 Այդ ժամանակ դեռ Նոր Կրակարանի կանոնը չկար, եւ «Գրքեր» ասելով հասկանում էին Նին Կրակարանի գրքերը:

5 Դիպարան, 15. 09. 1994, էջ 12:

6 Դիպարան, 01.02.2002, էջ 19-20:

խնաստուն ծառային»՝ օծյալների խորհրդին: Այդ ղեկավարների միջոցով էլ մեր Առաջնորդը՝ Տիսուս, հասուն եղբայրների փեղակալն ժողովներում ավագներ է նշանակում, անկախ նրանից օծյալ են նրանք թե՛ ոչ... Պատասխանատու եղբայրները ստանում են ցուցումներ Ղեկավար խորհրդից և պարտաստակամությամբ հովվում են հոփը կամ ժողովը: Այսպիսով Բրիստոս այսօր մեզ հեղ է և ակտիվորեն ղեկավարում է մեր հավաքները»⁷:

«Եհովայի շահերի պաշտպանը երկրի վրա «հավաքարիւմ ու խնաստուն ծառան» է, որը Եհովայի վկաների Ղեկավար խորհուրդն է»⁸:

Այսպիսով մնում է միայն ենթադրել, որ այդ ինքնակոչ «հավաքարիւմ ու խնաստուն ծառան» իրեն հոգակում է միակն ու միակը՝ Աստծու և աշխարհի գործերում և այդ քարոզության իրականացումը կատարում է կազմակերպության անդամների միջոցով:

Ինքնակոչության այդ սկզբունքը բրուկլինյան կազմակերպության գործունեության բոլոր ոլորտներում առկա է. ամեն դրական վերագրում են իրենց, իսկ մնացյալը՝ ստրանային: Անգամ նրանց վերջին ինքնաանվանումը («Եհովայի վկաներ») այդ է ցույց տալիս:

Եսայի ԽԳ. 10-ից ելնելով նրանք սեփականացրին «*Եղեք ինձ համար վկաներ*» հարվածը և հոգակեցին, որ այդ վկաները հենց իրենք են: Մինչդեռ կոնտրեսպից պարզորոշ հասկանալի է, թե ովքեր են այդ վկաները. Իսրայելը, որ պետք է իր առաքելությունը կատարեր հեթանոսների և շրջապատող ազգերի մեջ: Այսինքն՝ նույն «ինքնակոչության» սկզբունքն է, որ վերագրել են իրենց այսօրվա վկաները, ավելի ճիշտ՝ բրուկլինյան կազմակերպության անդամները:

Բրուկլինյան կազմակերպության հեգեմոն դիրքը և անսխալականությունը ցայտուն կերպով արտահայտվում է նրանց անդամների քարոզներում, զանազան հարցերի վերաբերյալ փեսակերպերում և այլուր: Նրանց դավանած սկզբունքները պարզապես են բոլորի համար որպես դոգմա՝ սկզբունք, անվերապահ պետք է ընդունվեն անդամների կողմից, որոնք ի միջի այլոց ավելի «կաթոլիկ են, քան Նոմի պապը»:

Այսպես, նրանց դավանանքի համաձայն Տիսուս -Բրիստոս Աստված չէ, և Նորից փոքր է, ստորադաս: Այս փեսակերպ պաշտպանելու համար բերում են մի շարք սուրբգրային համարներ, որոնք, իբր հիմնավորում են իրենց ասածը: Հաճախ շահարկում են Նովի. ԺԴ. 28, Միքիա Ե. 2 համարները:

1) Նովի. ԺԴ. 28

«Ասեցիք, որ ձեզ ասացի, թե՛ գնում եմ և կգամ ձեզ մոտ. եթե ինձ սիրեիր, ապա դուք ուրախ պիտի լինեիր, որ ես Նոր մոտ եմ գնում, որովհետև իմ Նայրը մեծ է, քան ես»:

Մեր հայրերի և փայլերի եկեղեցիների մեկնիչների կողմից այս հարվածը մեկնաբանվում է այսպես. Տիսուս աշակերտներին բացատրում է, թե ինչու իրենք՝ աշակերտները, պետք է ուրախ լինեն Տիսուսի՝ Նոր մոտ՝ երկինք գնալու համար: «Տիսուս

⁷ Դիսարան, 15.03.2002, էջ 14:

⁸ Դիսարան, 15.01.2001, էջ 21:

մարդ եղավ և դրա համար էլ Նորր իրենից մեծ է ասում»⁹, բայց բնությամբ հավասար է Նորր և համագոյ է նրան, «որովհետև Նայրական էությունից է ծնված»¹⁰:

Իսկ Ս. Գրիգոր Տաթևացու՝ այդ համարի մեկնությունն ավելի հստակ է. «*զի ըստ պատմության մեծ առի Նայր քան զՈրդի, թէպէտ և ոչ բնութեամբ: ... զի յորժամ կամիցիս հարցանել, թէ ո՞րքան մեծ է Նայր, գործադրութիւն ցուցանէ, թէ մեծ է քան զիս և ոչ այլ առաւել*»¹¹:

Այսպէլ Ս. Գրիգոր Տաթևացին փարբերում է *մեծ* և *առաւել* բառերը, հստակեցնելով, որ *մեծ* բառը վերաբերում է դիրքին և ոչ թե բնությանը, իսկ *առաւել* բառը վերաբերում է արդէն բնությանը: Ստորեւ կրեւնենք, որ հենց այդ է արարահայտում հունարեն բնագիրը, Նովհ. ԺԴ. 28 և Երբ. Ա. 4 համարների համադրությունը:

Բրուկլինյան մեկնիչները Նովհ. ԺԴ. 28 համարը մեկնում են այսպէս.

«*Եհովան մեծ է Նիսուսից ոչ միայն ըստ դիրքի, այլ նաև որպէս դէպք: Եհովան մեծ է նաև Նիսուսից ըստ բնութեան*»¹²: Այսինքն Նիսուս փոքր լինելով Եհովայից, չի կարող լինել Նրան հավասար:

Այս փեսակերպ չի դիմանում քննադատության:

Նունարեն բնագիրն է.

ήκούσατε ὅτι ἐγὼ εἶπον ὑμῖν Ὑπάγω καὶ ἔρχομαι πρὸς ὑμᾶς εἰ ἡγαπᾶτέ με ἐχάρητε ἂν ὅτι εἶπον πορεύομαι πρὸς τὸν πατέρα ὅτι ὁ πατὴρ μου **μεῖζων** μου ἐστίν

Այսպէլ Նիսուս օգրագործում է **μεῖζων** բառը, որ հունարենում նշանակում է *մեծ* հենց այն իմաստով, ինչպէս մեկնել են մեր հայրերը, այսինքն՝ մեծ դիրքային համեմատությամբ, բայց ոչ բնության առումով: Վերջինիս իմաստով հունարենն ունի այլ բառ, որն օգրագործում է Պողոս Առաքյալը Երբ. Ա. 4 համարում, երբ համեմատում է Նիսուսին հրեշտակների հետ: Ի միջի այլոց այս համարն էլ Բրուկլինի համար «սիրածներից» է, քանի որ բացահայտքեն ժխտում է Նիսուսի հրեշտակ լինելու պարագան, այն, ինչ բարոյում են բրուկլինյան «օծյալները», և այդ սկզբունքը առանցքային նշանակություն ունի իրենց համար, քանի որ այդ դեպքում նրանց դավանական կերպերը Նիսուսի վերաբերյալ ի չիք է դառնում:

Ահա Երբ. Ա. 4-ի հունարենը.

τοσοῦτω **κρείττων** γενόμενος τῶν ἀγγέλων ὅσῳ διαφορώτερον παρ' αὐτοὺς κεκληρονόμηκεν ὄνομα.

Նայերեն թարգմանությունն է.

Նա այնչափ գերազանց եղավ հրեշտակներից, որ նրանցից շատ ավելի անուն ժառանգեց:

ՆԱԹ-ի թարգմանությունն է.

9 «Աթանաս Ալեքսանդրացու մատենագրությունը», Վենետիկ, 1899, էջ 55-56:

10 «Եթե իմ նկատմամբ ձեր սերը ճշմարիտ և հաստատուն է, պիտի ուրախանաք, որ Երվնավոր Նոր մոլոր գնալով Նրա կամքը կատարած և Նրա հրամանը գործի դրած կլինեմ, ինչպէս որ ամենքը պարտավոր են կատարել Մեծի հրամանը», - գրում է Օրմանյան պապիարքը («Նամակապարում», «273»):

11 Ս. Գրիգոր Տաթևացի, Մեկնություն Յովհաննու Անդաթարանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 569:

12 Թող Աստված լինի ճշմարիտ, Բրուկլին, 1946, էջ 200, անգլերեն:

Ուարի նա հրեշտակներից ավելի բարձր դիրք ունեցավ, այնքան բարձր, որ մի անուն ժառանգեց, որը նրանց անունից ավելի զերազանց է:

Պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ բրուկլինյան թարգմանիչները հունարենի մեջ հմուտ չեն, քանի որ սխալ են հասկացել **մեջ** և **քրեյտոն** բառերի իմաստային տարբերությունը կամ էլ միարմունակոր իրենց դավանանքն են արտացոլել այդ համարում: Իրոք, Եբր. Ա. 4-ում բնագիրը հուշում է և առաքյալի նպատակն էլ հենց այդ է. ցույց տալ Տիմոսի առավելությունը հրեշտակներից, նրանց՝ բնությամբ տարբեր լինելը: Այդ էլ արտահայտում է օգտագործելով **քրեյտոն** բառը, այսինքն, եթե Տիմոսն ունենար նույն բնությունը, ինչ ունեին հրեշտակները, Պողոս առաքյալը կօգտագործեր **մեջ** (մեծ) բառը, որը դիրքային մեծություն է արտահայտում և ոչ թե՛ **քրեյտոն** (առավել, զերազանց) բառը, որ բնության առավելությունն է ցույց տալիս: Մինչդեռ բրուկլինյան թարգմանությունը չի համապատասխանում հունարեն բնագրին, և արտահայտում է միայն իրենց դավանական սկզբունքը, այն է՝ Տիմոս հրեշտակների դասին պատկանելով դիրքի մեջ է բարձր և ոչ ավելին:

Ինչպես նշեցինք վերևում, այդ նույն սկզբունքն է արտահայտված Ս. Գրիգոր Տաթևացու բերած մեկնության մեջ. կարծես նա ձևերի տակ ունեցել է Նոր Կրակարանի հունարեն բնագիրը և ճիշտ ձևով է բնկալել հունարեն **մեջ** և **քրեյտոն** բառերի տարբերությունը, ավելի ճիշտ քան այսօրվա բրուկլինյան խմբագիրները:

2) Միքիա Ե. 2

Այս համարն էլ հաճախ չարաշահում են բրուկլինյան թարգմանիչները՝ նրանում տեսնելով Տիմոսի աստվածությունը ժխտող փաստարկ: Իսկ համարի՝ անգամ մակերեսային բնությունը, հակառակն է ցույց տալիս:

Այսպես, մեր գրաբարն է.

«Եւ դո՛ւ Բեղդահեմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցեն լինել ի հագարաւորս Յուդայ. ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի. և ելք նորա **ի սկզբանէ աւուրց աշխարհի**»:

ՆԱԹ-ի թարգմանությունն է.

«Եւ դու, ով Բեթլեհեմ Եփրաթա, շատ փոքր ես, որ Նուդայի հագարավորների մեջ լինես, սակայն քեզից դուրս կգա նա, ով իշխան կլինի Իսրայելում ինձ համար, **որի ծագումը փաղեմի ժամանակներից է, հնամենի օրերից**¹³»:

Տրամաբանությունը կառուցված է այսպես. այդ իշխանը՝ Տիմոս, սկիզբ ունի, նա սկսել է գոյություն ունենալ ժամանակի ինչ-որ մի կետից, ուրեմն չի կարող լինել Եհովային հավասար, այսինքն՝ փոքր է, և եթե արդեն ժամանակի մեջ է նրա սկիզբը, ուրեմն՝ սրելով՝ ասելով է: Այսպեղ նրանք **«որի ծագումը»** բառերի մեջ տեսնում են Մեսիայի սրելոման, արարման գործողությունը:

¹³ Վերջին բառի վրա ՆԱԹ-ը եղում է տալիս՝ կամ՝ «դարերից ի վեր»:

«Աստուածաշունչը ասելի քան 700 տարի առաջուրե՛ն քսած էր որ Սերունդին մարդկային ծնունդը պիտի ըլլար Բեթլեհեմի մէջ, բայց նաեւ յայտնած էր որ ան արդէն գոյութիւն ունէր «Էիսնէն, յաւիտենական օրերէն»՝ երկնքի մէջ իր ստեղծուելէն ի վեր (Միքիա Ե. 2)»¹⁴:

«Որոշ գիտնականների հաշվարկների համաձայն, Տիեզերքը գոյություն ունի նվազագույնը 12 միլիարդ տարի¹⁵: Եթե այս հաշվարկները անգամ մասնակիորեն ճիշդ են, ապա Ադամի ստեղծումից առաջ միածին Աստծու Որդին շփվում էր իր Հոր հետ անթիվ անհամար դարեր եւ հազարամյակներ»¹⁶:

Բրուկլինյան խմբագիրները այնպես են վերաշարադրել Ս. Գիրքը, որ անգամ ցանկացած ակնարկ՝ Հիսուսի հավիտենական լինելու մասին, որտեղ էլ որ հանդիպի, բացառվի:

Ահա անգլերէն *King James 2000 Bible* -ի համապատասխան համարը.

But you, Bethlehem Ephrathah, though you be little among the thousands of Judah, yet out of you shall he come forth unto me that is to be ruler in Israel; *whose goings forth have been from of old, from everlasting.*

Եթե համեմատենք հունարէն բնագրի¹⁷ հետ, ապա կրեսնենք, որ այն հունարէնի ճշգրիտ թարգմանությունն է: Բայց այստեղ նրանց անհանգստացնում են *from everlasting*¹⁸ բառերը, որ նշանակում է ժամանակի սանդղակից դուրս: Այսինքն, LXX թարգմանիչները ճիշդ են թարգմանել եբրայերէն բնագիրը, որից երևում է, որ Մեսիան ստեղծված լինել չի կարող, նա դուրս է ժամանակից:

Այս թնջուկից դուրս գալու համար բրուկլինյան թարգմանիչները Միքիա Ե. 2-ի վերջին մասը ներկայացրել են այսպես.

“whose origin is from early times, from the days of time indefinite.” (Micah 5:2, NWT)

Այդպիսով հունարէն αἰῶνος=հավիտենական բառը դառնում է անորոշ *time indefinite*=ժամանակահատված, իսկ սա նշանակում է, որ ՆԱԹ-ը բացահայտորեն կեղծում է տրեսարը, Միքիա Ե. 2-ը հարմարեցնելով իր դավանանքին:

Մյուս կողմից, ինչպես կրեսնենք ստորև, «*որի ծագումը վաղեմի ժամանակներից է, հնամենի օրերից*» հաղվածը մեկ այլ մարգարեի՝ Ամբակումի մարգարեության Ա. 12-ում էլ օգտագործված է նույն ձևով, ինչպես բնագրում՝ եբրայերէնում, այն-

14 «Միացած՝ միակ ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքին մէջ», արեւմտահայերէն, 1988, էջ 31:

15 Նկարի ունի, հավանաբար, Մեծ պայթյունի պետությունից բխող այն կարծիքը, թե պայթյունը տեղի է ունեցել 12 միլիարդ տարի առաջ - Ղ. *philj. U.*:

16 Դիւրարան, 15. 02. 2000, էջ 11:

17 καὶ σὺ Βηθλεεμ οἶκος τοῦ Εφραθα ὀλιγοστός εἶ τοῦ εἶναι ἐν χιλιάσις Ἰουδα ἐκ σοῦ μοι ἐξελεύσεται τοῦ εἶναι εἰς ἄρχοντα ἐν τῷ Ἰσραὴλ καὶ αἱ ἑξοδοὶ αὐτοῦ ἀπ’ ἀρχῆς ἐξ ἡμερῶν αἰῶνος καὶ σὺ Βηθλεεμ οἶκος τοῦ Εφραθα ὀλιγοστός εἶ τοῦ εἶναι ἐν χιλιάσις Ἰουδα ἐκ σοῦ μοι ἐξελεύσεται τοῦ εἶναι εἰς ἄρχοντα ἐν τῷ Ἰσραὴλ καὶ αἱ ἑξοδοὶ αὐτοῦ ἀπ’ ἀρχῆς ἐξ ἡμερῶν αἰῶνος.

18 Դարեր ի վեր, հավիտենական դարերից:

պես եւ հունարենում՝ LXX-ում¹⁹: Այս երկու համարների պարզ համեմատությունը ցույց է փայլիս, որ Միքիան խոսում է Մեսիայի մասին, իսկ Ամբակումը՝ Ասործու՝ Եհովայի, եւ երկուսն էլ օգտագործում են նույն բառերը: Այս երկու փոքր մարգարեները գրեթե ժամանակակիցներ են՝ VII-VI դդ. ն. Ք., եւ այդ նույն բառերը այդքան կարճ ժամանակահատվածում չէին կարող որակապես փոքրեր իմաստներ ունենալ: Իսկ սա նշանակում է, որ եթե Միքիայի մոտ Մեսիան սրեղծված է, եւ նրան կարելի է փրկողդրել ժամանակի սանդղակի մեջ, ապա նույն փրամաբանությամբ էլ Եհովային կարելի է համարել սրեղծված եւ «խցկել» ժամանակի սանդղակի մեջ, որն անշուշտ nonsense է²⁰:

Նշենք նաև, որ համեմատությունը երբայերևի հեղ գրեթե նույն արդյունքն է փա-
լիս, ինչ համեմատությունը LXX հունարևի հեղ:

Եբրայերեն **כֶּהֶדֶם** (kehdem) բառը թարգմանվում է *հնում, նախնի դարերում*, և ոչ *սևորոշ ժամանակներում*, իսկ **יְמֵי עוֹלָם** (imi oulawm) թարգմանվում է *հավիտենական օրերից*, որը LXX-ը թարգմանել է ἄπ' ἀρχῆς ἕξ ἡμερῶν ἀλῶνος - **ի սկզբանե առուրց աշխարհի**: Այսինքն ՆԱԹ-ը կեղծում է բնագիրը և ներկայացնում իր դավանանքի համեմատ թարգմանություն, և բացարձակ, թե հասկանալի լինելու համար է բնագիրը այդպես ներկայացրել, որն իրականությանը չի համապատասխանում:

Ավելին, երբայերեն **ՄՈՏԱՎ** (mo-tsaw-aw) բառը նշանակում է *կյք*, և ոչ թե՛ *ծնունդ* կամ *ստեղծված*, քանի որ արմարեն **ՄՏԻ** բառը, որ նշանակում է *կյք*, հունարեն՝ *ἕξις*։

Իսկ ինչ վերաբերում է *ծնունդ, սպեղծում* բառերին, ապա հունարենն ունի γενεσις, իսկ եբրայերենը՝ תולדות բառը, որոնք այսպիսով չեն օգտագործվում, այսինքն, եթե LXX-ում Մեսիան ներկայանա որպես ծնունդ, սպեղծված, ապա հունարենը և եբրայերենը կօգտագործեին հենց այդ բառերը:

Մեկ այլ հանգամանք էս կարելի է նշել, երբայերևն ~~հայեր~~ բառը Միքիա Ե. 2-ում հոգևակի թվով է, որն էլ իր արարահայրությունն է գրել LXX-ի թարգմանության մեջ, ուր ἑξοδο-ը հոգևակի թվով է: Անշուշտ գարմանալի չէ, որ նույն փաստը է արձանագրված նաև գրաբարում՝ *הלל*, որն ունի հոգևակի ք-մասնիկը: Երբ որևէ գործողություն դրվում է հոգևակիով, նշանակում է որ այդ գործողությունը չի արեղավորվում ժամանակի մեջ, չունի ժամանակային չափ: Սա նշանակում է, որ այդ գործողությունը դուրս է ժամանակային սանդղակից, այդ act-ը չի կարելի մասնավորել, կոնկրետացնել: Այսինքն՝ այդ գործողությունը՝ act-ը, վերածվում է արստրակսի՝ վերացական հասկացության: Նեղ այդ էլ

19 οὐχὶ σὺ ἀπ' ἀρχῆς κύριε ὁ θεὸς ὁ ἅγιός μου καὶ οὐ μὴ ἀποθάνωμεν κύριε εἰς κρίμα τέταχας αὐτόν καὶ ἔπλασέν με τοῦ ἐλέγχειν παιδεῖν αὐτοῦ (Ψαλμῶν 12):

Եբրայերենն է (Միքիա Ե. 2).

וְאַתָּה בֵּית-לֶחֶם אֶפְרַתָּה, צִעִיר לִהְיוֹת בְּאַלְפֵי יְהוּדָה, מִמָּה לִי יֵצֵא, לִהְיוֹת מוֹשֵׁל בְּיִשְׂרָאֵל; וּמוֹצֵאתוֹ מִקֶּדֶם מִיָּמֵי עוֹלָם

և Ամբակում Ա. 12-ը.

הלוא אתם מקדש, יהוה אלהי קדשי לא נמות; יהוה למשפט שמתו, וצור להוכיח יסדתו

20 «Ոչ ապաքին դո՛ւ ես **ի սկզբանէ** Տէր Աստուած մեր» (Ամբ. Ա. 12) - րեւոնում ենք, որ գրաբարը պահել է հունարենի **ի սկզբանէ** բառը երկու փոխում էլ՝ թէ Ամբ. Ա. 12-ում, եւ թէ Միքիա Ե. 2-ում:

ցանկացել են ասել մարգարեները Մեսիայի համար՝ Նրան դուրս դնելով ժամանակից, այսինքն՝ շեշտել են, որ Նա հավիտյանական է, սրբազան է:

Եզրակացություն

Վերանայելով երկու համարները (Նովի. ԺԴ. 14, Միքիա Ե. 2), որոնց բրուկլինյան թարգմանիչները ՆԱԹ-ում ներկայացնում են իրենց դավանանքի համեմատը և պնդում, թե այնպեղ Մեսիան՝ Նիսուս, ներկայացված է Նորից փոքր, սրբազան: Մինչդեռ բնագրային մակերեսային բնութագրումն անգամ ցույց է տալիս, որ երկու բնագրերն էլ (եբրայերենն ու LXX հունարենը)²¹ բառացի համաձայն են իրար և բովանդակային առումով՝ հավասարազոր: LXX թարգմանիչները ապրել են այն ժամանակ, երբ քրիստոնեությունը տարածվել էր, և այդ թարգմանությունը, այդ առումով, ավելի վավերական է, ճիշտ է արտահայտում եբրայերենը: Այն ցույց է տալիս, թե ինչպես պետք է թարգմանել, մինչ ՆԱԹ-ը ցույց է տալիս, թե ինչպես պետք է թարգմանել: Իսկ ինչ վերաբերում է Մեսիայի՝ Նիսուսի Աստված լինել-չլինելուն, ապա այդ իսկ համարները ցույց են տալիս Մեսիայի՝ Աստված լինելը, Նորը հավասար լինելը և ոչ հակառակը: Հակառակ դեպքում ՆԱԹ-ի թարգմանիչները չէին աղավաղի թարգմանությունը, կթողնեին նույնը, ինչ եբրայերենն է և հունարենը, և կավելացնեին՝ նաև գրաբարը:

(Շարունակելի)

ՂԵԻՈՆԴ-ՔՆՆԱՆԱ ՄԱՅԻՆՅԱՆ

²¹ Նաև գրաբարը:

ԳՐԱԴԵՐՕԱՌՈՒԹԻՒՆ, ԱՐԱՏԵԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԱՆՁԱՏԱՆ ՄԻ ԿՐԿՆԱԿԱԶՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Կազմը ձեռագիր կամ տպագիր գրքի ստեղծման ավարտին, վերջնական փուլն է: Այն սովորաբար պատրաստված է լինում տախտակե կամ սովորաթղթե միջուկով շագանակագույն, բնական կամ արհեստական կաշվից, երբեմն՝ թավշե կտորից: ԺԱ դարից սկսած Նայաստանում կազմեր էին պատրաստում նաև արծաթից եւ ոսկուց, հաճախ, զարդարում էին թանկարժեք ու հասարակ գունավոր քարերով: Նման կազմերն ընդունված է անվանել կրկնակազմեր, որովհետեւ դրանք ավելացվել են ձեռագրերի, իսկ հետագայում նաև տպագրերի բուն կազմերին: Կրկնակազմերը պատրաստում էին ոսկերիչ-արծաթագործները, որոնք իրենց արհեստի նուրբ ձևերն արտահայտում էին ձուլման, ճնշման, կտման, դրվագման, ոսկեթելի եւ արծաթաթելի ու հարկավոր հյուսվածքի եղանակներով, փորագրությամբ, սևադուր, արծնապատմով, ոսկեգոծմամբ եւ այլն¹: Արծաթագործական կամ ոսկերչական արվեստը Նայաստանում գրեթե միշտ ունեցել է ընդհանրական դիմագիծ՝ չկորցնելով տեղային, ազգային ավանդույթները: Կրկնակազմերը, համաձայն պատմական Նայաստանում տիրող բարգավաճության աստիճանի, ճոխ ու շքեղ կամ համեստ են: Իրենց ուրույն առանձնահատկություններով կազմարարական եւ ոսկերչական դպրոցներ են կազմավորվել ինչպես պատմական Նայաստանի գանազան շրջաններում՝ Կիլիկիայում, Կեսարիայում, Վասպուրականում, Մուշում, Կարինում, Սեբաստիայում, Էջմիածնում, Սյունիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, գաղթօջախներում՝ Կոստանդնուպոլսում, Բուդապեշտում, Լեհաստանում, Մոլդովիայում, Մոսկվայում, Ղրիմում, Նոր Զուղայում, Կալկաթայում:

Կրկնակազմերին հաճախ հանդիպում են դրվագված կամ փորագրված արձանագրություններ, որոնք, հիմնականում, հիշատակագրություններ են: Ի տարբերություն ձեռագրերի բուն հիշատակարանների, արձանագրությունները գրչության արվեստի առավել քիչ ուսումնասիրված աղբյուրներից են: Դրանք ամենից առաջ ներկայացնում են հայկական ձեռագրերի կազմերի ստեղծման վայրերի եւ ստեղծողների պատմությունը: Վիճական արձանագրությունների նման կազմերին արվածները եւս հավաստի սկզբնաղբյուրներ են եւ նրանցից տարբերվում են միայն նյութով, որի վրա գրվել

¹ Տե՛ս Վ. Ա. Արթուրյան, Արհեստները Նայաստանում 4-13-րդ դդ., Երևան, 1956, էջ 113:

են: Չնայած իր կարևորությանը, անցյալի եւ ներկայի հայագետներն այս կամ այն, ձեռագիր նկարագրելու կամ ձեռքն ընկած նյութը ներկայացնելու առիթով են միայն անդրադարձել կազմերի վրայի արձանագրություններին: Պատմագրության կողմից կազմարձանագրություններն առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել որպես կազմարվեստի դպրոցների պատմության սկզբնաղբյուր: Կազմերի ուսումնասիրությունը հայագիտության համար կարևոր է եւ արժեքավոր է ինչպես կազմարարական դպրոցների պատմության, հայ ժողովրդի ստեղծած արժեքների գնահատման, այնպես էլ հայ մշակույթի, ձեռագրագիտության ուսումնասիրության փասանկյունից: Այս արձանագրությունները, որպես օժանդակ աղբյուրներ, կարևոր են նաեւ հայոց կազմարվեստի եւ արձագագործության հուշարձանների ուսումնասիրության համար:

Քանի որ արձանագրությունների մեծ մասը թվագրված է, դրանք ապահովում են կազմերի կառուցվածքի, նյութի, ձեւավորման ճշգրիտ ժամանակագրական փոխանցություններ: Կազմերին արված արձանագրությունների ուսումնասիրությունն ունի մի քանի նպատակ. նախ՝ պարզել ճշգրիտ թվական ունեցող կազմերի խմբաբանակը: ապա՝ ճշգրտել կազմարարների ինքնությունը եւ նրանց պատրաստած կազմերի խմբերը, այնուհետև՝ կազմերի կառուցվածքային փոփոխությունների (գաղափարախոսների առանձին եւ ընդհանուր մասեր, գաղափարների ամբողջություն) եւ այլ հատկանիշների հիման վրա ստանալ թվագրման եւ փոփոխման մտավոր փոփոխություններ, իսկ սրանց օգնությամբ փոփոխությունների, ժամանակի, դպրոցների եւ այլ առումներով դասակարգել ստեղծման ժամանակն անհայտ կազմերը: Սույն նկարագրումներից ելնելով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 2011 թվականին հրատարակեց Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձարանը, Մայր Տաճարի եւ Հին Վեհարանի թանգարաններում գտնվող կրկնակազմերի նվիրված իմ ուսումնասիրությունը²: Այն ինչ-որ չափով ուղենիշ հանդիսացավ համանման մշակութային արժեքների ստեղծման ժամանակահատվածի ու վայրի ճշգրտման համար:

Վերջերս Երուսաղեմի եբրայական համալսարանի պրոֆեսոր Մայքլ Սթոունը, ձեռքի փակ ունենալով Մայր Աթոռի նշված հրատարակությունը, փոփոխություններ, որ ինքը եւ իր փոխհետազոտողները Սթիվեն Սթոունը, պատրաստում են Chester Beatty գրադարանում (Դուբլին, Իռլանդիա) պահվող հայերեն ձեռագրերի ցուցակը եւ ինձ ուղարկեց այդ հավաքածուի մի շարք կրկնակազմերի լուսանկարներ՝ որոշ ճշգրտումներ կատարելու նպատակով: Նա նկատել էր, որ իռլանդական հավաքածուի մեջ երկու կրկնակազմեր պատրաստված են Մայր Աթոռի Գանձարանի դ 153 կրկնակազմի նմանությամբ: Կրկնակազմերի համեմատությունից պարզեցինք, որ չնայած ունեցած փոփոխությանը փոփոխություններին՝ իրոք, այս երեք կրկնակազմերն էլ պատրաստված են ԺԸ. դարում միևնույն արձագագործի կողմից:

2 Տե՛ս Ա. Մալխասյան, Սուրբ Էջմիածնի մերձադեմ կրկնակազմերը, պրակ Ա, Մ. Էջմիածին, 2011 (116 էջ եւ 63 լուսանկար): Հրատարակության ենթ պատրաստել «Մատենադարանի հայերեն ձեռագրերի կազմերը եւ արձանագրություն-հիշատակարանները» աշխատությունը (376 արձանագրությունների վերծանման եւ ուսումնասիրության հիման վրա ներկայացրել ենք կազմարարության Վաստիարականի (ԺԶ-ԺԸ դդ.), Կարնո (ԺԶ-ԺԸ դդ.), Նոր Զուղայի կամ Պարսկաստանի (ԺԶ-ԺԸ, Ի դդ.), Արցախ-Ուրբիքի (ԺԸ դ. երկրորդ կես), Ղրիմի եւ Մոսկվայի (ԺԸ-ԺԹ դդ.), Կոստանդնուպոլսի, Կեսարիայի (ԺԶ-ԺԸ դդ.) դպրոցները), որը ֆինանսավորման պատճառով դեռեւս մնացել է անփոփոխ:

գործի ձևերով կամ միեւնույն արհեստագործում եւ նույնպէս նվիրաբերվել են Ս. Կիրակոս եկեղեցուն: Սակայն մեզ առավել հետաքրքրեցին կրկնակազմերին արված արձանագրությունները, որոնցով կարեւոր ճշգրտում է կատարվում առաջին սրբապետի անվան հետ կապված: Նախապէս նշենք, որ արձանագրության փառերը դրվագված են հայերէն ոչ վարժ իմացողի ձեւերով:

Մայր Աթոռի Գանձարան դ 153 արձանագրում (նկար 1) 16,3x10,9x5 սմ մեծության է, մեջք՝ 15,8x2,9 սմ, փակիչներ չունի, պարբերաբար արված է դրվագման ճարտարվեստով: Ա. փեղկին (դիմահայաց՝ աջ կողմում), մեջքեղում, օվալաձև զարդավոր շրջանակի մեջ, բարձրաբանդակ պարկերված է թագակիր Ս. Ասրվածամայրը գահին նստած, մանուկ Տիմուս գրկին: Ս. Ասրվածամայր ուրբերի փակ, օվալաձև շրջանակի ներսում, կա քառաշարք երկաթագիր արձանագրություն: Օվալաձև շրջանակից դուրս, փեղկի անկյուններում պարկերված են ավերարանիչներն իրենց խորհրդանիշերի հետ միասին: Բ. փեղկին (դիմահայաց՝ ձախ կողմում) դրվագված է Նարություն. հարուցյալ Տիմուս ամպերի եւ ճաճանչների մեջ, իսկ ներքեում, գերեզմանի մոտ՝ յուզաբեր երկու կանայք: Փեղկի ներքեում, երկշարք, կա երկաթագիր արձանագրություն (շարունակությունը Ա. փեղկին), որը, բնագրի փառաձևերի դրվագման համաձայն, կարդացել ենք հետևյալ կերպ՝. «Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ԱՐԾԱԹ-ԱՊԱՏ Ս[ՈՒՐ]Բ ԱԲԵՏԱՐԱՆ/Ը ՆԻՊՈ-ՂՈՍԻՆ, Ս[Ա]ՆՏԵՍ[Ի] ՍԱՐԳՍԻՆ, ՈՐԴՈՅՆ, //Ի ԴՈՒՆ/Ս[ՈՒՐ]Բ ԿԻՔ(Ը)Ա/ԿՈՍԻՆ ԵԿ[Ե]/ԴԷՅ[ԻՈՅՆ]»⁴: Դրվագված արձանագրության համաձայն սրբացվում է, որ արձանագրում Ավերարանը Տիպոդոսի, մահերեսի Սարգսի եւ որդիների հիշատակին նվիրաբերվել է Ս. Կիրակոս եկեղեցուն:

Chester Beatty գրադարանի Arm. 660 կրկնակազմ (նկար 2) պարբերաբար արված է Գանձարան վերնոշյալ կրկնակազմի նմանությամբ եւ պարկերագրությամբ, սակայն զարդարանքում նկատելի են որոշակի տարբերություններ: Ամբողջությամբ տարբերվում է կրկնակազմի մեջքի զարդարվածությունը, տարբեր է ձախ փեղկի (դիմահայաց) Տիմուսի գերեզմանի վրայի զարդանախշը եւ պարկերների դիմացները: Ձախ փեղկի ստորին մասում նույնպէս կա արձանագրություն, որը շարունակվում է աջ փեղկին, Ս. Ասրվածամայր ուրբերի ներքեում: Այսպէս Ս. Սթոմոն, իրավամբ, առաջին սրբապետի անունը վերձանել է մահերեսի Պոդոս, ինչպէս պարզ երևում է արձանագրության փառաձևերի դրվագումներից. «Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ԱՐԾԱԹ-ԱՊԱՏ Ս[ՈՒՐ]Բ ԱԲԵՏԱՐԱՆ/Ս[Ա]ՆՏԵՍ[Ի] ՊՈՂՈՍԻՆ, Ս[Ա]ՆՏԵՍ[Ի] ՍԱՐԳՍԻՆ, ՈՐԴՈՅՆ, //Ի ԴՈՒՆ/Ս[ՈՒՐ]Բ ԿՍՐ(Ի)Ա/ԿՈՍԻՆ ԵԿ[Ե]/ԴԷՅ[ԻՈՅՆ]»: Արձանագրության վերձանություն-

3 Մանրամասն տե՛ս Ա. Մալխասյան, նշվ. աշխ., կրկնակազմ դ 29, էջ 49-50, լուսանկար 36:

4 Արձանագրությունների վերձանման համար օգտագործել ենք հետևյալ պայմանական նշանները.

[]- լրացվում են բացակայող կամ չպահպանված փառերն ու փառաշարքերը,

() - ա. բացվում են հապավումները, բ. թավից հետո արտահայտվում է ճիշդ փառը,

/- նշվում է տողի սկիզբը,

// - նշվում է արձանագրության շարունակությունը հաջորդ փեղկի վրա,

X- թավ (bold) նշվում են ուղղագրական սահմանված կանոններից շեղումները,

X- քնդգծված (underline) նշվում են կապգրությունները:

նը ցույց է տալիս, որ Ավերարանի առաջին սրագողը *մահպեսի Պողոսն* է, այլ ոչ թե *Պարպոսը*, ինչպես դրվագված է Գանձարան դ 153 կրկնակագմին: Այս երկու արձանագրությունների համեմատությունից նկատում ենք, որ առաջին-նում (Գանձարան, դ 153) ԱԲԵՏԱՐԱՆ բառից հետո, հաջորդ փողը հստակ սկսվում է երկաթագիր Ը փառով, իսկ երկրորդում (Chester Beatty, Arm. 660)⁵ երկաթագիր Մ-ով: Դրանից բացի, թե՛ առաջին արձանագրությունում և թե՛ երկրորդում երկու անգամ գրված ՄՆԻ համառոտագրությունը նույնաբիպ է արված: Իսկ երկրորդ արձանագրությունում ԱԲԵՏԱՐԱՆ բառի Ն փառի աջ կողմի փոքրիկ սրեղի վերևում հստակ դրվագված է երկաթագիր Ս սրացական հողը, որը բացակայում է Գանձարան արձանագրությունում: Անհասկանալի է, թե ինչո՞ւ է Գանձարան կրկնակագմի արձանագրության երկրորդ փողը սկսվում երկաթագիր Ը փառով:

Ը-ի դրվագման խնդիրը պարզաբանվում է երրորդ իրանական նույն հավաքածուի Arm. 8 թվահամարի⁶ րակ պահվող կրկնակագմի արձանագրության վերձանության միջոցով (նկար 3): Այն եւս պարբերաբար է նույն հավաքածուի Arm. 660-ի և Մայր Աթոռի Գանձարան դ 153 կրկնակագմերի նմանությամբ և պարկերագրությամբ: Այս և Գանձարան կրկնակագմերի մեջքի զարդարվածությունն ամբողջությամբ նույն է և, կարծես, մեկը մյուսի կրկնօրինակը լինի: Չանդրադառնալով կրկնակագմերի ունեցած փոքր փաթեկություններին՝ նշենք, որ այս երրորդ կրկնակագմի արձանագրությունում նկատել ենք մի կարևոր կցագրություն, որով բացառվում է առաջին (Գանձարան, դ 153) կրկնակագմի Ը փառի դրվագման հանգամանքը: Այսպես նույնպես արձանագրությունը սկսվում է ձախ փեղկի (դիմահայաց) սյուրին մասից և շարունակվում աջ փեղկին, Ս. Ասրվածամոր ուրբերի ներքևում: Արձանագրության փառաձևերի դրոշմվածքի համաձայն այն վերձանել ենք հետևյալ կերպ. «Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Ե ԱՐԾԱԹ-Ա-ՊԱՏ Ս[ՈՒՐ]Բ ԱԲԵՏԱՐԱՆ Ս/ՄԱՆ[ՏԵՍ]Ի ԴՈՂՈՄԷՆ, Ս/ԱՆ[ՏԵՍ]Ի ՍԱՐԳՍԷՆ, ՈՐԴՈՅՆ, //Ի ԴՈՒՆՆ /Ս[ՈՒՐ]Բ ԿԻՔ(Բ)Ա/ԿՈՄԷ ԵԿ[Ե]/ՂԷՅ[ԻՈՅՆ]»: Նկատելնք, որ ՄԱՆՏԵՍԻ փառաձևում առանձնանում են երկու քրեական կապություններ՝ ՄԱՆԻ և ՄՆԻ ձևերով: Առաջին (ՄԱՆԻ) կապության մեջ երկաթագիր Մ և Ա  փառերն իրար այնպես են կցագրված, որ Ա փառի աջ կողմի ներքև իջնող փոքրիկ մասնիկը, աջակողմյան մեծ սրեղին միանալով, Մ փառի վերին աջ կողմի փոքրիկ մասնիկի հետ միասին ձևավորում են երկաթագիր Ը փառի պարկեր: Ներևապես պարզ է դառնում, որ արձագրորը Գանձարան կրկնակագմի արձանագրության երկրորդ փողի առաջին ՄԱՆԻ բառի մեջ մոռացել է դրվագել ՄԱ կցագրության ձախ կողմի սրեղը և ներքևի կիսալուսնաձև մասնիկը, որի հետևանքով կցագրությունը թերի է մնացել և սրացել երկաթագիր Ը փառի պարկեր: Նկատելի է, որ արձագրորը հայերենին անվարժ է եղել: Գանձարանը պահվող կրկնակագմի ԱԲԵՏԱՐԱՆ բառի վերջում եւս նա մոռացել է դրվագել երկաթագիր Ս սրացական հողը, որը մյուս երկու արձանագրություններում ընթերցվել է: Նաև միևնույն ԿԻՐԱԿՈՍԻ բառի մեջ հանդիպում ենք երեք փար-

5 Թվահամարները դրել ենք ըստ Մ. Սթոունի՝ մեզ ուղարկած լուսանկերների անունների թվանշանների:

բեր դրվագումների. մի դեպքում այն **ԿԻՔԱԿՈՄԻ** ձեռով է (Գանձապահ, դ 153), մյուսում՝ **ԿՍՔԱԿՈՄԻ** (CBL, Arm. 660), երրորդում՝ **ԿԻՔԱԿՈՄԻ** (CBL, Arm. 8): Պարզ է, որ արձաթագործն արձանագրության փառերն ուղղակի դրվագմամբ նկարել է՝ առանց իմաստին հետևելու: Այնուամենայնիվ նշենք, որ Chester Beatty գրադարանի այս երկու արձանագրությունների շնորհիվ ճշգրտվեց Մայր Աթոռի Գանձապահ կրկնակագմի արձանագրությունում դրվագված առաջին սրացողի անունը. դա մահպեսի ՊՈՂՈՍ-ն է (այս դեպքում էլ սրացողի անունն արձանագրությունում պիտի լիներ ՊՕՂՈՍ ձեռով), այլ ոչ թե՝ Նիպոդոր:

Ներկայացված լուսանկարներից երևում է, որ երեք կրկնակագմերն էլ պարբապրված են արծաթից ոսկեգոծմամբ, դրվագման եղանակով: Դրանք ԺԸ. դարի արծաթագործության գեղեցիկ նմուշներից են և ունեն գեղարվեստական բարձր արժեք: Արձանագրություններում հիշարակվում է, որ արծաթապար Ս. Ավերարանը մահպեսի Պողոսի, մահպեսի Սարգսի և որդիների հիշարակին նվիրաբերվել է Ս. Կիրակոս եկեղեցուն: Սուրբ Կիրակոսի անունով վանքեր կամ եկեղեցիներ Նայասպանում այնքան էլ չափ չեն: Նիշարակվում են՝ ա) Արեւմտյան Նայասպանի Բիթլիսի նահանգի, Մուշի գավառի Բերդակ գյուղում, բ) նույն նահանգի Մասունի Մոսկան գավառակի Գզելի գյուղի մոտ, գ) նույն նահանգի Բիթլիսի գավառի Սպարկերտի գավառակի Գեղիս (Կեղիս) գյուղի մոտ, դ) Էրզրումի նահանգի Բայագեր գավառում, Ալաշկերտ գյուղաքաղաքում, ե) Էրզրում գավառի Քղի գյուղաքաղաքի մոտ, Խոսնակ գյուղախմբում, զ) Էրզրումի նահանգի Երզնկա քաղաքի մոտ (Ս. Կիրակոսի և Նուղիարայի վանք), է) Խարբերդի նահանգի Դերսիմի գավառի Չարսանջակի գավառակի Օձգեղ գյուղում, ր) ՆՏ Սյունիքի մարզի Սիսիանի շրջանի Ուգ գյուղի մոտ⁶: Նիշարակված վանքերից որի՞ն է նվիրաբերվել արծաթակագմ Ավերարանը, առաժն դժվարանում ենք պարասխանել՝ հավելյալ տեղեկությունների բացակայության պարճառով: Միայն կարող ենք ենթադրել, որ նմանարիպ նվիրաբերություններն արվում էին այն վանք-եկեղեցիներին, որտեղ թեմական առաջնորդներն էին նստում կամ որտեղ ուսումնական կենտրոններ կային: Նիշարակված վանքերի շարքում իր դիրքով ու նշանակությամբ առանձնանում է Երզնկայի Ս. Կիրակոսի և Նուղիարայի⁷ վանքը, որը քաղաքից 7-8 կմ հեռու էր, Քարդ գյուղի մոտակայքում: Կառուցման ժամանակը հայտնի չէ, հիշարակվում է ԺԳ. դարից: Մինչև Ի. դարի սկզբները կանգուն էր և Երզնկայի հայոց եկեղեցու առաջնորդարանի նստավայրն էր: Միջին դարերում եղել է գրչության կենտրոն: Պահպանվել են ԺԳ-ԺԵ. դարերի՝ այսպեղ գրված հայերեն մի քանի ձեռագրեր: Վանքապարկան ձեռագրերն ու գրքերը 1915-1918

6 Տե՛ս Թ. Նալբախյան, Սրբ. Մելիք-Բախչյան, Ն. Բարսեղյան, Նայասպանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ. 3, 1991, էջ 146:

7 Սրբուհի Նուղիարան և նրա որդի Ս. Կիրակոսը (ավելի ստույգ՝ Կիրակոսը) քրիստոնյա էին: Երանելի Նուղիարան բարեպաշտոն և ազնվագրոմիկ կին էր, թագավորական ցեղից, Իկոնիոն քաղաքից: Կուսակալ թագավոր Դիոկղետիանոսի ժամանակ, իր ամուսնու մահվանից հետո, անօրենների հալածանքներից թողնելով ամեն ինչ և վերցնելով իր փոքրիկ տղա Կիրակոսին՝ երկու նաժիշկների հետ փախավ հայրենի երկրից, գնաց Սելեուկիա, այնուհետև՝ Կիլիկիայի Տարսոն քաղաք, որտեղ էլ նահապարկվեցին 304 կամ 305 թվականի հուլիսի 15-ին. տե՛ս Մ. Ազեղյան, Լիակապար վարք և վկայաբանություն սրբոց, Վկայաբանություն սրբուհույն Յուդիկայի և որդույն նրա սուրբ մանկան Կիրակոսի, Վենետիկ, 1810, էջ 170-187:

թվականների ընթացքում ամբողջությամբ ցիրուցան եղան, իսկ վանքն ավերվեց, ամայացավ⁸: Նաջորդ եկեղեցին, որին հնարավոր է, որ նվիրաբերված լիներ արծաթակազմ Ավերարանը, Էրզրումի գավառի Խոսնակի Ս. Կիրակոս վանքն է, որն ունեցել է մի քանի եկեղեցիներ: Այն Քղիի առաջնորդարանն էր եւ ուներ ուսումնարան: Այսպեղ եւս գրվել են բավական թվով ձեռագիր մատյաններ⁹:

Այսպիսով, բերված հիմնավորումները նկարի ունենալով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գանձարան դ 153 կրկնակազմի արձանագրությունն առաջարկում ենք վերծանել նորովի, հեպեյալ կերպ. «Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ԱՐԾԱԹ-ԱՊԱՏ Ս[ՈՒՐ]Բ ԱԲԵՏԱ-ՐԱՆ[Ս] /Է(ՄԱ)Ն[ՏԵՍ]Ի ՊԱՂԱՄԷՆ, Ս[Ա]Ն[ՏԵՍ]Ի ՍԱՐԳՄԷՆ, ՈՐԴՈՅՆ, //Ի ԴՈՒՆ /Ս[ՈՒՐ]Բ ԿԻՔ(Բ)ԱԿՈՄԷ ԵԿԵ/ՂԷՅԻՆՅՆ]»:

Ա. Ա. ՄԱԼԽԱՍՅԱՆ

պ. գ. թ.

⁸ Տե՛ն անդ:

⁹ Տե՛ն Թ. Նակորյան, Սպ. Մելիք-Քախչյան, Ն. Քարսեղյան, Նայասրանի եւ հարակից շրջանների փղեղանոնների բառարան, Երեւան, հ. 2, Երեւան, 1988, էջ 783:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՄ. ԼՈՒՐԻՆՐ

«ՋԵՅՐԱՆ» ՆԱԽՈՒՅԹԸ ՓԱՌԱՏՈՆԻ ՈՍԿԵ ՄԵԴԱԿԱԿԻՐ

Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Նայարարուն» մշակույթի կենտրոնի «Ջեյրան» համույթը դարձավ «Բրավո-2012» փառապոռնի ոսկե մեդալակիր: Փառահեղ ելույթ էր արժանի գնահատական - ահա այսպես կարելի է բնորոշել «Ջեյրան» մանկա-պատանեկան համույթի ելույթը մայիսի 27-ին «Արար-Նոյ» դահլիճում կայացած բեմական արվեստի երիտասարդ կարարողների 13-րդ հանրապետական «Բրավո-2012» փառապոռնում:

Փառապոռնի 40 անվանակարգերի համար պայքարում էին 15 պարարվեստային համույթներ ողջ Վրաստանի մասշտաբով: Չորս հոգուց բաղկացած մրցադաշտ, որի նախագահն էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի պարերի միջազգային խորհրդի Թ-բիլիսյան բաժանմունքի նախագահ Ջուրաբ Բիլանիշվիլին, իսկ պարարվեստի գնահատողն էր ներկայումս Լոռուում վրացական պարը փարածող Մովսիշվիլիների համույթի նախկին պարող Կոնստանտին Չխաիձեն, խաղաղեն գնահատում էր պարի փոխնիական անսխալությունը, հագուստի և երաժշտության ներդաշնակությունը, կարարողական վարպետությունը:

«Նայարարուն» մշակույթի կենտրոնի «Ջեյրան» համույթը (պարուսույց Սվեդլանա Երիցյան՝ Վրաստանի «Պարվո» շքանշանի ասպետ, Մ Սփյուռքի նախարարության Կոմիտասի անվան ոսկե մեդալակիր) փառապոռնի մասնակցեց ավագների և փոքրերի խմբերով, «Մախմուր աղջիկ», «Ազգագրական պարերի շարան», «Պոպուրի» և «Կինոպոպուրի» պարերով:

Տեխնիկապես առանց շեղումների, գեղեցիկ արդիսպիզմով և կարարողական բարձր մակարդակով կարարված «Ջեյրան» համույթի բոլոր ելույթներն արժանացան «Բրավո-2012» հանրապետական փառապոռնի մրցադաշտի ամենաբարձր գնահատականին: Համույթը և նրա բոլոր մասնակիցները սրացան ոսկե մեդալներ և դիպլոմներ, իսկ պարուսույց Սվեդլանա Երիցյանը՝ պարի հագուստի և երաժշտության ճիշդ համադրության և կարարողական վարպետության համար արժանացավ «Լավագույնը» անվանակարգով հաբուկ դիպլոմի:

Պարային ելույթի ժամանակ մրցադաշտի սովորաբար ուշադրությունը կենտրոնացնում է փոխնիկայի և բեմադրության վրա, իսկ վոկալի ժամանակ առանձնապես գնահատվում են արդիսպիզմը և կարարողական վարպետությունը: Սակայն «Ջեյրան» համույթի «Մախմուր աղջիկ» համարի մենակարար Դիանա Մովսիսյանի պարային վարպետությունը այնքան բարձր մակարդակի էր, որ մրցադաշտի միաձայն նրան շնորհեց փառապոռնի միակ անվանակարգով՝ կարարողական վարպետության և արդիսպիզմի համար մրցանակը:

«Բրավո-2012» փառապոռնին հասած մեծ հաջողությանը հաջորդեց ես մեկ հաղթանակ արդեն այլ փառապոռնում: Նոյեմբի 2-ին Թ-բիլիսիում կայացավ «Մեկ երկնքի փակ - մշակույթների երկխոսություն» նշանաբանով մովսիշվիլիական արվեստի փառապոռն: Ներկա էին Վրաստանի մշակույթի նախարար Նիկա Գիլաուրին և պաշտոնապես այլ անձինք: Փառապոռնը բացելու պատիվը շնորհվեց «Ջեյրան» համույթին: Համույթի բարձրարվեստ ելույթներն ուղեկցվեցին հանդիսատեսի հիացմունքով, հուրակայա ու ջրադարձ ծափահարություններով: «Մախմուր աղջիկ», «Ազգագրական պարերի շարան», «Պոպուրի» և «Կինոպոպուրի» համարներն արժանացան խաղապահանջ մրցադաշտի ամենաբարձր գնահատականներին:

Նոյեմբի 3-ին Թ-բիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կիրակնօրյա Սուրբ Պարարագից հետո իշխում էր ուրախությունն ու ցնծությունը: Նավարար Սուրբ Պարարագի Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր

Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը օրհնանքի և գնահատանքի իր խոսքում շնորհավորեց «Ջեյրան» համայնքի բոլոր մասնակիցներին և նրանց ծնողներին, պարուսույց Սվետլանա Երիցյանին՝ մեծ հաղթանակի և մայր հայրենիքից դուրս հայ պարային արվեստն ու մշակույթը պահպանելու, զարգացնելու և բարձր մակարդակով ներկայացնելու համար: Վերջում հանդիսավոր պայմաններում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Հայարպուն» մշակույթի կենտրոնի մշակույթի բաժնի պատասխանատու Լևոն Զիդիլյանը «Ջեյրան» համայնքի անդամներին հանձնեց փառավորնի ոսկե մեդալները, դիպլոմները և Վիրահայոց թեմի նվերները:

«ՆԱՅԱՐՏՈՒՆ» ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՑՈՒ
ՍՈՒՄԱՆԱԿԻ ԶԱՐԳԱՐՑՄԱՆ

ՆԱՄԱՇԽԱՐԱՀԱՅԻՆ ԵՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՆԱՄԱԺՈՂՈՎ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ

Մայիսի 30-31-ը Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևի նախաձեռնությամբ Աստանայում գումարվեց Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների Դ. համաժողով՝ «Խաղաղությունն ու համերաշխությունը՝ որպես մարդկության ընտրություն» խորագրով:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին «Կրոնական առաջնորդների դերը կայուն զարգացման գործում», «Կրոնը և կինը. հոգեւոր արժեքները և ժամանակակից մարտահրավերները», «Կրոնը և երիտասարդությունը» և այլ թեմաներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ համաժողովին մասնակցեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրապարակչական բաժնի փոօրեն Ս. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը և Գեղարքունիքի թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը: Ժողովին Նաթան արքեպիսկոպոսի կողմից ներկայացվեց նաև Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը համաժողովի մասնակիցներին:

ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒԲՐԱ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՐԻ ՍՐԲՈՑ ԱՎԵՏԱՐԱՆԶԱՅ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՄԱՏՈՒՈՒ

Սույն թվականի հունիսի 2-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, օծվեց Վրաստանի Մառնեուլիի շրջանի Կարմիր գյուղի Սրբոց Ավետարանաչաց նորակառույց մատուռը:

Մատուռը կառուցվել է Կարմիր գյուղի համայնքի անդամ Վիկիկ Խաչատուրյանի նախաձեռնությամբ, Առաջնորդարանի և համայնքի անդամների աջակցությամբ:

Մատուռի շուրջ հավաքված բազմության մեջ իշխում էր փոռական փրամադրությունը: Հյուրեր էին ժամանել ինչպես Հայաստանից, այնպես էլ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիից և այլ շրջաններից: Արարողությանը ներկա էր Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բալբաթյանը:

Մատուռի օծման սրբազան արարողության ավարտին Սուրբ Պատարագ մատուցեց Մառնեուլիի շրջանի հայության հոգեւոր հովիվ Տեր Մովսես քահանա Աշուրյանը: Հավարդ Պատարագի Սրբազան Հայրը հավուր պապշածի քարոզ խոսեց և հավարացյալներին փոխանցեց Նորին Սրբություն Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը: Այնուհետև առաջնորդը գնահատանքի գիր և հուշանվերներ հանձնեց մատուռը կառուցողներին և հովանավորներին, ապա օրհնեց ավանդական մատաղը և այն բաժանվեց ժողովրդին:

Սրբոց Ավետարանաց մարտոր Մառնեոլիի շրջանի հայկական ութ համայնքների միակ գործող սրբավայրն է: Թեմի Առաջնորդարանը լիափութ է, որ նորանշանակ հոգևոր հովվի գործունեության արդյունքում կվերաբացվեն եւ կփմնվեն եկեղեցիներ եւ մարտներ նաեւ մյուս գյուղերում:

ՎԻՐԱՆԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՍԼԻՆ ԳԻՎԱՆ

ՋԱԶԸ ՈՐՊԵՍ ՆԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆ

Սույն թվականի հունիսի 2-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարարուն» մշակույթի կենտրոնում հասարակական գործիչ Արարեմ Կիրակոզովի (Գրիգորենցի) նախաձեռնությամբ կայացավ «Ջազը որպես հանդուրժողականության ֆենոմեն» թեմայիկ երեկոն, որպեսզի կազմակերպիչը հանդես եկավ վարդիի եւ երաժիշտի դերում:

Նրա խոսքերով՝ այս մրափնդանքը ծագել է թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի քարոզների ժամանակ: Սրանալով Սրբազան Հոր աջակցությունը՝ Ա. Կիրակոզովը իր երաժիշտ ընկերներին առաջարկեց ելույթ ունենալ «Հայարարուն» կենտրոնում:

«Հայարարուն» մշակույթի կենտրոնում ավագ սերնդի երաժիշտներ Ռոման Բրեզվաձեի (դաշնամուր, կիթառ), Արարեմ Կիրակոզովի (հարվածային գործիք), Զուրաբ Չիխուրիայի (կոնտրաբաս) հետ հանդես եկան երիտասարդ երաժիշտներ Մարիաննա Կիրակոզովան (ջութակ), Արթուր Կրոմը (սկրիպկա), Պասյա Չարգելիշվիլին (փող): Ջոկաննի Վեֆիսվաձեի, Ալեքսանդր Բերդիշեի, Շավա Պաշտվիլի, Էռնա Դավաճանյանի նկարները հմայք հաղորդեցին երեկոյի ընդհանուր մթնոլորտին: Ամանձնահարուկ էր երգահան եւ երգչուհի Նունու Գաբունիայի մանկական պարույրային սան, երիտասարդ փառանդների հանրապետական մրցույթի դափնեկիր, 12-ամյա Լիզա Մազիաշվիլու կատարումը:

Երեկոյի ընթացքում հնչեցին նաեւ բանաստեղծություններ նվիրված ջազին: Մեփական եւ Իրակլի Չարկվիանիի բանաստեղծությունների ժուռերն եւ վրացերեն ընթերցմամբ հանդես եկան Արարեմ Գրիգորենցը եւ Գեղա Աբուլաձեն: Արվեստատեր հասարակայնությանը հայտնի Նինա Կարապետյանը նախ ընթերցեց Գեորգ Մնիսյանի՝ հայտնի այս երեկոյին նվիրված հայերեն բանաստեղծությունը, իսկ այնուհետեւ կատարեց Ամոն Բաբաջանյանի «Առաջին սիրտ երգը»՝ համաձայն կինոֆիլմից: Երեկոյին հմայք հաղորդեց դաշնակահար Եսայի Աբուլյանի՝ Օսկար Պիպերսոնի երաժշտության կատարումը: Ջազային երաժշտության երեկոյին իր դաշնամուրային նվագակցությամբ միացավ նաեւ դաշնակահար Պավել Օգանեզովը: Իսկ պարմաբան Ենոք Թադեոսյանը հանդես եկավ հայտնի զեկուցմամբ՝ եպիտոբիոգրային փարածքում ջազի պարմության մասին: Ջազային քննադատ եւ լրագրող Նոդար Բրուլաձեն եկեղեցական մշակույթային կենտրոնում ջազի երեկոյի անցկացումը անվանեց խորհրդանշական, քանզի ջազի հիմքում դրված են նաեւ սալիքիչուլետներ՝ աֆրո-ամերիկացիների կողմից Աստվածաշնչյան թեմաներով երգեցողություն:

